



«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
S. ՄԵՍՐՈՊ ԶԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆԻ

Ներկայացում է «Երգ երգոցի» նոր թարգմանությունը Հայ Առաքելական Եկեղեցու որդեգրած նշանաւոր մեկնություններով (Հիպո-ղիտոս Բոստրացի, Որոզհնէս Աղեքանդրացի, Գրիգոր Նիսացի, Գրի-գոր Նարեկացի, Վարդան Արեւելցի, Գրիգոր Տաթեւացի), որոնք, բացա-ռութեամբ Նարեկացու մեկնութեան, դեռեւս ձեռագիր վիճակում են: Մեկնությունները վերաշարադրուած են, երբեմն՝ ուղղակի թարգմա-նուած, պահպանուած է իմաստային եւ լեզուաւորական հոգեհարազա-տութիւն, ինչպէս նաեւ՝ հայրերի հոգեշունչ մեկնությունների ընդհանուր ներդաշնակութիւնը: «Երգ երգոցը» Հին Կտակարանի բարձրագոյն մարգարէութիւնն է Մեսիայի մասին: Նրանում համձարեղ այլաբանա-կան եւ բանաստեղծական խօսքով նկարագրուած է Թրիստոսի եւ Եկեղեցու, Աստուծոյ եւ մարդոյ յարաբերութիւնը: Այս է պատճառը այն բացառիկ ուշադրութեան, որ Եկեղեցին դարեդար ցուցաբերել է այս խորհրդաւոր Գրքի նկատմամբ:

Երգ երգոց

ՀԱՆԴԵՐՁ
ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲ
ՆԱԽՆԵԱՑ

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՀԱՆԴԵՍ
ԵՐԵՒԱՆ 1993

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱԶՆՆՈՐԴԻՆ ԱՐՅԱԽԱՅ

ՏՊԱԳՐԻՈՒՄ Է ՀԱՅ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԹԵՄԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

Աստուծոյ խօսքը, բխելով Արարչի անքննելի էութեան խորքերից, նորոգութեան, սրբութեան եւ կատարելութեան է կոչում արարածին: Այն Տիրոջ կենդանի զօրութիւնն է, որ մարդուն անվերջօրէն մօտեցնում է աստուածային անսահմանելիութեանը՝ իր էութեամբ մնալով խորհրդաւոր եւ անըմբռնելի, ջանգի պատուած է աստուածային թաքնախորհուրդ լուծեամբ եւ անպատմելիութեամբ... Աստուծոյ խօսքի բուն նպատակը փրկագործութիւնն է. Բրիստոս մարդու փրկութիւնը սկզբնաւորող արքայութեան խօսքը նմանեցրեց ցորենի հատիկի, որ սերմանում է մարդկային հոգիների անդաստանում [Մատթ. ԺԳ 4-8]: Աստուծոյ խօսքի սերմից ծնում է մարդու հաւատքն առ Աստուած [Հռոմ. Ժ 17], այն կենդանի առաջնորդութիւն է հոգեւոր կեանքի ողջ ընթացքում [Մաղմ. ՃԺԸ 105, 170; Մատթ. Դ 4; Եփես. Ջ 17; Ա Տիմ. Դ 5], որի արդիւնքն Աստուած պահանջելու է վախճանաբանական հունձքի ժամանակ [Մատթ. ԺԳ 30]:

Աստուածաշունչ Գրքերը կամ Սուրբ Գրքերն¹ Աստուծոյ խօսքի գրաւոր վկայութիւններն են, որոնք, ըստ Ուղղափառ Դաւանութեան, անմիջական արտայայտութիւնն են Սուրբ Հոգու տնօրինական նախախնամութեան. «Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ Անեղին եւ Կատարեալին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում...»²: Սուրբ Հոգին դարեր շարունակ մարգարէների բերանով յայտնել է Աստուծոյ փրկութեան մասին՝ Բրիստոսի Աւետարանի յոյսին նախապատրաստելով մարդկութեանը. «Աստուած բազում ձեւերով եւ բազում օրինակներով խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. այս վերջին օրերին խօսեց մեզ հետ Որդու միջոցով...» [Եբր. Ա 1-2]:

Բրիստոսի փրկագործութեամբ աշխարհում հաստատում է Բրիստոսի Եկեղեցու նոր եւ կատարեալ իրակաճութիւնը: Եթէ Բրիստոս Եկեղեցու՝ Իր խորհրդական Մարմնի Գլուխն է [Կողոս. Ա 18], ապա Սուրբ Հոգին Նա է, Ով լցնում է Բրիստոսով փրկագործուած արարչութիւնը: Եկեղեցին աստուածային իրակաճութեան ամբողջութիւնն է արարչութեան մէջ, որովհետեւ Սուրբ Հոգին այն լցնում եւ կենսագործում է Աստուածութեամբ: Այս միտքը սքանչելի է արտայայտում ս. Երանոսը. «Որ Եկեղեցին է, այնտեղ էլ Աստուծոյ Հոգին է, ուր Աստուծոյ Հոգին է, այնտեղ

1 Աստուածաշունչ Գրքերի [Բ Տիմ. Գ 16] կամ Սուրբ Գրքերի [Բ Տիմ. Գ 15; Հռոմ. Ա 2] ամբողջութիւնը բոլորին քաջ յայտնի Աստուածաշունչն է կամ Սուրբ Գիրքը:

2 Հաւատամբ, Աղօթագիրք. «Գանձասար» հանդես, 1992, էջ 79

Էլ Եկեղեցին է»¹:

Սուրբ Հոգին, որ «խօսեց Օրէնքում եւ Մարգարէներում եւ Աւետարաններում», Երրորդութեան կամքով ներկայ է աշխարհում արարչագործութիւնից մինչեւ փրկագործութիւն: Բանի մարմնաւորումը տեղի է ունենում Սուրբ Հոգով, Բրիստոս Սուրբ Հոգով է բժշկում, դեւեր հանում, հրաշքներ գործում... Սակայն Յովհաննոս Աւետարանում որոշակիօրէն ասում է. «Քանզի դեռ չկար Հոգին, որովհետեւ Յիսուս դեռ չէր փառաւորուել» [Յովհ. է 39]: Հետեւաբար, այլ է Սուրբ Հոգու գործունէութիւնը մինչեւ Հոգեգալուստը եւ այլ է Հոգեգալուստից յետոյ...

Եւ ինչպէս Որդին Որդին գալիս է աշխարհ եւ կատարում էր գործը Սուրբ Հոգով, այնպէս էլ Սուրբ Հոգին, առաքուելով Որդու կողմից, գալիս է աշխարհ. «Բայց երբ գայ Միխիթարիչը, Որին Ես ձեզ կուղարկեմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, Նա կվկայի Իմ մասին» [Յովհ. ԺԵ 26]: Հոգեգալուստը Բանի մարմնաւորման հետեւանքն է. արարածը կարողութիւն է ստանում կրելու Սուրբ Հոգին, եւ Նա գալիս է աշխարհ եւ էր ներկայութեամբ լցնում Եկեղեցին, որ փրկագործուել է սրբագործուել է Բրիստոսի Արեամբ:

Բրիստոսի գործը նախապատրաստում էր Սուրբ Հոգու գործը. «Եկայ՝ կրակ գցելու երկրի վրայ եւ ի՞նչ եմ կամենում, որ արդէն իսկ բորբոքուէր...» [Ղուկ. ԺԲ 49]: Այսպիսով, Հոգեգալուստն աստուածային տնօրէնութեան վերջնական նպատակն է երկրի վրայ: Բրիստոս ելնում է Հօր մօտ, որպէսզի գայ Սուրբ Հոգին. «Լաւ է ձեզ համար, որ Ես գնամ, որովհետեւ, եթէ Ես չգնամ, Միխիթարիչը չի գայ ձեզ մօտ, իսկ եթէ գնամ, կուղարկեմ Նրան ձեզ մօտ» [Յովհ. ԺԶ 7]: Սակայն Սուրբ Հոգին էր անձնական գալստեամբ էր դէմքը չի յայտնում: Նա գալիս է աշխարհ ոչ թէ էր անունով, այլ՝ Որդու անունով, որպէսզի վկայի Որդու մասին, ինչպէս Որդին եկաւ Հօր անունով, որպէսզի յայտնի Հօր մասին:

Իր գալստեամբ Սուրբ Հոգին լցնում է Եկեղեցին էր խորհրդական ներկայութեամբ. «Քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ»², մարդկային բնութիւնն անմիջական հաղորդակից դարձնելով աստուածային իրականութեանը, էր անսահման պարզութեամբ եւ շնորհներով զարդարելով մեզ...

Հոգեգալուստից յետոյ Բրիստոսի Եկեղեցին լի է Սուրբ Հոգով. Նա ջարդել է առաքեալների բերանով, յիշեցրել եւ պատմել անտարանցիներին, աստուածային գիտութեամբ եւ հանձարով պայծառացրել վարդապետներին, բնակուել սուրբերի մէջ եւ բազ-

մապիսի հրաշքներ գործել... Եկեղեցին կրիչն է Սուրբ Հոգու կենդանի ներկայութեան, աւանդութեան, ժառանգութեան, իրականութեան... Եւ միայն այս աստուածային կենդանի իրականութեան մէջ կարելի է խօսել որեւէ հոգեւոր արժեքի մասին: Եթէ Աստուածաշունչը դարերի ընթացքում շարունակաբար գրուած է Սուրբ Հոգով, ապա այդ գործունէութիւնը չի կարող դադարել սկսած որեւէ պահից, քանզի Աստուծոյ Հոգին ցայսօր գործում է էր Եկեղեցում: Հետեւաբար, Սուրբ Գիրքը չի կարելի առանձնացնել Եկեղեցու հայրերի հոգեշունչ մեկնութիւններից, որոնք ինչ—որ իմաստով կենդանի, շարունակական, բացատրական թարգմանութիւններ են. Սուրբ Հոգու շնորհներով զարդարուած վարդապետները որո՞ճացել են Սուրբ Գրքի խօսքերը եւ մեկնողաբար մանրել՝ ի պէտս ունկնդիրների:

Մեր ս. Թարգմանիչներն ինչ—որ գրական գործի՝ մի լեզուից մեկ այլ լեզու փոխադրողներ չեն, այլ նախ եւ առաջ՝ Սուրբ Հոգու թարգմանիչներ եւ Աստուծոյ անբնեւի իմաստները *անօրինաբար զարդարողներ*. ահա թէ ինչու նրանց շարքերում են ս. Գրիգոր Նարեկացին, ս. Ներսէս Շնորհալին, ովքեր անմիջականօրէն չեն մասնակցել Սուրբ Գրքի թարգմանութեանը: Արդէն իսկ Ե դարում ս. Թարգմանիչների կողմից թարգմանուեցին Եկեղեցու նշանաւոր հայրերի՝ ս. Բարսեղ Կեսարացու, ս. Յովհան Ոսկեբերանի, ս. Գրիգոր Նիսացու, ս. Աթանաս Աղեքսանդրացու, ս. Եփրեմ Ասորու եւ այլոց մեկնողական շատ երկեր. սա լուսագոյն ապացոյցն է այն բանի, որ մեր հայրերն Աստուածաշունչը եւ նրա մեկնութիւնները դիտել են որպէս մեկ ամբողջականութիւն եւ, ամենայն հաւանականութեամբ, նրանց թարգմանութիւնը յեցնում է եղել մեկնութիւնների խորն իմացութեան վրայ: Եկեղեցու հայրերի մեկնութիւնների հայացումը նպաստեց հայ մեկնաբանական մտքի զարգացմանը, որի հետեւանքն է մեզ հասած հսկայածաւալ մեկնողական գրականութիւնը: Եւ այսօր անհնար է առանց այդ մեկնութիւնների ուղղափառ պատկերացում ձեռք բերել Սուրբ Գրքի մասին: Աստուածաշնչի ուղղափառ ըմբռումը ծնում է Սուրբ Հոգուց յորդող շնորհական գիտակցութիւնից, որին պարտ է եւ պատշաճ, որ նախորդի նոյն շնորհական գիտակցութեամբ կատարուած մեկնութիւնների ուսանումը: Եկեղեցու հայրերի մեկնութիւնները խստօրէն աղերսուած են աստուածապաշտական ներընթացի հետ, նրանք պարունակում են հոգեւոր գործառնութեան կարեւոր բանալիներ, որոնք վրիպում են հերձուածողական—մակերեսային եւ գիտական—աշխարհիկ աշօթից: Այս ամենն ուսանած անձը ձեռք է բերում այն անհրաժեշտ հոգեվիճակները, որոնք նախադրեալ են Աստուծոյ խօսքի շնորհական իւրացմանը:

Այսօր մեր մէջ շերտաւորում են Աստուածաշնչի հերձուածողական ըմբռումներ, որոնք ծնունդ են առնում Աստուծուց կտրուած շնորհագուրկ գիտակցութիւնից, մարդկային մեծամտու-

¹ Migne, PG, t. 7, col. 966 c

² Հւատամք, Աղօթագիրք. «Գանձասար» հանդէս, 1992, էջ 79

թիւնից, ինքնամիտ—ինքնածին մտեցումներից, հայրերի գրուածքները տգիտաբար արհամարհելուց: Ըստ էութեան՝ Սուրբ Հոգու ներգործութիւնից դուրս ծնուած իւրաքանչիւր միտք աղանդաւոր ընդերք ունի, որքան էլ այն պաճուճուած լինի շինծու բարեպաշտութեամբ եւ արտաքին գիտութեամբ:

Այս աշխատութիւնն Աստուածաշնչի ուղղափառ ըմբռնում ստեղծելու մէկ փորձ է: Աստուածաշունչ Գրքերից ընտրուած է «Երգ երգոցը», որովհետեւ այն ստաւել կարիք է զգում մեկնաբանութեան իր բացառիկ նշանակայնութեան (սիմվոլիզմի) պատճառով: Սուրբ Գրքի արեւելահայերէն թարգմանութեանը՝ զուգահեռ վերլուծաբար ներկայացուած են «Երգ երգոցի» նշանաւոր մեկնութիւնները, որոնք մեզ են աւանդուել գրաբարով: Մեկնողական գրականութեան լեզուաճական խրթնութեան պատճառով պատշաճ նկատուեց հայրերի մեկնութիւնները վերաշարադրել, երբեմն՝ ուղղակիօրէն թարգմանել՝ զերծ մնալով կրկնութիւններից: Յղումներն իմաստային բնոյթ ունեն, եւ փակագծերի մէջ նշուած է, թէ որ հօրն է պատկանում ներկայացուած միտքը: Փաստօրէն, կատարուած է հայրերի հոգեշունչ մտքերի համադրում՝ առանց նոր միտք յօրինաբանելու յանդգնութեան: Վերաշարադրելիս որոշակի հոգեհարազատութիւն է պահպանուած բնագրերի հետ, որպէսզի հոգեբոլորին փոխանցուի այդ գրուածքների շունչը:

Նման մտեցումն ինքնին պահանջում է սուրբգրային բնագրի որոշակի թարգմանութիւն, այսինքն՝ բնագրի թարգմանութիւնը պէտք է համաձայնեցուած լինի հայրերի մեկնութիւնների հետ, որն էլ եղել է մեր բուն նպատակը: Աշխատել ենք առանց աղաւղման արեւելահայերէնով արտացոլել «Երգ երգոցի» բնագրի մեր Եկեղեցու ըմբռումը՝ մեր մարդկային մտքերով չխախտելով հայրերի հոգեբուխ մեկնութիւնների ներդաշնակութիւնը: Այս կապակցութեամբ հարկ է նշել, որ Սուրբ Գրքի բնագրին ընկալանք մտեցումն ամենեւեին էլ խորթ չի եղել հայրերին. իրենց մեկնութիւններում նրանք բազմիցս անդրադառնում են եբրայերէն եւ յունարէն բնագրերին՝ երբեմն ուղղակիօրէն ցոյց տալով եբրայերէնից յունարէն անցման անձշտութիւններ եւ առաջադրելով աւելի ճիշտ տարբերակներ:

Ինչպէս արդեն ասուեց, Սուրբ Գիրքը պէտք է դիտել Սուրբ Հոգու կենդանի աւանդութեան մէջ. Աստուածաշունչը սոսկ գրական կոթող չէ, նրա խօսքերը նախ եւ առաջ զօրութիւններ

1 «Երգ երգոցի» արեւելահայերէն թարգմանութիւնն իրականացուած է Զօհրապէանի տպագրած Սուրբ Գրքի բնագրից (Վեներիկ, 1805): Թարգմանութեան համար շատ արժեքաւոր է եղել հ. Համազասպ Ոսկեանի «Երգ երգոցի» առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը» աշխատասիրութիւնը (Վիեննա 1924) եւ Նրանում զետեղուած ըսնական բնագիրը:

են... Աստուծոյ խօսքը հնչում է աստուածային անհասանելի բարձունքներից, դէպի ուր միշտ պէտք է ձգտի թարգմանչի հոգին. այն կենդանացնում եւ Իր անստուեր լոյսով է լցնում Աստուծոյ կամքին հնազանդ թարգմանչի հոգին եւ թարգմանչի շնորհիւ փոխանցում ընթերցողին: Այսպիսին էին մեր զարմանալի հայրերը, որոնց թարգմանութիւնն անկրկնելի է, որոնց լոյսը դարեդար անուազ լուսաւորում է իրենց գաւակների հոգիները...

ՍՈՂՈՍՈՆ ԱՐՔԱՅԻ «ԵՐԳ ԵՐԳՈՅԸ»

«Երգ երգոցն» առանձնայատուկ ուշադրութիւն է զրաւում Աստուածաշունչ Գրքերի մէջ. արդէն իսկ «Երգ երգոց» գերադրական վերնագիրը, որ արդի հայերէնում նշանակում է «Երգերի Երգ», ակնարկում է այս Գրքի վերին, երկնային, խորհրդական բնոյթը: Անմիջապէս յաջորդող բացատրութիւնը՝ «որ օրհնութիւնների օրհնութիւն է», հաստատում է նրա շնորհական—յայտնութեանկան էութիւնը՝ բացառելով որեւէ մարմնական, երկրաշակ, աշխարհիկ ըմբռում:

Իր արտաքին փայլուն բանաստեղծականութեամբ, ներքին հարուստ իմաստներով, աստուածաբանական խորհուրդների բարձր արտայայտչականութեամբ, մարգարէական հզօր շնչով «Երգ երգոցը» եղել եւ մնում է որպէս հոգեշունչ իմաստութեան եւ սրբազան բանաստեղծութեան անգերազանցելի երկ: Նրանում հանճարեղ այլաբանութեամբ եւ կանխասացութեամբ նկարագրուած է Բրիստոսի փրկագործութեամբ հաստատուած նոր արարչութեան երկնային զեղեցկութիւնը եւ Աստուծոյ հետ խորհրդական առնչութեան, արարածի աստուածացման նրբին ծալքերը եւ աննկարագրելի շերտերը:

«Երգ երգոցը» խորհրդական գրոյց է Բրիստոս—Փետայի եւ Հարս—Եկեղեցու միջեւ: Ըստ եկեղեցական ըմբռման՝ «Երգ երգոցը» նկարագրութիւնն է Բրիստոս—Եկեղեցի, Աստուած—մարդ շնորհական միութեան եւ հիմկտակարանեան բարձրագոյն մարգարէութիւնն է Մեսիայի մասին: Այն նոյնիսկ վեր է մարգարէութիւնից, քանզի նշանակաւ նկարագրութիւնն է մարմնաւորուած Բանի փրկագործութեան պատմական իրադարձութիւնների: Ուստի «Երգ երգոցն» իրաւամբ կարելի է համարել Բրիստոսի նշանական Աւտարանը:

Ս. Աթանաս Աղեքսանդրացին Սուրբ Գրքի իր «Համայնապատկերում» գրում է. «Նրա մէջ ամեն ինչ սկզբից մինչեւ վերջ գրուած է խորհրդաբար, առեղծուածային այլաբանութեամբ. նրա մէջ ամփոփուած դաւանական իմաստները ոչ թէ տառի մէջ են, այլ խորապէս ծածկուած են նրա տակ... Ահա թէ ինչու միայն

կատարեալները կարող են կարգալ այս գիրքը, սակայն նրանք էլ կարողալիս պետք է նկատի ունենան այլաբանութիւնը, որպէսզի անհիմաստների տգիտութեամբ չծաղրուի նրա մէջ շարադրուածը: «Երգ երգոց» է անուանուած նրա համար, որ գալիս է միւս երգերից յետոյ, եւ այս երգից յետոյ չի կարելի սպասել այլ երգ... Բոլոր աստուածային Գրքերը մարգարեանում են Բանի առ մեզ խոնարհուելու եւ մարմնով յայտնուելու մասին... Բոլոր մարգարեութիւններն, ըստ էութեան, երգեր են, իսկ «Երգ երգոցը» որպէս թէ այլեւս չի մարգարեանում եւ կանխատւ, այլ ցոյց է տալիս Նրան, Ում մասին ուրիշները մարգարեացել էին՝ որպէս եկած եւ վերցրած մարդկային մարմինը: Ուստի «Երգ երգոցը» որպէս թէ երգում է Բանի մարդկային բնութեան հետ միաւորման հարսանաց երգը... Ինչպէս Օրէնքում կայ Սրբութիւնը եւ Սրբութիւնից յետոյ՝ Սրբութիւն Սրբոցը, իսկ Սրբութիւն Սրբոցից յետոյ արդէն աւելի ներքին տեղ չկայ, այնպէս էլ երգերից յետոյ դեռ կայ «Երգ երգոցը», իսկ «Երգ երգոցից» յետոյ արդէն անկարելի է սպասել աւելի ներքին եւ նոր խոստման, քանզի Բանը մի անգամ մարմին եղաւ եւ կատարեց [փրկութեան] գործը...»¹:

Այս իմաստով «Երգ երգոցը» նշանակաւ աստուածաբանութեան ամենաբարձր երկն է: Բանի մարմնաւորման տնօրինական նախախնամութեան, Զրիստոս—Եկեղեցի առնչութեան անպատմելիութիւնը եւ անքննելիութիւնը ներկայացուած է անկրկնելի նշանակաւ մտքով եւ այլաբանական նկարագրութեամբ, որոնք մեզ հնարաւորութիւն են ընձեռում թափանցել աստուածգիտութեան անմատոյց եւ զերուսաւոր մէզի² մէջ, այսինքն՝ մուտք գործել խորհրդական աստուածաբանութեան լռութեան մէջ:

Այսպիսով, Եկեղեցին ընդունում է, որ «Երգ երգոցն» այլաբանութիւն է՝ բարձրագոյն կրօնա—հոգեւոր իմաստով: «Երգ երգոցի» այլաբանական ըմբռնումը հին հրեական եւ թրիստոնէական մեկնիչների համար միանգամայն բնական եւ անխուսափելի է, եւ ահա թէ ինչու: Արդէն իսկ երկի վերտառութեան գերադրական իմաստն ինքնին ասում է, որ հեղինակը նրա պարունակութեանը վերագրում է գերագոյն իմաստ եւ բնաւ չէր կարող տառացիորէն տեսնել մարմնական սիրոյ նկարագրութիւն: Կարո՞ղ էր արդեօք այլ կերպ լինել, որ ճշմարիտ իսրայէլացին այդպիսի գիրքը վեր դասէր սաղմոսներից, Մովսէսի երգից, մարգարէների հոգեշունչ խօսքերից: Վերջապէս, «Երգ երգոցի» այլաբանական, ոչ տառացի ըմբռնումն անխուսափելի է նրա ամբողջական ընկալման համար.

տառացի ըմբռնման դէպքում անմիջապէս ծառանում են մի շարք անլուծելի հակասութիւններ... «Երգ երգոցի» Փեսան միաժամանակ հովիւ է [Ա 6, Ջ 2] եւ արջայ [Ա 3, Գ 11]. արդէն իսկ սկզբից պարզում է, որ Փեսան ստինքներ ունի [Ա 1]... Հարսը մերթ հովուտի է [Ա 7], մերթ՝ այգու պահապան [Ա 5], մերթ՝ որպէս թագուտի [Ջ 7—8]: Իրենց յարաբերութիւններում Փեսան եւ Հարսը մերթ եղբայր ու քոյր են [Դ 12], մերթ՝ Փեսայ ու Հարս կամ ամուսիններ [Ա 14—16, Բ 6—7]: Այնուհետեւ գործողութիւններում Հարսը եւ անշափահաս է [Ը 8], եւ կատարեալ [Ջ 8]. մերձ լինելով իր Սիրեցեալի հետ՝ Հարսը չգիտի Նրա տեղը [Ա 6] եւ փնտրում է Նրան թողաքի մութ փողոցներում [Գ 2—3] երուսաղէմական կանանց խմբի մասնակցութեամբ [Ե 8—17], որոնց պարբերաբար տարօրինակ կերպով երդուեցնում է [Բ 7, Գ 5, Ե 8, Ը 4], թողաքի պահապանները հանդիպում են Նրան, զարկում եւ հանում թողը [Ե 7]...

Այս հակասութիւնները, որոնք անլուծելի են տառացի ընկալման դէպքում, ինքնին ակնարկում են այլ բարձրագոյն եւ այլաբանական մեկնութիւն: Այսուհանդերձ, թէ՛ հրեական սինագոգի, թէ՛ Եկեղեցու այլաբանական մեկնութիւնների ընդհանուր ներդաշնակութիւնը երբեմն խզուել է առանձին ձայների աղմուկով, ովքեր փորձել են տառացիորէն եւ ուղղակիորէն ըմբռնել եւ բացատրաբանել «Երգ երգոցը»: Սակայն դրանք այս կամ այն կերպ ընդհանուր աւանդութեան հետ կապը խզած մարդկային անհատական կարծիքներ են եւ ոչ աւելին:

Սակայն նոյնիսկ այլաբանական մեկնութիւնների դէպքում կատարեալ ներթափանցման եւ ըմբռնման հասնելը յոյժ դժուար է եւ երբեմն՝ անհնարին, որովհետեւ Սուրբ Գիրքը եւ յատկապէս «Երգ երգոցն» ունեն անքննելի խորքեր եւ իմաստներ, իրադարձութիւնների յաջորդականութեան անորսալի ծաւալումներ, որոնք պատուած են աստուածային անճանաչելիութեան ամպով:

Համաձայն Ռոզինետի վկայութեան՝ Իսրայէլում մինչեւ երեսուց տարեկան հասակն արգելուած էր կարգալ այս գիրքը (ինչպէս նաեւ՝ Աստուածաշնչի սկիզբը, Եզեկիէլի մարգարեութեան սկիզբն ու վերջը): Ս. Աթանաս Աղեքսանդրացու խօսքերից պարզ է, որ նման գգուշութիւն անհրաժեշտ է նաեւ Եկեղեցում: Ուշագրաւ է ս. Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնութեան ներածութեան եզրափակումը. «Ով կարդում է այս գիրքը, պետք է մտքի միտքը եւ խորհուրդներն ամէն տեսակ մարմնաւոր ամուսնական մտածութիւններից եւ ապա ձեռնամուխ լինի լսելու: Զանգի այս գիրքն աստուածաբանակ Զորէք լեռն է. եւ ինչպէս այնտեղ, երբ գազանը մերձեցնում էր լեռանը, ջարկոծում էր, նոյնպէս էլ [նա], ով գազանաբարոյ մտքով մերձեցնում է այս գրքի երեւելի խօսքերին, նոյնպիսի պատուհաններ է կրում: Ուստի պետք է հեռանանք ամէն տեսակ մարմնական խորհուրդներից՝ փակելով

1 Христ. Чтен. 1841, Ч. 4, стр. 370-374

2 Տե՛ս «Աթենացիների Դիոնեսիոս Արիսպագացի եպիսկոպոսի [թուղթը] եփեսացիների Տիմոթէոս եպիսկոպոսին խորհրդական աստուածաբանութեան մասին». «Գանձասար» հատկու. Բ հատոր 1992, էջ 144—150:

մարմնի աչքը եւ բացելով հոգու աչքը, որպէսզի Մովսէսի պէս կարողանանք ելնել այս աստուածաբնակ իմանալի լեռը եւ նրա վրայ, ըստ կարողութեան, յայտածել աստուածային խորքերի ծածուկ իմաստները...»¹:

* * *

«Երգ երգոցն» Աստուածաշնչի ամենից մեկնաբանուած գրքերից է: Նրա բազում մեկնութիւններն մէջ մեզ համար կարելի էր Եկեղեցու այլաբանական—խորհրդական մեկնութիւններն են եւ յատկապէս նրանք, որոնք մեզ են օրհնողուել մեր հայրերի կողմից: Այդ մեկնութիւնները, ծնունդ առնելով նրանց աստուածամերձ կեանքից, հոգեշունչ բնոյթ ունեն, այսինքն՝ գտնուում են Սուրբ Հոգու կենդանի օրհնութեան մէջ, որի կրիչն է Սուրբ Եկեղեցին: Այդ մեկնութիւնները դարերով կրթել են Հայ Եկեղեցու զաւակների միտքը՝ զերծ պահելով նրանց հոգեկործան շեղումներից եւ դաւանական աղաւաղումներից եւ կարելի էր նշանակութիւն ունեն յատկապէս այսօր, երբ մեծապէս կտրուած ենք մեր նախնիների լուսաւոր աւանդութիւնից, երբ մեր իրականութիւնը հեղեղուած է այլախոհ եւ օտարամտ գաղափարներով:

Սոյն աշխատութիւնն իմաստային համապատում է Հիպոդիոտոս Բոսորացու, Ռոզինէս Աղեքսանդրացու, Գրիգոր Նիսացու, Վարդան Արեւելցու, Գրիգոր Տաթեւացու մեկնութիւնների: Ընդգրկուած են բոլոր մեկնութիւնները մինչեւ Տաթեւացի, որոնք իրաւամբ կարելի է համարել «դասական», թանգի Գրիգոր Տաթեւացին հայ մեկնաբանական (եւ ոչ միայն) մտքի մեծագոյն ընդհանրացնողն ու դասակարգողն է: Մենք մտադիր էինք նշուած երկերին կցել ԺԸ—ԺԹ դդ. (Աբրահամ Կ. Պօլսեցի, Յակոբ Կարնեցի, Խաչատուր Կարնեցի, Պետրոս Բերդումեան), ինչպէս նաեւ մի թանկ անյայտ հեղինակների մեկնութիւններ, սակայն ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ դրանք կառուցուած չեն դասական մեկնաբանական մտքի լուրջ իմացութեան վրայ եւ լի են եկամտու տարրերով: Ուստի աշխատութիւնն աւելի ու աւելի կխճողուէր նորանոր եւ յաճախ՝ ոչ էական բացատրութիւններով՝ դժուարացնելով հայրերի հոգեշունչ մեկնութիւնների իւրացումը:

¹ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մեկնութիւն «Երգոց Երգոյն» Սողոմոնի, «Սբբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը», Վենետիկ, 1840, էջ 277

Ս. Գրիգոր Նիսացու մեկնութիւնը բաղկացած է տասնհինգ խօսքերից կամ ճառերից, որոնք ընդգրկում են «Երգ երգոցի» Ա1—Չ8 մեկնութիւնները¹: Սակայն հայերէն ձեռագրերը մեզ են հասցնում միայն առաջին տասնչորսը², որոնք ընդգրկում են Ա1—Ե16 մեկնութիւնները³: Երկը սկսում է «Գրիգորի եպիսկոպոսի Նիսացույ թուղթ յաղագս «Երգոյ երգոց» ներածական թղթով, ուր սուրբ Գրիգորը սուրբգրային բազում տեղիքների մէջբերմամբ հաստատում է, որ այլաբանութիւնը (կամ առակաւոր խօսքը) յատուկ է Սուրբ Գրքի՝ որն իր ամենաբարձր կատարելութեանն է հասել «Երգ երգոցում»: Արդէն իսկ Նիսացու օրօք գոյութիւն են ունեցել բազում մեկնութիւններ, որոնցից նա առեւտնացնում է Ռոզինէսի աշխատասիրութիւնը: Իր ժամանակակից ուսումնասիրողների մասին ասում է. «Կեսը վերցնելով նրանցից, ովքեր աւելի յարմար նշանակներ ունէին նրանց համար, [այսինքն՝ «Երգ երգոցի» խօսքերի], եւ մնացածն ինձանցի վերցնելով, որ հարկաւոր էր խօսքն ամբողջացնելու համար...»: այս արտայայտութիւնից պարզ է, որ ս. Գրիգորն իր ժամանակի նշանակական աստուածաբանութեան սիւներից է: Այսուհանդերձ, նա կամենում է *աշխատութիւնն ստանդի* (հաւանաբար՝ անբաւարար համարելով եղած մեկնութիւնները)՝ յիշելով աստուածային Պօղոսին. «Թող իւրաքանչիւր ոք իր վարձը ստանայ՝ ըստ իր վաստակի» [Ա Կոր. Գ 8]:

Նիսացու այս աշխատութիւնը մեկնաբանական մտքի գլուխգործոց է. աստուածաբանական խորութիւնները, ներանձնական կեանքի անդրադարձները, լեզուի անկրկնելի շքեղութիւնը ցոյց են տալիս երկի բացառիկ հոգեշունչ բնոյթը: Ընթերցողն անմիջապէս զգում է Սուրբ Հոգու հեղման ծաւալումները եւ սքանչանում տիեզերալոյս ուսուցչի շնորհառատ վարդապետութեամբ:

1 Տե՛ս Migne, PG, 44, 755-1120:

2 ՄՍ. ձեռ. N2684 (1ա—240բ) N1013 (41ա—120բ), N5253 (65ա—210բ), N1152 (1ա—136ա), N1851 (81—133)

3 Վարդան Արեւելցին, որի մեկնութիւնը կառուցուած է Նիսացու մեկնութեան վրայ, Չ6 մեկնութեան վերջում գրում է. «Մինչեւ այստեղ մեկնել է Գրիգոր Նիսացին, եւ սրանից յետոյ առաջնորդ ենք ինչորում Սուրբ Հոգին...» (ՄՍ. ձեռ. N6720, 130ա): Այստեղից պարզ է, որ Արեւելցուն յայտնի է եղել Նիսացու տասնհինգերորդ ճառը կամ հայերէն. կամ յունարէն բնագրով:

Ուշագրաւ է, որ սուրբ Գրիգորը, զգուշացնում է, երբ գիտելիքն անմիջականօրէն Սուրբ Հոգուց չի ստացել¹, որքան էլ միտքը գեղեցիկ եւ խորը լինի:

Այս՝ մեկնութիւնը սոյն աշխատութեան մէջ առանցքային տեղ է գրաւում:

Որոգիներ Աղեքսանդրացու (+254) անունով մեզ հասած հայերէն մեկնութիւնը² անվաւեր է եւ չի նոյնանում ո՛չ հերոնիմեան, ո՛չ ռուփինեան թարգմանութիւնների հետ: Ըստ երեւոյթին, սոյն երկն ինչ—որ հայ հեղինակի համառօտ խորհրդածութիւններ են Որոգիների մեկնութեան վրայ: Հաւանաբար հեղինակը ներսէս Լամբրոնացի է³: Այս երկը յայտնի չէ Նարեկացուն, որը սակայն լայնօրէն գործածում է Արեւելցին: Այսուհանդերձ, աշխատութիւնը շատ կարեւոր է մեզ համար, քանզի այն ինչ—որ իմաստով հայ մեկնաբանական մտքի արտադրանք է, որի մատուցումը մեր բուն նպատակն է: Ուշագրաւ է, որ Վարդան Արեւելցու մեկնութեան մեջ առկայ Որոգիների անունով որոշ պատառիկներ չեն համընկնում սոյն մեկնութեան հետ:

Հիպոդիտոս Բոսորացու (+236) անունով յայտնի են երկու մեկնութիւններ. մէկը՝ վաւերական, միւսն՝ անվաւեր: Երկուսն էլ թարգմանուել են հայերէն: Վաւերականի թարգմանութեան ապացոյցն է հայերէնից վրացերէն կատարուած թարգմանութիւնը, որի հայերէն բնագիրը չի պահպանուել: Վարդան Արեւելցու մեկնութեան մէջ առկայ են բաւականին հատուածներ թէ՛ վաւերականից, թէ՛ անվաւերից: Այդ հատուածները սակայն, ըստ մեզ, ոչ թէ Վարդան Արեւելցու կողմից են մէջբերուած, ինչպէս ընդունուած է կարծել (Ն. Մառ, հ. Հ. Ռսկեան), այլ յետագայ յաւելումներ են: Ահա թէ ինչու. մեզ յայտնի հնագոյն ձեռագիրն այդ յաւելումները չունի⁴: Մնացած ձեռագրերում այդ հատուածներն աւելացուած են խօսքի մեկնութիւնների վերջում: Եւ վերջապէս, Արեւելցին Հիպոդիտոսի մեկնութեան մասին իր նախադրութեան մէջ չի յիշատակում՝ ի տարբերութիւն Նիսացու, Նարեկացու, Որոգիների:

Հիպոդիտոսի անունով մեզ հասած հայերէն մեկնութիւնը¹, ըստ երեւոյթին, ինչ—որ հայ հեղինակի խորհրդածութիւններ են հիպոդիտոսեան մեկնութիւնների վրայ: Նորից այդ հեղինակը թեաքար Ներսէս Լամբրոնացին է, որի մասին է ակնարկում N4066 ձեռագրում առկայ Հիպոդիտոսի մեկնութեան յիշատակարանը. «Ես՝ բազմամեղ հոգի Կոստանդին, զրի գրեալ յոյժ գեղեցիկ սրբոյ հաւրն մերոյ տեսնն Ներսիսի Տարսուհի եպիսկոպոսի եւ ի միջոյն ի վեր իւր իսկ մեկնեալ...»²:

Չանազանելու համար Հիպոդիտոսի վաւերական եւ անվաւեր մտքերը, անվաւեր մտքերի դէպքում փակագծերում «Հիպոդիտոս» անունը շեղատառ ենք ներկայացնում:

Ս. Գրիգոր Նարեկացու (+1003) մեկնութիւնը³ առաջին հայալեզու մեկնութիւնն է: Այն հիմնականում հիմնուած է Նիսացու մեկնութեան վրայ, «որ կատարեալ վարդապետ էր եւ հոգիաբնակ»⁴: Շատ տեղերում Նարեկացին աւելի հանգամանալից մեկնութիւն ցանկացողներին յղում է Նիսացու մօտ: Փաստօրէն, բուն Նարեկացին սկսում է Ջ զլխից, երբ վերջանում է Նիսացու մեկնութիւնը: Սակայն նոյնիսկ այն տեղերում, ուր Նարեկացին համառօտակի շարադրում է Նիսացու մեկնութիւնը, կան յոյժ ուշագրաւ ինքնուրոյն մտքեր: Այս մեկնութիւնը «Երգ երգոցի» հայերէն մեկնութիւններից միակ տպագիր մեկնութիւնն է, որի պատճառով էլ առաւել յայտնի է մեր իրականութեան մէջ:

Ս. Վարդան Արեւելցու (+1271) մեկնութիւնը⁵, որը որոշ ձեռագրերում անուանում է պարզութիւն⁶ (օրինակ՝ ձեռ. N4834), հայ մեկնաբանական մտքի կարեւոր երկերից է: Արեւելցին դիւրաբան կերպով փորձում է ներկայացնել իր նախորդ մեկնութիւնների ամբողջական պատկերը: Երկի հիմքը Նիսացու մեկնութիւնն է. Արեւելցին պարզաբանելով շարադրում է «Եկեղեցու մեծ աղբիւր» ս. Գրիգոր Նիսացու մտքերը՝ լրացնելով Որոգիների եւ Նարեկա-

1 Տե՛ս ՄՄ. ձեռ. N4066 (334ա—349բ), N1138 (127ա—143ա), N3215 (115բ—121բ):

2 Տե՛ս ՄՄ. ձեռ. N4066, էջ 349բ:

3 Գրիգորի Նարեկայ վանից վանականի մեկնութիւն «Երգոց Երգոյն» Սողոմոնի, տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը», Վենետիկ, 1840, էջ 271—367:

4 Տե՛ս Նոյն, էջ 271:

5 Տե՛ս ՄՄ. N4066 (193ա—218բ), N4834 (1ա—58ա), N1460 (244ա—297ա), N6720 (88բ—147բ):

6 պարզութիւն—պարզաբանութիւն

1 Տե՛ս Դ1 սոյն աշխատութեան մէջ:

2 ՄՄ. ձեռ. N4066 (350ա—365բ), N2602, N6720 (62ա—87բ)

3 Այս է ակնարկում, օրինակ, N2602 ձեռագրում գետեղուած բնագրի վերտառութիւնը՝ «Նաւաք Երոգիների ի Ներսէս «Երգ երգոցի» մեկնութիւն»: Բնագիրը ներկայացուած է Լամբրոնացու՝ Սողոմոնի գրքերի մեկնութեան շարքում:

4 Տե՛ս «Հոգիապայծառ սուրբ հաւրն Վարդանայ լուսաւոր վարդապետի արարեալ համառատ մեկնութիւն «Երգոյ երգոցն» պարզ եւ դիւրահաս», ՄՄ. ձեռ. N4066 (193ա—218բ):

նաբանական միտքը այսօրուայ մարդուն, որպեսզի նա իր սուրբ-
գրային ըմբռնումները ձեւաորի եկեղեցու սրբազան աւանդութեան
վրայ:

Իմ խորին երախտագիտութիւնն եմ յայտնում ս. Մեսրոպ Մաշ-
տոցի անուան Մատենադարանի աշխատակիցներ Յակոբ Զեռնեանին
եւ Յովհաննէս Հայրապետեանին, որոնց օժանդակութիւնը մատենագի-
տական հարցերում մեծապէս նպաստեց սոյն աշխատութեան իրակա-
նացմանը:

տ. Մեսրոպ քահանայ Արամեան

ցու մեկնութիւններով (յետագայում նաեւ աւելացել են հիպոդիտո-
սեան հատուածները). «Չմնացեալն «յերգոց Երգոյն»... առաջնոր-
դութեամբ Ռոզդիննա համառօտեալ եւ զայս սակաւ ինչ եղեալ ի
Գրիգորէ Նարեկացոյ»¹: Ս. Վարդան Արեւելցին հայ մեկնաբանա-
կան (եւ ոչ միայն մեկնաբանական) մտքի ամենակարկառուն դէմ-
քերից է: Ահա թէ ինչպէս է նրա անունը յիշատակուում ձեռագրե-
րում. «Նոզիապայծառ սուրբ հաւրն Վարդանայ լուսաւոր վարդա-
պետի արարեալ...»², «Եռամենծի սրբոյ Վարդանայ վարդապետի
արարեալ»³, «Նոզիապայծառ եւ տիեզերալոյս վարդապետին Վար-
դանայ արարեալ...»⁴: Ս. Գրիգոր Տաթեւացին նրան միշտ յիշում է
Մեծն Վարդան անունով: Նկատի ունենալով նրա լուսաշախիղ
կեանքը եւ աստուածաբանական անկրկնելի ժառանգութիւնը՝ չվա-
րանցիցը նրան «սուրբ» մակագրութեամբ ներկայացնել, ինչպէս
եւ ներկայացնում են մեր ձեռագրերը:

Արեւելցին մի ամբողջ մեկնաբանական դպրոցի հիմնադիր
է: Նա նախորդներին համակարգելիս սոսկաբար չի շարադրում
նրանց մտքերը, այլ առաջադրում է նաեւ սքանչելի մեկնութիւն-
ներ, որոնք չունեն նախորդները: Սրանում համոզուեցինք՝ մանրա-
մասնաբար բաղդատելով Նիւսացու եւ Արեւելցու մեկնութիւնները:
Իսկ երբ սկսուում է բուն Արեւելցին («Երգ երգոցի» մեկնութեան
մէջ Զ7-ից), ուղղակիօրէն հաւաստիանում ես նրա վարդապետա-
կան հզօր շունչի մէջ:

Ս. Գրիգոր Տաթեւացու (+1409) մեկնութիւնը⁵ դժուարիմաց
խօսքերի լուծմունք⁶ է: Երկը հիմնականում համառօտ վերաշա-
րադրանք է Արեւելցու մեկնութեան, սակայն անմիջապէս զգացում
է, որ Տաթեւացին քաջատեղեակ է Մեծն Վարդանին նախորդած
բոլոր մեկնիչներին: Տաթեւացին, լինելով հայ աստուածաբանական
մտքի մեծագոյն ընդհանրացնողն ու համակարգողը, իրեն ժառան-
գութիւն հասած աստուածաբանական աւանդը համակարգելիս,
տալիս է բազում հոգեբուխ մտքեր, որոնք չունեն նախորդները, եւ
նրանց մտքերը յաւելում կարելոր հանգոյցներով:

Անշուշտ կարելոր եւ ցանկալի կիիներ այս աշխատութեանը
կցել նշուած բոլոր երկերի ըննական բնագրերը, որպէսզի մեկնա-
բանական մտքի մէջ խորանալ կամեցողները կարողանային օգ-
տուել նրանցից, սակայն դա չափազանց ծաւալուն կդարձներ այս
աշխատանքը եւ կձանրաբեռներ այն ընթերցողի համար: Մեր
նպատակն է եղել հարազատօրէն ներկայացնել մեր հայրերի մեկ-

1 Տե՛ս օրինակ N6720, 88ա:

2 ՄՍ. ձեռ. N4066, 193ա

3 ՄՍ. ձեռ. N4834, 1ա

4 ՄՍ. ձեռ. N2642, 589ա

5 ՄՍ. ձեռ. N1200 (367ա—395բ), N5869 (376բ—399բ)

6 լուծմունք—վերլուծութիւն



«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

ՀԱՆԴԵՐՁ
ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲ
ՆԱԽՆԵԱՑ

ԵՐԳ ԵՐԳՈՑ, ՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է՝ ԱՍՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՐՔԱՅ ՍՈՂՈՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ

Ա

Հարսն ասում է.

**1. Թող համբուրի ինձ Իր բերանի համբուր-
ներով, քանզի Քո սաինքները լաւ են գի-
նուց, եւ Քո իւղերի հոտը՝ բոլոր խունկերից:**

1. Բան—Աստուծոյ մարմնաւորումով Աստուած անընդմիջե-
լիօրէն մերձաւորուեց մարդկային բնութեանը: *Համբուրն* այստեղ
խորհրդանշում է Աստուծոյ եւ մարդու գոյաբանական միութիւնը («Եւ
Բանը մարմին եղաւ եւ բնականեց մեր մէջ...» [Յովհ. Ա 14]): Այս
փրկարար միութեան եր սպասում ողջ արարածը. հրեաները՝ օրէնքով
եւ մարգարէներով, իսկ հեթանոսները՝ արտաքին գիտութեամբ (Աւե-
տարանում դա արտայայտուած է Սիմէոն ծերունու վկայութեամբ
[Ղուկ. Բ 25] եւ մոզերի երկրպագութեամբ [Մատթ. Բ 1]): Այսպիսով,
Հարս—Եկեղեցին, ասելով *թող համբուրի*, արտայայտում է Աստուծոյ
փրկութեան լոյսի հինկտակարանեան սպասումը (Որոգիւնես):

Նիւսացու մեկնութեան մէջ աւելի ընդգծուած է սուրբերի՝ Աս-
տուծոյ հետ խորհրդական եւ ներանձնական—շնորհական միութիւ-
նը... Մարդու հոգին անյագօրէն ձգտում է միաւորուել Աստուծոյ հետ:
Եւ քանի որ Փեսայ—Քրիստոսի խօսքը հոգի է եւ կեանք, իսկ Հոգուն
միաւորուողը հոգի է լինում, եւ կեանքին հպուողը մահուանից վերա-
փոխուում է կեանքի՝ ըստ Տիրոջ խօսքի [տե՛ս Ա Յովհ. Գ 14], ուստի
հոգին բաղձում է մերձենալ հոգեւոր կեանքի աղբիւրին, այսինքն՝
Փեսայի բերանին, որտեղից բխում են յաւիտենական կեանքի խօսքե-
րը եւ լցնում Աստծուն ձգտող հոգին (Նիւսացի):

Համբուրը, համաձայն *Հիպոդիտոսի* մեկնութեան, խորհրդա-
նշում է աստուածոտեսութիւնը, ինչպէս Մովսէսը Սինա լեռան վրայ
առանց միջնորդի («բերան առ բերան») խօսեց Աստուծոյ հետ, սա-
կայն դրան պէտք է նախորդի սրբակենցաղ վարքը (*Հիպոդիտոս*):

Ըստ Լարենկացու՝ վերստին ծնուածներս աղաչում ենք Ծնողին մայրական սիրով համբուրել մեզ, մերձեցնել աստուածային բերանը, որպէսզի մեզ համբուրելիս արբենք Նրա բերանից: Այս մասին Քրիստոս Ինքը վկայեց ամենասուրբ բերանով. «Ով ծարաւ է, թող գայ Ինձ մօտ եւ խմի» [3ովհ. է 37]: Լարենկացին նաեւ յիշատակում է անառակ որդու առակը. լինելով անառակ որդիներ՝ համբուրում ենք երկնաւոր Հօրից, եւ այն սէրը, որով սիրեց մեզ, աղաչում ենք, որ որպէս համբոյր առաւելանայ (Լարենկացի):

Տաթեւացին որպէս կատարեալ միաւորութեան եւ հոգեւոր համբոյրի օրինակ է բերում Տիրոջ Մարմնի եւ Արեան հաղորդութիւնը: Ծաշակելով Տիրոջ Մարմինը եւ Արիւնը՝ հաւատացեալները խորհրդականօրէն միաւորում են Աստուածութեան հետ:

Այժմ քրիստոնեաները երկու եղանակով են համբուրում Քրիստոսին՝ անընդմիջաբար եւ միջնորդութեամբ: Անընդմիջաբար համբուրում ենք ներքին զգայութիւններով՝ իմացմամբ, աղօթքով, հատաքով, յոյսով, սիրով եւ զոջմամբ, ինչպէս նաեւ նշաններով՝ քահանայի օծութեամբ, պաշտօնեայի ձեռնադրութեամբ եւ այլն: Նմանապէս համբուրում ենք արտաքին զգայարանների միջնորդութեամբ՝ շուրթերով Խաչ, Եկեղեցի, Արքութիւն համբուրելով եւ ս. Հաղորդութեամբ, խօսելով եւ լսելով Աստուծոյ խօսքը, ինչպէս նաեւ՝ տեսնելով, հոտոտելով եւ շօշափելով [սրբութիւնները] (Տաթեւացի):

Ստինքները նշանակն¹ են սրտի, որոնցով անձը սնում է՝ հատաքի միջոցով իր վրայ հրաւիրելով աստուածային կաթի առատ շնորհը: Այստեղ հոգեւոր ստինքների շնորհական կերակուրը գերադրում է մարդկային իմաստութեան եւ հանձարի գիւտուն: Տեսնելի եւ հասանելի երեւոյթների ողջ զօրութիւնն անկարող է զուգահաւասարու ել աստուածային պարզագոյն ուսման կերակուրներին: Աստուածային խօսքի վարդապետութիւնն աւելի կատարեալ է, քան արտաքին իմաստութեան գիւտին (Նիւսացի):

Ստինքները խորհրդանշում են նաեւ առաքեալների եւ մարգարէների վարդապետութիւնը: Հոգեւոր ստինքների կաթը ճաշակողները լցում են աստուածային ուրախութեամբ, որը վեր է այս աշխարհի գիւտու ժամանակաւոր ուրախութիւնից (Հիպոդիստոս):

Խունկն առաքիւնութիւնն է: Ինչպէս խունկն ունի քառամասնեայ բաղադրութիւն (ստաշխ, եղունգ, քաղթան, կնդրուկ)(Ելք Լ 34), այնպէս էլ՝ առաքիւնութիւնը (խոհեմութիւն, արհուութիւն, ողջախոհու-

¹ Եշանակն— սիմվոլ

թիւն, արդարութիւն) (Նիւսացի): Խունկը, մերձեցնելով հրին, բուրում է իր հոտը. նոյնպէս եւ չորս առաքիւնութիւններով զարդարուած հոգին, մօտեցնելով ու հպուելով աստուածային սիրոյ հրին, բուրում է երկնային կեանքի անուշահոտութեամբ: *Խունկը* նաեւ խորհրդանշում է մեղքերի՝ ապաշխարութեամբ քաւութիւնը եւ հաշտութիւնն Աստուծոյ հետ (Տաթեւացի):

Իւղը (կամ *Միտոնը*) նշանակն է Աստուածութեան (ինչպէս նաեւ՝ Սուրբ Հոգու շնորհների (Հիպոդիստոս)), իւղի անուշահոտութիւնն Աստուծոյ ներկայութեան բուրմունքն է: Աստուածային իւղի օծմամբ, այսինքն՝ շնորհով է մարդը ստանում Աստուծոյ ամբողջականութիւնը, հագնում Աստուծուն, աստուածանում եւ ստանում հոգեւոր, երկնային, վերին կեանքի բերկրանքը եւ ոչ թէ՛ ըստ առաքիւնութիւնների կամ ապաշխարութեան կամ գործերի: Ահա թէ ինչու աստուածային իւղերի (յոզնակիութեամբ արտայայտուած է շնորհների բազմազանութիւնը) հոտը գերադասելի է քլոր խունկերից (Նիւսացի):

Իւղը նաեւ խորհրդանշում է ապաշխարութեամբ մաքրուած հոգու բոյրը. ապաշխարողների վարքն աւելի անուշահոտ է, քան փարիսեցիների ձեւական առաքիւնութիւնը (Արեւելցի):

2. Զո անունը հեղուած անուշ իւղ է, դրա համար օրիորդները սիրեցին Զեզ եւ լղէպի իրենց] ձգեցին Զեզ:

3. Զո իւղերի յետեւից կընթանանք մենք:

Հարսը պատմում է օրիորդներին Փեսայի մասին, թէ ինչ է շնորհել իրեն.

Արքան տարաւ ինձ Իր սենեակը:

Հարսը պատմում է օրիորդներին, եւ նրանք ասում են.

Յնձանք եւ ուրախ լինենք քեզանով եւ սիրենք թո ստինքները զինուց աւելի:

Օրիորդները Հարսին ասում են Փեսայի անունը.

Ուղղութիւնը սիրեց քեզ:

2—3. Աստուծուն տրուած ոչ մի անուն ցոյց չի տալիս Աստուծոյ բնութիւնը, քանզի այն անգնիւն է եւ անձանաչելի, սակայն աստուածային անունները բերում են Աստուծոյ որոշակի ձանաչողութեան: *Հեղուած իւղ է Զո անունը* արտայայտութիւնը մարգարեական խորհուրդ է կրում... *Հեղուած իւղը* Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իւղը հեղում է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւոր-

ում նրա հետ, օծում եւ աստուածացնում այն: Լախայալիտեան Բանը հեղուում է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից (Լիւսացի—Տաթեւացի):

Օրհորդները հրեշտակներն են, ինչպէս նաեւ՝ մեղքերից մակացածները, այսինքն՝ հրեշտակային վարք ստացածները (Լարեկացի): Ըստ Լիւսացու՝ օրհորդները երիտասարդներն են՝ թէ՛ այր, թէ՛ կին, որոնք հաւատքի մէջ կատարեալ են մտքով, արի՛ վարքով եւ ողջախոհ՝ խորհուրդներով: Աստուածային գեղեցկութիւնը ցանկալի է նրանց, ովքեր հեռացել են մանկական կրքերից, ալեկոծութիւններից եւ տխմարութիւններից, նաեւ՝ ծերունական հնութիւնից, կարկամութիւնից եւ տկարութիւնից, որոնք կայուն են ցանկութիւնների մէջ, կաւարեալ հոգեւոր հասակ են ձեռք բերել, ողջ սրտով եւ զօրութիւններով սիրում են երկնայինը: Այդպիսիներին Լիւսացին անուանում է *հոգեւոր կոյսեր* կամ *օրհորդներ* (Լիւսացի):

Աստուածային իւրի փափագումը զուարթացնում է ցանկացողների սրտերը: Ահա թէ ինչու օրհորդները Փեսայի իւղերի յետեւից ընթացան. բոլոր սուրբերը թողեցին այս աշխարհը եւ գնացին Լրա յետեւից (*Հիպոդիտոս*):

Առաքինութեամբ աճած եւ մաքուր այս օրհորդները, արդէն իսկ աստուածային խորհուրդների առագաստում լինելով, սիրում են Փեսայի գեղեցկութիւնը եւ սիրոյ միջոցով Լրան դէպի իրենց դարձնում: Այսպիսով, նրանք իրենց մէջ են ձգում անապական Փեսայի սէրը, նրանք ցանկանում են Տէր Աստուծոյ յետեւից գնալ. նրանց բուռն սիրոյ պատճառն աստուածային իւղերի անուշահոտութիւնն է, դէպի որը, մոռացած ամեն մի երկրաւոր բան, ընթանում են նրանք (Լիւսացի):

Ինչո՞ւ է Հարսն օրհորդներին պատմում ծածուկ խորհուրդը: Հարսը, չկարողանալով ծածկել իր խնդրութիւնը, յայտնում է օրհորդներին Աստուծոյ սքանչելիքները, որպէսզի նրանք ուսանեն եւ սրբութեամբ ընթանան՝ վայելելու Լոյսն բարիքները (Տաթեւացի):

Աստուած կատարում է Իրենից երկհիւղածների կամքը եւ յուսացածից աւելին շնորհում... Աստուած մարդկային բնութիւնը պատուեց մայրութեամբ սուրբ Կոյս Մարիամով, որը դարձաւ Լրա առանձնաբան—*սենեակը*, ուր միացան Թագաւորը եւ Թագուհին: Բանն Աստուած Հօր եւ Սուրբ Հոգու հետ խորհրդակցաբար լռելեայն միաւորուեց մեր բնութեան հետ եւ, վերցնելով այն, տարաւ Իր սենեակը՝ երկինքների երկինքը, յարութիւն տուեց մարդկային բնութեանը եւ անպատում ժառանգութեան արժանացրեց... *Սենեակ* է անուանում

նաեւ հազարամեայ արքայութիւնը¹ [տե՛ս Յայտ. Ի 4,6], ուր փոքրն աւելի մեծ է, քան հինի մէջ՝ Յովհաննէսը [Մատթ. ԺԱ 11] (Արեւելցի):

Տաթեւացին, հետեւելով Հիպոդիտոսին, նկարագրում է Աստուծոյ հետ ներանձնական յարաբերութեան խորհուրդը: *Սենեակը* սիրտն է (Հիպոդիտոս). *եւ տարաւ ինձ Իր սենեակը* արտայայտութիւնը ցոյց է տալիս սուրբերի՝ Աստուծոյ հետ իրենց սրտում առանձնանալու եւ միաւորուելու խորհուրդը (Տաթեւացի):

Հինկտակարանեան եւ նորկտակարանեան բոլոր սուրբերը ցնծում են Հարսի հետ եւ կիսում ուրախութիւնը. նրանք հոգեւոր վարդապետութեան կաթը նախընտրում են արտաքին իմաստութեան գինուց (Արեւելցի):

Աստուած անուանում է *Ուղղութիւն*: Ուղղութիւն, ճշմարտութիւն եւ Արդարութիւն է Աստուած եւ ուղղութիւն է բոլորի համար (*Հիպոդիտոս*): Իր բնութեամբ լինելով ուղիղ՝ Աստուած սիրում է ուղիղներին՝ սրտով, հաւատքով, գործով ու խօսքով մաքուրներին, եւ այսպիսիները բնակում են Աստուծոյ մօտ: Ուստի Աստուծոն փնտրողները պէտք է ունենան մտքի ուղղութիւն, բերանի ճշմարտութիւն եւ գործերի արդարութիւն. մտքի ուղղութիւնը սկիզբն է, բերանի ճշմարտութիւնը՝ միջինը, գործերի արդարութիւնը՝ վերջը (Տաթեւացի):

Հարսն ասում է.

4. Մեւ եմ ես եւ գեղեցիկ, դուաւրե՛ր Երուսաղէմի, Կեդարի վրանների եւ Սողոմոնի՝ խորանի պէս:

4. Սելութիւնը խորհրդանշում է մեղքը եւ նրա հետեւանքները: *Սեւ եմ*, այսինքն՝ մեղաւոր եմ, հեռացայ դրախտի փառքից, սակայն՝ *գեղեցիկ*, քանզի փրկագործուել եմ Զրիստոսով, Աստուծոյ շնորհով զոջացել, ապաշխարութեան աւագանով մաքրուել մեղքի սելութիւնից, վերստացել նախաստեղծ գեղեցկութիւնը (*Հիպոդիտոս*—Որոգինես):

Կեդար թարգմանում է խաւար, իսկ *Սողոմոն*՝ խաղաղութիւն: Այսինքն՝ ուզում է ասել, թէ՛ մի ժամանակ խաւար էի Կեդարի վրանների պէս, խաւարի եւ մեղքի իշխանութեան տակ էի, սակայն Աստուծոյ լոյսի ծագումով վերստին լուսաւորուեցի, ապաշխարութեամբ թօ-

¹ Հազարամեայ արքայութիւնը, ըստ Եկեղեցու վարդապետների, Առաջին գալուստի Երկրորդ գալուստ ընկած ժամանակահատուածն է:

թափուեցի սեւ աղջամուղջից եւ պայծառացայ հաւատքով: Թէպէտ մոլորութեան հոգու մէջ էի, սակայն այժմ ողողուեցի լուսաւոր շնորհներով (Նիւսացի): *Կեդար*, ըստ *Հիպոդիտոսի*, թարգմանում է պանդխտութիւն, որով ակնարկում է մեր՝ դրախտից արտաքսուելը եւ երկրի վրայ պանդխտութեամբ բնակուելը: Իսկ *Սողոմոն* թարգմանում է խաղաղութիւն, որը Քրիստոս տուեց մեզ՝ երկնքից պանդխտացածներիս, ինչպէս ասում է Պօղոսը. «Եկաւ եւ խաղաղութիւն անտարանեց հեռաւորներին եւ մերձաւորներին» [Եփես. Բ 17], եւ դարձեալ՝ «...Պանդիստներ չէք, այլ՝ սուրբերի քաղաքակիցներ եւ Քրիստոս Աստծուն ընդունողներ» [Եփես. Բ 19] (*Հիպոդիտոս*):

Ինչո՞ւ է երկնայիններին անուանում *դուստրեր*. ա) դուստր անունով ցոյց է տալիս, որ կենդանածնուած եւ արարուած են Աստծուց, բ) որպէս դուստրեր մնում են իրենց Արարչի մօտ եւ մեզ պէս չեն, որ հեռացանք դրախտից, գ) կոյս—դուստրն անելի համեստ եւ պատկառոտ է, ինչպէս [տեսիլքի մէջ սերովբէները] ծածկում էին ձեռքերն ու ոտքերը, դ) Օնոդի կամարարներն են (Տաթեւացի):

5. Մի՛ նայէք ինձ, քանզի ես սեւացել—թխացել եմ, քանզի Արեգակը խեթ նայեց ինձ վրայ: Իմ Մօր որդիները մարանչեցին ինձ հետ. եւ ինձ այգեստանի պահապան դրեցին, որովհետեւ իմ [իսկ] այգին չպահեցի:

5. *Արեգակն* Աստուծոյ կողմից թոյլ տրուած փորձութիւններն են: Երբ Աստուծոյ խօսքը սերմանում է ապառաժուտ հոգիներում, խոր արմատներ չի ձգում եւ փորձութեան *արեգակի* տապի սաստկութիւնից արագ չորանում է (Նիւսացի): Նարեկացու մօտ արեգակը ենթակայական իմաստ է ձեռք բերում. Աստուած—*Արեգակը խեթ նայեց ինձ վրայ*, այսինքն՝ դառը պատիժներով պատուհասեց, մերժեց Իր երեսից եւ դրախտից: Այս ամէնը եղաւ նախաստեղծների պատուիրանազանցութեան հետեւանքով: *Իմ Մօր որդիները* սատանան եւ նրա արբանեակներն են, եւ *իմ Մօր* արտայայտութիւնը ցոյց է տալիս այն, որ բոլորը ստեղծուած են միեւնոյն Արարչից: *Եւ ինձ այգեստանի պահապան դրեցին, որովհետեւ իմ այգին չպահեցի*. այս խօսքն այլաբանական վերապատումն է Սուրբ Գրքի հետեւեալ տեղիքի. «Եւ դրեց նրան դրախտի փափկութեան մէջ՝ պահելու եւ մշակելու այն» [ՕՍնդ. Բ 15]: Ոչ թէ որեւէ գործի կամ պահպանութեան կարիք ունէր դրախտը, որ լի էր ամէն տեսակ վայելչութիւններով եւ պահպանում էր Աստուծոյ կողմից, այլ պատուիրում է մարդուն գործել արդարութիւն եւ

պահել պատուիրանը (Նիւսացի—Տաթեւացի):

Հարսին պահապան են կարգել պանդխտութեան երկրի այգեստանում, որովհետեւ Հարսն իր բուն այգին չի պահել, այսինքն՝ դրախտի ժառանգութիւնը (*Հիպոդիտոս*):

Ըստ Որոգիւնեսի՝ *այգին* հիկնտակարանեան Եկեղեցին է՝ պարսպուած օրէնքի ամրութեամբ, որը հրեաները չպահեցին եւ մեղանչեցին Աստուծոյ դէմ:

Արեւելցին, հետեւելով Նիւսացուն, ուշագրաւ մեկնութիւն է առաջադրում. *իմ Մօր որդիները* մտքերից եւ խորհուրդներից ծնուող մեղքերն են՝ բարկութիւն, ցանկութիւն, հպարտութիւն, ազահութիւն... *Այգին* այստեղ նորկտակարանեան պատուիրանն է. «Ես որթն եմ, դուք՝ ուռերը, մնացէ՛ք իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ» [Յովհ. ԺԵ 5] (Արեւելցի):

Այստեղ կարող է այն տպաւորութիւնը ստեղծուել, որ *Մօր* որդիները նրան պահապան կարգեցին, սակայն Նիւսացին եւ Արեւելցին զգուշացնում են, որ դա գալիս է երբայեղէնից յուսարէն ոչ ճշգրիտ թարգմանութիւնից: Իրականում դրանք երկու տարբեր ենթականեր ունեցող նախադասութիւններ են՝ «Իմ մօր որդիներն ընդդիմամարտեցին...» եւ «Ինձ պահապան դրեցին...». վերջինիս ենթական սղուած է:

Հարսն ասում է Փեսային.

6. Պատմի՛ր ինձ, իմ հոգո՛ւ Սիրելի, ո՞ր ես հովում, ո՞ր ես հանգիստ տալիս միջօրէին. գուցէ թափառականի պէս լինեմ Քո ընկերների երամակների մէջ:

6. Հարսը, համաձայն Որոգիւնեսի մեկնութեան, հարցնում է, թէ՛ «Երբ գաս, ո՞ր ես ծնուելու, որո՞նք են Եկեղեցիները, որոնց հովուելու ես եւ հանգստացնելու զանազան ազգերի գայլերին եւ գառներին՝ միջօրէի պէս լուսաւորելով նրանց» (Որոգիւնես):

Հարսի խօսքի մէջ վախճանաբանական երկիւղ կայ. նա զգուշանում է, որ չլինի թէ Յովհաննու Յայտնութեան մուրեալ վիշապի եւ նրա ընկերների հետ [Յայտ. ԺԲ 9] ընկնի խաւարի մէջ՝ մուրորուելով Տիրոջ հօտից (Որոգիւնես—*Հիպոդիտոս*):

Մարդկային բնութիւնը մի մուրեալ ոչխար է, որ փնտրում է ճշմարիտ Հովուի երկնային արօտավայրերը: Այս փնտրումը նախ եւ առաջ սիրոյ փնտրում է. Հովու—Փեսան Իր անձը դրել է Իր ոչխարներ-

րի համար. սա՛ է մեծագոյն սերը: Հարսն այդ սերն է փնտրում, կամե-
նում է լինել փրկական արօտավայրերում եւ զմայլուել երկնային կե-
րակուրներով...

Միջօրի լոյսը Քրիստոսի գալուստն է: *Ընկերները* սատանան
եւ նրա արքանեակներն են, որոնք նախապէս անուանեց *Սօր որդի-
ներ*: Հարսը վախենում է լինել նրանց *երամակներում* եւ չճանաչուել
Տիրոջ կողմից (*Հիպոդիստոս*):

Միջօրին արեգակը գտնում է երկնակամարի գագաթնակե-
տում, եւ ստուերներն անհետանում են: Միջօրին հանգստանալու ար-
ժանացածներն անստուեր լոյսի որդիներն են: Հարսը կամենում է
մտնել միջօրի աստուածային հանգստի մէջ եւ ողողուել արդարու-
թեան Արեգակի լոյսով (Նիւսացի):

Ըստ Տաթեւացու՝ *միջօրն* Նոր Ուխտն է՝ Երրորդութեան ան-
ստուեր լոյսով ճառագուած, ի հակադրութիւն ստուերակերպ Հին Ուխ-
տի (Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսին.

**7. Եթէ չճանաչես քո անձը, գեղեցիկդ կա-
նանց մէջ, հետեւի՛ր դու հօտերի ոռնահեա-
քերին եւ արածեցրո՛ւ քո ուլերին հովիւների
վրանների մօտ:**

7. Ինքնաքննութեան, առաքինութեան եւ պատուիրանապահու-
թեան կոչ է, որը Նիւսացին դիտում է գոյարանական հարթութեան
մէջ. Աստուած ակնարկում է. «Նայի՛ր քեզ, զգո՛յ՛ջ եղիր պահպանու-
թեան մէջ: Իմացի՛ր, որ այլ արարածների՛ պէս չպատուեցիր Արար-
չից. ո՛չ երկինքն Աստուծոյ կերպարանք եղաւ, ո՛չ արեգակը, ո՛չ լուսի-
նը, ո՛չ աստղերի գեղեցկութիւնը, ո՛չ էլ երեւելի արարածներից որեւէ
մէկը, այլ դո՛ւ միայն եղար բնութեան ամէն մի կերպարանքից գերա-
զանց: Դու ճշմարիտ Աստուծոյ կողմից տպաւորուած ես անապական
գեղեցկութեան նմանութեամբ, երանելի կեանքին ընդունակ, ճշմա-
րիտ լոյսի պատկեր» (Նիւսացի): Այս խորհրդածութիւնները շարունա-
կում է Նարեկացին. «Եթէ այս ամէնը յիշես, չնայես քեզ եւ չխոնար-
հուես քո ամբարտաւանութիւնից... եթէ հպարտանաս առաքինութիւն-
ներով եւ այսուհետ չզնաս բարի ուղիով, կելնես Իմ հօտից, որ
պտղաբերում է կաթով ու բրդով, եւ կխառնուես բարի Հովուից օտա-
րացած անպտուղ ուլերին եւ այլես չես գտնի նրան»:

Հարսին զգուշացնում է զանազանել հետքերը, գառներինը

չջփոթել ձախակողմեան *ուլերի* հետքերի հետ, որոնք հովում են
անօրէն հովիւները. որոնք ունեն ճշմարիտ Հովուի կերպարանքը, սա-
կայն չեն փրկի գայլերից (*Հիպոդիստոս*):

Որոգինեսեան ըմբռնումը փրկաբանական է: Փեսան ակնարկում
է. եթէ մոռանաս Իմ երախտիքները, թէ ինչպէս հանեցի քեզ Եգիպտոս-
սից եւ բնակեցրի Աւետեաց երկրում, եթէ մոռանաս մեծամեծ շնորհ-
ները, որոնցով գեղեցկացար, կցրուես բաբելացիների եւ յետագայում՝
այլազգիների մէջ. եւ Մովսէսի ուլերն արածեցնելու փոխարէն հեթա-
նոս թագաւորների պաշտամունքը եւ կարգը կկատարես:

8. Մերձաւոր Իմ, քեզ նմանեցրի Իմ երի- վարներից՝ փարաւոնի կառքի մէջ:

8. Ի՞նչ է *մերձաւորը*. Նախ՝ որ Աստուածութեամբ մերձ է ամէն
ինչի, ինչպէս ասում է մարգարէն. «Ես մերձաւոր Աստուած եմ»
[Եղեմ. ԻԳ 23]: Երկրորդ՝ մերձ եղաւ մեզ եւ կցորդուեց արեան եւ
մարմնի [տե՛ս Եբր. Բ 14]: Իսկ մեր կողմից՝ նախ՝ որ Աստուծոյ պատ-
կերն ենք, երկրորդ՝ որ անդամներ եւ ազգակիցներ ենք (Տաթեւացի):

Հարսին նմանեցնում է *փարաւոնի կառքին* լծուած զօրաւոր
երիվարներին, որոնք Փեսայինն են... Նրանք փարաւոնի կողմից
բռնութեամբ վարուեցին, մինչեւ նրան իր կառքերով հանդերձ ծովի
մէջ ընկղմեցին, եւ Հարսը յարթող դարձաւ թշնամու վրայ (*Հիպոդի-
ստոս*): Համաձայն Նիւսացու մեկնութեան՝ Աստուած Իր հրեշտակային
հրեղէն կառքերը (որոնցով բարձրացրեց Եղիային) ուղարկեց եւ կոր-
ծանեց փարաւոնի կառքերը: Առաւելապէս այդ հրեղէն երիվարներին է
նմանեցնում Հարսին (Նիւսացի):

Որոգինեսը հրեական ձիերով լծուած հեթանոսական կառքի մէջ
տեսնում է քրիստոնէական Եկեղեցու ժառանգաբանութիւնը. հրեանե-
րից եւ հեթանոսներից վայելչացած՝ Եկեղեցին զօրացաւ եւ իր վրայ
կրեց մարմնացեալ Բանին:

Ըստ Նիւսացու՝ նմանուել եգիպտական կառքերն ընկղմող ձի-
ուն՝ նշանակում է խորհրդական ջրով ազատուել հակառակամարտ չա-
րի ծառայութիւնից, բոլոր եգիպտական խորհուրդները, այլազգի չա-
րութիւնները եւ մեղքերը ջրի մէջ թողնելով՝ մաքուր վեր ելնել... Այս-
պիսին է արժանանում մարմնացեալ Բանի կրող լինելու (Մկրտու-
թեան խորհուրդ):

Չին մարդկային բնութիւնն է, որն Աստուծոյ արարչութեան
կատարեալ եզրափակումն է, Աստուծոյ հանգստարանը, բնակարանը

եւ տաճարը: Մարդը հեռացաւ Արարչից եւ սկսեց կառավարուել սատանայից (կամ *փարաւոնից*), սակայն Տէրն Իր խաչով ընկղմեց սատանային եւ հաստատեց սուրբ Եկեղեցին, այսինքն՝ Իր ձի—հանգիստը (Լարեկացի—Տաթեւացի):

Օրհորդներն ասում են.

9. Քանզի գեղեցկացան ջո ծնօտները տատակի պէս եւ ջո պարանոցը՝ մանեակների պէս:

9. Տաթեւացին ընդհանրացնում է Որոգիւնէ—Նիւսացի—Լարեկացի մեկնութիւնները. *տատրակը* չորս յատկութիւն ունի. ա) մեղմ եւ հանդարտ է, բ) ողջախոտ է, գ) քաղցրաբարբառ է, դ) [առաքիւնի]: Այս յատկութիւնները համապատասխանում են մարդկային էութեան ճշմարիտ նկարագրին՝ մտքի եւ մարմնի համետտութիւն, մարմնի եւ հոգու ողջախոտութիւն, սուրբ դաւանութեան քաղցրաբարբառ խոստովանութիւն, զանազան առաքիւնութիւններով զարդարուածութիւն:

Ըստ *Հիպոդիտոսի*¹ Հարսը ձեռք է բերել աստուածանմանութիւն (մեղմատեսիլ ու քաղցրախոս տատրակի պէս), որի հիմքն է ճշմարիտ դաւանութեան խոստովանութիւնը եւ սրբութեամբ Տիրոջ Մարմնի ճաշակումը:

Պարանոցը մանեակի պէս է լինում, երբ վերցնում է Քրիստոսի Խաչը եւ զնում Լորս ետեւից: Մանեակ է կոչւում նաեւ ծովեզրի նաւահանգիստը, այսինքն՝ գովաբանւում է Հարսի՝ այս աշխարհի ալեկոծ կենցաղից եւ չարի խռովայոյզ փորձութիւններից հեռացած լինելը եւ աշակերտներին վարդապետութեամբ հանգստացնելը (*Հիպոդիտոս*):

Ըստ Որոգիւնէի՝ Նշուած մանեակը չորս աւետարանների քամամանեակ—[ուծն] է, որ դրուած է քահանաների լանջերին: Մանեակը նաեւ առաքիւնութիւններն են, որոնցով զարդարուած է հոգու պարանոցը. ինչպէս նաեւ՝ շնորհների պսակն է (Նիւսացի):

10. Ոսկու պէս դարձնենք ջեզ՝ արծաթէ կիտուածներով՝¹ հանդերձ,

10. Ըստ Նիւսացու՝ *ոսկին* եւ *արծաթը* խորհրդական աստուա-

¹ կիտուած — կէտ—կէտ՝ պուտ—պուտ յօրինուած, զարդարուած նկար, գործուածք, բանուածք (ՆԲՆԼ եւ Առձեռն Բառարան Հայկազեան Լեզուի)

ծարանութեան նշանակներ են: *Ոսկու* նմանութիւն... «Անճառելի բնութեան մասին բոլոր վարդապետութիւնները, թէպէտ աստուածայելուչ են եւ մտքով բարձրագոյն, այսուհանդերձ ոսկու նմանութիւն են, ոչ թէ՛ հեկց ինքը՝ ոսկին, քանզի անհնար է յայտնապէս ներկայացնել միտքը գերազանցող Բարին... Խորհուրդները ճանաչելու համար մեզ աւանդուած բոլոր բարի մտածութիւններն ի զօրու չեն նկարագրելու [Աստուծոյ] բնութիւնը, այլ՝ փառքի նշոյլները... Ուստի ովքեր կարողանում են հայել վեր՝ դէպի ճշմարտութիւնը, Լորանց [յայտնուում] է ոչ որպէս ոսկի, այլ՝ ոսկու նմանութեամբ՝ արծաթէ նախշերով: *Արծաթը* խօսքի նշանակն է, ինչպէս ասում է Գիրքը. «Արդարի լեզուն փորձուած արծաթ է» [Առակ. Ժ 20] (Նիւսացի):

Նմանութեամբ ակնարկում է Մովսէսի ստուերակերպ օրէնքը, որով ոչ ոք չի արդարանում. հինկտակարանեան իրադարձութիւնները նմանութիւններ, օրինակներ եւ ստուերներ են (Որոգիւնէ):

Տաթեւացին *ոսկին* եւ *արծաթը* դիտում է միտք—խօսք յարաբերութեան մէջ: Ոսկին չորս յատկութիւն ունի. ա) բնութեամբ անապական է, ինչպէս եւ՝ միտքը, բ) հրագոյն է, ինչպէս՝ մտքի սերը, գ) դեղին է, լուսատես աչքի պէս է, դ) ճաճանչափայլ է լինում արեգակից, ինչպէս մեր միտքը՝ իմանալից: Նմանապէս էլ արծաթը չորս յատկութիւն ունի. ա) պարզ ստացւում է հողից, ինչպէս մեր խօսքը՝ սրտից, բ) պայծառութիւն է աչքերի համար, ինչպէս խօսքը՝ մտքի, գ) անժանգ է, ինչպէս խօսքն է անապական, դ) գոյնով սպիտակ է, ինչպէս եւ խօսքն է տեսքով լուսաւոր:

Նկարագրուած զարդն արդարութիւնն է. ովքեր Տիրոջ երկիրով եւ սրբութեամբ ընթանում են արդարութեան ետեւից, Արքան Իր գիրկը կընդունի Լորանց՝ երկնքի արքայութեան մէջ (*Հիպոդիտոս*):

11. մինչեւ Արքան Իր գիրկն ընդունի ջեզ:

11. «Բանը մարմին եղաւ...» [Յովհ. Ա 14]: Եւ վերցրեց մանկանն ու ասաց. «Այսպիսիներինն է երկնքի արքայութիւնը» [Մատթ. ԺԹ 14]: Մարմնացեալ Բանը Կոյսից վերցրած մարմնի գիրկն է ընդունում եւ հանգստացնում կուռքերից տառապած եւ յոգնած ազգերին, քանզի Իր Մարմինն անուանեց Եկեղեցի եւ Իր գիրկը ժողովեց [երկնքի արքայութիւնը փնտրողներին] (Որոգիւնէ):

Հարսն ասում է իրեն եւ Փեսային:

12. Իմ նարդոսն¹ արձակեց իր հոտը, ստաշ-
խի² ծրար է ինձ համար իմ Եղբորորդին,
թող հանգստանայ իմ ստինքների մէջ:

12. *Նարդոս* իւղն այստեղ խորհրդանշում է բոլոր անուշահոտ եւ ազնիւ իւղերի (առաքինութիւններ) ամբողջութիւնը, որով մեր հոգին զգում է Աստուծոյ անուշահոտութիւնը: Հարս—Եկեղեցին իր սրբութեամբ ձանաչում է Սուրբին, ողորմածութեամբ՝ Ողորմածին, անապականութեամբ՝ Անապականին... (Նիւսացի—Արեւելցի):

Նարդոսը, որ հեղուեց Տիրոջ գլխին եւ անուշահոտութեամբ լցրեց տունը [տե՛ս Մատթ. ԻՋ 7, Մարկ. ԺԴ 3, Յովհ. ԺԲ 3], խորապէս կապուած է այս խօսքի մեկնութեան հետ: Կ'յս է իւղը, որ Փեսայի հոտը փոխանցում է Հարսին: Տիրոջ վրայ հեղուած իւղն անուշահոտութեամբ լցրեց տունը, ուր հաւաքն էր (Եկեղեցի): Սա Տիրոջ մահուան խորհրդի մարգարեական կանխասացութիւնն էր... Տունն աշխարհն է, որ լցուեց Աւետարանի քարոզութեամբ (Նիւսացի):

Հարս—Եկեղեցուն փոխանցուած անուշահոտութիւնը սկսում է բուրել Եկեղեցու բոլոր անդամներից՝ քահանաներից, սարկաւազներից, կոյսերից եւ ուրիշներից (Արեւելցի):

Նարդոս իւղն իր անուշահոտութեամբ, բժշկող յատկութիւններով, մաքրութեամբ, սրբութեամբ, անապականութեամբ խորհրդանշում է առաքինութեան բոլոր նիւստերը՝ աստուածահաճութիւն, Աստուծոյ սիրով տոգորուածութիւն, սրբութիւն, ողորմածութիւն եւ այլն (Տաթեւացի):

Նարդոսի հոտը, ըստ *Հիպոդիտոսի*, ամենակատար առաքինութեամբ զարդարուած արդարութիւնն է, որ բուրում է երկրի վրայ, եւ մարդիկ նրա համար փառաւորում են Աստծուն (*Հիպոդիտոս*):

Ստաշխը Տէրն է, որ ծրարուեց մեր փոքր բնութեան մէջ (*ստինքների մէջ*), ամենակալ Աստուած՝ Մարիամի մէջ, ինչպէս նաեւ՝ արժանաւոր հաղորդուողների սրտի մէջ (*ստինքների մէջ*) (*Հիպոդիտոս*):

Ստաշխը Բանն էր Հօր ծոցում, որ եկաւ մեզ մօտ, վերցրեց մեր բնութիւնը, արձակեց Իր հոտը եւ լցրեց երկիւնքը եւ երկիրը: Լաւ եւ մեր մէջ է վառուում Աստուծոյ ստաշխը, որքանով մարմնի սրբութիւն ենք ցուցաբերում: *Ստաշխի ծրար* են սուրբերը, որ Աստուծոյ երկիւղը եւ պատուիրանները կրում են իրենց սրտում եւ տալիս են ուրիշներին (Որոզինես—Նարեկացի—Արեւելցի):

Նիւսացին մեկնում է այս խօսքի խորհրդական—մարդաբանական շերտը: *Ստինքները* սրտի նշանակն են, եւ սիրտն է այն *ծրարը*, ուր բարի գանձերն են: Սիրտը, լինելով մարմնի կենսարար եւ ջերմարար կենտրոնը, նախապէս ընդունում է Քրիստոսի անուշահոտութիւնը եւ վերածում Տիրոջ խունկի ծրարի եւ ապա առաքինութեան գործերի համար ջերմացնում եւ պատրաստում մարմնի անդամները (խունկի անուշահոտութեամբ լցնում) (Նիւսացի):

Հարսը ողջ սրտով, հոգեւոր եւ մարմնաւոր բոլոր զօրութիւններով փնտրում է Փեսային (*Հիպոդիտոս*):

Ինչո՞ւ է Քրիստոս անուանում *Եղբորորդի*. որովհետեւ՝ ա) հեթանոսները եւ հրեաները եղբայրներ են՝ մի Ադամից, բ) ծնուեց Յուդայի ցեղից եւ եղբորորդի է հրեաներին, գ) Ղուկասը Նաթանից է հիմնում ազգահամարը, եւ Քրիստոս կոչւում է Սողոմոնի եղբորորդի, դ) Դաւիթը մեր մեղաւոր եւ զոջացած եղբայրն է, իսկ Քրիստոս՝ նրա Որդին, ուստի Քրիստոս եղբորորդի է մեզ ըստ մարմնի (Տաթեւացի):

1 *Նարդոս*— (եբր. *nērd*) Արեւելքում բազ յայտնի անուշահոտ բոյս է՝ կատուախոտերի ընտանիքից (*Valeriana Nardostachys Jatamansi*), որից պատրաստում է յոյժ անուշահոտ եւ մեծարժէք իւղ (Մարկ. ԺԴ 3, Յովհ. ԺԲ 3—5): Հնում այդ իւղով օծում էին խնշոյթների ժամանակ. այն ցայտօր էլ գործածում է մազերի համար: Նարդոսի հայրենիքը Հիմալայներն են, եւ հիմնականում արտահանում էր Հնդկաստանից: Պաղեստինում եւ հարեւան երկրներում *Նարդոսը* շատ բանակով լինում է սարերում եւ հարթավայրերում: Հրեաները *Նարդոսի* իւղ հիմնականում ստանում էին Փոքր Ասիայից. *Նարդոսի* յաւագոյն իւղը պատրաստում էր Տարսուսում:

2 *ստաշխ*— (եբր. *nāšāḥ*) Խունկի բաղադրամասերից է [Ելք Լ 34]: Եբրայերէն անունը նշանակում է «կաթող», որը ցոյց է տալիս, որ ստացում է կաթիլների տեսքով: Հնարատր են երկու բոյսեր. *Commiphora gileadensis*, որի հայրենիքն է հարաւային Արաբիան, եւ *Styrax officinale*, որն աճում է պաղեստինեան բլուրներում: Առաջինը խիտ ճիւղերով բոյս է՝ *Նարդոս* հասակից ցածր, եռամասնեայ փոքրիկ տերեւներով: Խեղ ստացում է երկուսից էլ՝ ճիւղերի վրայ ճեղքուածք բացելով:

**13. Կոճու¹ ողկոյզ է ինձ համար իմ Եղբոր-
որդին՝ Ենգադդի այգեստանների մէջ:**

13. *Ենգադդի* բերրի այգեստանների անփուտ *Նոճին* խաչն է, որի վրայ բարձրացաւ Տերը որպէս *ողկոյզ* (Որոզիստ): Քրիստոս անուանուում է *ողկոյզ*, որովհետեւ ձմլուեց խաչի հնձանում եւ եղաւ փրկութեան զինի եւ, ըստ հաւատքի ունակութեան չափի, բաշխուում է հաւատացեալներին: *Նարդոս*, *ծրար* եւ *ողկոյզ* անունների յաջորդակա-
նութիւնը պատահական չէ. Նախայաւիտեան Բանը, որ Հօր մօտ էր, ծրարուում է սուրբ Կոյսի արգանդում, ապա կամովին գալիս չարչա-
րանքների եւ խաչելութեան՝ մեղքի իշխանութիւնից մեզ փրկելու հա-
մար (Որոզիստ—Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսին.

**14. Ահա գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, ահա
գեղեցիկ ես. քո աչքերն աղանձիներ են:**

14. *Ահա գեղեցիկ ես...* Այսինքն՝ Քրիստոս—Փեսայի մաքուր եւ պատրաստ Հարս—Տաճարն ես՝ ըստ մարգարէների վկայութեան: Դու աւելի գեղեցիկ ես, քան քարեղէն եւ փայտեղէն հռչակաւոր տաճարները, քանզի Իմ գալստեամբ ստացար այդ գեղեցկութիւնը (Որոզիստ): Հարսը գեղեցիկ է, քանզի մերկացել է ինն մարդուց եւ հագել Լորը, որ Քրիստոս է (*Հիպոդիտոս*):

Ըստ Նիւսացու՝ սոյն խօսքը կոչ է Հարսին՝ վերստին ստանալու չարի հետ համագործակցութեամբ կորցրած սկզբնատիպ գեղեցկութիւնը: Մարդկային կրական բնութիւնը *մերձաւոր* է անուանուում Աստծուն, այսինքն՝ իր մէջ կրում է Լրան (*Հիպոդիտոս*): Մերձաւորը ցոյց է տալիս գոյաբանական մերձաւորութիւնը. մարդն արարուած է Աստուծոյ պատկերով [Ծննդ. Ա 27] (*Հիպոդիտոս*):

Աղանձին Սուրբ Հոգու խորհրդանիշն է. Հարսը ստացել է Սուրբ Հոգին, այսինքն՝ Նրա հոգու աչքերն աղանձապէս մաքրուել են,

¹ Կոճի— (եբր. *kōšer*) *Lawsonia inermis*: Աճում է թփերով. սիրում է տաք պայմաններ, ինչպէս, հաւանաբար, Սողոմոնի՝ Ենգադդի այգիներում էր: Նրա անուշահոտ սպիտակ ծաղիկները յիշեցնում են խաղողի ողկոյզներ եւ արեւելեան կանանց սիրած ծաղիկներն են: Հնում նրա չորացրած եւ աղացած տերեւներից պատրաստում էին զանազան օծանելիքներ՝ կանացի մածուկներ, քսուքներ՝ դեղին գոյն տալու մաշկին, ձեռքերին, տղամարդկանց մօրթուքներին... Անուանում է նաեւ կիպրոս:

առանց որի անհնար է տեսնել Փեսայի գեղեցկութիւնը եւ Տեր խոստովանել Լրան (Նիւսացի—Նարեկացի): *Աղանձին* նաեւ հեզութեան, անմեղութեան, սրբութեան, միամտութեան եւ զանազան առաքինութիւնների նշանակն է. այս բոլոր յատկութիւններն ունի հարսնացած Եկեղեցին (Տաթեւացի):

Հարսն ասում է Փեսային.

**15. Ահա բարենշան ես, Եղբորդեան իմ,
այլեւ՝ գեղեցիկ մեր հանգստարանի մէջ:**

15. Հարսը հեռացել է ամեն տեսակ աշխարհիկ «գեղեցկութիւններից» (Նիւսացի), ձեռք է բերել կատարեալ հոգեւոր տեսողութիւն եւ տեսնում է Քրիստոսի ճշմարիտ գեղեցկութիւնը (Նարեկացի): Քրիստոս ունի սկզբնատիպ գեղեցկութիւնը՝ որպէս Աստուծոյ եւ մարդու միաւորման արտայայտութիւն. Քրիստոս ամենագեղեցիկ մարդն է, քանի որ նրա մարդեղութիւնը պայծառակերպուած եւ ներթափանցուած է Աստուածութեան լոյսով (Նիւսացի—Տաթեւացի):

Գրաբարեան *գահը* կամ *գահոյքը* Տաթեւացու բացատրութեամբ մահիճն ու Լրան հովանի ծածկոյթն է, որը սոյն թարգմանութեան մէջ ներկայացուեց որպէս *հանգստարան*: Մահիճը՝ ա) Բան Աստուծոյ միաւորութիւնն է մարդեղութեան հետ, բ) հանգստեան տեղ է, գ) այս կենցաղի գիշերն է, դ) խորհրդանշում է Քրիստոսի էջը դժոխք: Հովանի ծածկոյթը մարմինն է, որով Քրիստոս ծածկում է Աստուածութիւնը, որպէսզի կարողանանք տեսնել Լրան եւ կենդանի մնալ:

Գահոյքը տունն է՝ մարդկային մարմինը, որ աստուածային զօրութեան հովանու տակ է, որ միշտ շրջում է մեզ հետ՝ պահելով մեզ չարից (*Հիպոդիտոս*):

16. Մեր տան գերանները մայրիներ¹ են, մեր դարանաւանդները², նոճիներ³:

16. *Գերանը* սիրոյ խորհուրդն է. անփուտ եւ ամուր է *Մայրին*, անապական եւ զօրաւոր է սէրը՝ հոգեւոր կեանքի գլխաւոր առաքինութիւնը: *Դարանաւանդները*³ շինութեան մարդակներն ու տախտակներն են եւ խորհրդանշում են առաքինութիւնները: Առաքինութիւններն, ամրանալով սիրոյ գերանին, կազմում են հոգեւոր շինութեան ծածկոյթը, ուր, ազատ ամեն տեսակ փորձութիւններից եւ ախտերից, արգասաւորուում է հոգեւոր կեանքը (Նիւսացի—Տաթեւացի):

Այսպիսի ծածկոյթի տակ է բնակուում Յիսուս—Փեսայի հոգին (Հիպոդիտոս):

1 մայրի— (եբր. 'erez) Cedrus Libani: Լիբանանի մայրից փշատերեւ ծառ է, որի փայտը բարձր է զնահատում իր երկարակեցութեան պատճառով: Լիբանանի մայրից արեւելեան անտառների ամենից բարձր զնահատուող եւ հսկայ ծառերից է: Փշատերեւ է եւ մշտադալար: Ունենում է մօտաւորապէս 70—80 անգլ. ֆուտ բարձրութիւն: Ճիւղերը խիտ են, երկար եւ գրեթէ հորիզոնական են տարածուում բնից: Մայրու բունը կարմրաւուն գոյն ունի, եւ փայտը դառնահամ է, որի համար էլ միջատները հազուադէպ են փշացնում այն, որի հետեւանքով առանձնանում է յատուկ պնդութեամբ եւ, ըստ բնախոյզների վկայութեան, երբեմն աճում է 2 հազար տարուց աւելի: Մայրիները միշտ գործածուում էին հարուստ եւ արժեքաւոր շինութիւնների համար: Լիբանանի լեռները մի ժամանակ հոշակաւոր էին իրենց բարձր մայրիներով: Բայց զարմանալիօրէն կատարուեց Եսայու մարգարէութիւնը Լիբանանի մայրիների մասին. «Եւ նրանցից մնացածները հաշուած կլինեն, եւ երեխան կհաշուի նրանք» [Ես. Ժ 19]: Սուրբ Գրքի իւրաքանչիւր ընթերցող յաճախ կարող է հանդիպել այնպիսի տեղերի, ուր բանաստեղծական յիշատակումներ կան մայրիների՝ բնութեան թագաւորութեան այդ իսկապէս հսկայ ներկայացուցիչների: Նրանք երեւակայութիւնն ակամայ ապշեցնում են հսկայական բարձրութեան տպաւորութեամբ, համաչափութեամբ, հաստութեամբ եւ անուշահոտութեամբ: Մայրու երկար ճիւղերը վեհ տեսք են տալիս նրան եւ լաւ ստուեր ու զովութիւն՝ շոգից: Մայրից իր հոտաւետ խժժով իւրայատուկ անուշահոտութիւն է արձակում եւ նրանով լցնում լիբանանեան սարերը:

2 դարանաւանդ—պրշակ, պշրաք, տան առաստակալ գերանների վրայ հիմնուած տախտակամած

3 նոճի—(եբր. b'ōrīm) Cupressus sempervirens: Շատ յայտնի փշատերեւ եւ մշտաադարթ ծառ է. աճում է Սիրիայում եւ փրնիկիայում: Բարձր եւ գեղեցիկ է, ըստ Ս. Գրքի, Լիբանանի փառքն է մայրու հետ [Ես. Կ 13]: Նոճու փայտը ամուր է, պինդ, հոտաւետ եւ սքանչելի կարմրաւուն երանգ ունի: Արպէս անփուշ փայտ՝ այն հարմար շինանիւթ է, որի համար էլ Մողոմոնի կողմից գործածուեց տաճարի շինութեան համար: Հայերէնում կարող է շփոթ առաջանալ նոճու (կիպարիս) եւ կիպարտի միջեւ, որը նոյնպէս թարգմանուում է նոճի (տես Ա 13):

Տունը Եկեղեցին է, որի անկեան վէմը Բանի մարդեղութիւնն է: *Գերանները* եւ *դարանաւանդները* Յիսուս Զրիստոսն է եւ Տիրոջ տան սպասաւորները՝ մարգարէները եւ առաքեալները՝ իրենց կանխասացութիւններով եւ քարոզութեամբ (Որոգիւնս):

Ավանդուում է սուրբ առաքեալների ճշմարիտ վարդապետութեան քարոզութիւնը: *Նոճի—դարանաւանդները* մարգարէների եւ վարդապետների խօսքերն են (Հիպոդիտոս):

Բ

Փեսան ատում է Իրին եւ Հարսին.

1. Ես դաշտերի ծաղիկ եմ, հովիտների շուշան¹:

1. Ըստ Հիպոդիտոսի՝ *դաշտը* (նմանապէս՝ հովիտը) ս. Կոյսն է, որից ծաղկեց Զրիստոս՝ *հովտի շուշանը* եւ *դաշտի ծաղիկը*:

Դաշտը, ինչպէս նաեւ՝ *հովիտը*, որ բարձրադիր (Նկատի ունի լեռան ստորոտների բարձրութիւնը) դաշտն է, մարդկային բնութիւնն է: Երբ այն մշակուում է, վեր է հանում անուշահոտ, մաքուր եւ պայծառ ծաղիկներ (Նիւսացի):

Հովիտն իր ցածրադիրութեամբ, ջրառատութեամբ եւ բազմադիւս բուսականութեամբ խորհրդանշում է հոգով խոնարհ, իմաստութեայ ջուրն ունեցող եւ արդարութեան բազում բարեգործութիւններով զարդարուած անձը: Նոյնպէս էլ դաշտն ընդարձակ է, հարթ եւ ջերմ. դա այն բազում բարիքներ կրող, արդարութեամբ ու ջերմ սիրով լի հոգին է, ուր բնակուում է Զրիստոս: *Դաշտի ծաղիկը* վարդն է, *հովտի շուշանը*՝ նուսուֆարը, որն աճում է ջրերի մէջ եւ դեղին գոյն ունի: Նկատի չունի լեռնային շուշանը, որն ունի սպիտակ գոյն, այսինքն՝ իրեշտակներին, քանզի [արարչական բնութիւնը] վերցնում է

1 շուշան—(եբր. šōšān) յայտնի են մի քանի տեսակներ. Hyacinthus orientalis, որը կոճղեգաւոր բոյս է՝ կապոյտ ծաղիկներով, Tulipa sharonensis կամ Anemone coronaria, որը կարմիր գոյն ունի (հաւանաբար այս տեսակը նկատի ունի Ե 13 խօսքում նկարագրուածը). Lilium candidum, որը սպիտակ madonna շուշանն է՝ վայրի, լեռնային տեսակը, որն աճում է ժայռոտ տեղերում: Յայտնի է նաեւ դաշտային (մարգագետնային) կամ ջրային դեղին շուշանը (Iris pseudacorus), որը կոչուում է հարսնարմատ կամ նունուֆար:

ոչ թե հրեշտակային բնութիւնից, այլ՝ Աբրահամի զաւակից: Եւ Քրիստոսի գալստեամբ ծաղկեց երկիրը, այսինքն՝ մարդկային բնութիւնը, սրբութեան զանազան որակներով: Այստեղ գոյներն այդ որակների արտայայտութիւններն են. սպիտակը՝ կուսութեան, դեղինը՝ ճգնաւորութեան, կարմիրը՝ մարտիրոսութեան, կապոյտը՝ մշտապէս երկնայինը խոկացողների, սեւը՝ տրամազգեաց ապաշխարողների (Տաթեւացի):

Բերրի եւ պարարտ դաշտը (ինչպէս նաեւ՝ հովիտը) խորհրդանշում է եկեղեցիները, ուր որպէս ծաղիկ ներկայ է Քրիստոս: Շուշանի գոյնը խորհրդանշում է աշխարհի նկատմամբ մեռելութիւնը (Հիպոդոտոս):

2. Ինչպէս շուշան¹, փշերի մէջ, այնպէս է Իմ մերձատրը դուստրերի մէջ:

2. Փեսան դուստրերով շրջապատուած Իր մերձատրին՝ Հարսին, նմանեցնում է փշերով շրջապատուած շուշանի: Որոշ բնագրերում *մերձատրի* փոխարէն առկայ է *քոյր* տարբերակը, որին էլ հետեւում է մեկնիչների մեծ մասը (Որոզինէս, Նիւսացի, Արեւելցի, Տաթեւացի):

Հարսը վեր է ընթանում երկնքի արքայութեան ճանապարհով, կատարում է երկնաւոր Հօր կամքը, ուստի նա եղբայր է, քոյր եւ մայր (Նիւսացի): Հարսն անուանում է քոյր, որովհետեւ անախտ սիրով սիրեց Փեսային եւ քոյր է ո՛չ թէ ըստ բնութեան, այլ՝ ըստ շնորհի (Տաթեւացի):

Փուշ—դուստրերը կենցաղական հերձուցիչ փշերն են կամ մարդկային կեանքի թշնամի զօրութիւնները (Նիւսացի). ինչպէս նաեւ՝ դեւերը, հերձուածողները (Արեւելցի) եւ մեղաւորները (Նարեկացի):

Տաթեւացին, յիշատակելով Փիլոնին, ասում է, որ ջրերում աճող գեղեցիկ, հաստատուն, բուժիչ եւ հոտաւետ շուշանը շրջապատուած է եղէգներով (*փշեր*)՝ տգեղ, խոցոտիչ, զարշահոտ եւ անհաստատ, ինչպէս Եկեղեցին՝ հերձուածողներով եւ չարերով:

Փշերով շրջապատուած շուշանը, ըստ *Հիպոդոտոսի*, Յիսուս Քրիստոս է՝ հրեական եւ հեթանոսական փշերի մէջ:

«Երգ երգոցում» մեղաւորներով շրջապատուած արդարի պատ-

կերը երկու նպատակ ունի. նախ՝ որ արդարների վարքն առաւել եւս ընդգծուի, երկրորդ՝ որ մեղաւորները դարձի զան եւ նմանուեն արդարներին (Նարեկացի):

Հարսն ասում է Փեսային.

3. Ինչպէս խնձորենի՝ անտառի ծառերի մէջ, այնպէս է իմ Եղբորդդին՝ որդիների մէջ: Նրա հովանու տակ նստել փափագեցի եւ նստեցի. եւ նրա պատուը քաղցր է իմ կոկորդում:

3. *Անտառը* մարդկային ընկած բնութիւնն է՝ անպտուղ, մացառուտ, գազաններով լի, խաւարամած... Ահա այս անտառում յայտնուում է Կենաց *Խնձորենին* (որ որպէս փայտ համագոյ է մեզ), Իր պտղի անուշահոտ բուրմունքով լցնում այն եւ որպէս փրկութեան քաղցրահամ կերակուր բաշխում մեզ՝ քաղցրանալով մեր քիմքում (Նիւսացի—Տաթեւացի):

Անտառի ծառերով շրջապատուած *խնձորենին*, ըստ *Հիպոդոտոսի*, խորհրդանշում է Քրիստոսին՝ մարգարէների, նահապետների եւ հրեշտակների մէջ:

Խնձորենին, ըստ Որոզինէսի, խաչափայտն է, նրանից կախում խնձորը՝ Յիսուս Քրիստոս: Խնձորի կարմրութիւնը եւ սպիտակութիւնը մարդեղութեան եւ Աստուածութեան նշանակներն են: Հարսը ցանկանում է նստել խաչի (Փրկչի մարդեղութեան) հովանու տակ, հաւատալ Աստծուն եւ հնազանդուել, փափագել Նրա խօսքի քարոզութիւնը, որ սկզբում մանանեխի հատիկի եւ փոքրիկ թթխմորի նմանուեց... (Որոզինէս):

«Քանզի այնժամ զգայութիւնը կքաղցրանայ Հոգու խօսքով, երբ Խնձորենու հովանին, զատելով, պատսպարի փորձութիւնների բոցից...» (Նիւսացի):

Տիրոջ Մարմնի պտուղը եւ վարդապետութեան խօսքը քաղցր է կոկորդում, սակայն ոչ՝ տեսանելիօրէն, այլ՝ երբ Հարսը ծամել է, այսինքն՝ շնորհով մտաբանել է մեղքերի թողութիւնը եւ երկնային կոյման յոյսը (*Հիպոդոտոս*):

Կոկորդում քաղցրացած խօսքն, ըստ Արեւելցու, իմաստութիւնն է:

1 ՏԵՆ Բ 1:

Հարսն ասում է օրհորդներին.

4. Գինու տունն տարեք ինձ եւ կարգեցէ՛ք ինձ վրայ Սէրը:

4. Հարսը տակաւին ծարաւ է... Սակայն այնքան երկար է տոչորուել ծարաւից, որ այլեւս չի բաւարարում «խառնուած» իմաստութեամբ եւ բաւական չի համարում ծարաւը յազգնելու համար թակոյկի ողջ բովանդակութիւնը բերանը հեղել, այսինքն՝ չի բաւարարում Բանի մարդեղութեան մասին մարգարէութիւններով... Այլ հայցում է *Գինու տուն* մտնել, բերանը հպել հնձանների տակից հոսող հեշտալի գինու շիթերին... Հարսը բաղձում է լինել այն յարկի տակ, ուր Գինու խորհուրդն է, այսինքն՝ Բան Աստուծոյ [մարդեղութեան] ուրախարար տան մէջ (Նիւսացի—Որոգիներ), որը սուրբ Եկեղեցին է, ուր պատմում են Բանի մարդեղութեան տնօրինական խորհուրդները (Արեւելիցի):

Պօղոսն ասում է. «Տալու է ձեզ իմաստութեան եւ յայտնութեան հոգին, որպէսզի լցուէք Քրիստոսի սիրոյ լրութեամբ» [Եփես. Ա 17]: *Գինին* խորհրդանշում է երկնային իմաստութեան ուրախութիւնը, երբ հոգին խորհում է վերինը, ուր Քրիստոս է՝ Հօր աջ կողմում [տե՛ս Կող. Գ 1]: Աստուած կատարեալների հոգիներում հաստատում է սէրը, ինչպէս ասաց. «Եղէ՛ք իմ մէջ, ինչպէս ես՝ ձեր մէջ» [տե՛ս Յովհ. Ժ 5] (*Հիպոդիտոս*):

Աստուած սէր է, քանզի Աստուծոյ անունը յայտնի է որպէս սէր, ինչպէս ասում է առաքեալը, թէ՛ «Աստուած սէր է, եւ ով սիրոյ մէջ է, նա բնակում է Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ նրա մէջ» [Ա Յովհ. Դ 12—13]:

Արդ, Հարսն աղաչում է Փեսայի սիրով ջեռացող բարեկամներին՝ հեռաւորութեամբ չպատգամաւորել, ինչպէս նախկինում՝ մարգարէները, այլ առաքելաբար մտնել Քրիստոսի տունը, Ում *Գինի* կոչեց, որպէսզի աստուածտեսութեամբ առաւել բորբոքուի Աստուծոյ սիրով (Նարեկացի), Աստծուն սիրի ողջ սրտով, հոգով, զօրութիւններով եւ զգայութիւններով [տե՛ս Մարկ. ԺԲ 30], ընկերոջը սիրի սեփական անձի պէս, սիրի կնոջը, ինչպէս Քրիստոս՝ Եկեղեցին (եթէ մաքուր է հոգով), կամ ինչպէս սեփական մարմինը (եթէ մարմնական կրքերով է սիրում)... Մինչեւ իսկ թշնամիներին, եւ բարեգործութեամբ հատուցել՝ ընդդէմ անհրաւրութեան (Նիւսացի):

Գինու տունը, ըստ Հիպոդիտոսի, Վերին Երուսաղէմն է՝ Հօր սեղանը, որով ցնծում են արդարները:

5. Հաստատեցէ՛ք ինձ իւղով, խնձոր լցուէք ինձ վրայ, քանզի ես խանդակաթ եմ սիրով:

5. *Իւղն* առաքինութեան խորհրդանշանն է. առաքինութիւնը ոչ միայն բարին տեսնելն է եւ լաւագոյնին ընդունակ լինելը, այլեւ՝ բարու մէջ անփոփոխելի մնալը: Արդ, Հարսը ցանկանում է հաստատուել առաքինութիւնների իւղերով եւ հեռանալ մեղքերի ամէն տեսակ ժահհոտութիւնից (Նիւսացի):

Իւղը նաեւ ողորմութեան նշանակն է. Հարսը հոգու բացուած աչքով տեսնում է Փեսայի անչափ ողորմութիւնը, որ արեց մեզ համար, եւ ցանկանում է հաստատուել, ողորմութեամբ ողորմութիւն գտնել (Հիպոդիտոս—Նարեկացի):

Իւղն, ըստ Հիպոդիտոսի, նշանակն է Սուրբ Հոգու ներգործութիւնների: Հարսը ցանկանում է հաստատուել իւղերով, այսինքն՝ Սուրբ Հոգու ներգործութիւններով, Ով պիտի ուսուցանի եւ յիշեցնի ամէն ինչ եւ մեր ներքին մարդու մէջ հաստատի Քրիստոսին: Իսկ *խնձորներն* Աստուծոյ պէս—պէս գթութիւնների արտայայտութիւններն են (նշաններ, սքանչելիքներ...) (*Հիպոդիտոս*):

Հիպոդիտոս—Նիւսացի մեկնութիւնները հիմնուած են *խնձորենիներով ծածկէք ինձ* տարբերակի վրայ: «Որ մեր բնութեան անտառի մէջ մարդասիրաբար բուսեց, մարմնի եւ արեան հաղորդ լինելու համար խնձորենի եղաւ... Արդ, հոգին, յարածամ զուարճանալով աստուածայիններով, բաղձում է տեսնել այս յարկերը: Սա ուսանում ենք առակով. դէպի վեր հայելով՝ տեսնում ենք երկնային խնձորենիները՝ անտարանական վարդապետութիւններով առաջնորդուելով դէպի առաքինութիւն, որն ի վերուստ Եկեալը եւ ամէն ինչից Վերը ցոյց տուեց մեզ՝ մարմնի մէջ երեւալով: Բոլոր բարի առաքինութիւնների օրինակն Իր մէջ ցոյց տուեց, ինչպէս ասում է Տէրը, թէ՛ «Սովորէ՛ք Ինձանից, քանզի հեզ եմ եւ խոնարհ սրտով» [Մատթ. ԺԱ 29]» (Նիւսացի):

Խանդակաթ եմ սիրով (կամ որոշ տարբերակներում՝ *խոցոտուած եմ սիրով*): Ակնարկում է խանդակաթ ահով եւ սիրով ծառայելն Աստծուն (Հիպոդիտոս): *Խանդակաթ եմ*, այսինքն՝ Փեսայի սիրոյ նախանձը կաթեց իմ մէջ, կամ՝ բոցավառուած եմ Փեսայի սիրով (Արեւելիցի):

Հարսի սիրտը լցուած է Աստուծոյ բերկրանքով, որի դէմ անգոր են այս աշխարհի նանրութիւնները (*Հիպոդիտոս*):

Հարսը խոցուած է Աստուծոյ սիրոյ փրկաբեր նետով: Աստուած Իր Միածին—Նետն առաքեց փրկուածներին՝ Սուրբ Հոգու կեանքով

եռասայր սլաքի շուրջն օծելով: Սլաքն [Ամենասուրբ Երրորդութեան] հաւատքն է, որպէսզի ում մէջ մտնի, իր հետ ներմուծի Ետը եւ Աղեղնաւորին, ինչպէս ասում է Տէրը, թէ՛ «Ես եւ Հայրս կգանք եւ կօթեանենք Լրա մէջ» [Յովհ. ԺԴ 23] (Նիւսացի):

6. Նրա ձախ ձեռքը գլխիս տակ է, իսկ Նրա աջը թող գրկի ինձ:

6. Փեսայի ձախ ձեռքը Հարսի գլխի տակ է, որով նետն ուղղում է դէպի նպատակը, իսկ Նրա աջն իր մօտ է քաշել Հարսին: Եւ ձգելով թեթեւօրէն վեր է առաքում... Այսուհանդերձ, Հարսն անբաժանելի է մնում Փեսայից: Փեսայի աջը եւ ձախն իմաստնօրէն հովանի եւ պահապան են Հարսին. աջից՝ կեանքի երկարակեցութիւնն է, ձախից՝ Հարս—Եկեղեցու ճոխութիւնը եւ փառքը (Նիւսացի—Նարեկացի):

Փեսան գրկել է նախ՝ մարգարէներով եւ այժմ՝ անքակտելիօրէն Բանի մարդեղութեամբ (Որոգիներ): Աստուած նախախնամութեամբ գրկել է Եկեղեցին եւ իր մէջ է պահում (*Հիպոդիոտոս*):

Հարսն ասում է օրիորդներին.

7. Երդուեցնում եմ ձեզ, դուստրեր՝ Երուսաղէմի, անդաստանի գորութիւններով եւ ուժգնութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէք Մէրն իր կամենալուն պէ:

7. Նկատի ունի հրեշտակային իմանալի *անդաստանը*, ուր բնակւում է Տէրը: Անդաստան է նաեւ աշխարհը, իսկ անդաստանի գորութիւնը Բանի մարմինն է, որով խոնարհուեց երկիր, ուր նահատակները հեղեցին իրենց արիւնը: Հարսը նրանց է կոչում *Երուսաղէմի դուստրեր*:

Հարսը երդուեցնում է երկնային Երուսաղէմի ցանկացողներին՝ այլեւս չլքել Տիրոջը (Որոգիներ):

Համաձայն *Հիպոդիոտոսի*՝ Հարսը երդուեցնում է հրեշտակներին Քրիստոսի Մարմնով, որ զօրութեամբ եւ ուժգնութեամբ ծաղկեց երկրային նիւթից եւ երկրի անէծքը փոխեց արդարութեան: Եթէ յառնենք, այսինքն՝ երբ երկրից երկինք ելնենք եւ տեսնենք Աստուծոյ երեսը, *արթնացրէք* ի սեր եւ ի խնամս Եկեղեցու (*Հիպոդիոտոս*):

Ըստ Նիւսացու՝ *գորութիւնները եւ ուժգնութիւնները* հրեշտակային բնութիւններն են: Հարսն այս երկնային գորութիւններով եր-

դուեցնում է աշակերտողներին, որոնք եղան Վերին Երուսաղէմի դուստրեր, որպէսզի նրանց միտքը հաստատուի իմանալի բնութիւնների ուժգնութեամբ եւ ոչ թէ՛ երկրային իրողութիւններով, որպէսզի միշտ նրանց հայն են հաստատունն առաքիւնութեան վարքով եւ ապա՝ յարութեան կեանքով: Հարսը կամենում է աշակերտողների կեանքն այս աշխարհի անդաստանից ուղղել դէպի հրեշտակային անախտութիւնը եւ մաքրութիւնը... Հարսը յորդորում է վեր ելնել եւ արթնացնել սերը *կամենալուն պէ*, այսինքն՝ բարձրանալ եւ յաւելուածով աճել մեծագոյնների համար, այսինքն՝ բարի կամքը կատարել թէ՛ երկրի վրայ, թէ՛ երկնքում (Նիւսացի):

Հարսը կամենում է, որ աշակերտողները ցանկան, խաչուելով եւ յարութիւն առնելով, յառնել Քրիստոսի հետ, եւ արթնացնել Աստուծոյ սերը Եկեղեցու նկատմամբ (Արեւելիցի): Ըստ Նարեկացու՝ *անդաստանն* այս աշխարհն է, ինչպէս նաեւ՝ երկինքը (զգալի եւ իմանալի աշխարհներ): *Անդաստանի գորութիւնը եւ ուժգնութիւնն* Աստուած է, Որով հաստատուեց արարչութիւնը: Հարսն Աստուծոյ զօրութեամբ երդուեցնում է Վերին Երուսաղէմի դուստրերին՝ սուրբերին եւ հրեշտակներին՝ յառնել, աղօթել եւ արթնացնել նոյն իրեն՝ Քրիստոսի բովանդակ սերը, որպէսզի իր կամքը լցնի մեր մէջ: Այսպէս հրամայեց աղօթել ինքը՝ Տէրը. «Թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ» [Մատթ. Զ 10] (Նարեկացի): Հարսը Երուսաղէմի դուստրերին խրատում է առաջին կանոնով՝ ելնել դէպի Քրիստոսի սերը, քանզի թպէտ հաւատքով դուստրեր եղան եւ յոյսով առաքիւնութիւն գործեցին, սակայն լրումը սերն է: Երկրորդ կանոնը հետեւեալն է, թէ՛ արթնացրէք Փեսային, որպէսզի այցելի մեզ եւ հատուցի Եկեղեցու թշնամիներին, ինչպէս ինքն է կամենում: Երկրորդ կանոնն է երդումով՝ [այսինքն՝] ողջ զօրութեամբ, սիրել Նրան եւ կատարել Նրա կամքը (Տաթեւացի):

Լւում է Փեսայի ձայնը եւ ասում.

8. Իմ Եղբօրորդու ձայնն է. ահա Նա գալիս է, վազում լեռների վրայով՝ հանգստանալով բլուրների վրայ:

8. Հարսը լսում է Եղբօրորդու ձայնը եւ ճանաչում... Հարսը լսում է Աստուծոյ ձայնը օրէնքով եւ մարգարէներով Բան—Աստուծոյ տնօրինութեան մասին եւ ապա տեսնում Աւետարանով. «Բազում կերպերով եւ օրինակներով Աստուած կանխապէս մարգարէներով խօսեց մեր հայրերի հետ, իսկ վերջին օրերում մեզ հետ խօսեց Որդու միջո-

ցով» [Եբր. Ա 1, 2] (Նիւսացի—Որոզիւնս):

Առաւել խորունկ եւ համակողմանի է Տաթեւացու մեկնութիւնը:

Լեռները եւ քլուրները խորհրդանշում են՝ ա) դեւերին, որոնք վեր էին խոյացել հպարտութեամբ, հաստատուել չարութեամբ եւ սառել սիրուց. Տէրն ազդու զօրութեամբ ընդոտնում է նրանց, որի մասին ասում է Դաւիթը. «Խռովուեցին լեռները Նրա զօրութիւնից» [Սաղմ. ԽԵ 4]. բ) մեղքերի չարութիւնը, որն արգելք էր արդարութեան ճանապարհին, որը եւ ընդոտնեց եւ հաւասարեցրեց Տէրը. գ) առաքինութիւնները, որոնք բարձր եւ դժուարընթաց էին մինչեւ Քրիստոս, որոնք Տէրը, գալով, զօրութեամբ եւ խնդութեամբ ամբողջացրեց եւ բոլորի համար դիւրին եւ մատչելի դարձրեց. դ) մշտնջենաւորներին, վերին զօրութիւններին (*լեռներ*) եւ ներքին դասերին (*քլուրներ*): Տէրը վազում է լեռների վրայով, ուստի երկնային դասերը չեն հասցնում տեսնել, նրանց համար ծածկուած է Բանի տնօրէնութիւնը: Եւ, ընդհակառակը, Տէրը հանգստանում է (որոշ տարբերակներում՝ *խայտում* է, *խաղում* է կամ *խաղաղանում* է) *քլուրների վրայ*, որոնք սպասաւոր էին Նրա տնօրէնութեանը. ե) նահապետներին (*լեռներ*) եւ մարգարէներին (*քլուրներ*). նահապետներն աւելի սակաւ էին ծանօթ Տիրոջ մարմնաւորման խորհրդին, քան՝ մարգարէները, որոնք աւելի տեղեակ էին եւ լի՝ Տիրոջ գալստեան խնդութեամբ. գ) ուղղակիօրէն նիւթական լեռները, որոնք վրայ մինչեւ մարմնաւորուելը եւ մարմնաւորուելուց յետոյ աստուածածանօթութեամբ երեւաց Տէրը (Արարիւհամիւն, Մովսէսին, աշակերտներին...): Նոյնպէս էլ լեռան վրայ փորձուելիս ընդոտնեց սատանային, Թաբօր լեռան վրայ պայծառակերպուեց, Գողգոթայի վրայ խաչուեց, Չիթենեաց լեռան վրայից համբարձուեց... (Տաթեւացի):

Ըստ *Հիպոդիտոսի՝ լեռները եւ քլուրները* Եկեղեցիներն են (Տիրոջ լեռներ). նրանց վրայ է Քրիստոս մինչեւ վախճան:

9. Իմ Եղբօրորդին Գման է այծեամի կամ եղնիկների հորթերի՝ Բեթելի լեռների վրայ:

Հարսը ցոյց է տալիս օրիորդներին Փեսայի [տեղը].

Ահա Նա կանգնած է մեր որմի ետեւում, ձգուել է դէպի պատուհանները, նայում է ձաղերի միջով:

10. Իմ Եղբօրորդին պատասխանում է ինձ եւ ասում.

Վե՛ր կաց, ե՛կ, մերձաւոր Իմ, գեղեցիկ Իմ, աղաւնի՛ Իմ:

9—10. *Այծեամը* սրտոտ է եւ արագընթաց: Սա Նշանակն է Տիրոջ, որ ամենահայեաց տեսութեամբ տեսնում է զալիքը եւ քննում սրտերը, որ արագընթաց հեռացաւ որսողից, եւ խաւարը չհասաւ Նրան: *Եղնիկն* օձահալած է եւ բնակում է բարձունքներում. այնպէս էլ Տէրը խորտակեց Վիշապին, զօրացրեց առաքեալներին, բարձրացաւ երկինք եւ այն խոստացաւ իւրայիններին (Նիւսացի—Տաթեւացի): *Բեթելն* Աստուծոյ տունն է՝ Սուրբ Կոյս Մարիամը, ուր ներտաղաւարուեց Բանն—Աստուած (Որոզիւնս): Ըստ Նարեկացու՝ *Բեթել* երբայերէն նաեւ Նշանակում է երկինք, ուր բարձրացնում է օձից փրկուածներին (Նարեկացի):

Բեթել—Աստուծոյ տունը նաեւ մեր հոգիներն են, ուր *այծեամի* պէս շրջում է, զօրացնում եւ հաստատում բարի գործերում (*Հիպոդիտոս*):

Որմը Կոյսից վերցրած մարմինն է (Նարեկացի): *Պատուհանները* մարգարէներն են, որոնք Աստուծոյ լոյսը ներմուծեցին մեր բնութեան մէջ: *Ճաղերն* օրէնքի փոխհիսուած պատուիրաններն են: Արդ, նախապէս մարգարէների եւ օրէնքի իմաստներով լուսաւորուեց հոգին, այսինքն՝ Աստուծոյ լոյսը Նշուլուեց պատուհաններով եւ ձաղերով եւ համակեց մաքուր օդում արեգակը տեսնելու բաղձանքով. եւ ապա եկաւ Փափագելին՝ կատարելու Իր փրկութիւնը (Նիւսացի):

Որմի ետեւում. ցոյց է տալիս մինչեւ օրէնք ժամանակը, երբ Աստուած ծածուկ էր մարդկանց համար: Ծաղապատ *պատուհանն* օրէնքն է, որ ճշմարտապէս քարոզեց Մի Աստուածութիւն եւ ծածկաբար՝ Երրորդութիւն (*Հիպոդիտոս*):

Փեսան կանչում է Հարսին՝ յառնելու լարծող մեղքերի գայթակղութեան զլորումից եւ մեղքի կործանարար նիւջից, ապա՝ մերձաւորուելու բարի գործերի առաջադիմութեամբ, առաքինութիւնների կատարմամբ եւ յատկապէս Քրիստոսի մարմնակցութեամբ (գոյաբանական մերձաւորութիւն): Մեր՝ Աստուծուց հեռացած եւ մեղքով սեւացած բնութիւնը, մերձաւորուելով աստուածային գեղեցկութեանը, ձեռք է բերում սկզբնատիպ գեղեցկութիւնը եւ լցում Աստուծոյ լոյսով: Այդ գեղեցկութիւնը Քրիստոսի փրկութեամբ դառնում է մարդկային բնութեան անբաժանելի յատկանիշը (Աւագանի լուացում): Իսկ Սուրբ Հոգին հագնելով՝ մեր բնութիւնն աղաւնակերպ է դառնում (Դրոշմի օծում) (Նիւսացի—Նարեկացի):

Ըստ Տաթեւացու՝ Փեսան օրէնքով եւ Աւետարանով, ինչպէս

նաեւ՝ մկրտութեամբ եւ ապաշխարութեամբ, հաւատքի եւ գործերի կոչ
է անում Հարսին, ինչպէս նաեւ՝ յորդորում հոգեւոր զգուշութեան եւ
շրջահայեացութեան:

11. Քանզի ահա ձմեռն անցաւ, անձրեւներն անցան ու գնացին—հեռացան.

11. *Չմեռը* բազմատեսակ չարութիւնների նշանակն է՝ կռապաշ-
տութեան (որ հալուեց), բարի գործերի անպտղութեան (որ ծաղկեց),
արեգակի հեռու լինելու (որ մերձեցաւ), ցրտութեան (որ շերմացաւ):

Չմեռ էր մինչեւ Փրկչի գալուստը (Տաթեւացի—Նիւսացի), երբ
մարդկութիւնը մեղքի սառնամանիքի մէջ էր եւ չէր գտնում ապաշխա-
րութեան ճանապարհը (*Հիպոդիտոս*):

Անձրեւները նշանակներն են սատանայի խաբէութիւնների եւ
փորձութիւնների, որ կերպարանում են որպէս բարի, սակայն կորուս-
տեան են մատնում (Նարեկացի—Արեւելցի), ինչպէս նաեւ՝ կռապաշ-
տութեան մրկուած խռովութիւնների (*Հիպոդիտոս*):

12. Ծաղիկներ երեւացին մեր երկրում, հա- սաւ էտելու ժամանակը, տատրակի ձայն լսուեց մեր երկրում:

12. Նկարագրում է Քրիստոսի գալստեամբ եկած հոգեւոր գար-
նան գեղեցկութիւնը: Մեր բնութիւնը գեղեցկացաւ անտարանական
առաքինութիւնների ծաղիկներով: Իւրաքանչիւր ծաղիկ նշանակ է
որոշակի հոգեւոր առաքինութեան. շուշանը՝ ողջախոհութեան, վարդը՝
պատկառանքի, մանուշակը՝ Քրիստոսի անուշահոտութեան... Հոգին
պէտք է պսակներ հիւսի այս ծաղկի առաքինութիւններով եւ գարդա-
րի իրեն (Նարեկացի): *Ծաղիկները* նաեւ խորհրդանշում են Քրիստո-
սի մասին մարգարտութիւնների կատարումը (*Հիպոդիտոս*):

Հասաւ էտելու ժամանակը. այս է վկայում *տատրակի ձայնը*, որ
Յովհաննէս Մկրտչին էր: Նա ընդառաջեց պայծառ գարնանը եւ ուսու-
ցանում էր չարից հեռանալը, ապաշխարութեան մկրտութիւնը եւ առա-
քինութեան վարքը (Նիւսացի):

Հասաւ մարմնաւորը հատելու եւ հոգեւորը տնկելու եւ աճեցնե-
լու ժամանակը (*Հիպոդիտոս*): Հասաւ պիղծերը սուրբերից կտրելու եւ
հեռացնելու ժամանակը: *Տատրակի ձայն լսուեց մեր երկրում.* ինչպէս
թռչունները գարնանը տարածում են բոյն են դնում երկրի վրայ, այն-
պէս էլ սուրբերը ցնծում են հոգեւոր գարնան գալստեամբ, մանաւանդ՝

առաքեալները եւ վարդապետները եւ նրանց հրեշտակային քարոզու-
թեամբ ու հոգեւոր երգերով գիշեր—ցերեկ Աստծուն օրհնողները
(Նարեկացի):

13. Թզենին ընծիւղեց իր բողբոջը, մեր ծաղ- կած որթերն արձակեցին իրենց հոտը: Վե՛ր կաց, ե՛կ, մերձաւոր Իմ, գեղեցի՛կ Իմ, աղաւ- նի՛ Իմ, եւ ե՛կ դու, աղանեա՛կ Իմ:

13. *Թզենու բողբոջները* եւ *ծաղկած որթերի* բուրմունքը
սկիզբն է հոգեւոր պտուղների. այս տեսնողը վստահանում է սպա-
սուելիք հոգեւոր պտուղներով... *Բողբոջները* խոստովանութեան ար-
տայախոթիւնն են. հոգին բողբոջում է խոստովանութեամբ, այսինքն՝
պատրաստում հոգեւոր կեանքի՝ պտղաբերելու առաքինութեան վար-
քով եւ հասնելու հանդերձեալ քաղցրութեանը: Գինին հոգեւոր իմաս-
տութեան խորհուրդն է. հոգին ծաղկած որթերի բուրմունքով նախա-
վայելում է հոգեւոր ճանաչողութեան պտուղները (Նիւսացի): Տիրոջ
այգին՝ հաւատացեալները, ծաղկել են այլազան եւ պէս—պէս գոյներով,
պտուղներով եւ հոտերով, մէկը՝ մարտիրոսութեամբ, մէկը՝ զանազան
առաքինութիւններով, մէկը՝ բարեգործութիւններով (Նարեկացի):

Թուզ. ըստ *Հիպոդիտոսի*, նշանակում է խաւար. Քրիստոսի
փրկագործութեամբ խաւարի մէջ նստածները լոյս տեսան [Մատթ. 7
16] (*Հիպոդիտոս*):

14. Ե՛կ պարսպի պատուարին մերձ վե՛մի հո- վանու տակ:

Յո՛նյց տուր Ի՛նձ քո երեսը եւ լսելի արա՛ Ի՛նձ
քո բարբառը, քանզի քո բարբառը քաղցր է,
եւ քո պատկերը՝ գեղեցիկ:

14. Փեսան վերստին կոչ է անում Հարսին կամաւորաբար եւ յօ-
ծարամտութեամբ գալ առ Աստուած... Փեսան առաջին անգամ կանչեց
Յովհաննէս Մկրտչի միջոցով (ապաշխարութեան մկրտութիւն), իսկ
երկրորդ անգամ՝ առաքեալներով՝ Սուրբ Հոգով մեղքերի թողութեան
(*Հիպոդիտոս*):

Վե՛մը Քրիստոսն է, քանզի ասում է առաքեալը. «Քրիստոս
հնքն էր վե՛մը» [Ա Պետ. Բ 6—8], իսկ *պարսպ*ն օրէնքի պատուիրան-
ներն են: Այսպիսով հրամայում է այսուհետ ապրել Աւետարանով եւ

նրա քարոզութեամբ եւ ոչ թէ՛ [տակ] օրէնքով... Այս մասին է վկայում առաքեալը. «Օրէնքով արդարացողներդ խափանուած էք Քրիստոսից» [տե՛ս Հռոմ. Գ 20, հմմտ. Գաղ. Բ 16, Գ 11]: *Պարսպի պատի մօտ* արտայայտութիւնը ցոյց է տալիս, որ, Աւետարանը պահելով, հեռու չես օրէնքից, քանզի, ըստ առաքեալի, «օրէնքի լրումը Քրիստոս է» [Հռոմ. Ժ 4]: Եւ Տիրոջ խօսքը, թէ՛ «Եկայ կատարեալ դարձնելու օրէնքը» [տե՛ս Մատթ. Ե 17], ցոյց է տալիս, որ օրէնքը թերի էր (Որոգիւնս—Նիւսացի—Նարեկացի):

Հարցը կամենում է նստել: Քրիստոս—*Վեմի հովանու տակ* (Հիպոդոտոս):

Յո՛յց տուր ինձ քո երեսը... Այնպէս, ինչպէս քեզ ստեղծեցի իմ ձեռքերով: *Լսելի՛ արա քո բարբառը.* այսինքն՝ երգակցի՛ր իրեշտակներին (Հիպոդոտոս):

Յո՛յց տուր ինձ քո երեսը... Բնագրում Փեսան այսպէս դիմում է Հարսին: Սակայն Նիւսացին մեկնում է որպէս Հարսի՛ Փեսային ուղղուած կոչ: Հարսը, աղանի դարձած եւ ձանաչելով Վեմ—Քրիստոսին, աղաչում է ցոյց տալ իր երեսը, այլեւս չխօսել մարգարէներով եւ օրէնքով, այլ, որչափ տեսանելի է մարմնաւորներին, այնքանով ցոյց տալ իր երեսը, որպէսզի տեսնի եւ յագնայ Նրա փառքի երեւմամբ: Հարսն աղաչում է մարդկային [սողութեան կարողութեան չափով] լսեցնել իր աստուածային ձայնը, որպէսզի արածի աւետարանական քարոզութեան հովանու տակ եւ չզնայ օտար հովիւների հետ (Նիւսացի—Նարեկացի):

Փեսան այսպէս է ասում օրիորդներին.

15. Բռնեցէ՛ք մեզ համար փոքրիկ աղուսներին՝ այգիների ապակահիչներին, եւ մեր որբերը կծաղկեն:

15. *Աղուսը* սատանան եւ նրա իւրայիններն են, որոնք խոչընդոտում են մարդկանց՝ արդարութիւն գործելու:

Աղուսը չորս յատկութիւն ունի՝ գիշակեր է, տկար, քծնի եւ ապականում է այգին: Սատանան նոյնպէս զազրակեր է մեղքերով, զօրութեամբ՝ տկար, խաբեքայ եւ Եկեղեցու եւ մարդկանց հոգիների ապականիչ՝ ըստ Սամփոսնի աղուսների օրինակի, որոնք ապականեցին այլազգիների անդաստանները: Սատանան էլ նախ ապականեց երկնաւոր դասերի այգին եւ դէպի իրեն քաշեց, երկրորդ՝ ապականեց դրախտի այգին, երրորդ՝ ապականեց հին օրէնքի այգին, չորրորդ՝ ապականեց Նոր Եկեղեցու այգին (Տաթեւացի):

Այլ տեղերում սատանան անուանում է *լեռ, վիշապ, այս աշխարհի իշխան*, սակայն այստեղ՝ փոքր եւ աղուս՝ առաքեալների ահարկու զօրութեան պատճառով (Նարեկացի):

Հարսն այսպէս է ասում.

16. Իմ Եղբօրորդին իմն է, եւ ես՝ Նրանը, որ հովում է շուշանների՛ մէջ:

Մինչ ցերեկը լուսաւորի, եւ ստուերները շարժուեն,

17. վերադարձի՛ր, Եղբօրորդի՛ իմ, նմանուի՛ր այծեամի կամ եղնիկների հորթերի՛ խնկաբեր լեռների վրայ:

16—17. Պօղոսն ասում է. «Ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց» [տե՛ս Հռոմ. Ը 38—39], եւ Քրիստոս ասում է. «Եղէ՛ք իմ մէջ, եւ ես՝ ձեր մէջ» [տե՛ս Յովհ. ԺԵ 5]. Նա իր Եկեղեցին հովում է այնտեղ, ուր բնակւում է՝ այս աշխարհի մեռելութեան մէջ (*Չուշանների մէջ*), եւ Սուրբ Հոգու անուշահոտ շնորհները պարգեւում այս աշխարհի համար մեռած (շուշանազոյն) աշակերտներին (Հիպոդոտոս—Որոգիւնս):

Նիւսացու մօտ *շուշանն* առաքինութեան նշանակն է... Քրիստոս իր հօտը ոչ թէ կերակրում է խոտով, որն անասնացած մարդու կերակուրն է եւ խորհրդանշում է մարմնաւոր վայելքները, այլ՝ հոգեւոր կերակուրներով (*շուշաններով*), որոնք եւ բոլոր սուրբերը կերան եւ զմայլուեցին, արհամարհեցին սնոտի ցանկութիւնները (Նիւսացի—Նարեկացի):

Շուշանը ջրի մէջ աճող մաքուր, բուսիչ յատկութիւններով անուշահոտ ծաղիկ է: Քրիստոս այդպէս է հովում Եկեղեցին. մաքրում է ջրով, բժշկում մեղքերից, տալիս անուշահոտ վարք եւ ծաղկեցնում խօսքով, որով մշտապէս կերակրում է նրանց (Տաթեւացի):

Մեր բնութիւնը լուսաւորուել է Սուրբ Հոգու ճառագայթներով, եւ մեր կենցաղի ստուերները սկսել են փոփոխուել. վերջիններիս վրայ փութանակի նայում են նրանք, ովքեր ճշմարտութեան լոյսով չլուսաւորեցին հոգու այծերը, ովքեր ստուերը եւ սնոտին իբրեւ հաս-

տատուն են տեսնում, իսկ ճշմարիտը, որպես ոչ, անտեսում: Իսկ շուշաններով կերակրուողները, այսինքն՝ մաքուր եւ անուշահոտ կերակուրներով հոգիները պարարողները, բոլոր մոլորությունները եւ խաւարատեսակ երեւմունքները մերժելով, տեսնում են ճշմարիտ իրերի հաստատությունը՝ կոչուելով լուսոյ եւ ցերեկուայ որդիներ (տե՛ս Աթեսադ. Ե 5) (Նիւսացի): Նրանց սրտում ծագել է Քրիստոսի ճշմարտութիւնը, եւ օրէնքի ստուերները սկսել են նահանջել (*Հիպոդիստոս*):

Ռոզգինէս—Լարեկացի ըմբռնումը վախճանաբանական է.

Մինչ ցերեկը լուսաւորուի, եւ ստուերները շարժուեն... Այսինքն՝ մինչեւ զայ հանդերձեալը, ուր բոլոր այժմեան ստուերները կվերափոխուեն ճշմարտութեան (Ռոզգինէս):

Նրանք, ովքեր արհամարհեցին այս աշխարհը, հաստատուած են անստուեր լոյսի ծագման յոյսով, որ լինելու է Վերջին Օրը... Այդ Օրը սուրբերը կյազեցնեն Քրիստոս—Փեսայի հանդէպ իրենց սիրոյ անչափ ծարաւը (Լարեկացի): Հարսը կոչ է անում բարձունքներում նստած Աստծուն՝ սրահայեաց այքով (*այժեամի պէս*) նայել ամբարիշտների գործերին եւ (*եղնիկների պէս*) ոտնակոխ անել օձերին ու վիշապաներին (Նիւսացի—Լարեկացի):

Իսկաբեր լեռներն առաքինութեան բարձունքներն են (Արեւելիցի):

Գ

1. Գիշերն անկողնու մէջ փնտրեցի իմ հոգու Սիրելիին, փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի, եւ ձայն չաուեց ինձ:

1. *Գիշերն անկողնու մէջ...* Նկատի ունի այն ժամանակները, երբ մարդասպան օձն իր պէս նսեմացրեց փախերով ու մոլորութեամբ եւ մեղքի մահիճը նետեց: Մարդիկ հրեշտակներից հարցնում են Բաւի մարդեղութեան եւ նրանում (մարդեղութեան մէջ) ծածկուած գանձի մասին, որ փրկութիւն պարգեւեց մեզ. եւ չեն գտնում... Բանգի յաւիտեաններից եւ ազգերից ծածկուած էր այն փրկութիւնը, որ ճանաչեցին Եկեղեցու միջոցով (Արեւելիցի—Ռոզգինէս):

«Անկողին է անուանում կատարեալ բարու ընդունելութիւնը եւ գիշեր է անուանում անկողնային ժամանակը. գիշերը ցոյց է տալիս

աներեւոյթների տեսութիւնը, ինչպէս Մովսէսը, որ մտաւ մառախուղի մէջ, ուր Աստուած էր: «Որ,— ինչպէս ասում է մարգարէս,— խաւարը ծածկոյթ է դարձրել իր շուրջ» [Սաղմ. Ժէ 12]: Որի մէջ [այսինքն՝ մեզի մէջ] լինելով միայն՝ ուսանում է, թէ որքան հեռու է կատարելութիւնից... Զգայութիւնները յարածամ լքած, աներեւութեան ներսում լինելով, յարածամ շրջապատուած աստուածային գիշերով...»: Սակայն Սիրելին դուրս է խորհուրդների ըմբռնումից, աստուածային բնութիւնն անձանաչելի է մարդու համար: Հարսն անուկ կանչում է Նրան, սակայն որեւէ անուն չի կարող հասու լինել Աստծուն, քանզի Նա վեր է բոլոր անուանումներից (Նիւսացի):

«Անկողին է անուանում խորհուրդների շտեմարանը, որ սիրան է»: Իսկ *գիշերը* խորհրդանշում է աստուածգիտութեան աներեւոյթ եւ անհասանելի խորհուրդը (*Հիպոդիստոս*):

Ըստ Լարեկացու՝ Հարսը, կարծելով, թէ կատարելապէս հասել է Քրիստոսի գիտութեանը, անհոգացաւ, ինչպէս յոգնած եւ անկողին մտած մարդը... *Գիշերն* այս կեանքն է՝ համեմատութեամբ հանդերձեալ կեանքի. մթին, աղքամղջին եւ մարմնի մէջ բանտարկուած: *Փնտրեցի Նրան եւ չգտայ...* այսինքն՝ որչափ էլ փնտրեմ Աստուծոյ գօրութիւնը կամ փառքի տեսութիւնը կամ անուան մեծութիւնը կամ արդարների համար պատրաստուած պարգեւները, օտարացած եմ գտնում ինձ (Լարեկացի):

Նկատի ունի նաեւ իւզաբեր կանանց, ովքեր չգտան գերեզմանի մէջ եւ յետոյ ընկան Նրա ոտքերը եւ երկրպագեցին Նրան (Տաթեւացի):

2. Վեր կենամ ու շրջեմ քաղաքով, փողոցներով ու հրապարակներով եւ փնտրեմ իմ հոգու Սիրելիին: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չաուեց ինձ:

3. Բաղաբում շրջող պահապանները հանդիպեցին ինձ:

«Հարսն ասում է պահապաններից.

Արդեօք չէ՞ք տեսել իմ հոգու Սիրելիին:

2—3. Հարսը շրջում է օրէնքի եւ մարգարէների (մինչեւ Յովհաննէս) անդաստանով, փնտրում Սէրը եւ չի գտնում մինչեւ Բանի մարդեղութիւնը, երբ Սէրը զարթնեց եւ մարմնաւորուեց (Ռոզգինէս):

Հարսը նաեւ փնտրում է իմանալի երկնքում՝ հրեշտակային դասերի մէջ, սակայն Աստուած վեր է բոլոր զգալի—նիւթական եւ իմանալի—հոգեւոր եերից (*Հիպոդիտոս*):

Բաղաքը, փողոցը եւ հրապարակը հրեշտակային վերին բնականտեղերի նշանակներն են. բազմութիւն, առատ բարք, մօտիկ հաւաքուածութիւն: Այս երեք տեղերում չի գտնում Սիրելիին, այսինքն՝ Լա կատարելապէս չի ճանաչում Սուրբ Գրքից, քանզի փոքրիշատ գիտենք եւ մարգարտանում ենք [տե՛ս Ա Կորնթ. ԺԳ 9], չի ճանաչում անուններից, քանզի գործերն են յայտնում, չի գտնում վերին զօրքեւորի մէջ, որովհետեւ անհասանելի է նրանց (Նիւսացի—Տաթեւացի):

4. Երբ նրանցից մի փոքր անցայ, գտայ իմ հոգու Սիրելիին:

Գտնելով Փեսային ասում է.

Բռնեցի Նրան եւ չթողեցի Նրան, մինչեւ չտարայ Նրան իմ Մօր տունը եւ ինձ Յղացողի սենեակը:

4. *Մի փոքր անցայ...* Այսինքն՝ մարգարութիւնները փոքր—ինչ լռեցին, եւ Բանը մարմին եղաւ: Հարսը հաւատացել է փափագել է Քրիստոս Փեսային, մինչեւ իսկ տանջանքներ եւ պէս—պէս վշտեր կրելով՝ չի հեռացել Նրանից, մինչեւ աւազակի միջոցով Նրա հետ չմտաւ դրախտ եւ երկնքի արքայութիւն (Ռոգզինտ):

Հարսը մի կողմ է թողել բոլոր արարածներին եւ զանց առել բոլոր ստացական [բնութիւնները], լքել է հասնելու ամէն մի հնար, դիմել հաւատքին [եւ Սուրբ Հոգու շնորհներին] (Նարեկացի) եւ գտել Սիրեցեալին: Հարսն այլեւս չի կամենում թողնել իր հաւատքի գիւտը, մինչեւ չտանի իր շտեմարանը, որը սիրտն է, որպէսզի ընդունակ լինի Աստուծոյ բնակութեան համար, ինչպիսին էր սկզբում, երբ ստեղծուեց Յղացածից՝ առաջին Մօրից, որ արարչութեամբ մեր բնութեան պատճառ եղաւ (Նիւսացի):

Հարսը *գտել է*, այսինքն՝ որ Լա ճշմարիտ Աստուած է, սակայն ինչպիսին է Նրա էութիւնը՝ անհասանելի է մնացել (*Հիպոդիտոս*):

Մի փոքր անցնելը ցոյց է տալիս, որ մեր միտքը, անցնելով հրեշտակներից եւ մերձենալով իմանալի խորանին, այլեւս ոչինչ չի տեսնում: Ինչպէս մեր զգալի աչքերը մինչեւ երկինք են տեսնում, այնպէս էլ եղական միտքը տեսնում է եղականները եւ չի կարող հայել

անմատոյց խորանը եւ վարագոյրի այն կողմը: Եւ գտնելն այն է, որ իմացանք, թէ անհասանելի է: Մեր *տունը* եւ *սենեակն* Աստուծոյ արարչական եւ բարի կամքն է, եւ այնտեղ մտնել նշանակում է վայելել Նրա բարիքները:

Յղացումը երկշերտ ընկալում ունի. նախ՝ որ յղացում ենք եւ պապ ծնում, այսինքն՝ բոլորի լինելիութիւնը կար նախագիր տեսութեան մէջ, եւ յետոյ գոյացան էութեամբ («Մինչեւ աշխարհի լինելն ընտրեց մեզ» [Եփես. Ա 4]): Երկրորդ՝ ինչպէս ծնուածը Նոյնն է, ինչպէս նախապէս աներեւոյթ էր, Նոյնպէս էլ արարածները Նոյնը եղան գոյութեամբ, ինչպէս նախապէս տեսութեամբ էին (նախասահմանութիւն) (Տաթեւացի):

Հարսը երկրորդ անգամ է երդուեցնում օրիորդներին.

5. Երդուեցնում եմ ձեզ, դուտրե՛ր Երուսաղէմի, ազարակի զօրութիւններով եւ հաստատութիւններով, եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք Մերն Իր կամենալուն պէ:

5. Հարսը երկրորդ անգամ է երդուեցնում [տե՛ս Բ 7]... Քրիստոսի սերը, որի մէջ բնակում է Հարսը, անյագ է դարձնում մարդկանց: Հասնելով այնչափ շնորհների եւ գիտութեան, որպէս թէ չհասած՝ *երդուեցնում է արթնացնել սերը*, որին անհաս էր եւ տգէտ (Նարեկացի):

Քրիստոս է սերը: Հարսը խնդրում է արթնացնել *Նրա կամենալուն պէ...* Տերը զարթնում է չորս կերպ՝ մարմնաւոր ծննդեամբ, մկրտութեամբ, խաչելութեամբ եւ յարութեամբ (Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսի մասին.

6. Ո՞վ է սա, որ գալիս է անապատից ինչպես ծառացած—բարձրացած ծուխ: [Բուրում է ինչպես] զմուռ¹ եւ կնդրուկ², իւրագործների ամեն տեսակ փոշիներով:

6. Լիւսացու մօտ քնագիրն այսպիսին է. «Ո՞վ է սա, որ ելնում է անապատից ծխացող խունկի ծառի պէ...»: Անապատից դուրս գալը վկայում է այն մասին, որ Հարսը ցանկութեամբ եւ ժուժկալութեամբ վերընթանում է դէպի աստուածային բարձունքներ, Հարսը ծարաւ է աստուածային արգիւրներին եւ, յարածամ իր մարմինն անապատ, անկոխ եւ անջուր պահելով, ստացել է աստուածային ծարաւը... Հարսի գեղեցկութիւնը ստացել է խունկի ծխի կերպարանք՝ զմուռի եւ կնդրուկի խառնուածներով... Ջուռսը մեռելութեան խորհուրդն է, իսկ կնդրուկն անձի ընծայաբերումն ու մատուցումն է ի սպասաւորութիւն Աստուծոյ: Եւ այս պէտք է զմուռս լինել, սպանել սեփական անդամները, մեռնել եւ թաղուել Երա հետ, որ մեզ համար մեռաւ. սա պատճառ է

1 զմուռ— (եբր. *mōr*) սուր անուշահոտութեամբ խեժ է՝ դեղին—սպիտակաւուն կամ կարմրաւուն, օգտագործում է նաեւ բժշկութեան մէջ: Կիւնում է թէ՛ հեղուկ, թէ՛ պինդ վիճակում: Ստանում են *Balsamodendron Myrrha Nees*, որն աճում է Հնդկաստանում, Եգիպտոսում, Նիբիւայում եւ հաւանաբար աճեցուն էր Սողոմոնի կողմից իր այգիներում: Հնուց ի վեր զմուռն անետարի առարկայ էր եւ բարձր էր գնահատում եգիպտացիներին եւ հրեաներին, ինչպէս նաեւ՝ յոյների եւ հռոմէացիների կողմից: Հնում զմուռն օգտագործում էր մասամբ սուրբ օծութեան իւղ (միտոն) եփելու համար [Ելք Լ 23—33], մասամբ՝ ծխեցնելու համար հանդերձներն ու սենեակները եւ վերջապէս՝ բժշկութեան եւ մահացածների մարմիններն օծելու եւ զմոսնելու համար [Յովի. ԺԹ 39]: Երբեմն խառնել են զինու հետ [Մարկ. ԺԵ 23]: Ջմուռն առկայ է նաեւ Յիսուսին երկրպագութեան եկած մոզերի ընծաների մէջ [Մատթ. Բ 11], ինչպէս նաեւ Երա մարմնի օծման ցիւրեղից էր:

2 կնդրուկ— (եբր. *Ի՛ծոն*) խեժ է, որ արտադրում է *Boswellia* ծառերից: Գլխաւոր նմուշներն են՝ *B. frereana*, *B. carteri*, *B. papyrifera*՝ հիւսիս—արեւելեան Աֆրիկայում, *B. sacra*՝ հարաւային Արաբիայում, *B. serrata*՝ հիւսիս—արեւմտեան Հնդկաստանում, որ նրանք աճում են կիսանապատ (ամառի) լեռներում: Սպիտակադեղնաւուն անուշաքոյր խեժը ստացում է կեղեի ճեղքումով եւ թէպէտ դառնահամ է, սակայն՝ չափազանց անուշահոտ: Խունկի բաղադրամասերից է [Ելք Լ 34], մատուցում էր որպէս անուշահոտութիւն ողջակէզների ժամանակ [Դե. Զ 15], դրում էր առաջաւորաց հացի վրայ [Դե. ԻԴ 7], զմուռսի հետ առկայ է մոզերի ընծաների մէջ [Մատթ. Բ 11]: Մեր լեզուի մէջ արմատացած խունկն իրականում կնդրուկն է, որը խունկի չորս բաղադրամասերից է:

ամեն տեսակ խունկերի առաքինութիւններով զարդարուած վարքի, որն, ընդխառնուելով մանրած հեշտալի փոշու հետ, անուշահոտ է դառնում՝ լցուելով Սուրբ Հոգու անուշ իւղով (Լիւսացի):

Հարսն անապատացել է, այսինքն՝ հեռացել չար գործերից... Խունկի ծուխն առաքինութիւններն են ու բարեգործութիւնները...

Ջուռսը մեռելութեան խորհուրդն է, կնդրուկը՝ անուշահոտ վարքի: Քրիստոնեան պէտք է նախ մեռնի մեղքի մարմինը, մահակից լինի Քրիստոսին եւ անուշահոտ վարքով հաւասարուի Քրիստոսի մաքրութեանը, ապա կարող է Քրիստոսի հարս դառնալ եւ վերադառնալ Քրիստոսի մօտ (Լարեկացի):

Հարսը զմուռով կցորդ եղաւ չարչարանքներին եւ կնդրուկով հաղորդ եղաւ փառքին (Արեւելից): Հիպոդիտոսի ըմբռնումը վախճանաբանական է. «Ելնում է երկրից, որ անապատի պէս է մնալու, երբ ամպերով Տիրոջն ընդառաջ ելնեն վարքով անուշահոտները, Քրիստոսի սիրով մեռածները (զմուռով մեռածները), Սուրբ Հոգու շնորհների անթիւ փոշեհատիկներ ընդունածները եւ ամեն տեսակ առաքինութիւններով զարդարուածները» (Հիպոդիտոս—Արեւելից):

Ըստ Տաթեւացու՝ հոգեւոր մահը երկակի է. նախ՝ ախտերը մեռցնում ենք մեր մէջ եւ սպանում, երկրորդ՝ մեռնում ենք ընդդէմ ախտերի: Նմանապէս էլ երկակի է հոգեւոր թաղումը. նախ՝ մեր մէջ թաղում ենք մեղքերի թանձրութիւնը, եւ երկրորդ՝ առաքինութիւններով ենք թաղում մեր մարմինը, ինչպէս ծուխն է ծածկում խունկը: Եթէ խունկը մարմնաւոր առաքինութեան խորհուրդն է կրում, ապա՝ իւր եփելը՝ հոգեւոր առաքինութեան (Տաթեւացի):

Օրիորդներն այսպէս ասացին.

7. Ահա՛ Սողոմոնի գահոյքը, նրա շուրջ վաթսուն սպառազէններ են Իսրայէլի քաջերից:

8. Բուրը՝ պատերազմի հմուտ սուսերաւորներ, իւրաքանչիւր այր սուր [ունի] ազդրին՝ ընդդէմ գիշերուայ արհաւիրքների:

7—8. Մարմնաւորուած Բան—Աստուծոյ մարդեղութեան գահոյքի շուրջ հրեշտակային զօրքերն են, որպէս սուսերաւորներ՝ ազդրի վրայ սուր կրելով ընդդէմ արհաւիրքների, որ խաւարի մէջ խոցուում են ուղիղներին: Գահոյք է նաեւ կոչում, որովհետեւ վաստակածների եւ բռնաւորուածների հանգստեան տեղն է, եւ դարձեալ՝ ազդրի վրա-

ի սուրը Քրիստոսի թշնամիների դեմ է (Որոզիսես):

Լիւսացու մօտ բնագիրն այսպիսին է. «Ահա՛ Սողոմոնի մահի՛ճը...»: Լիւսացու մեկնութիւնը ներանձնական կտրուածք ունի... Մարմնի ախտաւոր եւ աղտեղի հեշտութիւնները, նստելով մարմնի անդամների մէջ, որպէս աւազակների բանակներ դարանակալ են լինում մտքերին եւ բազում անգամ գերի տանում՝ հոգին յափշտակելով իրենց ախորժու՛մի մէջ եւ Աստուծոյ թշնամի դարձնելով, քանզի, ըստ առաքեալի, «մարմնի խորհուրդը թշնամութիւն է Աստուծոյ դէմ» [տե՛ս Հռոմ. Ը 7]... Ուստի պէտք է, հակառակ մարմնական ցանկութիւններին, ընտրել աստուածայինը: Երբ մարդը հեռանում է մարմնական հեշտութիւններից, ձեռք է բերում աներկիւղ հոգեւոր արիութիւն եւ արի բարկութեամբ հալածում հեշտութիւնները: Երբ հոգին սրբւում է մարմնական ախտի ցանկութիւնից, վերստանում է իր աստուածանման գեղեցկութիւնը:

Թագաւորի հարսանեկան մահիճը շրջապատուած է զօրաւորներով (բնագրում՝ սպառազէններ), որոնք ունակ են պատերազմելու, ձեռքը պատրաստ պահում են ազդրին դրուած սրի վրայ, զարհուրեցնում եւ ահաբեկում են աղջամղջին խորհուրդները... Հարսանեկան մահիճը շրջապատուած է հեշտութիւնների աղտեղութիւնները մերժող եւ հեռացնող սպառազինութեամբ:

Սուրը ողջախոհութեան նշանակն է: Ողջախոհութեան գէնք ունեցողներն են փափագելի Երկնաւոր Փեսայի անապական գահոյք—մահճին: Վաթսու՛նը խորհրդական իմաստ ունի. դրանք Իսրայէլի տասներկու ցեղերն են՝ սպառազինուած հինգ զգայարանների մաքրութեամբ: Իրաքանչիւր զգայարան իր սուրն ունի. աչքի սուրն է յարածամ Տիրոջը տեսնելը, առաքինապէս հայելը եւ աղտեղիների տեսութեամբ ամենեւին չգարշնալը. լսելիքի գէնքն է աստուածային վարդապետութեան լսելութիւնը եւ երբէք սնտոյ խօսքեր ներս չընդունելը. նմանապէս էլ ճաշակելիքը, հոտոտելիքը եւ շօշափելիքը պէտք է զինել ժուժկալութեամբ: Իսրայէլի բոլոր որդիները ճշմարիտ իսրայէլացի չեն: Վաթսու՛նը խորհրդանշում է ընտրեալներին, ովքեր հագել են աստուածային սպառազինութիւնը եւ արժանացել են կանգնելու թագաւորական գահոյքի շուրջ:

Մահիճը նաեւ փրկուածների հանգիստն է: Ջօրաւորներն արդարութեան զինուորներն են, ովքեր անախտութեամբ հաստատուեցին եւ մանուկներ կոչուեցին: Սուրն առաքինի վարքն է (Լիւսացի):

Մահիճն, ըստ Հիպոդիտոսի, զգայարանների ցանկութիւնն է՝ կա՛մ բարու, կա՛մ չարի: Իսկ պատերազմի մէջ հմուտ լինելը չարից դէ-

պի բարին ելնելու իմաստութիւնն է: Իրաքանչիւրը սուր ունի ազդրին՝ ընդդէմ գիշերային արհաւիրքների: Սուրը Աստուծոյ խօսքն է, որ բոլոր երկսայրի սրերից աւելի հատու է, անցնում է հոգու եւ շնչի միջով եւ ամէն ինչ տեսնում[Եբր. 7 12]: Ովքեր սուրք են եւ տեսնում են Աստծուն, նրանք Նոր Իսրայէլ են դարձել եւ չեն վախսնում գիշերային չար գազաններից (դէւեր) (Հիպոդիտոս):

Հին Իսրայէլն է Սողոմոնի թագաւորութեան գահոյքը եւ կամարները: Նմանապէս էլ հիմա ողջ տիեզերքն է Երկնային Սողոմոնի գահոյքը, ուր բնակւում է Աստուծոյ կամքը: Նոր Իսրայէլի զօրաւորները կամ սուսերաւորները բոլոր սուրք հաւատացեալներն են: Սուրք հոգու սուսերն է, այսինքն՝ Աստուծոյ խօսքը, որով սովորեցին պատերազմել աներեսնոյ թշնամու դէմ: Գիշերային եւ խաւարային արհաւիրքները երկնքից ընկած դէւերն են (Նարեկացի):

Երկնային Սողոմոնի գահոյքի պահապանները նաեւ տասներկու առաքեալներն են՝ խօսքի սուրք կրելով ազդրին եւ սարսափեցնելով նրանց, որ շոջում են խաւարում եւ նետահարում Անմահ Փեսային ճշմարիտ հաւատքով հարսնացածներին: Իսկ վաթսու՛նը նրանց [հոգիների] հինգ—հինգ արթուն եւ պաշտպանող զօրութիւններն են. եւ, միշտ կենդանի Սուրք Հոգին ունենալով, հանգցնում են չարի այրող նետերը (Արեւելցի):

Այլեւ Քրիստոսի գահոյք են Տիրոջ խօսքից երկիւղածները (Հիպոդիտոս), նաեւ իրաքանչիւր հեգ եւ խոնարի հոգի Քրիստոսի գահոյք եւ հանգստարան է (Հիպոդիտոս—Տաթեւացի):

Ըստ Հիպոդիտոսի՝ Սողոմոնի գահոյքը Սուրք Կոյս Մարիամն է, որն Աստուծոյ հանգստարան դարձաւ:

Համաձայն Տաթեւացու բացատրութեան՝ գահոյքը բարձր տախտ է, ուր բնակւում են Հարսն ու Փեսան. նախ՝ դրախտի բարձրութեան օրինակով, ուր բնակւում էին Ադամն ու Եւան, երկրորդ՝ երկնքի բարձրութեան, ուր ելնում են սուրբերն այս կեանքից յետոյ, երրորդ՝ խորհրդանշում է անմատոյց խորանը՝ վարագոյրի ներքին կողմը, ուր Տէրը մտաւ (Տաթեւացի):

9. Սողոմոն Արքան գահաւորակ պատրաստեց Իրեն Լիբանանի փայտից:

10. Նրա սիւներն արեց արծաթ, կոնքերը՝ ոսկի, ձեղունը՝ ծիրանի եւ նրա ներսն՝ ակնագարդ, [ուր] տարածուած է Իսրայէլի դուստրերի սերը:

9—10. Սողոմոն թագաւորը նախօրինակն է ճշմարիտ թագաւորի: *Սողոմոն* նշանակում է խաղաղութիւն. նա տաճար էր շինում, անչափ իմաստութիւն ուներ, Իսրայէլի թագաւոր էր, արդարադատ էր եւ Դաւթի գաւազան... Այս ամէնը նախագրում է Աւետարանի գորութիւնը: Քրիստոս՝ Դաւթի Որդին, Իր ճշմարիտ խաղաղութիւնը պարզեցեց՝ Խաչի մահով, առաքելների եւ մարգարէների հիմքի վրայ անհաս իմաստութեամբ շինեց Իր սուրբ Եկեղեցին՝ կենդանի եւ հոգեւոր քարերը հաւատքով ու խաղաղութեամբ միացնելով: Նա է արդար Դատաւորը, որ Ահեղ Դատաստանին պիտի արդարապէս դատի կենդանիներին եւ մեռելներին (Նիւսացի—Արեւելցի):

Լիբանանի մայրիկ [Սաղմ. ԼՁ 35] չարութեան նշանակն է, ինչպէս նաեւ՝ դեւերի, մեղքի, հպարտութեան եւ ամբարշտութեան, որովհետեւ բարձր է, անպտուղ, խաւարեալ եւ գազանների որջ (Տաթեւացի):

Լիբանանի փայտը մեր հեթանոսական անցեալն է, երբ արմատացել էինք Լիբանանի հակառակամարտ գորութիւնների լեռան վրայ չար վարքով եւ կռապաշտութեան մոլորութեամբ: Սակայն բանական կացնով հատուցեցինք եւ Արուեստաւորի ձեռքով դարձանք *գահաւորակ*: Վերստին ծննդեամբ մեր փայտեղէն բնութիւնը զարդարուեց *ոսկով, արծաթով, քաջածաղիկ ծիրանիով* եւ պայծառ *քարերով* (Սուրբ Հոգու պարգեւներ), որոնք Աստուած-բաժանեց իւրաքանչիւրին՝ ըստ Իր կարողութեան չափի (Նիւսացի):

Արծաթը ճշմարտութեան խօսքի եւ հաւատքի խոստովանութեան խորհուրդն է, *ծիրանին՝* թագաւորական խոհեմութեան, *ոսկին՝* մաքուր յոյսի եւ սիրոյ: *Նրա ներսն ակնագարդ է...* Ակնարկում է շեղման սրտի մէջ ականակապ չորս առաքինութիւնները¹, կապուած Աստուծոյ սիրոյ եւ մայր Վերին Երուսաղէմի հետ: *Երուսաղէմի դուստրերը* (հաւաքականօրէն Եկեղեցին է) Եկեղեցիներն են, որոնք Քրիստոսի մարմնի անդամներն են եւ ծննդաբերում են ուրիշների՝ յորդեգրութիւն Երկնաւոր Հօրը (Արեւելցի):

Ըստ Նիւսացու՝ *ծիրանին* խորհուրդն է մեր աստուածճանաչողութեան, իսկ *ոսկին* մաքուր աւանդութիւնն է, ուր Տէրն ընկողմանում է զլուխը: Ովքեր, զարդարուած բարձր առաքինութիւնների պատուական քարերով, վեր են ելնում արքայութիւն, նրանց մէջ հաստատուած է Իսրայէլի *դուստրերի սերը* (Նիւսացի):

Խարխուլը (քնագրում՝ *ձեղուն*) հաւատքն է, այսինքն՝ ճշմարտութիւնը (Տաթեւացի):

11. Դուստրեր՝ Սիոնի, ելէ՛ք եւ նայէ՛ք Սողոմոն Արքային՝ [այն] պսակով, որով պսակեց Նրա Մայրը Նրա փեսայութեան եւ Նրա սրտի ուրախութեան օրը:

11. Կոչ է՝ դուրս գալու հին մարդու երկրաւոր ցնորների ծածկոյթից (ինչպէս ասաց Աբրահամին. «Ելի՛ր քո երկրից» [Մենդ. ԺԲ 1]) (Հիպոդիտոս), ելնելու մարմնաւոր ախտերից, բոլորովին մեռնելու մարմնաւոր ախտերի հանդէպ, որպէսզի, յարութիւն առնելով Քրիստոսի հետ, աստուածաման լինի (Որոգիւնս):

Ըստ Նարեկացու՝ կոչ է արւում Վերին Երուսաղէմի դուստրերին (հրեշտակներ) նայելու իրենց Տիրոջը եւ Նրա գլխին դրած փշէ պսակին, որ յանձն առաւ Եկեղեցու համար: Կոչ է արւում նաեւ երկրաւոր Երուսաղէմի դուստրերին, դէպի որոնք Ինքը շրջուեց եւ ասաց. «Դուստրեր՝ Երուսաղէմի, մի՛ լաք Ինձ վրայ» [Դուկ. ԻԳ 28]:

Մայր է անուանում Սիոնը (*Սիոն* թարգմանւում է մայր), եւ Տիրոջ գլխին պսակ դնողները նրա վրայ են բնակուում: Ահա թէ ինչու պսակուելն ասում է մօրից (այսինքն՝ Սիոնից):

Նրա փեսայութեան եւ ուրախութեան օրը չարչարանքների օրն է, քանզի Տէրն Ինքն է ասում. «Հասաւ ժամը, որ փառաւորուի Մարդու Որդին» [Յովհ. ԺԷ 1]: Քանզի մեր մեղքերը վերցնում է Իր վրայ, որի համար էլ այնպիսի պսակ յանձն առաւ: Իսկ մենք, որ դրախտի կորստից ի վեր ընկել էինք փառքից եւ զրկուել լուսեղէն զգեստներից, փեսայացանք եւ ուրախացանք (Նարեկացի):

Սիոն նշանակում է բարձր դիտանոց, ուր կոչ է արւում բարձրանալ եւ նայել ճշմարիտ Խաղաղութեանը եւ Նրա պսակին, որը Եկեղեցին է: Յիսուսի պսակը զարդարուած է առաքինութեան բոլոր քարերով, որով Աստուած զարդարեց Նրան, Ում մարգարէն *Մայր* է անուա-

¹ Նկատի ունի *խոհականութիւնը, արխութիւնը, ողբախոհութիւնը, արդարութիւնը*:

նում¹, եւ «Նրա գլխին պատուական քարից պսակ դրեց» [Սաղ. Ի 4] (Նիւսացի—Արեւելցի):

7

Փեսան ասում է Հարսին.

1. Ահա գեղեցիկ ես, մերձատր' Իմ, ահա գեղեցիկ ես, քո աչքերն աղանձիներ են՝ քո լուսինից դուրս: Քո վարսերը նման են այծերի երամակների, որոնք երեւացին Չաղա-ադից:

1. Փեսան նորից Հարսին *գեղեցիկ* է անուանում... Այդ գեղեցկութիւնը նոր արարչութեան գեղեցկութիւնն է, որն արեւին է, քան՝ այն, որ Ադամն ուներ իր փառքի մէջ: Այդ գեղեցկութիւնն Աւագանի մաքրութեամբ եւ Սուրբ Հոգու օծումով շնորհուող նոր ծննդեան արտայայտութիւնն է... Փեսան՝ Քրիստոս, փշէ պսակով Իր վրայ է վերցրել մարդկանց մեղքերը, այսինքն՝ մարդկային բնութեան մէջ արմատացած բոլոր տգեղութիւնները եւ Իր փրկագործութեամբ զարդարել է մարդկային բնութիւնը նոր գեղեցկութեամբ, նոր արարչութեան գեղեցկութեամբ... (Նարեկացի):

Փեսան մէկառմէկ սկսում է նկարագրել Հարս—Եկեղեցու անդամների գեղեցկութիւնը, որոնցից ամենապատուականը *աչքն* է. այն նմանեցնում է *աղանու*: Աղանին Սուրբ Հոգու նշանակն է. Եկեղեցին հեռացել է նիւթական եւ մարմնաւոր կեանքից, հաստատուել հոգեւոր եւ աննիւթ վարքով եւ լցուել Սուրբ Հոգու շնորհներով, որը կերպարանուած է աչքերով:

Առանց քո լուսթեան (բնագրում՝ *Քո լուսթիւնից դուրս*), քանզի բարի վարքի մէջ ինչ—որ բան քաջայայտ է մեզ եւ ծանօթ՝ մարդկանց, եւ ինչ որ բան՝ ծածուկ եւ անձառելի՝ տեսանելի միայն Աստծուն: Իսկ չկատարուածները Տեսնողը եւ գաղտնիքները Հայողը, Հարսի դէմքը գովելիս, տեսանելիից արելի վկայում է լուսթեան մէջ ծածուկուածի մասին (Նիւսացի):

¹ Սակայն Աստուծոյ մէջ ոչ մի սեռականութիւն չկայ: Այս առումով իւրաքանչիւր անուն պայմանական է եւ նշանական. օրինակ՝ *մայր*, *հայր*, *որդի*, *դուստր*, *փեսայ*, *հարս*:

Փեսան վկայում է, որ Հարսն *աղանու* պէս մաքուր եւ միամիտ է. սակայն ինչպիսին է՝ փակուած է լուսթեամբ, որը Փեսան չի կամենում յայտնել, քանզի Հարսի լսելիքն ի զօրու չէ լսելու անձառելիները (Նարեկացի):

Հարսի լուսթեան առաքինութիւնը յայտնի է լինելու հանդերձեալում. այս գովութիւնը այն բարքերի մասին է, որոնք ծածկուած չեն լուսթեամբ (Արեւելցի):

Աղանին նաեւ անմեղութեան եւ սրտի սրբութեան նշանակն է. այսպիսին են վարդապետները՝ Հարս—Եկեղեցու աչքերը:

Քո լուսթիւնից դուրս... Սարգարեական գրքերը դեռեւս չեն բացուել, քանզի նրանց բացումը Բանի տնօրինութեամբ եղաւ (Ռոբգիւնս):

Տաթեւացին չորս պատճառ է նշում, ըստ որոնց՝ այժմ Եկեղեցին Իր հոգեւոր գեղեցկութեամբ առաւել է, քան Ադամը՝ դրախտի մէջ. ա) Ադամը ստեղծուեց Աստուծոյ ձեռքով եւ խօսքով, իսկ Եկեղեցին Քրիստոսի սուրբ մարդեղութեամբ եւ չարչարանքներով, մահով եւ յարութեամբ է սրբուել, բ) Ադամը մահուան եւ կեանքի մէջ էր, իսկ Աւագանով սրբուածներն անմահութեան մէջ գրուեցին, գ) Ադամը խոստումով միայն ուներ վերին արքայութիւնը, իսկ մկրտուածը գործնականօրէն ստացաւ նրան խոստացուած տեղը, դ) Ադամն արարուեց Աստուծոյ պատկերով, իսկ մկրտուածն Աստուծոյ որդի է, Քրիստոսի ժառանգակից եւ պատկերակից: Աչքերը Եկեղեցու հոգեւոր տեսողութեան զգայարաններն են: Հոգեւոր աչքերը եպիսկոպոսներն են, որոնք տեսուչներ են եւ վարդապետներ. նրանք պէտք է ընդունեն Հոգու իմաստութեան լոյսը, ճանաչեն չարն ու բարին, իւրաքանչիւրին հրաւիրեն բարի գործերի եւ ուղղեն նրանց ճանապարհը (Տաթեւացի):

Տաթեւացին ընդհանրացնում է Նիւսացու մեկնութիւնը.

Սազը (բնագրում՝ *վարս*) ունի բազմաթիւ յատկութիւններ. ա) կնոջ փառքն է, բ) գլխի ծածկոյթն է, գ) դէմքի պատկառանքն է, դ) երեսի պարկեշտութիւնն է, ե) մեռած ու անզգայ է, գ) օծուելիս չի հեշտանում, է) անխնամ թողնուելիս չի տխրում, ը) այրուելիս ու կտրուելիս չի ցաւում, թ) ներքեւ է իջնում, ժ) միշտ աճում է:

Ովքեր այսպիսի յատկութիւններ ունեն, նրանք Եկեղեցու *մագերն* են, այսինքն՝ նա ով մեռնում է ախտերի դէմ, ով գովուելիս չի հեշտանում եւ պարսաւուելիս՝ տրտմում: Թէպէտ չարչարուի Քրիստոսի համար, ցաւ չի զգայ, միշտ մնում է խոնարհութեան մէջ եւ հանապազ առաքինութեամբ աճում բարութեան մէջ: Այսպիսիները սուրբ Եկեղեցու փառքը, պատիւը, ծածկոյթը եւ պարկեշտութիւնն են (Նիւսա-

ցի—Տաթեւացի):

Որոնք երեւացին Գաղաադից. այս մասին Նիւսացին ասում է. «Ինչ պարտ եւ արժան է հաւաստիարար ճանաչել այս մասին, դեռեւս չկարողացանք հասու լինել, բայց կարծում եմ...»: *Գաղաադն* այլազգիների լեռն է եւ խորհրդանշում է նրանց, ովքեր եկան հեթանոսութիւնից ու անհաւատութեան հպարտութիւնից եւ հետեւեցին քաջ Հովուին՝ դառնալով Եկեղեցու *մազեր*, այսինքն՝ ձեռք բերեցին կատարեալ մեռելութիւն այս աշխարհի նկատմամբ (Նիւսացի):

Եղիան իմաստասիրում էր լեռան վրայ շատ ժամանակներ [տե՛ս Գ Թագ. ԺԹ 8] ժուժկալութեամբ, թաւ մազերով եւ փափուկ զգեստների փոխարէն այծի մորթիներով ծածկուած: Արդ, բոլոր նրանք, ովքեր մարգարէի պէս են ուղղում իրենց վարքը, Եկեղեցու զարդ են դառնում (Նիւսացի), մանաւանդ՝ լեռնաբնակ միայնակեացները (Արեւելի):

2. Քո ատամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք էլնում են աւազանից. բոլորն էլ երկածին են, եւ անօրդի չկայ նրանց մէջ:

2. Եկեղեցու հոգեւոր *ատամներն* այն զօրութիւնն է, որ մանրում է վարդապետութիւնը՝ ի պէտս աստուածային ուսման ընդունողների...

«Ովքեր մանրամասն մեկնութեամբ յայտնի են դարձնում աստուածային խորհուրդները, որպէսզի այն դիրքնկալ հոգեւոր կերպուր լինի Եկեղեցու մարմնի համար, նրանք ատամների գործն են կատարում. թանձր եւ կարծր հացն իրենց բերանն են առնում եւ մանրամասն տեսութեամբ դարձնում դիրաւ ուտելի՝ ընդունող անձանց համար...»:

Ըստ Պօղոս առաքեալի՝ Եկեղեցուն պէտք են *ատամներ*՝ մանրելու վարդապետութիւնների յայտնութիւնները եւ այնուհետեւ որոճացնելու մեզ աստուածային խօսքերը:

Ովքեր Եկեղեցու մէջ դասուեցին ատամների սպասաւորութեան, նախ պէտք է մաքուր լինեն, այսինքն՝ մերկանան ամէն տեսակ նիւթական ծանրութիւնից եւ ապա մտքով լուացուած եւ մարմնի ու հոգու աղտեղութիւններից լիովին սրբուած լինեն, այլեւ ետ դառնալով՝ չներքաշուեն չարի խորխորատը: Այս ամենից զատ կրկնակի քարիջների ծնունդներով՝ ըստ ամէն տեսակ առաքիւնութիւնների, պէտք

է զուարճանան, ոչ մի բանով անձնուկ չլինեն գեղեցիկ գործերի համար: Այսպիսի ատամները *երկածին են՝* հոգով՝ անախտութիւնը եւ մարմնական վարքով՝ պարկէշտութիւնը ծնելով (Նիւսացի):

Աւազանից դուրս եկող խուզած ոչխարները խորհրդանշում են վարդապետներին, որ հեռացել են ամէն տեսակ աշխարհիկ ծանրութիւնից, սիրտը լուացել խղճմտանքից եւ ապա բարձրացել առաքիւնութեան լեռը երկակի ծննդեամբ՝ ըստ հոգու եւ ըստ մարմնի (Արեւելի): Բանի տնօրէնութեան սպասաւորները բազմածնունդ են, այսինքն՝ զարդարուած են տեսական եւ գործնական առաքիւնութիւններով (*երկածնութիւնն* այստեղ բազմածնութեան խորհրդանշան է) (Որոգիւնէս):

Աւազանից դուրս եկող խուզած ոչխարները նաեւ նրանք են, ովքեր մկրտութեան լուացմամբ հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն են գալիս (Որոգիւնէս) եւ անգիտութիւնից ելնում դէպի գիտութիւն. *երկածնութեամբ* ակնարկում է քահանաներին եւ աշխարհականներին: Նրանք, Աստուծոյ ահով եւ երկիւղով յղացած, ծնում են հոգու եւ մարմնի փրկութիւնը, նաեւ՝ սէրն առ Աստուած եւ ողորմութիւնն առ մարդիկ (Արեւելի):

Տաթեւացին ամփոփում է Նիւսացի—Արեւելի մեկնութիւնները:

Ատամները Եկեղեցու վարդապետներն են, իսկ կերակուրը՝ Սուրբ Գրքի գիտութիւնը: Մաքուր կենդանիները կերակուրը նախ մանրում են ատամներով, ապա՝ ուտում, որից յետոյ՝ որոճում: Նոյնպէս էլ վարդապետը նախ քննում է Գիրքը, ապա՝ ինքն ուսանում եւ յետոյ՝ վերստին յիշում եւ ուսուցանում մանուկներին: Լուացած եւ խուզած ոչխարը խուզած է բրդից, լուացուած է, բարձրացել է լեռը եւ արածում է արօտավայրերում: Նմանապէս էլ վարդապետը պէտք է թեթեւնայ աշխարհի ծանրութիւնից, սիրտը լուանայ խղճմտանքից, բարձրանայ առաքիւնութեան լեռը, ապա ուսանի եւ ուսուցանի (Տաթեւացի):

Ատամներով ծամում ենք անարատ Գառը, ուստի պէտք է խուզել հին մարդու զգեստը եւ դէն նետել, լուացուել լուսաւոր Աւազանով եւ սուրբ ապաշխարութեամբ (*Հիպոդիստոս*):

**3. Զո շուրթերը նման են որդան կարմիր թե-
լի, եւ քո խօսքերը գեղեցիկ են: Զո այտերը
նման են նռան կեղեւի՝ քո լուսութիւնից դուրս:**

3. Փեսան Եկեղեցու շուրթերը նմանեցնում է որդան կարմիր թելի (գրաբարում՝ լար)... Լարով խրատում է համակամութեան, որպէսզի բոլորը մի լար եւ մի հիւսուածք լինեն՝ զանազան նիւթերից մանուած: Կարմիրը Քրիստոսի փրկաբեր Արիւնն է, եւ բերանով միշտ պէտք է խոստովանել Նրան, որ իր Արեամբ փրկեց մեզ: Կարմիր լարը սիրով զօրացած հաւատքն է: Եթէ կարմիրը խորհրդանշում է հաւատքը, ապա լարը՝ սերը...

Այսպիսի շուրթերն ասում են ճշմարտութիւնը, այսինքն՝ բերանով Տէր են խոստովանում Յիսուս Քրիստոսին. «Քանզի սրտով հաւատում եք յարդարութիւն եւ բերանով խոստովանում ի փրկութիւն» [Հռոմ. Ժ 9—10]. սրանք են գեղեցիկ խօսքերը, որոնցով Եկեղեցու շուրթերը կարմիր լարի պէս քաջավայելաբար ծաղկում են (Նիւսացի):

Լարը խորհրդանշում է սրտի ուղղութիւնը (ճշմարտութիւն, արդարութիւն), իսկ կարմիրը ցոյց է տալիս, որ ներկուած (փրկուած) ենք անմահ Գառի Արիւնով (Հիպոլիտոս):

Կարմիր շուրթերն անտարանական խօսքով, ինչպէս Նաեւ՝ ամենայն հոգեւոր խօսքով բարբառող շուրթերն են: Կարմիր, այսինքն՝ անտարանող շուրթերից ելնող խօսքը, լար է, որը որսում է մարդկանց եւ բարուք ձգումով տանում առ Աստուած (Լարեկացի):

Ըստ Տաթեւացու՝ կարմիր լարը վարդապետի խօսքն է, որը հիւսուած է բազում թելերից, այսինքն՝ բազում գիտութիւնից, միաւորուած է սիրոյ հետ եւ որսում ու ձգում է մարդկանց:

Հարսը տեսողների համար յայտնապէս երեւում է աղաւնու անմեղութեամբ եւ օձի խորագիտութեամբ (կեղեւի կարմրութիւն, դառը համ, անուշ հոտ) (Ռոզդիսէ):

Փեսան *Նռան* օրինակով գովում է Հարսի՝ պատկառանքով շառագունած ողջախոհութիւնը: *Նռան* դառը կեղեւը սնուցում եւ պահպանում է ներսում պարունակուող պտղի քաղցրութիւնը. նմանապէս էլ խստամբեր վարքի դառնութիւնը եւ ժուժկալութիւնը ողջախոհութեան բարիքների պահապան են: Այսպիսի վարքի կեղեւով ծածկուած հոգեւոր կեանքի հասուն եւ քաղցրահամ պտուղները գեղեցիկ են մարդկանց աչքի համար եւ ներսի հատիկներով հաճելի՝ Աստծուն (Հիպոլիտոս—Նիւսացի): Ըստ Լարեկացու՝ Քրիստոսի Եկեղեցին իր երեսը սքողել է առաքինական վարքով եւ խստակրօն ու տաժանելի կենցա-

ղավարութեամբ: Այսպիսի կեղեւի տակ Եկեղեցին ամբարել է առաքինութիւնները (Լարեկացի):

Աստուած ճանաչում է Հարսի առաքինատէր վարքի գեղեցկութիւնը եւ յայտնելու է Վերջին Օրը, «որը այքը չտեսաւ, եւ ունկը չլսեց» [Ա Կոր. Բ 9]: Այժմ այն զարդարուած է բերանի պահպանութեամբ ու լուսութեամբ եւ ծածկուած՝ սրտի ներսում (Արեւելցի):

4. Զո պարանոցը նման է Դաւթի աշտարակին, որ շինուած է Թալալիովթում. հազար վահաններ են կախուած նրանից եւ սպառազէնների բոլոր նետերը:

4. Պարանոցն արմատացած է ուսերի միջեւ եւ իր վրայ է կրում գլուխը: Պարանոցով են ներհոսում օդը, կերակուրը, այնտեղ են տեղադրուած ձայնի գործարանները... Ո՞վ է եկեղեցական մարմնի պարանոցը, ում նմանեցնում է Դաւթի աշտարակին. նա, ով իր վրայ է կրում բոլորի ճշմարիտ գլուխ Քրիստոսին, ով ունակ է ընդունելու Սուրբ Հոգին, որ ջեռուցում եւ հրկիզում է մեր սիրտը, ով քաջահունչ ձայնով սպասաւորում է Աստուծոյ խօսքին: Եկեղեցու պարանոցն ընդունում է Նաեւ Եկեղեցու վարդապետութեան կերակուրը, որ, բերանից գալով, կենդանի է պահում մարմինը, եւ որի պակասութեան դէպքում խամրում եւ ապականւում է մարմինը:

Այսպիսի պարանոց էր Պօղոսը (եւ նրա պէս վարք ունեցողները), որ իր վրայ էր կրում Տիրոջ անունը՝ ընտիր անօթ լինելով: Եւ ամենքի Գլուխն այնպէս հաւաստիօրէն էր յարմարուած նրա վրայ, որ խօսելիս ի՛նքը չէր խօսում, այլ Գլուխն էր բարբառում: Խօսելիս ձայնեղ եւ քաջահունչ էր՝ Սուրբ Հոգով կապակցելով ճշմարտութեան խօսքը: Նրա քիմքը քաղցրանում էր՝ իրենով կերակրելով մարմինը կենարար վարդապետութեամբ:

Ով բոլորին ի մի մարմին է յարմարեցնում սիրոյ եւ խաղաղութեան կապանքներով, ով վարդապետում է՝ պարանոցը խոնարհեցնելով տոհմների (արարածի) առջեւ եւ, դարձեալ ուղղելով, վերինը խորհում, երկու կողմերը դիտում, դիրութեամբ շրջում եւ դիրաշարժ է, խորշում եւ զգուշանում է սատանայի զանազան խաբուութիւններից, նա՛ է Դաւթից շինուած ճշմարիտ պարանոցը: Աշտարակը մարդկային բնութիւնն է, որն անկումից յետոյ վերստին նորոգուեց շնորհով՝ բազում վահաններով ամրացուելով, որպէսզի նա իր հետ պատերազմողների խարդախութիւններին կոխան չլինի՝ վահաններով

եւ *Նետերով* ահաբեկելով պատերազմողներին: Ըստ երեւոյթին՝ վահանների բազմութեամբ նկատի ունի հրեշտակական պահպանութիւնը, իսկ զօրաւորների *Նետերով* ցոյց է տալիս Լրանց մարտակցութիւնը: *Հազարը* բազմութեան, առատութեան խորհրդանշն է (Նիւսացի):

Արեւելցին Նիւսացու մարդաբանական յղացքներն ամբողջացնում է եկեղեցաբանական հարթութեան մէջ: Թշնամիներին ահաբեկելու համար կախուած *վահաններով* ակնարկում է սուրբ Եկեղեցին, ուր հրեշտակների բանակներ են՝ *հազարների հազարներ*. Երանք զգուշանում են՝ Եկեղեցու մակակնց ցոյց տալով թշնամիներին (Արեւելցի): *Վահանը* հաւատքի նշանակն է՝ ըստ առաքեալի, որ ասում է. «Հաւատքի վահան՝ վերցրե՛ք» [Եփես. Չ 16], որ մի է եւ բազմամասն ու բազմապատիկ՝ առաքինութիւններով (Նարեկացի): *Նետերն* Աստուածաշունչ Գրքի խօսքերն են, որը Պողոսը հրամայում է վերցնել որպէս Հոգու սուտեր [Եփես. Չ 17] (Արեւելցի):

Չորաւորները (քնազրում՝ *սպառազէններ*) հրեշտակներն են, իսկ *Նետերը*՝ դիւախալած զօրութիւնները: *Վահանը* Սուրբ Հոգու զօրութիւնն է, որ ընդունեցինք ս. Մկրտութեան հաւատքով, որով կարող ենք թշնամու բոլոր խարդախ *Նետերը* հանգցնել, ինչպէս կայծը՝ ջրի մէջ: Այսպէս է պահուում թագաւորաշէն *Աշտարակ*—Եկեղեցին, որ շինուել է առաքեալների եւ մարգարէների հիմքի վրայ, եւ որի գլուխն է Քրիստոս (*Հիպոդիոտոս*):

5. Քո երկու ստիւնքները նման են այծեամի երկու երկուտրեակ ուլերի, որոնք արածում են շուշանների¹ մէջ:

6. Մինչեւ ցերեկը հանգչի, եւ սառուրները շարժուեն, եւ Ինքս կգնամ գնումներին² լեռը եւ կնդրուկի³ բլուրը:

5—6. *Երկու ստիւնքներն* օրէնքն ու մարգարէներն են, որոնք իբրեւ դաստիարակներ հովուում էին *շուշանների մէջ*, այսինքն՝ մարմնաւոր պարգեւների մէջ՝ առանց յարութեան յոյսի: Իսկ երբ ծագեց (ըստ որոշ քննադրերի) ցերեկուայ Լոյսը, ստուերները շարժուեցին

1 Տե՛ս Բ 1:
2 Տե՛ս Գ 6:
3 Տե՛ս Գ 6:

[այսինքն՝ ստուերակերպ Հին Ուխտը] դէպի Ճշմարտութիւն՝ ըմբռնելու փրկութեան խորհուրդի կատարումը (Ռրոզիսես):

Իր մեկնութեան մէջ Նիւսացին ելնում է մարդաբանական եւ-թաղութիւններից: Մարդը հոգի է եւ մարմին, որոնք զուգահեռաբար արարուեցին Արարչի կողմից, «քանզի հոգին մարմնից առաջ չի գոյացել, ոչ էլ մարմինն է մինչեւ հոգին կազմուել»: *Երկու ստիւնքները* հոգին եւ մարմինն են, որոնք նմանեցում են *շուշանների մէջ արածող* անմեղ *ուլերի*: *Շուշանն* իր անուշահոտութեամբ եւ գեղեցկութեամբ խորհրդանշում է Քրիստոսի անուշահոտութիւնը (հոգեւոր կեանք) եւ մարմնի սրբութիւնը (մարմնական սրբութիւնը լցուած է հոգեւոր կեանքի անուշահոտութեամբ): Հոգու եւ մարմնի կերակուրը մաքուր եւ անուշահոտ առաքինութեան ծաղիկներն են: Իսկ փշերն ու տատակները մեղքերն են (Նիւսացի):

Շուշաններն, ըստ Արեւելցու, օրէնքի եւ մարգարէների ծաղիկներն են, որոնցով մարդկային բնութիւնը կերակուրում էր անկումից յետոյ, իսկ փշերը եւ խոտերը հեթանոսներն ու հերձուածողներն են (Արեւելցի):

Շուշանը լուսափայլ եւ անուշահոտ պատուիրանն է, որ բնակեցուեց մեր բնութեան մէջ, որպէսզի ինչ նախապէս սահմանուած էր, դէպի այն ընթանանք (*Հիպոդիոտոս*):

Յերեկը եւ լոյսը Սուրբ Հոգին է, որի շունչը (ըստ որոշ քննադրերի) հալածում եւ ունայնացնում է խաւարը, հեռացնում եւ փախըստեան է մատնում ստուերները (Նիւսացի): Օրէնքի *ստուերները* Սուրբ Հոգու լոյսից շարժուեցին եւ գնացին (Արեւելցի):

Յերեկը եւ լոյսը նաեւ Քրիստոսն է, որ մտքից հալածում է ստուերները՝ ըստ խօսքի. «Քեզանից է, Տէ՛ր, կեանքի աղբիւրը, եւ Քո երեսի լոյսով ենք տեսնում լոյսը» [Սաղմ. ԼԵ 10]: Տիրոջ լոյսով է լուսաւորում նաեւ մեր սիրտը, որ ստիւնքների մէջ է: Իր հոգեւոր ստիւնքներով է Եկեղեցին կերակուրում մանկանց (Նարեկացի) եւ *այծեամի* սրատեսութեամբ զգուշանում օտարներից (Արեւելցի):

Այծեամը, ըստ *Հիպոդիոտոսի*, խորհրդանշում է մտքի արագընթացութիւնը եւ սրատեսութիւնը:

Չմուռսի լեռը մահուան լեռն է, ուր, մեզ համար պատերազմելով, մեկամարտեց Տէրը: Այն նաեւ *կնդրուկի բլուր* է, քանզի միաւորուած Աստուածութեամբ խաչի վրայ ճմլեց հնձանը (Նարեկացի): Չմուռսով յայտնում է չարչարանքները, իսկ կնդրուկով՝ Աստուածութեան փառքը (Նիւսացի):

Որոգիներն ըմբռնումը մարդաբանական է: *Ձմուռը* եւ *կնդրուկը* Տիրոջ մարմնի անապականութեան նշանակներն են: *Ձմուռը* նշանակն է Տիրոջ մահկանացու մարմնի, որը կնդրուկի պէս անուշահոտ է բոլոր կրքերով (Որոգիներ):

Փեսան յորդորում է Հարսին բարձրագոյն փառքի աստիճանով: *Ես ինքս գնացի...* Տէրը կամաւորաբար գնաց Գողգոթա՝ զմուռսի լեռ, ուր խաչուեց եւ, զմուռսով պատուելով, թաղուեց՝ ոչ թէ հարկադրաբար եւ որեւէ մէկի արժանիքի համար, այլ ինքը մարդասիրեց: Եւ յարութիւն առաւ՝ ելնելով Աստուածութեան փառքը՝ կնդրուկի բլուրը, որին մատուցում են առաքինութեան բոլոր խունկերը, եւ որի առաջ բոլորը ծուկն է գալիս... Փեսան ցոյց է տալիս աստուածացման ճանապարհը. ոչ ոք չի կարող հաղորդուել Աստուածութեանը, եթէ չկցորդուի չարչարանքների *զմուռսին* եւ չարչարանքներով չզմուռի իր անձը: Ովքեր կարիքներով եւ պէտքերով իրենց մարմինը խաչ բարձրացրեցին, դարձան *կնդրուկի բլուր*, ուր հանգչում է Աստուածութեան փառքը (Հիպոդիտոս—Նիսացի—Արեւելցի), եւ ցնծութիւն հազան (Հիպոդիտոս):

7. Բուրովին գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, եւ ոչ մի արատ չկայ քեզ վրայ:

7. Հարսը ձեռք է բերել անարատ *գեղեցկութիւն*... Սակայն այս գեղեցկութիւնը ստացական է: Հարսն անմահ Գառի արեամբ է մաքրուել մեղքի թծերից ու արատներից եւ ստացել երկնային գեղեցկութիւնը (Նարեկացի):

Աստուածայինը Քրիստոսի փրկութեամբ գոյաբանօրէն միաւորուել է մարդկային բնութեանը. մարդկային բնութիւնն աստուածանալու շնորհ է ստացել: Սակայն Աստուծոյ փրկութեանը պէտք է ընդառաջ ելնել՝ սեփական մարմինը խաչ բարձրացնելով այս աշխարհի համար եւ չարչարակից լինելով Քրիստոսին: Ով մեռնում է այս աշխարհի համար, նա յարութիւն է առնում Քրիստոսի հետ եւ Աստուծոյ փառքի մէջ մտնում, *բուրովին գեղեցիկ* դառնում, հեռու լինում հաւանականարտ արատից (Հիպոդիտոս—Արեւելցի):

8. Ե՛կ Լիբանանից, ո՛վ Հարս, այստեղ ե՛կ Լիբանանից: Ե՛կ եւ անցի՛ր հաւատքի գագաթից, Սանիրի եւ Հերմոնի կատարից, առի՞ծների մայրիներից եւ ինձերի լեռներից:

8. Մշտագոյ բարիքների Աղբիւրը ծարաւեալներին իր մօտ է կանչում, ինչպէս ասում է Աւետարանում. «Ով ծարաւ է, թող գայ ինձ մօտ եւ խմի» [Յովհ. է 37]: Սրանով Տէրը յորդորում է մշտնջենաւորապէս ծարաւել, ըմպել եւ ձգտել իր մօտ: Եւ ովքեր ճաշակում են, փորձով անմիջապէս ուսանում են, թէ քաղցր է Տէրը, որը յորդորում է առաւել մեծ ճաշակման, աւելի վեր ելնելու առ Աստուած՝ մեծագոյններին յարածամ ձգտելով:

Հարսին կանչում է *Լիբանանից (կնդրուկի լեռներից)*, այսինքն՝ աստուածացման բարձունքներից) ... Հարսը Տիրոջ հետ ելաւ *զմուռսի լեռը*, այսինքն՝ մկրտութեամբ մեռաւ ու թաղուեց Տիրոջ հետ: Հարսը նաեւ բարձրացաւ *կնդրուկի բլուրը*, այսինքն՝ յարութիւն առաւ եւ Աստուածութեան հաղորդակցութեամբ բարձրացաւ... Այժմ Փեսան կոչ է անում գիտութեամբ աւելի բարձրանալ, երբէք չդադարել վեր ելնելուց, որպէսզի կատարելութեան վեր ելած կնդրուկը, որին յարութեամբ սկզբում հաղորդուեց բարձրագոյն բարիքների ընթացքով, հաւատքի սկիզբ լինի Հարսի համար: Փեսան ասում է. «Արդ, այս սկզբով, որը հաւատքն է, այսուհետեւ արի՛ եւ անցի՛ր»:

Սանիրի եւ Հերմոնի կատարից. ակնարկում է վերստին ծնընդեան խորհուրդը: Քանզի Յորդանանի աղբիւրներն այստեղից են բխում, եւ այդ աղբիւրների հոսանքներից սկզբնաւորուեցին առ աստուածայինը վերափոխման շնորհները (մկրտութեան աւազանի շնորհները): Անմիջապէս մերձադրում է տրտմական *առիւծների* եւ *ինձերի* յիշատակումը, որպէսզի առաւել քաղցրացնի հրճուելիների վայելումը: Քանզի մարդը, հեռանալով աստուածայինից, անասունների բնութեան պէս զազանացաւ, չար գործերով *ինձ* ու *առիւծ* եղաւ: Քանզի մորենու մէջ դարանակալած առիւծից որսուեց եւ նրա որոգայթների մէջ խոնարհուեց, նրա բնութեամբ կերպարանուեց եւ զազանացաւ: Նմանապէս էլ *ինձ* է դառնում նա, ով աղտոզի վարքով խայտաբղետ է դարձնում սեփական անձը: Այսպիսին էր մարդկային կենցաղը՝ կռապաշտութեամբ, հրեական խաբէութեամբ եւ զանազան մեղքերի չարութեամբ մոլորուած, որն ապա Յորդանանով, զմուռսով ու կնդրուկով բարձրացաւ առ Աստուած (Նիսացի):

Հիպոդիտոս—Նարեկացի—Արեւելցի մեկնութիւններում *Լիբանանը* խորհրդանշում է միջերիտոսեան ընկած մարդկութեան նկատմամբ

րագիրը:

Տերը կոչ է անում անպտուղ անտառում յոզնած (Հիպոդիտոս), մեղքով անտառացած (Լարեկացի), կռապաշտութեամբ եւ հպարտութեամբ արմատացած (Արեւելցի) մարդկային բնութեանը հեռանալ ամէն տեսակ որոգայթներից, գալ հաւատքի սկիզբ՝ մկրտութեամբ մերկանալով գազանական տգեղութիւններից եւ բռնութիւններից (Հիպոդիտոս—Լարեկացի—Արեւելցի):

Ըստ Որոգիւնեսի՝ հաւատքի գլուխն օրէնքը եւ մարգարէներն են, որ հանդերձեալ բարիքների ստուերներն ունէին. արդ, Փեսան սկզբից եւեթ կանչում է Նրանց դէպի Աւետարանի հաւատքը: Իսկ *Սահիրը*, *Հերմոնը*, *առիձների մարիները* եւ *ինձների լեռները* կռապաշտական ժողովարաններն են: Տերը հրեաներից եւ հեթանոսներից ժողովեց մի Եկեղեցի եւ բոլորին Արքահամի հաւատքի որդիներ արարեց (Որոգիւնես):

9. Սրտակաթ արեցիր մեզ, քո՛յր մեր Հարս, սրտակաթ արեցիր մեզ քո մի աչքով եւ քո պարանոցի մի քառամանեակով:

9. Արտայայտում է հրեշտակների եւ մարգարէների բաղձանքը. «Սիրտ տուեցիր մեզ հաւատքի ուղիղ հայեացքով եւ նրա հաւատքի սրտակաթ տեսչման քառամանեակ գործերով» (Որոգիւնես):

Եկեղեցին *Հարս* է անուանում Աստուծոյ հետ միաւորման պատճառով եւ այժմ՝ *քոյր*՝ անախտ ազգակցութեան պատճառով (Լիւսացի): Հիպոդիտոս վարդապետը *քոյր—հարս* համադրոյթը դիտում է զարգացման մէջ. Փեսան նշանակայնօրէն ասում է. «Թեպէտ բանական հոգով քոյր ես, սակայն գերազանց եղար, քանզի հարսնացար բոլորի Արարչին»: Իսկ *սրտացրեցիր* (ըստ որոշ բնագրերի) ըստ երեւոյթի նշանակում է հոգիացրեցիր, այսինքն՝ մեր մէջ սիրտ դրեցիր... կամ զարմացրեցիր՝ նախանձաւոր լինելու հոգեւորներին (Լիւսացի—Հիպոդիտոս):

Փեսայի բարեկամները (ըստ Լարեկացու՝ բարեկամները հրեշտակներն են: Մարդիկ եւ հրեշտակները քոյրեր են, քանզի միեւնոյն Արարչից են արարուած՝ բանականութեամբ եւ մաքրութեամբ (Տաթեւացի)) Հարսի միջոցով տեսնում են Փեսայի գեղեցկութիւնը եւ սքանչանում: Այդ գեղեցկութիւնը բոլորի համար անտեսանելի էր եւ անսահմանելի... Նրանք մաքուր հայելիով՝ Եկեղեցիով, տեսնում են արարութեան Արեգակը եւ երեւելիով՝ իմանալին...

Քո մի աչքով... Այսինքն՝ հոգու մի տեսութեամբ, մի հայեացքով, Միակին հայող հոգեւոր տեսութեամբ: Լիւսացին միական, միատես հոգեւոր տեսողութիւնը հակադրում է բազմական եւ բազմատես արտաքին տեսութեանը... «Մէկով տեսնում է ճշմարտութիւնը, միւսով հեռացել է սնտոի մոլորութիւններից, քանզի Հարսի մէկ աչքը բացուած է դէպի բարու բնութիւնը, իսկ միւսն անգործ է: Այս պատճառով բարեկամները գովութիւն են ընծայում մէկ աչքին, որով միայն տեսնում է Միակը, այսինքն՝ Յատուկը, որ բնութեամբ անփոփոխելի եւ մշտնջենաւոր է իմացում, ճշմարիտ Հայրը եւ Միածին Որդին եւ Սուրբ Հոգին, քանզի ճշմարտապէս Միակ է եւ Սի Բնութեան մէջ է իմացում՝ ըստ բնութեան չզանազանուելով որեւէ բաժանութեամբ եւ օտարութեամբ: Քանզի կան ոմանք, որ զանազան աչքերով չարաչար անտեսում են անգոների պէս՝ Միակը խոտորելով եւ աչքի տեսութեամբ բաժանելով բազում բնութիւնների. այսպիսիներն են, որ կոչւում են բազմահայեացք, որոնք, շատ նայելով, ոչինչ չեն տեսնում... Ապա ուրեմն, կոյր է բազմաչեան, որ շատ աչքերով նայում է սնտոիների վրայ, սրահայեաց եւ տեսնող է նա, ով հոգու մէկ աչքով հայում է Միակ Բարին»:

Հարսը միատես է, այսինքն՝ «մի հոգով» է վկայում եւ «միատես առաքիլութեան կեանքով» հայում, Միակին առաջն ունենալով՝ միացնում մտածութիւնները... (Լիւսացի): Հարսը երկու աչքով նայում է Միակին (Հիպոդիտոս):

Պարանոցի քառամանեակը Քրիստոսի լուծն է... (Լիւսացի):

10. Քանզի գեղեցկացան քո ստինքները, քո՛յր Իմ Հարս, քանզի գեղեցկացան քո ստինքները գինուց [աւելի], եւ քո հանդերձների հոտը՝ բոլոր խունկերից:

10. *Ստինքները* վարդապետութեան աղբիւրներն են, որոնք արդէն չեն թխեցնում մանուկների կաթը, այլ աղբիւրացնում են անարատ *գինին*՝ յուրախութիւն կատարեալների (Լիւսացի):

Ստինքները խորհրդանշում են սուրբերի սրտի մաքրութիւնը... Կաթից գինի անցումն արտայայտում է հոգեւոր աճի օրինաչափութիւնները: Պօղոս առաքեալն ասում է. «Ով կաթնակեր է, տգետ է արդարութեան խօսքի համար» [Եբր. Ե 13] եւ «Իբրեւ ի Քրիստոս մանուկների կաթով կերակրեցի ձեզ եւ ոչ՝ [պինդ] կերակրով» [Ա Կորնթ. Գ 2]: Եթէ կաթը բնորոշ է մանուկներին, ապա *գինին*՝ հասարկութեան արարչը:

կով կատարեալներին: *Գինին* ուրախութեամբ է լցնում կերակրուողներին... Լմանապէս սուրբերի սրտից, այսինքն՝ հոգեւոր ստինքներից, բխող Սուրբ Հոգու խօսքերը զուարճացնում են լսողներին եւ ուրախութիւն ու կենդանութիւն հաղորդում (Լարեկացի):

Գինին, ըստ Տաթեւացու, նշանակն է իմաստութեան:

Լիւսացու մօտ քննադիրն այսպէս է. «*Քո իւղերի հոտը՝ բոլոր խունկերից*»: Ուսուցանում է, որ ճշմարտութեան խորհուրդը՝ աւետարանական վարդապետութեամբ յայտնուած, աւելի անուշահոտ է Աստուծոյ համար, քան՝ Հին օրէնքի բոլոր խունկերը (նկատի ունի ողջակէզների, պատարագների, ընծաների եւ ամէն տեսակ անուշահոտութիւնների մատուցումը), քանզի Աստուծոյ պատարագը «խորտակուած» հոգին է, Աստուած փշրուած եւ «նուաստացած» սիրտը չի արհամարհում [տե՛ս Սաղմ. Ծ 19]... Հարսի վարքի անուշահոտութիւնը վեր է օրէնքի մարմնաւոր խունկերից եւ յոյժ ցանկալի եւ ընդունելի՝ Փեսայի համար (Լիւսացի):

Լմանապէս պէտք է հասկանալ *հանդերձների խնկարոյր հոտը*: Քանզի ովքեր ձեռնամուխ են լինում անուշահոտ առաքինութիւնների եւ բարի գործերի, ոչ միայն փրկութեան պատճառ են լինում, այլեւ շահեկան են լինում իրենց մերձեցողներին եւ տեսնողներին՝ ոչ միայն կենդանութեան օրօք, այլ առաւելապէս՝ յետմահու (Լարեկացի):

Ըստ Տաթեւացու՝ *հանդերձը* խորհրդանշում է առաքինութիւնը, Բանի մարմնաւորուելը եւ հեթանոսների դիրին դարձը: Իսկ *հոտն* այն ծածուկ գմայլումն է, որ բուրում է Քրիստոսից, Եկեղեցու խորհուրդներից եւ առաքինութիւններից՝ ի հաճութիւն Աստուծոյ եւ մարդկանց (Տաթեւացի):

Երբ մարդը սուրբ սրտով եւ անկեղծ հաւատքով ճանաչում է Աստուծուն, նրա գործերը խունկից աւելի անուշ են բուրում (*Հիպոդիոտոս*):

11. Մեղր է կաթում քո շուրթերից, քո՛յր Իմ Հարս, մեղր ու կաթ է քո լեզուի տակ, եւ քո հանդերձների հոտը նման է կնդրուկի՝ հոտի:

11. Քաղցր եւ ախորժելի *մեղր* է կոչում վարդապետութիւնը,

1 Տե՛ս 4 6:

որով Քրիստոսին հարսնացածներից եւ մերձաւորներից կերակրում են մարդիկ, եւ քաղցրանում լսողների սրտերը՝ ըստ Դաւթի, թե՛ «Մեղրից քաղցր են Քո խօսքերն իմ քիմքում» [Սաղմ. ԾԺԸ 103]: *Մեղր ու կաթ է քո լեզուի տակ. կաթը* մանուկների համար է, *մեղրը՝* հասակով կատարեալների: Լարեկացին այստեղ յիշում է սուրբ Յովհան Ոսկեբերանին որպէս բոլոր լեզուներից աւելի անուշ կերակուրներով կերակրողի (Լարեկացի):

«*Մեղրը* սուրբ աղօթքն է, որ քաղցրացնում է Աստուծուց մեզ տրուած բարիքների պարգեւները» (*Հիպոդիոտոս*):

Հարսի շուրթերից բուրում են ոչ թէ խօսքեր, այլ՝ զօրութիւններ... Հարսի *հանդերձների հոտը* (առաքինութիւն) նախ գերադասուեց բոլոր խունկերից, իսկ այժմ նմանեցուեց կնդրուկի... Առաքինութեան կենսի լրումն աստուածանմանութիւնն է: Կնդրուկին աստուածային պատիւ է ընծայուած. Հարսի առաքինութեան զգեստը նման է աստուածային երանութեանը, մաքրութեան եւ անախտութեան պատճառով նման է անմերձեակի բնութեանը: Հարսը Քրիստոս է հագել եւ առաքինութեան վարքը հասցրել կատարելութեան (Լիւսացի):

Հանդերձների անուշահոտութիւնը խորհրդանշում է Աստուծուն հաճելի անուշահոտ պատարագը: Ո՛րն է ընդունելի պատարագը, որն Աստուած հոտոտում է իրբեւ անուշահոտութիւն... Ովքեր իրենց կամքը, խորհուրդները եւ մարմինը որպէս ողջակէզ մատուցում են Աստուծուն (Լարեկացի):

12. Փակուած պարտեզ ես, քո՛յր Իմ Հարս, փակուած պարտեզ ես եւ կնքուած աղբիւր:

12. Տաթեւացին, էպպէս լրացնելով Լիւսացի—Որոգիսէս մեկնութիւնները, համակողմանի եւ ամբողջական մեկնութիւն է առաջադրում.

Աղբիւրը մտքի զօրութիւնն է (Լիւսացու մօտ աղբիւրը մտաւոր հոգու զօրութիւնն է, որ մեր մէջ բխեցնում եւ աղբիւրացնում է բոլոր խորհուրդները): Երբ շարժում ենք եւ յօժարում բարի գործերի, այնժամ կնքուած է մեր մէջ, իսկ երբ յօժարում ենք չար խորհուրդների, մեր մտքի աղբիւրը վատնում եւ արտահոսում է դուրս՝ դէպի մեղքի փուշը եւ տատասկը: *Պարտեզը* մեր առաքինութիւններն են: *Փակուած* է, որ չլինի կեղծիքով եւ ի ցոյց մարդկանց: *Փակուածութիւնը* նշանակում է նաեւ, որ մեր հոգին փակ ենք պահում մեղքի փշի եւ տատասկի առջեւ, այսինքն՝ մեր զգայութիւնների անդաստանը գերծ ենք պահում չարի որոմներից: Ինչպէս նաեւ պէտք չէ սրբութիւնը տալ շներին

14. Գարգոս¹ եւ քրքում², խունկեղեզ³ եւ կի-
ճանոն⁴, Լիբանանի բույր ծառերով հան-
դերձ, զմուշ⁵ եւ հալուէ⁶, բույր գլխաւոր
խունկերով հանդերձ:

14. *Քրքումը* լծակցուած է *Նարդոսի* հետ: Նարդոսի անուշահո-
տութեան խորհրդի ծանօթացանք [Ա 12], իսկ քրքումը չափաւոր զօ-
րութիւն ունի. ո՛չ շատ սառն է, ո՛չ էլ՝ շատ ջերմ, ցաւերի համար մխի-

1 Տես Ա 12:

2 քրքում— (եբր. karkōm) *Crocus sativus*: Պարսկալից հոտաւետ բոյս է: Աճում է հարաւային Եւրոպայում ամենուր (հայրենիքն են Յունաստանը եւ Փոքր Ասիան), տեղ—տեղ էլ՝ Գերմանիայում: Կոճղեզաւոր բոյս է՝ երկար ցողունով եւ շատ նեղ, մուգ կանաչ տերեւներով եւ անմիջապէս արմատից է աճում: Աշնանը տերեւների արանքից աճում է կարճ ընձի-
ղով բաց մանուշակագոյն ծաղիկը, որը տեսքով նման է շուշանին, իսկ մեծութեամբ՝ փոքրիկ կակային: Նրա միջում վարսանդը վերջանում է երեք մտտ ծիւերով, որոնք էլ չոր վիճակում կազմում են հոջակաւոր քրքումը: Արեւելքում քրքումը բարձր էր գնահատում: Պակաս բարձր չէր գնահատում յոյների եւ հռոմէացիների մօտ: Քրքումից պատրաստում է անուշահոտ ջուր, որով ցողում են սենեակները, շորերը, զցում ուտելիքի եւ ըմպելիքի մէջ: Քրքումից հոտաւետ քսուք էին պատրաստում: Հին Եգիպտոսում աճեցում էր մէկ այլ բոյս՝ *Carthamus tinctorius*, որը քրքումի պէս տալիս էր դեղին ներկ՝ մումիաների հանդերձները ներկելու համար:

3 խունկեղեզ(անուշ)— թեաքար՝ *Acorus calamus* բոյսն է: Լաւագոյն խուն-
կեղեզն աճում էր Արաբիայում եւ Հնդկաստանում, իսկ ցածրորակները՝
Եգիպտոսում եւ Սիրիայում: Սուրբ օծութեան խոյ բաղադրանքներից է [Ելք Լ 23]:

4 կիճանոն— (եբր. qinnāmōn) *Cinamomum zeylanicum*: Անուշահոտ բույ-
րանքով կեղեւ է, որը հանում է դափնիների ընտանիքի ծառերի մի
տեսակից: Նրա աղացած փոշին սուրբ օծութեան խոյ բաղադրանքի-
թերից է [Ելք Լ 23]: Այժմ աճեցում է Տեյլոնում եւ Զաւայում:

5 Տես Գ 6:

6 հալուէ— (եբր. ʿhālim) *Aloe barbadense*, յայտնի է նաեւ *A. vera* վայ-
րի վիճակով, որն աճում է Եմենում: Լայնօրէն աճեցում է տնական
պայմաններում: Քաջ յայտնի է կոտիկ բոյս է՝ լայն, շատ հաստ տերեւ-
ներով, որոնց եզրերին փշեր են: Այս բոյսի հիւթը բուժիչ դեղ է, որ
յայտնի է այդէ անունով: Այն, բնախոյզների վկայութեամբ, գործածում
էր մահացածների մարմինն օժելու համար: Նիկողեմոսը Տիրոջ մարմինը
գերեզման դնելիս բերեց հալուէ՝ զմուռով խառն [Յովհ. ԺԹ 39]: Հա-
լուէն ունի շատ սուր եւ անուշ հոտ, որի համար էլ բույր արեւելեան
ժողովուրդների կողմից գործածում էր ինչպէս մեծարժէք կնդրուկը: Հա-
լուէն իր անուշահոտութեամբ դրում է զմուռի եւ կասիասի կողքին
[Սաղմ. ԽԴ 9]: Կարող է լինել ժամանակակից *Aquilaria agalocha*-ն,
որ այսօր լինում է Արեւելեան Բենգալում, Չինաստանում:

թարական զօրութիւն ունի: Քրքումի յատկութիւններով այլաբանօրէն
իմաստասիրում է առաքինութեան մասին, քանզի առաքինութիւնը մի-
ջինն է երկու ծայրայեղութիւնների՝ բարու պակասութեան եւ չափա-
զանցութեան (օրինակ՝ ժլատութիւն եւ շռայլութիւն, երկչոտութիւն եւ
յանդգնութիւն...): Հոգեւոր կեանքի մէջ *քրքումը* խորհրդանշում է չա-
փաւորութիւնը եւ խոհեմութիւնը: Այսինքն՝ առաքինութեան գործե-
րում պէտք չէ դիմել չափազանց մեծ չափերի, որպէսզի հոգեւոր կեան-
քը չվնասուի: Պէտք է հաստատուն հաւատքով ապրել, զրուածից աւե-
լին չհետամտել եւ անքննելի չքննել, այլ բույր անկարելի, անլինելի
եւ անհաւատալի իրերից աւելի պէտք է հաւատալ Աստուծոյ ամենակա-
րող զօրութեանը: Նմանապէս, եթէ մէկը գործած մեղքերի համար սու-
գի մէջ է, չպէտք է սգայ չափից աւելի, որպէսզի յուսահատութեան մէջ
չընկնի եւ ասի՝ փրկութիւն չկայ, եւ այդ պատճառով չդառնայ մեղքե-
րից կամ Յուդայի պէս ընկնի, որ խեղդուեց (Նիւսացի—Նարեկացի):

խունկեղեզը բույր խունկերից անուշահոտ է, որը հրամայուեց
խառնել խունկի հետ՝ խորանում Աստուծոյ համար ծխելիս (Նարեկա-
ցի). խորհրդանշում է առաքինութեան վարքը (Արեւելցի):

Նիւսացին նկարագրում է, որ *կիճանոն* ունի շոգին կամ ջեր-
մութիւնը զովացնելու կամ սառեցնելու արագ զօրութիւն եւ այլ գար-
մանալի յատկութիւններ: *Կիճանոնը* հրեշտակահաւասար վարքի խոր-
հուրդն է. այն ունեցողն այլեւս չի ընդունում մարմնաւոր ախտերի այ-
ցերը (պոռնկութիւն, ազահութիւն, բարկութիւն...), այլ արթուն, ան-
քուն, անախտ եւ անկարիք կենցաղավարութեամբ է ապրում (Նիւսա-
ցի—Նարեկացի):

Լիբանանի ծառերից ծորում է կնդրուկը, այսինքն՝ *Լիբանանի
ծառերի* գեղեցկութիւնը կերպարանում է աստուածային տեսութիւնը.
եւ աստուածային փառքին ոչ ոք հաղորդ չի լինում, եթէ նախապէս
կերպարանակից չլինի մահուան նմանութեամբ (Նիւսացի):

Ջմուռը (տես Գ 6) եւ *հալուէն* այն նիւթերն են, որ Տիրոջ
թաղմանը Յովսէփը եւ Նիկողեմոսը բերեցին: *Ջմուռը* նշանակն է
անապական մարմնի, *հալուէն*՝ անուշահոտ Աստուածութեան: *Ջմուռը*
նաեւ խորհուրդն է թաղման, իսկ *հալուէն*՝ յարութեան (Տաթեւացի):

15. Բուրաստանների աղբիւր եւ կենդանի
ջրի ակունք, որ բխում է Լիբանանից:

15. Ում բերանի առաջումը Նոնենիների եւ խնկիների դրախտ
էր, Նա այժմ *աղբիւր* է լինում՝ Իրենից բուսեցրած պարտէզն արբեց-
նելով... Ապա ամենաբարձր գովութեան խօսքն է ասում Հարսի մա-

սին. Երան կենդանի ջրի ակունք է անուանում, որ բխում է Լիբանա-
նից: Ակատում է Հարսին տրուող անունների հետզհետե խտացում՝
պարտեզ, պարտեզների աղբիւր, կենդանի ջրի ակունք... Առաքինու-
թեան գործերից մինչեւ աստուածացման գագաթ, քանզի կենդանի
ջուրն աստուածային բնութիւնն է, եւ Աստուած Ինքն է կենդանի ջրի
ակունքը. «Թողեցին Տիրոջը՝ կենդանի ջրի աղբիւրին» [Երեմ. Ժ 13],
«Եթէ դու գիտենայիր Աստուծոյ պարգեւները, եւ թէ ով է, որ քեզ
ասում է. «Ինձ խմելու ջուր տուր», գուցէ դու խնդրիր Երանից, եւ
[Լա] քեզ կենդանի ջուր տար» [Յովհ. Դ 10], «Ով հաւատում է Ինձ,
ինչպէս եւ Գիրքն է ասում, Երա որովայնից կենդանի ջրերի գետեր
պիտի բխեն» [Յովհ. է 38]: Այսպիսով, ինչպէս Տիրոջը մահակից լի-
տողները եւ հարսնացողները հաղորդուեցին Աստուածութեան անու-
շահոտութեանը, այնպէս էլ Երա պէս կենդանի ջրի ակունք պիտի
դառնան, թէպէտ Լիբանանից եկած լինեն, այսինքն՝ մեղքի անտառից:
Երանն է մեկնում աւետարանիչը. «Սա ասում էր Հոգու մասին, որ պի-
տի ընդունին Երան հաւատացողները» [Յովհ. է 39] (Լիւսացի—Լա-
րեկացի):

16. Վեր կաց, հիւսիսային՝ քամի, եւ եկ, հա- րաւային՝ քամի, փչի՛ր Իմ պարտեզի մէջ, եւ թող բուրե՛ն Իմ խունկերը:

16. Ըստ Լիւսացու՝ *հիւսիսային քամին* իր հրամանով մերժում է եւ *հարաւային քամուն* խնդամտութեամբ կանչում. հիւսիսայինին հրամայում է հեռանալ եւ փախչել, որպէսզի հարաւայինն անխափան փչի, եւ Երա ընթացքը ոչ ոք չարգելի (Լիւսացի):

Հիւսիսն իր սառնութեամբ եւ արեգակից հեռու լինելով խորհրդանշում է սատանային եւ Երա գործերը, որոնք են բարկութիւն (կարկուտ), փորձութիւն (ձիւն), կռապաշտութիւն (սառոյց), ատելու-
թիւն եւ Աստուծոյ սիրոյ պակասութիւն (ցուրտ) եւ այլն:

Հարաւը լոյսով, ջերմութեամբ, ցածրադիրութեամբ կրում է Սուրբ Հոգու խորհուրդը, որ լոյս է եւ սիրոյ ջերմութեամբ եւ խոնար-
հութեամբ իջնում է մեզ մօտ եւ հալեցնում մեղքի ու անհաւատու-
թեան սառոյցը:

Այստեղ *պարտեզն* առաքեալներն են, որ ընդունեցին Սուրբ Հո-
գին եւ ապա Սուրբ Հոգով մեզ բուրեցին հոգեւոր կեանքի անուշա-
հոտ քաղցրութիւնը: Պարտեզ իջնելը երեք կերպ է իմացում. Սուրբ
Կոյսին աւետելը, գերեզմանի պարտեզն իջնելը կամ սուրբ սրտերի
մէջ հանապազ իջնելը (Լարեկացի—Տաթեւացի):

Հարսն աղաչում է, որ իր Փեսան ցած իջնի.

1. Թող իմ եղբորորդին իջնի Իր պարտեզը եւ ուտի Իր ծառերի պտուղները:

Փեսան ասում է Հարսին.

**Մտայ Իմ պարտեզը, քո՛յր Իմ Հարս, հաւա-
քեցի Իմ գնուեսն՝ Իմ խունկերով հանդերձ,
կերայ հացս Իմ մեղրով, արբեցի գինիս Իմ
կաթով. կերէ՛ք, մերձատրներ՝ Իմ, արբէ՛ք եւ
արբէ՛ք, եղբորորդիներ՝ Իմ:**

1. *Ծառերի պտուղները* Երանք են, ովքեր Յիսուսից յետոյ մա-
հուամբ նահատակուեցին: Երանք Եկեղեցու պարտեզի մէջ աճած
պտուղը քաղցր է Փեսայի համար. ուտի Հարսն աղաչում է ուտել,
ըստ այնմ՝ «Ով ինձ խոստովանում է մարդկանց առաջ, ես էլ կխոս-
տովանեմ Երան Հօր առաջ» [Մատթ. Ժ 32] (Որոզինս):

Հարսը համարձակում է պատուասիրել եւ մեծապարգեւել
Երան, Ով վեր է ամէն մի առաւելութիւնից. Հարսն ուտելու է հրաւի-
րում Երան, Ումից ամէն ինչ է, Ումով ամէն ինչ է, Ում մէջ ամէն ինչ
է: Ով ժամանակին կերակրում է բոլորին, Ով երկնքից իջած հացն է,
աշխարհի կեանքը, բոլոր էրին կենդանութիւն տուողը, Երա՛ առջեւ է
Հարսը սեղան դնում: Հարսը մեր բնութեան պարտեզն է, մենք՝ ծառե-
րը, իսկ պտուղները՝ Հօր կամքը կատարելն է, այսինքն՝ մեր փրկու-
թիւնը եւ ճշմարտութեան գիտութեան գալը: Հարսը նախապէս քաղց-
րացել է խնձորենու պտուղով եւ ապա՝ քաղցր պտուղ դարձել...

Հարսն աղօթում է՝ նայելու առաքինութեան ծառերի պտղաբե-
րութեանը, մարդասիրութեամբ իջնելու, ընդունելու ներքիններիս եւ
բարձրացնելու: Փեսան մինչեւ Հարսի աղօթելը լսում է Երան, նայում
Նրա սրտի պատրաստութեանը եւ գալիս այն *պարտեզը*, ուր փչեց *հա-
րաւային քամին*, հաւաքում խնկեկներին *պտուղները*՝ գմայլուելով
առաքինութեան *ծառերով*, եւ պատմում խրախճանութեան մասին...
(Լիւսացի): Լախ՝ որպէսզի մեզ յորդորի ճաշակելու, ինչպէս բժիշկն է
նախ ճաշակում եւ ապա տալիս հիւանդին: Երկրորդ՝ Ինքը ճաշակեց
խաչի չարչարանքները եւ մեզ փրկութիւն պարգեւեց՝ ուսուցանելով,
որ ով ճաշակում է Իր սուրբ Մարմինը եւ Արիւնը, պէտք է պատրաստ
լինի չարչարանքների եւ հաւածանքների (Տաթեւացի):

Ըստ Որոզինսի՝ Փեսան մտել է Հարս—Եկեղեցու Աւագանից

ծնուածների պարտզը եւ հաւաքում է իր հրամանի լրումը, քանզի ով կորցնում է իր անձը, փրկում է այն՝ ըստ Նրա անուշահոտ հրամանի [տե՛ս Մատթ. Ժ 39]... (Ռոոզինես):

Իմ գմուռնս՝ Իմ խունկերով հանդերձ... Ակատի ունի մեռելութեան միջոցով եփուած մաքուր եւ անուշահոտ իւղը, այսինքն՝ զանազան եւ տեսակ—տեսակ առաքինութիւնների *խունկերով* ընդխառնուած վարքը (Նիւսացի), ինչպէս նաեւ՝ անուշահոտ Աստուածութեան *խունկերով* բուրոզ չարչարանքները՝ ի լրումն առաջին արդարների աղօթքի (Արեւելցի):

Տերը հաւաքում է իր մահուան պտուղները, որոնք բուրում են Հարսի առաքինութեան խունկերով (Մկրտութիւն՝ Քրիստոսի փրկագործութեան հաւատքով, եւ աստուածահաճոյ վարք՝ հաւատքի գործերով): Խունկի անուշահոտութիւնը խորհրդանշում է նաեւ Աստուծոյ սերը՝ միաւորուած՝ մարմնի հետ (Նարեկացի):

Հացս կերայ Իմ մեղրով... Կատարելագոյն կերակուրը հացն է՝ ոչ թէ օրէնքի դառնութեամբ ճաշակուող, այլ՝ ինքն իրենից մեղր առաջացնող. առաքինութեան պտուղները մշտապէս քաղցրացնում են հոգու զգայութիւնները: *Մեղրով հացը* խորհրդանշում է քաղցրացած պատուիրանը: *Մեղրի* քաղցրութեամբ անուշացած *հացի* օրինակ է Տերը, որ Յարութիւնից յետոյ երեւաց աշակերտներին (Նիւսացի):

Հարսը կերակրում է Փեսային ո՛չ միայն առաքինութեան *հացով*, այլեւ քաղցրացել է *մեղրի* խորիխի պէս (Նարեկացի):

Մեղրով, ըստ *Հիպոդիտոսի*, ակնարկում է, որ Հարսը կատարել է Աստուծոյ կամքը:

Ըստ Արեւելցու՝ Ակատի ունի օրէնքի *մեղրը*՝ խառնուած Աւետարանի *հացի* հետ:

Արքեցի գինիս Իմ կաթով... Ակնարկում է այն դրուագը, երբ հրեաները կարկառեցին լեղիով եւ քացախով սպունգը... Տէրն ասում է. «Քաղցեցի, եւ կերակրեցիք ինձ, ծարաւեցի, եւ արքեցիք ինձ» [տե՛ս Մատթ. ԻԵ 35]՝ *կաթը* գինու հետ խառնելով: Կաթը մարդկային բնութեան առաջին կերակուրն է. յստակութիւն, մաքրութիւն, անսենզ ճշմարիտ մանկականութիւն (Նիւսացի):

Կաթն անմեղութեան նշանակն է: Վերնատանը Տէրն անմեղութեամբ (*կաթով*) ըմպեց գինին (Արեւելցի):

Փրկիչն անմեղութեամբ (*կաթով*) ըմպում է մեր փրկագործութեան բաժակը՝ լցուած *գինով*՝ իր խորհրդական՝ Արեամբ (Նարեկացի):

Փեսան կոչ է անում *մերձաւորներին եւ եղբորորդիներին* (Նիւսացու մօտ՝ *եղբայրներին*) ճաշակելու եւ ըմպելու... Այսինքն՝ նրանց, ովքեր ճանաչում են Աւետարանի խորհրդական ձայնը, ովքեր դարձել են Քրիստոսի Մարմնի անդամներ՝ յագեցաւու աստուածային կերակուրներով եւ ըմպելիքներով: Տերը գեղեցկապէս հրամայում է առաքինութեամբ մերձաւորներին, ոչ թէ՛ հեռաւորներին, արժանաւորութեամբ ճաշակելու իր Մարմնի խորհրդական *հացը* եւ ըմպելու իր Արեան մաքուր հեղման շնորհներն՝ ի սրբութիւն իրենց անձանց (սուրբ Հաղորդութիւն): Այս կերակուրին արժանաւորներին է *եղբայրներ* կոչում, քանզի ով կատարում է Նրա կամքը, եղբայր է, քոյր եւ մայր [տե՛ս Մատթ. ԺԲ 50] (Նիւսացի—Ռոոզինես):

2. Ես ննջում եմ, բայց իմ սիրտն արթուն է:

Հարսը զգում է, որ Փեսան բախում է դուռը:

Իմ եղբորորդու ձայնն է, դուռն է բախում:

Փեսան ասում է.

Բա՛ց Ինձ, քո՛յր Իմ, մերձաւոր Իմ, աղաւնի՛

Իմ, կատարեա՛լ Իմ, քանզի գլուխս պատուել

է ցօղով, եւ վարսերս՝ գիշերուայ շաղով:

2. Արեցմանը յաջորդում է քունը, որպէսզի զգայութիւնների հալմամբ վեր տարուի: Ուստի ընդարձակ եւ ճոխ սեղանից յետոյ Հարսը քնում է սխրալի քնով. քնով, որն օտար էր բնական սովորութեանը, քանզի սովորական քնի մէջ չեն հսկում եւ հսկման ժամանակ չեն քնում, քունը եւ հսկումը բացառում են միմեանց... Սակայն այստեղ հակառակ տարրերի մի նոր եւ հրաշափառ ընդխառնում եւ ուղեկցութիւն է, քանզի ասում է. «Ես ննջում եմ, եւ իմ սիրտը հսկում է»: Քունը նման է մահուան, քանզի նրա մէջ դադարում է զգայարանների աշխատանքը, թուլանում է մարմնի պնդութիւնը, մոռացութեան են մատնում մարդկային հոգսերը, հանդարտանում են հոգու յուզումները... Երբ քնի մոռացումով լքում է մարդկային բնութիւնը, այնժամ մաքուր սրտի խորհուրդները վեր են ելնում առանց պղտորուելու շրջակայ զգայական շարժումների ամբոխներից: «Քանզի մարդկային բնութիւնը երկու ճանապարհով է ընթանում. մէկով զօրանում է հոգու անախտութեամբ, միւսով՝ մարմնական ախտերով... Ով հայում է զգայութիւններին եւ իր մէջ առնում նրանցից բուսած մարմնական հեշ-

տութիւնները, անճաշակ¹ է մնում աստուածային ուրախութիւններին»: Ով փափագում է աստուածայինը, պէտք է փախչի զգայութիւնների կախարդանքից եւ հրճուի էերի տեսութեամբ, պէտք է քննցնի մարմնական շարժումները եւ մերկ ու մաքուր մտքով, աստուածային արթնութեամբ ընդունի Աստուծոյ ձայնը (Լիւսացի):

Լիւսացու ըմբռնումները ճգնաւորական են. սակայն ճգնաւորական մահուան հիմքը Տիրոջ փրկագործ մահն է (փրկարանական մահ)...

«Թէպէտ խաչուեց որպէս մարդ, սակայն չննջեց մարդու պէ: Այլ մարմնով ննջելիս արթուն Աստուածութեամբ բռնեց նրան², որ մահուան իշխանութիւն ուներ...» [տե՛ս Եբր. Բ 14] (Ռոզգինս):

Փրկարանական մահն ունի իր անմիջական մարդաբանական արտապատկերումը. դա վկայական մահն է... «Ունենալով մարդկային բնութիւնը՝ ննջում են, սակայն արթուն են՝ Սուրբ Հոգու շնորհներն իրենց մէջ ընդունելով: Արդ, եթէ այդպէս չլինէր, ինչպէ՞ս կարող էին այս տկար մարմնի մէջ անչափ նեղութեամբ այսպիսի չարչարանքներ կրել առաքելները եւ մարտիրոսները, նմանապէս էլ՝ ճգնագետաց հայրերը, մանաւանդ՝ մեր Լուսաւորիչը, ում տասն այրեր, ութ օր կախաղանից զլիխվայր կախած, քրածեծ էին անում եւ, այսպիսի դառը տանջանքների ենթարկելով, չկարողացան թմրեցնել նրա սրտի արթնութիւնը: Այլ, միտքն արթնութեամբ առ Աստուած բարձրացրած, այն օրերին անընդհատ աղօթքով խօսում էր Աստուծոյ հետ եւ Աստուծոյ առջեւ հեղում աղերսանքների գուրջ մեր աշխարհի փրկութեան համար: Գաւազանի մէկ հարուածը բաւական է՝ թմրութեան հասցնելու մեր միտքը, իսկ երանելին, այնպիսի անչափ չարչարանքների մէջ, միտքն անխտոր եւ լեզուն անդդուելի պահելով առ Աստուած խնդրուածքների մէջ, արդեօք չէ՞ր նմանում Քրիստոսի արթուն սրտին...» (Լարեկացի):

Դարձեալ ասում է, որ Տէրը երկայնամտութեամբ ննջում է՝ ժամանակ տալով ապաշխարողներին: Լաւե Եկեղեցին անտանելի վշտեր կրեց՝ տեսնողների համար անզգայ համարուելով, սակայն գիտեր, որ Տիրոջ համար է համբերում (Ռոզգինս—Արեւելցի):

Ըստ Տաթեւացու՝ սուրբ Հաղորդութեան ճաշակմամբ մենք մուտք ենք գործում Տիրոջ մահուան մէջ եւ արթնանում առ Աստուած: Այս կեանքում դա արտայայտում է զգայական մահուամբ եւ հոգու

1 անճաշակ— անհաղորդ
2 ցկատի ունի սատանայից

արթնութեամբ, իսկ մարմնով մեռնելիս [վերջին Հաղորդութեամբ] կենդանանում ենք հոգով: «...Ով ճաշակում է Քրիստոսի փրկական խորհուրդը, [թէպէտ] զգայարաններն անգործ են աշխարհիկ հեշտութիւնների մէջ, սակայն հոգին արթուն է եւ հսկում է առ Աստուած... Ով հաւատքով ու յոյսով ճաշակում է Տիրոջ Մարմինը, թէպէտ մեռնում է մարմնով, սակայն կենդանի է հոգով՝ ըստ այնմ, թէ՛ «Ով ուտի Իմ Մարմինը, յաւիտեան կապրի» [Յովհ. Զ 50—59] եւ թէ՛ «Ով հաւատայ Ինձ, մահ չի տեսնի» [Նոյն]» (Տաթեւացի):

Քրիստոս թէպէտ մարմնով համբարձուեց երկինք, սակայն սիրուն արթուն է, այսինքն՝ աստուածային շնորհները հեղում են մարդկանց վրայ, որոնցով նախախնամում են Քրիստոսի Պատարագի պատուարի տակ:

Հարսը զգում է, որ Փեսան բախում է դուռը.

«Իմ Եղբորորդու ձայնն է, դուռն է բախում»:

Պէտք է հսկել, արթնանալ կենցաղի պատրանքների մէջ սուզող քնից, բացել հոգու աչքերը, հաստատուն մնալ եւ վառել հոգու լապտերները, հեռանալով չարութիւնից եւ մոլորութիւնից՝ առաջինութեամբ պատրաստ լինել հոգու դռան առջեւ Տիրոջ Գալստեանը... «Քանզի երբ գայ եւ բախի դուռը, երանի՛ այն ծառային, ում Տէրը, գալով, դռան մօտ գտնի» [տե՛ս Դուկ. ԺԲ 36—37]:

Հոգին, յարածամ հայելով երանութեանը, դռան ետեւից զգում է Տիրոջ ներկայութիւնը. սակայն Աստուած անբաւաբար անըմբռնելի է եւ անհասանելի, ուստի երբեք աչքի առջեւ չեկաւ...

Հարսը մշտապէս սքանչանում եւ հիանում է գիտութեամբ, սակայն երբեք գիտութեամբ չի դադարում Աստուծոյ սէրը ցանկալուց. այս պատճառով անմիջապէս զգում է դուռը բախողի ներկայութիւնը:

Ապա, մի փոքր հանդարտութիւն տալով լսելիքին, լսում է Փեսայի ձայնը.

Բա՛ց Ինձ, քո՛յր Իմ, մերձաւոր՛ Իմ, աղանի՛ Իմ, կատարեա՛լ Իմ, քանզի գլուխս պատուել է ցօղով, եւ մազերս՝ գիշերուայ շաղով: «Մեծն Սովսեսի տեսիլքի մէջ Աստուծոյ ձայնը լոյսով սկսուեց, իսկ յետոյ Աստուած ամպով էր խօսում նրա հետ: Ապա, բարձրագոյն եւ կատարեալ լինելով, աղջամղջի մէջ էր տեսնում Աստուծուն»: Ուստի պէտք է հեռանալ Աստուծոյ մասին երեւակայական կարծիքների ցօղից, խաւարից դէպի լոյս փոխուել՝ երեւելիների ամպով առաջնորդուելով դէպի աներեւոյթ բնութիւնը... Ովքեր լքում են մարդկային բնութիւնը եւ ներս մտնում անմտնելի աստուածգիտութեան մէջ՝ ամեն կողմից պատուելով Աստուծոյ շամանդաղով, նրանց համար բոլոր

երեւելիները եւ ըմբռնելիները դուրս են մնում, Հոգու տեսութեամբ անտեսանելի եւ անըմբռնելի դառնում: Այժմ աստուածային գիշերուայ մէջ Փեսան մերձ է եւ չի երեւում... Ի՞նչ են նշանակում հոգու այսպիսի խորհրդածութիւնները գիշերուայ մէջ:

Դուռը մտածական անճառելիների իմաստների նշանակն է, որի միջոցով ներս է մտնում Խնդրելին, քանզի ճշմարտութիւնը մեր բնութիւնից դուրս է գիտութեան մասնակիութեան պատճառով... Փեսան բախում է մեր մտքի դուռը՝ ասելով՝ *բա՛ց*: Այդ դռան բանալիները ծածուկ խորհուրդները բացայայտող անուններն են՝ *քոյր*, *մերձաւոր*, *աղակի*, *կատարեալ*: Քանզի եթէ մէկը կամենում է բացել հոգու դռները, որպէսզի փառքի Թագաւորը ներս մտնի, պէտք է լինի *քոյր* (այսինքն՝ կատարի Աստուծոյ կամքը), *մերձաւոր* (այսինքն՝ մերձեւայ ճշմարտութեանը եւ ոչ մի բանով չպատսպարուի), *աղակի* եւ *կատարեալ* (այսինքն՝ աղանու պէս կատարելութիւն ունենայ, կատարեալ անմեղ ու մաքուր լինի): Յոյժ հոգեշահ է Փեսային ներս ընդունել եւ բնակեցնել. Երազուից պատուած է ցօղով, եւ վարսերը՝ գիշերուայ շաղով... *Յօղը* բժշկութիւնն է, ինչպէս յայտնապէս ասում է մարգարէն. «Յօղը, որ Զեզանից է, բժշկութիւն է նրանց համար» [Եսայի ԻԶ 19]: Իսկ *գիշերուայ շաղը* նկարագրում է աստուածատես նախնիներին՝ արդարներին եւ մարգարէներին, քանզի ոչ ոք չհանդիպեց գիտութեան սաստիկ անձրեւի կամ վտակների, այլ փոքրիշատէ ցօղում էին ճշմարտութեան գիտութեամբ՝ սուրբ եւ աստուածագգեստ բանական ցօղի միջոցով: *Վարսերը* մարգարէները, առաքեալներն ու աւետարանիչներն են, որոնցից իւրաքանչիւրը կրում էր գաղտնի եւ անտեսանելի գանձեր՝ մեզ համար վարդապետութեան ջրառատ գետեր լինելով: *Յօղը* եւ *շաղն* արտայայտում են մեր աստուածճանաչողութեան սահմանափակութիւնը. «Շատից քիչը գիտենք եւ մարգարէանում ենք» [Ա Կորնթ. ԺԳ 9]: Աստուածային վարդապետութեան գետը գոյանում է այսպիսի մանր կաթիլներից (Նիւսացի):

Գիշերուայ խաւարն աստուածգիտութեան անհասութիւնն է: *Յօղը* եւ *շաղը* խորհրդանշում են Աստուծոց տրուած հաւատքը, որը միամիտ աղօթքի մէջ արտասուքներով լցուեց աստուածգիտութեամբ (*Հիպոդիտոս*):

Որոգիւնեսեան ըմբռնումն առնչուած է Աւետման հետ. Գաբրիէլ հրեշտակապետն աւետում է դռան ետեւում կանգնած մարդկային բնութեանն՝ ասելով. «Մի՛ երկնչիր, Իմ Աստուածութեան գլուխը պատուեց մարգարէների՝ փրկութիւն հայցող խօսքերի *ցօղով* եւ հեթանոսների բանական առաքինութեան գիշերային *շաղով*» (Որոգիւնէս):

Ըստ Նարեկացու՝ ովքեր ըմպում են այն բաժակը եւ գինին

(չարչարանակից եւ մահակից են լինում Քրիստոսին), յոյժ արթուն միտք են ստանում այս քնալից կեանքում... Հարսը լուսաւորուել է Սկրտութեամբ, հոգու ծնունդով եւ խորհրդական արեան արբամբ դարձել քոյր եւ մերձաւոր, արդարացել սուրբ Հոգով եւ աղանակերայ դարձել եւ որդեգրութեամբ կատարեալ դարձել: *Յօղը* եւ *շաղը* նշանակներն են Տիրոջ քրտինքի, որով պատուեց մատուութեան գիշերը մահուան ահի պատճառով [տե՛ս Դուկ. ԻԲ 44] (Նարեկացի): «Որպէսզի յորդորի հաւատացեալներին, թէ Երազու չարչարանքներով փրկուեցինք եւ պէտք է սպասենք Երազու միւս Գալստեանը (Տաթեւացի): *Յօղը*, ըստ Արեւելցու, մարգարէների իմաստութիւնն է մինչեւ Քրիստոսի Գալուստը:

«...Ասում է՝ *բա՛ց* Ինձ, քանզի մեր կամքով է մեր միտքը բացել եւ Քրիստոսին ընդունելը, նմանապէս էլ՝ փակելը եւ արտաքսելը: Տիրոջ գլուխը Երազու է, ով այժմ Եկեղեցու գլուխն է, ինչպէս՝ հայրապետները եւ կաթողիկոսները: *Յօղով* պատուածութիւնը խորհրդանշում է սուրբ Հոգու ընդունելութեան շնորհները...» (Տաթեւացի):

3. Հանցեցի իմ պատմութեանը, ինչպէ՛ս հագնեմ այն. լուացի ոտքերս, ինչպէ՛ս աղտոտեմ նրանք:

3. Հարսը, շնորհներով հիացած, ասում է. «Մերկացայ փառքի պատմութեանից, որ ունէի դրախտում, արդ, ինչպէ՛ս պիտի հագնեմ. նոյնը, ինչպէս ասում էր Մարիամը. «Այդ ինչպէ՛ս կլինի» [Դուկ. Ա 34]»: Ինչպէս Երազու, որ լուացուեց շնորհով, չի կարող ընթանալ մոլոր ընթացքով, որով Աստուծուն մերձեանալը դժուարանում է (Որոգիւնէս):

Հարսը մաքուր է հոգին (*հանել է պատմութեանը*) առաքինութեան գործերով, իսկ մարմինը (*ոտքերը*) լուացել աղտոտի հեշտութիւններից: «Թէպէտ դրախտակործան մարմնի բնութեան մէջ է, սակայն, Քրիստոսին իր մէջ բնակեցնելով, այլեւս չի ցանկանում շաղախուել նոյնին» (*Հիպոդիտոս*):

Հարսը մերկացել է մաշկեղէն *պատմութեանից*, որ հագաւ մեղքից յետոյ եւ *ոտքերը* լուացել երկրայիններից... Աստուածային առաքեալը հրամայում է մերկանալ հին մարդուց [նրա՛նց], ովքեր պատրաստուում են Սկրտութեամբ լուանալ հոգու աղտոտը [տե՛ս Կողոս. Գ 9]: «Արդ, ով մերկանում է արտաքին մարդուց, հեռացնում է սրտի ծածկոյթը եւ ներսում ճանապարհ բացում Բանին... ըստ առաքեալի, որ հրամայում է մերկանալ հին մարդու պատառոտուած զգեստից եւ

հազնել Աստուծով տրուած նոր պատմուճանը՝ սրբութեամբ եւ արդարութեամբ, որը Հարսի [հաւատքի] խոստովանութեան զգեստն է»: Աստուածային զգեստներով զարդարուածներն այլեւս չպէտք է հազնել մեղքի պատմուճանը, քանզի ի՞նչ հաղորդութիւն կայ խաւարային զգեստի եւ լուսատեսակի ու աննիւթի միջեւ, պէտք չէ երկու պատմուճան ունենալ, այլ՝ մէկը՝ ըստ տէրուական խօսքի [տե՛ս Մատթ. Ժ 10]:

... *Ինչպէ՞ս հազնել*: Քանզի ո՞վ արդեօք, տեսնելով իր վրայ արեգակնափայլ Տիրոջ պատմուճանը՝ անապականութեամբ եւ մաքրութեամբ պատուած, ինչպէս այլակերպութեան ժամանակ Տէրը ցոյց տուեց [տե՛ս Մատթ. ԺԷ 2], դրանից յետոյ կարող է հանդուրժել մեղքի՝ աղքատ եւ պատառոտուած հանդերձ կրել իր վրայ...

Լուացի ոտքերս, ինչպէ՞ս աղտոտեմ նրանք: Մովսէսին հրամայուեց ազատուել մեռեալ մորթերից, երբ ոտքը դնում էր սուրբ եւ լուսաւոր երկրի վրայ: Տէրն աշակերտներին զգուշացնում էր չզնալ հեթանոսների ճանապարհով, այլ ընթանալ սուրբ ճանապարհով [տե՛ս Մատթ. Ժ 5]: Քրիստոս ասում է՝ Ես եմ ճանապարհը [Յովհ. ԺԴ 6], եւ անհնար է մերձենալ այդ ճանապարհին՝ առանց մերկանալու մարդկային մեռելոտի զգեստներից: Ում ոտքերը մաքրուել են մեղքերից Տիրոջ մաքրողական զօրութեամբ, ով ոտք է դրել թագաւորական ճանապարհին, այլեւս չպէտք է խոտորուի աջ կամ ձախ, այլ ուղիղ ընթանայ սրբութեան ճանապարհով (Նիւսացի):

Տէրը Մկրտութեամբ լուացել է Հարսի ոտքերը եւ զարշապարենորը, ինչպէս երանելի առաքեալներին եւ ամրացրել խայթող օձի թոյնից: Ինչպէ՞ս կարելի է վերստին աղտոտել դրանք մեղքի ընթացքով՝ պոռնկութեամբ, սպանութեամբ, զրկանքով (Նարեկացի):

4. Իմ Եղբօրորդին մեկնեց Իր ձեռքը պատուհանով, եւ իմ որովայնը խռովուեց Նրանով:

4. Նիւսացու մօտ բնագիրն այսպէս է. *Իմ Եղբօրորդին երկարացրեց Իր ձեռքն անցքի միջով, եւ իմ որովայնը խռովուեց Նրանով*:

Հարսը հեռացնում է սրտի ծածկոյթը եւ բացում հոգու բոլոր դռները, որպէսզի մտնի Փառքի Թագաւորը: Սակայն դռան ընդարձակութիւնը, պարզուեց, որ փոքր է, ընդամենն անցք է եւ չնչին մեծութիւն ունի, որով չի կարող մտնել Փեսան, այլ հազիւ Նրա ձեռքը մտաւ... Հարսը շահում է միայն այն, որ ձեռքով ճանաչում է Փափագածին... Քանզի մարդկային աղքատութիւնը չէր կարող իր ներսն ընդունել անհասանելի բնութիւնը: *Եւ որովայնը խռովում է...* արտայայ-

տում է Հարսի հիացումը եւ զարմացումը տեսածով, քանզի Նրա մտաւորական զօրութիւնը շարժուեց՝ աստուածային ձեռքի զօրութեամբ իմանալու սքանչելիները, ինչը գերազանցում է մարդկային զօրութիւնները: *Ձեռքը* նշանակն է արարչական զօրութեան: *Ձեռքով շնորհում է* Արարչագործողի անըմբռնելի եւ անտանելի բնութիւնը, քանզի բոլոր արարչական էերի ստեղծումն այն ձեռքի գործն է:

Այս խօսքը ներքին աղօթքս ունի Բանի մարմնաւորման փրկագործ տնօրէնութեան հետ: Հարսի տունը մարդկային կեանքն է, ուր գալիս է բոլորի արարչական ձեռքը՝ Իրեն ամփոփելով սուղ եւ չնչին մարդկային կեանքի մէջ, ամէն ինչով ընդունելով մեր բնութիւնը՝ առանց մեղքի: Իսկ մեր մէջ լինելով՝ յուզում եւ զարմացնում է հոգիներին. «Ինչպէ՞ս է Աստուած երեւում մարմնի մէջ, ինչպէ՞ս է Բանը մարմնի լինում, ինչպէ՞ս է ծնւում Կոյսից, ինչպէ՞ս է խաւարի հետ լոյսը միանում, մահուան հետ՝ կեանքը, ինչպէ՞ս է մեր երկրային կեանքի փոքր անցքը կրում Նրան, որ բովանդակում է բոլոր էերին...» (Նիւսացի):

Ըստ *Հիպոդիտոսի՝ Քրիստոսի պատուհանով* մեզ մօտ եկաւ Սուրբ Հոգին: «Արդ, Սուրբ Հոգով շնորհուեց սուրբ սրտին Իր տնօրինական գործերի ըննութիւնը. եւ Հարսը, տեսնելով այն, *խռովուեց* Նրա սիրոյ փափագով» (*Հիպոդիտոս*):

Ըստ Որոգիւնեսի՝ *ձեռքն* արտայայտում է մարգարէների յայտնած նոր խորհուրդը (Բանի մարմնաւորման մասին): Սա էր տեսչու՛մ եկեղեցին, ինչպէս ասում է. «Բազում մարգարէներ եւ արդարներ կամեցան տեսնել այն, ինչ դուք տեսնում էք» [Մատթ. ԺԳ 17] (Որոգիւնես):

5. Ես վեր կացայ՝ բացելու իմ Եղբօրորդու առաջ. իմ ձեռքերից գմուռս¹ կաթեց, եւ իմ մատները լցուեցին գմուռսով դռան փակողակի վրայ:

5. Հարսն առաքեալների ջարդութեամբ վեր է կացել կռապաշտութիւնից՝ բացելու սիրտը եւ ընդունելու Քրիստոսին, եւ Մկրտութեամբ Նրա գործերը կաթեցրել են Նրա մահուան տնկակցութիւնը, եւ զգայարանները լցուել են մահուամբ՝ ըստ այնմ՝ «Եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքերի համար» [Հռոմ. Ը 10] (Որոգիւնես):

1 Տե՛ս Գ 6:

Աստուծոյ առաջ կենդանի լինելու նախապայմանը մեռնելն է այս աշխարհի համար, այսինքն՝ մեր անդամները մեղքի համար սպանելը: *Ջոնոսը* նշանակն է մեռելութեան... Հարսը Սկրտութեամբ կամովին թաղուել է Քրիստոսի մահուամբ եւ յարութիւն առել:

Չեղքերը հոգու գործնական շարժումների նշանակներն են, որոնցից *զմուռս* է կաթում՝ ցոյց տալով մարմնական շարժումների կամաւոր մեռելութիւնը: Իսկ *Մատները* խորհրդանշում են առաքինութիւնների փոյթը...

Ովքեր անկատարելապէս ձեռնամուխ են լինում առաքինութիւնների՝ մի ախտի հանդէպ մեռնելով եւ միւսների մէջ կենդանի լինելով (օրինակ՝ ոմանք իրենց մէջ սպանում են պազշոտութիւնը եւ խնամքով սնուցում ամբարտաւանութիւնը), նրանց յօտ բոլոր *Մատները զմուռսով* չեն լցուած, քանզի բոլոր գործերով չեն օտարացել եւ մեռել չարի նկատմամբ: Իսկ ում բոլոր *Մատները* լի են *զմուռսով*, նրա հոգին յառնում է եւ ներսի ճանապարհը բացում Փեսայի առջեւ (Նիւսացի):

Ճգնաւորական մահուանը յաջորդում է աստուածայայտնութիւնը...

Աստուած յայտնում է Իրեն մեր մարմնեղէն բնութեան ներ լուսանցոյցով... Մեր հոգու աչքերը բացում են եւ սկսում տեսնել, որչափ հնարաւոր է մարմնեղէն աչքերի համար: Հոգին զարթնում է մեղքի թմբիկից եւ վեր ելնում երկրաւոր կրքերի իշխանութիւնից՝ մէկ կողմ դնելով ախտերը, իրեն մեռցնում է մեղքերի հանդէպ, մեռնում Քրիստոսի հետ... Ապա յարութիւն առնում Քրիստոսի յարութեամբ: Սրա մասին է խօսում առաքեալը [Կող. Բ 12] (Նարեկացի):

6. Ես բացեցի իմ Եղբորորդու առաջ. իմ Եղբորորդին անցաւ, եւ իմ հոգին ելաւ Նրա խօսքի հետ: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չտուեց ինձ:

6. Հարսը մարմնի եւ զգայարանների մեռելութեամբ բացել է սիրտը Տիրոջ առաջ... Երբ Քրիստոս կատարեց Իր տնօրէնութեան խորհուրդը եւ անցաւ—ելաւ Հօր աջ կողմը, այնժամ Եկեղեցին, բռնուելով քարոզների խօսքերից, թէ՛ «Գնացէ՛ք, ուսուցանէ՛ք բոլոր հեթանոսներին...» [Մատթ. ԻԸ 19], հոգով խանդակաթ եղաւ. այս բանի տեսչանքով *ելաւ* Հարսի *հոգին*: Հարսը *փնտրում* է եւ *կանչում* Նրան, Ումից հնչեց խօսքը, իսկ Նա, բարձրանալով երկինք, չէր երեւում

երկրի վրայ: Սակայն *փնտրելը* եւ *կանչելը* սրբում է Հարսի սիրտը... (Ռրգահնէս):

«... Անցաւ Հարսի յօտով՝ անգիտելի մնալով. բայց Հարսը չթողեց, քանզի հոգով ելաւ Նրա հետ: Թուում է, թէ կատարելով տնօրէնութիւնը, անցաւ, Նստեց Հօր աջ կողմում, եւ Եկեղեցին, ուսանելով քարոզիչներից, հոգով եւ յոյսով ելաւ Նրա հետ: *Փնտրեցի եւ չգտայ*... [այսինքն]՝ բնութեան տեղը, քանզի անվայրափակ է...» (Արեւելիցի):

Հարսը ձեռք է բերել մարմնի մեռելութիւն, եւ նրա հոգին դարձել է Քրիստոսի բնակարան: Քրիստոս անցնում է մտքի տաճարով ոչ թէ զգայապէս, այլ՝ իմացապէս: Հարսի հոգին ելնում է Նրա խօսքի հետ, այսինքն՝ Հարսի Հոգին ելնում է մարմնից եւ Նրա հետ բարձրանում երկինք... Հարսի այս վերելքը հնարաւոր է դարձել Բանի մարդեղութեամբ... Նրա հետ երկինք մտնելով՝ փնտրել է եւ չի գտել փառքի որքանութիւնը: *Կանչեցի Նրան, եւ ձայն չտուեց*. արտայայտում է աստուածային բնութեան անհասութիւնը... (*Հիպոդիստոս*):

Հարսը բարձրացրել է մտքի աչքերը դէպի Սուրբ Գրքի մտքերը՝ տեսնելու նրա շնորհների գիտութեան անքննելի խորքերը... Հարսը բացել է սիրտը՝ ներհաւաքելու սուղ տեսածը, քննելու, տեղեկանալու եւ հասու լինելու Նրա գիտութեան խորքերին, եւ այն, ինչի հասու եղաւ, սարսափեցրեց նրան...: Եղբորորդին անցնում եւ որպէս դիրքնաթաց փայլակ գնում է, իսկ Հարսի հոգին, ընդունելով Նրա խօսքի սակաւ ճաճանչները, գնում է Նրա հետ. միաւորուելով Նրա սիրոյ հեղեղի եւ, եռալով Նրա պատուիրաններով, իրեւ թէ ճանաչում Նրան, սակայն, համարելով, թէ հասել է, հասկանում է, թէ որքան հեռու է հասնելուց: «Քանզի ինչպէս արբեալը, որչափ ըմպում է, աւելի է ծարաւում, նմանապէս էլ ով [միտքը] յառում է Աստուածաշունչ Գրքի մտքերին, խորհում է եւ խոկում, որչափ ուսանում է, ցանկանում է էլ աւելի ուսանել: Քանզի գիտի, թէ Սուրբ Գրքի գիտութեան լրում չի գտնի եւ, մտքի այսպիսի ցանկութիւններով ջեռալով, կարծես ցաւում է հոգում, քանզի սակաւ հասողութեան միջոցով ճանաչում է անբաւ մացածները եւ վարակում այն գիտութեան ցանկութեամբ, որպէս ցաւեղով...» (Նարեկացի):

7. Ինձ գտան քաղաքում շրջող պահապանները, զարկեցին եւ վիրաւորեցին ինձ. պարիսպների պահապանները քուզ հանեցին իմ վրայից:

7. «... *Քաղաքի պահապանները* հրեշտակներն են, որ [գտնում

են] դրախտում, եւ ոչ թէ իրենք զարկեցին, այլ թոյլ տուեցին բանսարկուիւն փորձել նրան եւ այս փորձութիւններով վերցրեցին մարմնական ախտերի ցնցոտիները, եւ Հարսն ամբողջովին հոգիացաւ» (Որոգիներ):

Եթէ մահուան վտանգ հանդիպէր նրան, գտնուէր աւագակների կողմից, ապա նման գիտը յոյժ դժնդակ կլիներ: Իսկ եթէ քաղաքում շրջող պահապաններն են գտնում նրան, երանելի է այդպիսի գիտը, քանզի ով գտնուում է պահապանների կողմից, անվնաս կլինի աւագակներից: Ովքե՞ր էին, արդեօք, պահապանները. Իսրայէլի Պահապանի սպասաւորներն են, որ Իր Աջի պահպանութեամբ ամէն տեսակ չարից պահպանում է անձը... Աստուծոյ բնակութեան քաղաքը հոգին է, որը գտնուում է պահապանների կողմից, ինչպէս ոչխարը՝ Քաջ Հովուի կողմից, որի համար ուրախացան հրեշտակների դասերը... Հարսը ներընդունել է Աստուծոյ սիրոյ ընտիր նետը, նրա սիրտը խցուել է հաւատքի սլաքով... (Նիւսացի):

Քողը, որ հանեցին պահապան հրեշտակները, մեղքերի ծածկոյթն է (Տաթեացի), որպէսզի Խնդրեալին միշտ աչքի առաջ ունենայ եւ վերին ճանապարհով ելնելուց երբէք չդադարի (Նիւսացի):

Քողը նաեւ յուսահատութիւնն է. «Արդ, երբ հեռացուեց անյուսութեան քողը, տեսաւ անսահմանելի եւ անպարունակելի Սիրեցեալի գեղեցկութիւնը...» (Նիւսացի):

Հիպոդիտոսի մեկնութիւնը զգալիօրէն տարբերում է: «Քրիստոս սատանային անուանում է աշխարհի իշխան [տե՛ս Յովի. ԺԲ 31, ԺԳ 30], իսկ առաքեալը՝ օդերի իշխան [տե՛ս Եփես. Բ 2]: Նրա մասին է, հաւանաբար, որ այժմ անուանում է երկրաւոր քաղաքի *պահապաններ*, ովքեր, գտնելով Հարսին այսպիսի ծայրագոյն մաքրութեան հասած, զարկեցին եւ վիրաւորեցին պէս—պէս փորձութիւններով...»: **Չորձը** (բնագրում **քողը**) մարմինն է, որ չար դատաւորների եւ իշխանների միջոցով հանեցին սուրբերից... (Հիպոդիտոս):

8. Երգուեցնում եմ ձեզ, դուատրե՛ր Երուսաղէմի, ագարակի զօրութիւններով եւ հաստատութիւններով. եթէ գտնէք իմ Եղբօրորդուն, պատմեցէ՛ք Նրան, որ կաթոզից եմ ես Նրա սիրուց:

8. Հարսը երգուեցնում է հրեշտակներին (ինչպէս նաեւ՝ հրեշտակացած անձանց, որոնց մայրն է Վերին Երուսաղէմը: Այսպիսին

էին Յովհաննէսը, Պողոսը... (Հիպոդիտոս)), որ հանապազ տեսնում են երկնաւոր Հօր երեսը: Հարսը *խանդակաթ* (բնագրում՝ *կաթոզին*) է սիրով, քանզի նեղութիւնները համբերութիւն են առաջացնում, եւ դրանից Աստուծոյ սէրը տարփում է մեր սրտում [իմմտ. Հռոմ. Ե 3] (Որոգիներ):

«Արդ, *երգուեցնում է* նրանց *ագարակի զօրութեամբ*, որ Քրիստոսի մարմինն է, որ երկրից է, թէ՛ Նրա առջեւ մտնելիս, հրեշտակներ, որ շրջում էք մեզ հետ, եւ սուրբե՛ր, որ մեր հայրերն էք, պատմեցէ՛ք Նրան, որ իմ հոգին բորբոքում է Քրիստոսի սիրով (այս պատճառով դեւերից հարուածներ եմ ստանում եւ վիրաւորում փորձանքներով), որպէսզի ձեր միջնորդութեամբ փրկի ինձ նրանցից եւ իմ կաթոզին սէրը լցնի Իր գիտութեամբ» (Հիպոդիտոս):

Տէրն Աւետարանում պատուիրում է ամենեւին չերդուել, այլ՝ «Թող ձեր խօսքը լինի [այսպէս]. այո՛ն՝ այո՛, եւ ոչն՝ ո՛չ» [տե՛ս Մատթ. Ե 33—37]: Այս երգումը չի հակասում ւաւետարանական պատուիրանին, այլ հաստատում է այն. եւ գովութեան պատճառ է, ըստ մարգարէի՝ «Կզովուի ամէն ոք, որ երգուեց Նրանով» [տե՛ս Սաղմ. ԿԲ 12]:

Անդաստանը (բնագրում՝ *ագարակ*) օրինակն է այս աշխարհի՝ ինչպէս անուանեց եւ մեկնեց Տէրը [տե՛ս Մատթ. ԺԳ 38]: Ի՞նչ են նշանակում երդման մէջ արտայայտուած *անդաստանի զօրութիւնը* եւ *ուժգնութիւնը*... «Երկու բան է մարդուն ընտանեցնում Աստուծոյ հետ. մէկն անմոլորութիւնն է ճշմարիտ էի մտածութեան նկատմամբ, որպէսզի մոլորուած կարծիքով չայտնուեն այս աշխարհի հեթանոսական եւ հերձուածողական աղանդի մէջ, որը ճշմարտութեամբ «այոն» է (այծեամի սրատեսութիւն): Միւսը մաքուր խորհողով անձի բոլոր ախտաւոր կրքերը արտասահմանելն է, որպէսզի նոյն այոն չօտարանայ (եղջերուի չարահալածութիւն): Արդ, երկսեռ է այս բարիքների բնութիւնը, որոնցից մէկը ճշմարտապէս պահում է վերհայեցողութիւնը, իսկ միւսը հալածում է անձի ապականիչ խիտերը» (Նիւսացի):

Ըստ Նարեկացու՝ Քրիստոս է աշխարհի զօրութիւնը եւ ուժգնութիւնը, Որով հաստատուած է այն, Որով պահուում է անսասանութեան մէջ. Քրիստոսով է երգուեցնում Երուսաղէմի դուստրերին, որ եթէ գտնեն Նրան, պատմեն, թէ խանդակաթ է Նրա սիրով: Եւ երանի՛ այն անձին, որ նման սէր ունի, ինչպէս պարծենում է Պողոսը [Հռոմ. Ը 35—38]: Ահա սա է ճշմարիտ սէրը, որ մշտապէս գովութիւն ունի երկնքում եւ երկրի վրայ, եւ ոչ թէ այլանդակ սէրը՝ կա՛մ ունեցուածքի, կա՛մ իշխանութեան, կա՛մ գեղեցկութեան, որ այս կեանքում պարսաւանք է բերում, իսկ այն կեանքում՝ անվախճան տանջանքներ (Նարեկացի):

Երուսաղեմի դուստրերը եւ պարիսպների պահապանները հարցնում են Հարսից.

9. Ինչո՞ւ է առաւել քո Եղբորորդին միւս եղբորորդիներից, գեղեցիկդ կանանց մէջ, ինչո՞ւ է առաւել քո Եղբորորդին միւս եղբորորդիներից, որ այդպէս երգուեցնում ես մեզ:

9. Հրեշտակները հարցնում են այն, ինչ գիտեն, որպէսզի Հարսը սրտով հաւատայ որպէս արդարութիւն եւ բերանով խոստովանի փրկութիւնը [տե՛ս Հռոմ. Ժ 10] (Որոզինես):

Վերին Երուսաղեմի պահապանները հարցնում են Հարս—Վարդապետին մարմնացեալ Բանի փրկական տնօրէնութեան մասին... Երանք ցանկանում են Եկեղեցիով տեսնել Քրիստոսին, քանզի, ըստ առաքելական խօսքի, «Երա աներեւոյթներն արարածների միջոցով ճանաչուելով են տեսնում» [Հռոմ. Ա 2]:

Մանապէս էլ մենք՝ Վերին Երուսաղեմի մանուկներս, պէտք է սկսենք մարդեղութեան վարդապետութիւնից (պատահական չէ, որ Մատթոսի Աւետարանը սկսում է Տիրոջ ազգաբանութիւնից՝ ըստ մարմնի): Եւ այն պէտք է երեւելի մարդկային բնութիւնը հաւատքով ըմբռնենք, ապա մտքով ընկղմուենք անհասանելիի եւ անսահմանելիի մէջ (Երուսաղեմ):

Ըստ Երուսաղեմի հրեշտակներն անմարմին են եւ անտեսանելի են Փրկչի մարդեղութեան մասին մեզանից սովորեցին եւ սովորում են:

Հրեշտակները հարցնում են Փրկչի տնօրինական հրաշքի Մարմնին, թէ ինչով է Յիսուս Քրիստոս գանազանում մարգարէներից եւ արդարներից՝ Աբրահամից, Դաւթից (Արեւելից):

Հարսը նկարագրում է Եղբորորդուն, թէ ինչպիսի՞ն էր.

10. Իմ Եղբորորդին սպիտակ է եւ կարմիր, ընտրեալ է բիրատրների մէջ:

10. Հարսը պատմում է Քրիստոսի մարդեղութեան մասին, «որ մարնով եւ արեամբ եկաւ աշխարհ, որ բոլոր բիրատրների մէջ միայն [ինքը] ծնուեց կուսական սրբութիւնից, որի յղութիւնն անզուգական է, ծնունդը՝ անաղտ, երկունքը՝ առանց ցաւերի...»: *Սպիտակը* եւ *կարմիրը* մարմնի եւ արեան գոյներն են, իսկ *բիրատրների մէջ ընտրեալ* լինելն ակնարկում է անախտ եւ անապական ծնունդը, ինչպէս

Եւսեմի անդրանկութիւնը՝ մեռելներից յարութիւն առածների եւ Երա արարածի մէջ (Երուսաղեմ):

Երուսաղեմի հետեւում Եւսեմի Երուսաղեմի մեկնութիւնը, սակայն *Հիպոդոտոս*—Որոզինես—Արեւելիցի—Տաբեալացի մեկնութիւններում *կարմիրը* մարդեղութեան (մարմնի եւ արեան) գոյնն է, իսկ *սպիտակը*՝ Աստուածութեան, որոնք միաւորուած են Աստուածամարդու տնօրէնութեամբ:

11. Երա գլուխը կեփազեայ ոսկուց է, Երա վարսերը գանգուր են [եւ] սեւ, ինչպէս ագռաւ:

11. Ինչպէս *կեփազեայ ոսկին* առաւել մաքուր եւ պատուական է բոլոր ոսկիների մէջ, այնպէս էլ մեր Գլուխ Քրիստոս բոլոր երկնաւոր եւ երկրաւոր սուրբերից առաւել է (Երուսաղեմ):

Կեփազեայ ազնիւ *ոսկին* նշանակն է աստուածային անապական բնութեան (*Հիպոդոտոս*—Որոզինես):

Գլուխը նշանակն է [Քրիստոսի] անձառ եւ անհաս խորհրդի: Կեփազեայ ոսկին ազնիւ եւ մաքուր է, որովհետեւ բնականօրէն է ստացւում եւ ոչ թէ՛ ձուլմամբ: Քրիստոս խոյնալէս, սուրբ եւ անապական լինելով, բնութեամբ է եւ ոչ՝ ստացմամբ, ինչպէս հրեշտակները եւ մարդիկ: Քրիստոս բոլորիս հոգեւոր գլուխն է, իսկ ազգերի համար առաքեալների պէս Երա փոխանորդ գլուխ է իւրաքանչիւր ազգի կաթողիկոսը (Տաբեալացի):

Գանգուր եւ *սեւաթոյր վարսերը* ցոյց են տալիս [աստուածային] խորհուրդների անձառելիութիւնը եւ անհասութիւնը, ուր իմաստութեան եւ գիտութեան գանձեր կան ծածկուած (*Հիպոդոտոս*—Որոզինես):

Վարսը դէպի մեզ իջած Աստուծոյ նախախնամութեան գութն է, իսկ *սեւ ագռաւը*՝ ըստ գործերի արդար հատուցումը (Տաբեալացի): Սակայն Քրիստոս մազերի սեւութիւն չունի, այլ պատկերաւոր է այսպէս ասում կատարեալ գեղեցկութեան պատճառով, որովհետեւ սեւ վարսերը գեղեցկութիւն են երիտասարդի դէմքի համար. իսկ Երա մարդկանց բոլոր որդիներից աւելի գեղեցիկ էր արտաքինով (Երուսաղեմ—Տաբեալացի): Քրիստոսի մարմնի որակը եւ մազերը ոսկեգոյն են, ոչ թէ՛ սեւ կամ սպիտակ (անապականութիւն) (Տաբեալացի):

Արեւելիցի—Տաբեալացի մեկնութիւններում առկայ է սեւութեան պատմական շեշտադրում. *սեւը* ցոյց է տալիս մեղքով սեւացած եւ

անիծուած մեր բնութիւնը (հեթանոսական անցեալը), որ միացաւ Բան—Աստուծոյ հետ եւ արդարացաւ ըստ Նրա, որ անմեղ էր (Արեւելիցի—Տաթեւացի):

Քրիստոսի փրկագործութեամբ հեթանոսական սեւը վերափոխուում է քրիստոնէական *ոսկու*. այդ պատմական սեւութիւնը ցուցադրուում է տեսնողներին՝ զարմանալու եւ մտապահելու, որպէսզի միշտ խոնարհ լինեն, ինչպէս նաեւ՝ յորդորելու, որպէսզի չյուսահատուեն՝ նայելով իրենց սեւութեանը, այլ միշտ նայեն Աստուծոյ մարդասիրութեանը, որը եւ Հարսը ցոյց է տալիս հրեշտակներին եւ հիացնում (Արեւելիցի):

12. Նրա աչքերը նման են աղանձիկների՝ ջրերի լիութեան վրայ. կաթով լուացուած, նստած՝ ջրերի լիութեան վրայ:

12. Առաւել համակողմանի եւ ամբողջական է Տաթեւացու մեկնութիւնը:

Քրիստոսի փոխանորդ աչքերն են առաքեալները եւ մարգարէները, քանզի նրանք տեսան Աստծուն եւ լուսաւորեցին մեզ: Դարձեալ՝ Եկեղեցու մէջ այժմ աչք է եպիսկոպոսը, որ թարգմանուում է *տեսուչ*, եւ բարձր է աստիճանով ու լի՝ շնորհով: Եպիսկոպոսը պէտք է նմանուի *աղանձու*՝ չորս յատկութեամբ. պէտք է լինի՝ ա) լի՝ Սուրբ Հոգով, բ) անմեղ, գ) միամիտ, դ) անաչառ: Այսինքն՝ Սուրբ Հոգու իմաստութեամբ լցուած՝ պէտք է անմեղութեամբ նայի ժողովրդին, միամիտ լինի օրէնքում եւ սուրբ հայրերի կանոններում, անաչառ լինի դատաստանում:

Կաթը չորս յատկութիւն ունի. ա) պարզ է, բ) անմեղների կերակուր է, գ) պահում է իւրը, դ) չի արտացոլում պատկերը: Այս օրինակով եպիսկոպոսը պէտք է պարզ եւ յստակ վարք ունենայ եւ կերակրի Եկեղեցու մանկանց, աւանդապահ լինի կանոններում եւ սրբութիւնը չվատնի շների առաջ, նաեւ չստանայ կուրացուցիչ շիւղ եւ գերան, այսինքն՝ կեղծաւորութիւն եւ նախանձ: Պէտք է նստած լինի Հոգու իմաստների *ջրերի վրայ*, ինչպէս ջրի հոսանքում տնկուած, կանաչած, ծաղկած եւ պտղաբերած ծառը, եւ ոչ թէ՛ աշխարհական իմաստութեան եւ գրուածքների վրայ, որ խառնակութեան եւ կորստի են տանում, այլ՝ Եկեղեցու ազբիրների եւ Սուրբ Գրոց գիտութեան, որ բխում են Տիրոջ տանից, Սուրբ Հոգուց եւ հոսում դէպի յաւիտեական կեանք, Տիրոջը վիճակուածներին արբեցնում: Այսպիսին պէտք է լինի եպիսկոպոսը, որ Եկեղեցու աչքն է եւ ժողովրդի տեսուչը

(Տաթեւացի):

Կաթով լուացուածութեամբ ակնարկում է մանկական անբծութիւնը (Արեւելիցի):

Յոյց է տալիս «նախախնամութիւնը, որը Տիրոջ աչքն է Իրենից երկիրաձենների վրայ՝ ըստ Դաւթի [տե՛ս Սաղմ. ԼԲ 18]: *Նման են աղանձիկների*. քանզի փրկութիւնը... ետ չի դառնում անարժանների պատճառով, այլ արեգակը ծագում է չարերի եւ բարիների վրայ: *Ջրերի լիութիւն*. քանզի Աւագանով վերստին ծնուածներն են Նրա սեփական ժողովուրդը» (*Հիպոդիոտոս*):

Ընդհանուր առմամբ արտայայտում է Աստուծոյ նախախնամութիւնը, գթութիւնը եւ արդարակշիռ իրաւունքը (Որոգիսես—*Հիպոդիոտոս*):

Ջրերի վրայ. մասնաւոր մեկնութիւն ունի Լարեկացին. ինչպէս ջուրն է կերպարանում եւ արտացոլում արեգակը, այնպէս էլ մեղքի աղտից գտուածները եւ մաքրուածները՝ իրենց նայողներին:

13. Նրա ծնօտները խունկի տաշտերի պէս ջուրում են իւղագործների անուշահոտութիւնը, Նրա շուրթերը շուշաններ¹ են, որ առաա զմուս² են բխում:

13. *Տաշտը* գոգաձեւ աման է՝ ոչ շատ խորը եւ ոչ՝ ուղղակի-տարածուած այնքան, որ տափակ ու հարթ կարծուի: *Տաշտով* գովում է աննենգ վարդապետութիւնը. «Արդ, տաշտով արտայայտում է ճշմարտութեան տեսանելի պարզամտութիւնը՝ գերծ՝ նենգաւոր խորութիւնից, որի նիւթն է խունկը եւ գործը՝ բուրել իւղի եփեցական հոտը» (Լիւսացի): Այս միտքը պարզաբանում է Լարեկացին: Եկեղեցու վարդապետներն իրենց սրտում ժողովածը սփռում են մարդկանց առաջ՝ ոչ շատ խորութեամբ անիմանալիները ծածկելով եւ ոչ շատ յայտնութեամբ Աստուծոյ խորհուրդները դիրաւուր դարձնելով... (Լարեկացի): *Նրա ծնօտները խունկի տաշտերի պէս իւղագործների անուշահոտութիւն են բուրում*. Տէրը խօսում էր յաւիտեական կեանքի խօսքերով եւ բոլոր լսողներին Իր ետեւից տանում (Որոգիսես):

Ծնօտը խօսքի սպասաւոր է, մանրում եւ ծամում է կերակուրը,

1 Տե՛ս Բ 1:

2 Տե՛ս Գ 6:

դիրաշարժ է եւ մօրուք է բուսեցնում, որով խորհրդանշում է վարդապետներին եւ խօսքի սպասաւորներին, որոնք մանրում են Գրքի խօսքերը, վերստին յիշում եւ դիրաւ ուսուցանում եւ, ըստ խօսքերի, գանազան շնորհներ սփռում: *Ջուռուք* քառաշերտ խորհուրդ ունի. շնորհների խորհուրդ, անքակտելի սիրոյ խորհուրդ, անապական խօսքի խորհուրդ, մեռելութեան եւ թաղման խորհուրդ (*Տաթեւացի*):

Նրա շուրթերը շուշաններ են, որ բխում են առատ զմուռնով. արտայայտում է Քրիստոսի աշակերտութեան կարգը. «Ով չվերցնի իր խաչը եւ չգայ իմ ետեւից, արժանի չէ ինձ» [Մատթ. Ժ 38], եւ՝ «Ով կամենում է անձը փրկել, կկորցնի այն» [Մատթ. ԺԶ 25] (*Հիպոդիտոս*—Որոզինես):

Պայծառ եւ լուսատեսակ *շուշանը* մաքրութիւնը, առաքինութիւնն ու ճշմարտութիւնն է, իսկ *զմուռը* մարմնի եւ արեան գործերի մեռելութեամբ արտայայտում է իմանալի եւ աննիւթ կեանքը: *Ջուռուք* եւ *շուշանի* համադրութիւնը ցույց է տալիս նիւթական կեանքի արհամարհանքը՝ խառնուած շուշանի ողջախոհութեան հետ: *Ջուռուք* նաեւ վկայական մահուան (նահատակութիւն) նշանակն է (Լիւսացի):

Ինչպէս *ծնօտները*, տաշտ դարձած, Աստուծոյ խօսքը լսող հոգիներին մատուակում են անուշահամ եւ անապակ բաժակը, նոյնպէս էլ *շուշանացած շրթունքները* բխում են առատ զմուռը, քանզի խրատում են մեզ մեռել ըստ մարմնի եւ մեռցնել մարմնի անդամները ոչ թէ սակաւամեռութեամբ, այլ՝ ամբողջապէս, այսինքն՝ կատարեալ մեռելութեամբ մտքի խորհուրդները մեռցնել՝ չխորհելու երկրաւորը, այլ՝ երկնայինը, որովայնը մեռցնել կերակուրների սակաւապիտութեամբ, աչքերը մեռցնել՝ չախորժելու հայել պոռնկական տեսարանների, այլ՝ Քրիստոս—Փեսայի փափագելի երեսը եւ ցանկալի պատկերը, Ում հարսնացանք: Ըստ այսմ հասկանանք բոլոր զգայարանների եւ անդամների մասին, որոնց մեռելութեամբ կտանանք ճշմարիտ կենդանութիւն՝ սուրբերի շուշանացած շուրթերից խրատուելով: (Լարեկացի):

14. Նրա ձեռքերը ճախարակուած ոսկի են՝ Թարսիսի ակներով զարդարուած. Նրա որովայնը փղօսկրեայ տախտակ է՝ շափիւղեայ ակներով ընդելուզուած:

14. Եկեղեցու մէջ *ձեռքերը* հոգեւոր եւ մարմնաւոր իրերի վերակացուներն ու տնտեսներն են, որոնք պէտք է հեշտակամ եւ մշտապէս բաշխեն ըստ կարիքների եւ պէտքերի (Լիւսացի—Տաթեւացի):

Ոսկին նշանակն է անապականութեան, *ճախարակուածութիւնը՝* սրբութեան (Լիւսացի):

Քրիստոս մեկնում էր ձեռքը բժշկելու եւ առողջացնում պէս—պէս ախտերից (հաւանաբար՝ *ակներով զարդարուածութիւն*) (Որոզինես):

Ակնարկում է մարմնաւոր տնօրինութեան գործերի պէս—պէս մաքրութիւնը, քանզի ներգործուեց մարմնի կրքերով, սակայն ճախարակեց եւ նրանցից իւրաքանչիւրն անաղարտ պահեց վիշապի թոյնից. եւ՝ քաղցը, եւ՝ վաստակը, եւ՝ սերը, եւ՝ երկիւղը... Եւ ասաց, թէ՛ ձեզանից ո՞վ կարող է յանդիմանել [ինձ] մեղքի մէջ [Յովհ. Ը 46]: *Թարսիսի ակներն* աստուածային տեսակ—տեսակ բժշկութիւնների եւ սքանչելիքների ներգործութիւններն են, որոնք պէս—պէս վայելութեամբ փայլում են պատուական քարերի պէս (*Հիպոդիտոս*):

Լիւսացին ելնում է մարդաբանական—խորհրդական ենթադրութիւններից: Մեծն Եգեկիլիւն ասում է. «Թո՛ղ քո բերանն ուտի, եւ որովայնը լցուի» [Եզեկ. Գ 3]: *Որովայն* է անուանում իմացական եւ խորհրդական հոգին, ուր ամբարում է աստուածային ուսմունքը: «Նմանապէս էլ մեծն Երեմիան, սրտով վտանգուած լինելով այն տխրական իմաստներից, որովայն է անուանում. «Իմ որովայնը ցաւում է, եւ իմ սրտի ճաշակելիքները տազնապում են» [Երեմ. Դ 19]: Ինքը Տէրն Իրեն հաւատացողների մասին ասում է. «Նրա որովայնից կենդանի ջրի գետեր կհոսեն» [Յովհ. Է 38]:

«Արդ, այս բոլոր ասուածներով, *որովայն* անունով հասկանում ենք մաքուր սիրտը», որ աստուածային օրէնքի մաքուր, հարթ, անփուտ եւ փայլող (*փղօսկրեայ*) *տախտակ* է լինում՝ կենդանի Աստուծոյ Հոգով գրուած՝ ըստ առաքեալի [տե՛ս Բ Կորնթ. Գ 3]: Այսպիսին պէտք է լինի առաջնորդական հոգին, որպէսզի նրա մէջ աստուածային խօսքերի յիշատակները հաստատապէս եւ առանց խառնակութեան տպաւորուեն՝ բարենշան գրերով շաղկապուած եւ զեղեցկապէս յարմարուած որովայնի *տախտակին*: Իսկ երկնագոյն *շափիւղան* ուսուցանում է մեր սրտին վերինը խորհել եւ տեսնել. ուր ամբարում են գանձերը, այնտեղ էլ պէտք է ուղղել աչքերը (Լիւսացի):

Տաթեւացին ներկայացնում է այս խօսքի եկեղեցաբանական նիստը: *Որովայնը* չորս յատկութիւն ունի. ա) հաւաքում է կերակուրը եւ ըմպելիքը, բ) սփռում եւ բաշխում է դէպի ներս եւ դուրս, գ) խորհուրդների աման է, դ) ցաւերի տեղն է: Նմանապէս էլ՝ վարդապետները. ամէն տեղից հաւաքում են խօսքեր եւ գործեր, բաշխում Եկեղեցու մէջ եւ դրսիններին, նրանց որովայնից գետեր են բխում, ինչպէս Ոս-

կերտանը, Աստուածաբանը եւ այլոք: Իրենց մէջ կազմում են խորհուրդներ եւ մեկնութիւններ եւ ցաւում են՝ ուսուցանելով հետետողներին, ինչպէս Պօղոսը եւ Երեմիան. «Իմ որովայնը ցաւում է» [Երեմ. Դ 19]: Եւ նախ պետք է ուսանել, ապա ուսուցանել եւ գործով կատարել. եւ վարդապետի անձը պետք է այս երեքի միութիւնն ունենայ (Տաթեւացի):

Մարմնի ներգործութիւնները որովայնով են իրագործուում, որը նմանեցնում է *փղոսկրեայ տախտակի*: Քրիստոսի մարմնի ներգործութիւնը մեռած է աշխարհի համար (*տախտակ*) եւ մաքուր է անմաքութիւններից (*փղոսկրեայ*): Իսկ *շափիւղեայ քարն* իր պէս—պէս գոյների խառնուածքով խորհրդանշում է Քրիստոսի մարմնի ներգործութիւնները, որոնք անհասանելի են քննողներին. Տիրոջ մարմնի ներգործութիւններն անհաս մնացին դեւերի համար (*Հիպոդիտոս*—Որոգիւնէս):

15. Նրա սրունքները մարմարեայ սիւներ են՝ ոսկեայ խարիսխների վրայ հաստատուած: Նրա պատկերը նման է Լիբանանի ընտիր եղեւնափայտին:

15. Նրա ընթացքն այլ մարդկանց պէս չէր սասանում դիւային հողմերից, այլ մարմարեայ սիւների պէս հաստատուած էր երկնային անապականութեան մէջ (*Հիպոդիտոս*): Ըստ Նիւսացու՝ երկու ոտք—սիւները, որոնք վրայ հաստատուած է Եկեղեցին, ըստ տրուակական խօսքի, երկու մեծագոյն պատուիրաններն են՝ սէր՝ Աստուծոյ եւ սէր՝ ընկերոջ նկատմամբ [տե՛ս Մատթ. ԺԲ 36—39] (Նիւսացի):

Եկեղեցու *սրունքները* նրանք են, ովքեր բարձել են Եկեղեցու ողջ հոգը: Նրանք՝ ա) հաստատուած են հաւատքով եւ յոյսով, բ) գիտութեամբ եւ գործով, գ) առ Աստուած եւ մարդիկ սիրով, դ) խորհելով վերինը եւ Եկեղեցունը: Եւ քանի որ սրունքներ են, մշտաշարժ են, դիւրաւ խոնարհուում են եւ ծուկի գալիս, մշտապէս եւ յարածամ հոգում հոգու եւ մարմնի պէտքերը: *Մարմարեայ* են, որպէսզի կարծր եւ հաստատուն լինեն, մաքուր են եւ յստակ՝ վարքով, ճարտար՝ հոգով... Իսկ Քրիստոսի *սրունքները* հոգին եւ մարմինն են. եւ *մարմարեայ* են, քանզի անապական եւ կարծր են: *Ոսկեայ խարիսխը* Բանն—Աստուած է, որ Նրա մարդեղութեան հիմքն ու կայացումն է: Այսպիսով, Քրիստոսի մարմինը, գլխից մինչեւ սրունքները, անապական է, քանզի միացած է Բան—Աստուծոյ հետ: *Եղեւնափայտն* իր անփուտութեամբ, անուշահոտութեամբ, բարձրութեամբ եւ մշտասաղար-

թութեամբ խորհրդանշում է Քրիստոսի մարդեղութեան անապականութիւնը, Աստուածութեան անուշահոտութիւնը, անմահութիւնը եւ յաւիտենականութիւնը (Տաթեւացի):

Ինչպէս Լիբանանն է անշարժ, եւ մայրիներն՝ անփուտ, Նրա հոգին չմնաց դժոխքում, եւ մարմինն ապականութիւն չտեսաւ (Որոգիւնէս):

Ըստ Արեւելցու՝ անփուտ *եղեւնափայտը* խորհրդանշում է հաւատացեալների անմահութիւնը, ինչպէս Տէրն ասաց. «Ով հաւատում է Ինձ, մահ չի տեսի» [տե՛ս Յովհ. Ը 51] (Արեւելցի): Այդ հաւատքի մայրիները տնկւում են Աստուծոյ տան մէջ եւ ծաղկում Աստուծոյ գաւթում, որը Եկեղեցին է (Նիւսացի):

16. Նրա կոկորդը լի է քաղցրութեամբ եւ ամբողջովին ցանկալի: Այսպիսին է իմ Եղբորորդին, եւ այսպիսին է իմ Մերձաւորը, դուստրե՛ր Երուսաղէմի:

16. Բարի խօսքերը մեղրի *քաղցրութիւնն* են, իսկ խօսքը ձայնի արտայայտութիւնն է, որ ելնում է *կոկորդից*: Յոյց է տալիս խօսքի սպասաւորներին, որոնք խօսում էին Քրիստոսի անունով (առաքեալներ, մարգարէներ...): Նրանք իրենց կոկորդից աղբիւրացնում էին աստուածային մեղրը, որի վայելումը երբեք չի յազգեսնում, այլ է՛լ աւելի ընդունելութեան բաղձանք է առաջացնում. ահա թէ ինչու է ասում՝ *ամբողջովին ցանկալի* (Նիւսացի): (Այստեղ եզրափակւում է ԺԴ խօսքը:)

Ովքեր անմահ Փեսայի խօսքի սպասաւորներն են, նրանց խօսքերն աւելի քաղցր են *կոկորդում*, քան մեղրը՝ բերանում, քանզի անտարանում են Աստուծոյ արքայութիւնը, ուր չկան ցաւեր, տրտմութիւններ եւ հեծութիւններ: Եւ, անկարող լինելով ըստ արժանւոյն նկարագրել հանգամանքները, ասում է՝ *ամբողջովին ցանկալի*. «Երբ հոգին ամէն կողմից ամփոփում է ցանկութիւնները եւ դարձնում դէպի Նա, ապա ճանաչում է Նրան, թէ միայն Նա է օրհնեալ յաւիտեան: Դրա համար է ասում՝ *այսպիսին է իմ Եղբորորդին՝* գգուանքով եղբորորդի կոչելով, քանզի բոլոր բանականները ցնծում են Նրանով, եւ *մերձաւոր՝* քանզի հաւատքով մերձ ենք Նրան» (Արեւելցի)՝ ոչ թէ ըստ Աստուածութեան, որ անհաս է քննողներին, այլ՝ ըստ ծառայի կերպարանքի (Որոգիւնէս):

Հարսը, որքան կարող էր, Երուսաղէմի դուստրերին նկարա-

գրեց Քրիստոսի գեղեցկութիւնը, որ վեր է խօսքերից եւ օրինակե-
րից (Լարեկացի):

*Երուսաղէմի դուստրերը հարցնում են, թէ ուր գնաց
Հարսի Եղբորդին:*

**17. Ո՞ր գնաց քո Եղբորդին, գեղեցիկդ
կանանց մէջ, ո՞ր կողմը դիմեց քո Եղբորդ-
դին, մենք էլ քեզ հետ փնտրենք Նրան:**

17. Ըստ Որոզիսեսի՝ հրեշտակները կամենում են ուսանել
Մարմնացած Բանի տնօրինական նախախնամութեան մասին:

Հրեշտակների համար Անտեսանելին երեւաց մեր բնութեամբ:
Նրանք մեզանից սովորեցին եւ սովորում են Տիրոջ՝ երկնքից իջնելը
եւ մարդեղութիւնը, ինչպէս հաստատում է առաքեալը. «Որպէսզի Եկե-
ղեցու միջոցով այժմ յայտնուի իշխանութիւններին, որ երկնքում են»
[տե՛ս Եփես. Գ 10]: Որպէսզի, «Նրա փրկութիւնաբեր տնօրէնութեան
մասին, մեզանից լսելով, իմանան եւ անբաւ զարմացմամբ սքանչա-
կան [Աստուծոյ]՝ մեր նկատմամբ անչափ սիրով եւ անիմանալի խո-
նարհումով, մեզ հետ միաձայն օրհնեն եւ տօնակից լինեն» (Լարեկա-
ցի):

Հրեշտակները հարցնում են. «Ո՞ր կողմ գնաց», այսինքն՝ ար-
դեօք կատարուեցի՞ն մարգարութիւնները, արդեօք Լոյսը ծագե՞ց հե-
թանոսներին, արդեօք բովանդակուե՞ց Անսահմանափակը եւ Անկրե-
լին... (Արեւելցի):

Ձ

Հարսը պատասխան է տալիս եւ ասում.

**1. Իմ Եղբորդին իջաւ Իր պարտեզը՝ խուն-
կերի տաշտերի մէջ՝ բուրաստաններում հո-
վուելու եւ շուշաններ¹ հաւաքելու:**

1. *Պարտեզը* հաւատացեալներն են, որոնք հարսնացան Քրիս-

¹ Տե՛ս Ա 1:

տոսին: Քրիստոս ասում է Աւետարանում. «Ես եմ Որթը, իսկ դուք՝
ոստերը» [Յովհ. ԺԵ 5]: *Պարտեզը* բուրաստան է, ուր հովուում է Եղբոր-
դրդին, Ով Իր մասին ասում է. «Ես եմ քաջ Հովիւր» [Յովհ. Ժ 11]:
Եկա՛՝ հովուելու եւ ճարտարութեամբ արածեցնելու եւ յանձանձելու
ոչխարներին, թոյլ չտալու Գողին ապականել, այլ, առաքիւնութիւն եւ
արդարութիւն սնուցելով, մեզ ժողովելու շուշանների մէջ, այսինքն՝
Աստուծոյ խօսքին հաւատացողների եւ սրբութեան ծաղիկների մէջ,
որոնցով զուարճանում է Քրիստոս—Փեսան (Լարեկացի):

Պարտեզն, ըստ *Հիպոդիստոսի*, մարդկութիւնն է, իսկ *խունկերի
տաշտերը*՝ մեղքին անգետ մանուկները:

Քաջ Հովիւն իջաւ երկնքից եւ Իր անձը դրեց ոչխարների հա-
մար, երկնքի արքայութեան դալար վայրում հովուեց Եկեղեցին եւ հա-
ւաքեց աշխարհի մտնելութեան *շուշանները* (Որոզիսես):

Բանն—Աստուած իջաւ Իր տնկած եւ կուտութեամբ պատրաս-
տած *պարտեզը*՝ Մարիամ Աստուածածնի մէջ՝ խնկեմի տաշտի մէջ՝
արդարների արմատների եւ մարգարեների գգուանքի մէջ: Եղաւ գինե-
բեր որթ եւ, խաչով ճմլուելով, մեզ փրկութիւն պարգեւեց...

Շուշանները Եկեղեցու վարդապետների խօսքերն են, որ բու-
սեցին այս աշխարհի ծովի մէջ: Ինչպէս *Նուսուֆար* կոչուած ջրային
շուշանը ցաւերի բժշկութեան համար է, այնպէս էլ Նրանց խօսքերը
հաւաքուած պահում են Եկեղեցու գանձերի մէջ ի բժշկութիւն
պէս—պէս հոգեւոր ախտերի եւ հիւանդութիւնների (Նիւսացի—Արեւել-
ցի):

Տերը ժողովում է *շուշանները*, այսինքն՝ Իր մօտ է ժողովում
հեռացած ոչխարներին եւ Նրանցից կթում անուշահոտ արդարութեան
կաթը եւ հաւաքում բուրդը, որ ծածկում է մեղքերը եւ առաջնորդում
առաքիւնութեան (*Հիպոդիստոս*):

**2. Ես իմ Եղբորդունն եմ, եւ իմ Եղբորդ-
դին՝ ինը, որ հովուում է շուշանների¹ մէջ:**

2. Նկարագրում է աստուածանմանութիւնը. երբ *շուշանների*
պէս փայլում ենք արդարութեամբ եւ բուրում ճշմարիտ վարքի աղա-
քիւնութեան հոտը, այնժամ նմանում ենք Նրան (*Հիպոդիստոս*): Ինչպէս
եւ Ինքն ասաց. «Իմ մէջ եղէք, եւ Ես՝ ձեր մէջ» [տե՛ս Յովհ. ԺԵ 5],
իսկ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքերի հա-

¹ Տե՛ս Բ 1:

մար (Որոզինես):

Հարսն արտայայտում է եղբորորդու նկատմամբ տածած ջերմ սերը. Հարսը չի կամենում բաժանուել շուշանաբոյժ Հովուից, որ կախ եւ առաջ էր Մարմինն ու Արինն է տալիս որպէս կերակուր եւ ապա՝ Գրքի իմաստների քաղցրութիւնը, որոնք սուրբերի քիմքում առաւել քաղցր են, քան մեղրը՝ բերանում, իսկ թէ ինչ է լինելու այնտեղ, բոլոր մտքերից վեր է, որի մասին ասաց, թէ՛ «Վերստին կըմպեմ ձեզ հետ Հօր արքայութեան մէջ» [Մատթ. ԻԶ 29] (Լարեկացի):

Հարսը մարմինն է, եւ Փեսան՝ գլուխը: Շուշանների մէջ Հովուողը կանգնած է ճշմարտութեան խօսքի մէջ, ողջոյն է տալիս լսողներին, բնակում է արժանաւորների մէջ եւ, հանգիստ չգտնելով, վերադառնում է դէպի Իր բուրաստանը... (Լիւսացի—Արեւելցի):

Փեսան ասում է Հարսին.

3. Բարենշան ես, մերձատր Իմ, ինչպէս հաճութիւնը, գեղեցիկ՝ ինչպէս Երուսաղէմը՝ զարմանալի յօրինուած:

3. Փեսան աստուածային բերանով վկայում է Հարսի հաւատքի եւ գեղեցկութեան մասին, որ ստացաւ Աւագանով: Այդ գեղեցկութեան արթիւրն Աստուած է. Հարսը, հայելով ու ձգտելով առ Աստուած, աստուածանում է եւ ձեռք բերում երկնային գեղեցկութիւնը, որի մասին նա պատմում էր Երուսաղէմի դուտրերին: Ուստի Փեսան ասում է. «*Գեղեցիկ ես, մերձատր Իմ, ինչպէս անուշահոտութիւն»* (բնագրում՝ *հաճութիւն*): Հարսի անուշահոտ գեղեցկութեան պատճառը Քրիստոս—Փեսային մերձաւոր լինելն է: Հարսի գեղեցկութիւնը համեմատում է Երուսաղէմի հետ, որովհետեւ գեղեցիկ Փեսայի բնակարան եղաւ, ինչպէս երկինքը եւ Վերին Երուսաղէմը: *Ջարմանալիօրէն յօրինուած.* Փեսան արտայայտում է Իր հիացմունքը Հարսի փոփոխմամբ՝ մեղքերի սեւութիւնից դէպի այնպիսի սքանչելատեսիլ անթիժ գեղեցկութիւնը, որով հիացած են նաեւ հրեշտակները (Լարեկացի):

Հարսը հագել է Քրիստոս՝ ասելով՝ *Եղբորորդին իմն է:* Քրիստոս զգում է նրան եւ նրա գեղեցկութիւնը համեմատում շուշանների անուշահոտութեան հետ: Հարսը գեղեցիկ է Վերին Երուսաղէմի պէս: Ջարմանալի է Վերին Երուսաղէմը, որի պարիսպները պատուական ակներից են, եւ դռները՝ ամբողջովին մարգարիտներից (Լիւսացի—Արեւելցի):

4. Դարձրո՛ւ աչքերդ Ինձանից, քանզի դրանք խռովեցրին Ինձ, քո վարսերը նման են այծերի երամակների, որոնք երեւացին Գաղա-ադից:

4. *Աչքերը* մարգարէները եւ առաքելներն են, որոնց զարդարել է գեղեցկարար Սուրբ Հոգին՝ Աստուծոյ խորքերի ընկուածմամբ, ովքեր աղօթքով, գեղեցիկ դիտմամբ եւ արտասուքներով տեսան մարդկանց փրկութիւնը՝ Հարս—Եկեղեցու՝ եւ Փեսայ Քրիստոսի հարսանեկան խրախճանքը (Որոզինես—Լիւսացի—Արեւելցի):

Հարսի *աչքերը* ստացել են յստակատեսութիւն եւ ստուգատեսութիւն, որոնցով ճանաչում է Փեսայի տնօրինական գեղեցկութիւնը՝ Աստուծոյ անձառ միաւորումը տկար ու հողեղէն բնութեան հետ, որ անիմանալի էր հրեշտակների համար. Հարսը տեսնում է այն, ինչ վեր է մարդկային բնութեան տեսութեան սահմաններից: Այդ աչքերը խռովեցնում են Փեսային: Փեսան դիմում է Հարսին՝ Իրենից դարձնելու աչքերը, այսինքն՝ չքննելու՝ անհաս բնութեան գեղեցկութիւնը, որպէսզի աւելին տեսնելու եւ քննելու պատճառով չլլանան եւ չկուրանան մտքի աչքերը, ինչպէս Պողոսի աչքերը, երբ նայեց սաստիկ լոյսին: Քանզի ինչպէս արեգակին պլշած նայողի աչքի լոյսը նուազում է, այնպէս էլ Աստուծոյ գիտութեան խորքերին չափից աւելի յառելը շլացնում է մտքի աչքերը: Քանզի թէ Աստուած ինչպիսին է տեսութեամբ եւ սքանչելագործութեամբ, անհասանելի է հրեշտակների քիմքում, էլ ուր մնաց թէ՛ մարդկանց: Փեսան մի կողմից սքանչանում է Հարսի սրահայեացութեամբ, միւս կողմից՝ երկիւղում, որ, առաւել նայելով, չկուրանայ: Սովսեւը, մի փոքր տեսնելով, դարձրեց երեսը եւ չէր համարձակում նայել [տե՛ս Ելք Գ 6]: Նմանապէս էլ Եղիան տեսնելիս ծածկեց երեսը [տե՛ս Գ Թագ. ԺԾ 13] (Լարեկացի):

Վարսերը, հպուելով Փեսայի վարսերին... Որ մեզ համար սեւացաւ եւ վերցրեց մեր ընկած բնութիւնը, Լա, որ անմասն էր մեղքից, մեր մեղքերի համար մարդացաւ, որպէսզի նրանով արդարանանք... Եւ արդարացանք Աւագանի մկրտութեամբ եւ լուացմամբ սպիտակացանք՝ հարսնանալով Քրիստոսին: Քրիստոսին հարսնացած հաւատացեալների բազմութիւնը նմանեցնում է *այծերի*, որ երամ—երամ իջնում են *Գաղաադից* (Որոզինես):

5. Քո ատամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք դուրս են գալիս առազանից. բոլորն էլ երկածին են, եւ անձնուձի չկայ նրանց մէջ:

5. Կենաց խօսքը մանրող *ատամները* նմանեցնում է *խուզած ոչխարների*, որ ելնում են հոգեւոր ջրի *առազանից*:

երկածին լինելն, ըստ Ռոբոզիստի, հոգու զարդարուածութիւնն է տեսական եւ գործնական առաքիւնութիւնների համադրութեամբ, որով հոգին պտղաբերում է հոգեւոր կենսքի արգասաւորութեամբ եւ գերծ մնում հելլենական անպտուղ խօսքերից (Ռոբոզիստ):

Բոլորը՝ հաւատացեալների լուացուած երամակները, *երկածին են...* Աստուած վերացրել է նրանց ամլութիւնը՝ ըստ Եսայու կանխասացութեան [ԾԴ 1], նրանք կարող են բազմածնուել լինել (բազմարդիւն լինել) ճշմարտութեան վարքում (Նարեկացի):

խուզած ոչխարների երամակները նրանք են, որ մերկանում են հին մարդուց եւ հազնում Աստծով հաստատուած նոր մարդը: Նրանք ելել են Առազանից եւ ատամներով ուտում են ճշմարիտ Կենաց Հացը: *Բոլորը երկածին են*, նրանց մասին է, ովքեր ներքին եւ արտաքին մարդուն զուգահեռ են տանում Քրիստոսի կոչման յետեւից (*Հիպոդոտոս*):

6. Քո շուրթերը նման են կարմիր թելի, եւ ջր խօսքերը գեղեցիկ են: Քո այտերը նման են նռան կեղեւի՝ ջր լուծութիւնից դուրս:

6. Հարսի *շուրթերը* կենդանութիւն են աւետարանում, կենդանութիւն է բխում այդ շուրթերից, այդ շուրթերը ներկուած են Քրիստոսի Արեամբ... Նոյնն են խօսում, ինչ *Նա՛* ուսուցանեց խօսել, աղօթում են թշնամիների համար, օրհնում հալածիչներին...

Եւ ինչպէս նուռն է կեղեւի կարմրութեան տակ ամբարել անուշակերութիւնը՝ ախտացեալներին առողջութիւն պարգեւելով եւ փափագողներին լուծութեամբ ներկայանալով, այնպէս էլ Աստուծոյ ընտրեալները դոյզն—ինչ բարի գործեր երեւելիով են ցոյց տալիս, իսկ ներսում՝ սրտի եւ մտքի մէջ, առաքիւնութեան եւ աստուածասիրութեան անչափ ամբարումները լուծութեամբ ծանուցում (Ռոբոզիստ—Նարեկացի):

Հարսի շուրթերը նմանեցնում են *կարմիր թելի*, քանզի ներ-

կուած են Քրիստոսի անապականութեամբ: Հարսի շուրթերն անընդհատ օրհնում են Աստծուն, աղօթում Նրան. ահա թէ ինչու են *գեղեցիկ Հարսի խօսքերը*: Տէրն ասում է. «Նուա՛ ջր երեսը, որպէսզի չերեսաւս պահեցողի պէս» [Մատթ. Ջ 17]: Ինչպէս նուռն է պահում պտուղը կեղեւի տակ, այնպէս էլ պտք է ծածկել առաքիւնութիւնները, որոնք Աստուած տեսնում է եւ յայտնապէս հատուցում: Այս է ցոյց տալիս *Քո լուծութիւնից դուրս* արտայայտութիւնը, քանզի յայտնի է Աստծուն եւ լուծ է մարդկանց համար (*Հիպոդոտոս*):

7. Վաթսուն թագուհի են եւ ութսուն հարձ. եւ օրիորդներ են, որոնց թիւ չկայ:

7. *Վաթսուն թագուհին*, *ութսուն հարձը* եւ *անթիւ օրիորդները* նրանք են, ովքեր Ութերորդ Օրը պիտի փառաւորուեն Քրիստոսի հետ եւ Նրա հանգստեան մէջ մտնեն (Նարեկացի):

Վաթսուն թիւը խորհրդակիր թիւ է եւ բազմաշերտ խորհուրդներ ունի.

ա) *Վաթսուն* կանայք ընտրուեցին հրեաներից (մինչեւ առաքեալները)՝ Դերովրա, Եղիսաբեթ, Յուդիթ, Աննա... (Ռոբոզիստ):

բ) Տէ՛ս Գ 7:

գ) Շատերը կուսութեամբ սրբեցին իրենց անձերը եւ կուսութեան մէջ վախճանուեցին յանուն Քրիստոսի: Նրանց զուխը եղա՛ւ սուրբ Կոյս Մարիամը, քանզի ծնեց Քրիստոսին եւ *վաթսունամեայ* վերափոխուեց (Ռոբոզիստ—Արեւելիցի—Տաթեւացի):

դ) *Վեցերորդ* դարում (Քրիստոսի առաջին գալուստ) հարսնացածները, որոնք անդրանիկներ են եւ թագուհիներ (Ռոբոզիստ—Արեւելիցի):

ե) *60 թագուհիներն*, ըստ Հիպոդոտոսի, Ադամից սերուած Լա-հապետներն են մինչ Քրիստոս, որոնցից 42—ին յիշում է Մատթէոս աւետարանիչը, իսկ 18—ին՝ Ղուկաս աւետարանիչը (*Հիպոդոտոս*—Արեւելիցի):

զ) Առաքեալներն ու աստուածաբանները (Նարեկացի):

Ութսուն հարձեր.

ա) 12 եւ 72 առաքեալները (*Հիպոդոտոս*):

բ) *Ութսուն հարձերը* հեթանոսներից կանչուածներն են, ինչպէս Ռախաբը [տե՛ս Յեսու Բ, Ջ], Թամարը [տե՛ս Ծննդ. ԼԸ], Հռուբը

[տե՛ս Հոութ], եւ Աստծուն հաճոյացածները (Հիպոդիտոս—Որոզհնէս):

զ) Մարտիրոսներն են (Որոզհնէս—Նարեկացի):

դ) *Ութերորդ* դարում (Քրիստոսի Երկրորդ գալուստ) հարսնացածները, ովքեր անթագ են եւ պսակի են արժանանալու *ութերորդ* դարում (Որոզհնէս—Արեւելցի):

Անթիւ օրհորդները քահանաներն են, որոնք ոչ թէ արիւնից եւ մարմնի կամքից ծնուեցին, այլ՝ Աստծուց [տե՛ս Յովհ. Ա 13] (*Հիպոդիտոս*): Ինչպէս նաեւ ճգնաւորներն են եւ յանուն Աստուծոյ աղքատացած ապաշխարողները (Նարեկացի), ովքեր պսակի են արժանանալու *ութերորդ* դարում (Որոզհնէս—Արեւելցի):

8. Միակն է Իմ աղանին, Իմ կատարեալը, իր մօր միակն է, ծնողի ընտրեալը:

Դուստրերը տեսան նրան եւ երանի տուեցին նրան, թագուհիները եւ հարձերը գովեցին նրան:

8. Թեպէտ եւ զանազանում են անուններով եւ փառքով (*թագուհիներ, հարձեր եւ օրհորդներ*), սակայն ըստ խոստովանութեան մի են՝ մայր Եկեղեցու *աղանիներ*: Նրանք բոլորն *աղանիներ* են՝ Սուրբ Հոգուց ծնուած եւ Քրիստոսի Մարմնով դրոշմուած եւ Արեամբ սնուցուած եւ մի մարմին են, մի Եկեղեցի: Նա, որ ի սկզբանէ հայրաքար արարեց մարդուն, ըստ Իր խոստման՝ մարդացու եւ որպէս բոլորի մայր Իր ձագերի պէս հաւաքեց ազգերին Իր թեւերի տակ Վերին Երուսաղէմում (կամ Եկեղեցու մէջ) (Հիպոդիտոս—Որոզհնէս—Նարեկացի):

Դուստրերը եւ թագուհիները տեսան Հարսին եւ երանի տուեցին նրան:

9. Ո՞վ է սա, որ երեսում է ինչպէս առաւօտ, գեղեցիկ՝ ինչպէս լուսինը, ընտիր՝ ինչպէս արեգակը՝ զարմանալի յօրինուած:

9. Բոլոր թագազարդ կանայք, որ զարդարուած էին բոլոր ազգերի օրէնքներով, պերճանքներով եւ այլ կարգերով, հեթանոսական եւ հրեական զոհերով հանդերձ, տեսնում են Եկեղեցին՝ հոգեւոր կարգով վայելչացած, եւ երանի տալիս նրան, որ մարմնաւոր անզարդու-

թիւնը վերափոխեց հոգեւոր զարդի. թագուհիները եւ հարձերը գովեցին եւ հետեւեցին նրան, դուստրերը եւ թագուհիները տեսան Հարսին եւ երանի տուեցին (Որոզհնէս):

Նարեկացին դուստրերի եւ թագուհիների մէջ տեսնում է հրեշտակներին եւ անդրանիկների երկնային Եկեղեցին: Բանն—Աստուած մարդացել է եւ աստուածացրել մարդկային բնութիւնը... Եւ հրեշտակներն ահով եւ դողով փառաբանում են մեր աստուածացած բնութիւնը: Քանզի Աստծուն ոչ ոք երբէք չտեսաւ, եւ հրեշտակների համար անտեսանելին եւ անշօշափելին մարդկային բնութեամբ դառնում է տեսանելի եւ շօշափելի: Հրեշտակները՝ Աստուծոյ ծառաները եւ սպասաւորները, երանի են տալիս աստուածային փրկագործութեամբ որդեգրուած մարդկային բնութեանը (Նարեկացի):

Դուստրերը եւ թագուհիները, տեսնելով Հարսի աստուածացման վերընթացը, ասում են. «Ո՞վ է սա, որ տրտմութեան հովտից դէպի վեր է ելնում նեղ ձանապարհով՝ զօրութիւնից՝ դէպի զօրութիւն, փառքից դէպի փառք բարձրանալով»: Եւ չեն կարողանում ըմբռնել: Նախ՝ իբրեւ *առաւօտ է* գիշերուայ տիրակալութիւնից յետոյ, այսինքն՝ մեղքերի կռապաշտութիւնից եւ սեւ անգիտութիւնից, մոլորութիւնից յետոյ: *Գեղեցիկ է, ինչպէս լուսինը. լուսինը* գիշերուայ լուսատուն է եւ արեւից է առնում լոյսը եւ խորհրդանշում է ստուերակերպ օրէնքը, որ Աստծուց տրուած է մեղքը հերքելու համար եւ վերափոխուեց Նորի: Իսկ *արեգակը* ցերեկուայ լուսատուն է, պայծառ լոյս ունի եւ միշտ ջերմ է, որ խորհրդանշում է Քրիստոսի Աւետարանի ծագումը, ինչպէս նաեւ՝ արդարութեան Արեգակով՝ Քրիստոսով արարչագործուած Նոր արարչութիւնը: Այսպիսով, լուսնից արեգակ անցումը խորհրդանշում է առաջին արարչութիւնից երկրորդ արարչութիւն, օրէնքից Աւետարան, հին մարդուց Նոր մարդ, ինչպէս նաեւ այս աշխարհից հանդերձեալ աշխարհ անցումը՝ ըստ Տիրոջ խօսքի. «Այնժամ արդարները կձագեն արեգակի պէս արքայութեան մէջ» [Մատթ. ԺԳ 43] (Արեւելցի—Տաթեւացի):

Փեսան ասում է Հարսից.

10. Իջայ ընկուզեհիների պարտեզ՝ նայելու վտակների արդիւնքին, թէ ծաղկե՞լ է որթը, թէ ծաղկե՞լ է նոճին¹, թէ ծաղկե՞լ են նռնեհիները:

10. Փեսան իջնում է մեր բնութեան պարտեզ՝ հաւաքելու եկեղեցու պտուղները, ուր բխում են Սուրբ Հոգու գարնան շնորհի վտակները. (Հիպոդիտոս—Որոզհնես)՝ տեսնելու, թէ ծաղկե՞լ է որթը, այսինքն՝ Մարիամը ծնե՞լ է Զրիստոս ծաղիկը, թէ ծաղկե՞լ է նռնենին, այսինքն՝ մարդիկ ծաղկե՞լ են հաւատքով (Հիպոդիտոս):

Ընկոյզը մեր մարդկային բնութիւնն է. կեղեւը մարմինն է, միջուկը՝ հոգին (Նարեկացի): Ըստ Տաթեւացու՝ ընկոյզի կեղեւը դառը մարմնական ճգնութիւնն է, իսկ միջուկը՝ ծածուկ իմաստութիւնը: Ընկոյզի ձեթը խորհրդանշում է օծեալ Զրիստոսին (Հիպոդիտոս—Տաթեւացի):

Նոճին խորհրդանշում է անապականութիւնը: Մարդկային բնութիւնն ըմպելով Սուրբ Հոգու առուներից, նոճու պէս վեր է խոյանում, եւ մարմինը հոգու պէս անապական է դառնում, որթի պէս՝ գինեքեր ու ձմլում Երկնաւոր Փեսայի բաժակի մէջ (Նարեկացի): Իսկ նուրը քահանայական խորհուրդն է կրում (Արեւելցի):

Նուրը ձմլում է արքաների բաժակի մէջ (Նարեկացի), այն բժշկութեան կերակուր է (Տաթեւացի):

Հարսն ասում է Փեսային.

11. Այնտեղ կտամ Քեզ իմ ստիւնքները, իմ հոգին չիմացաւ. համարեց ինձ ինչպէս Ամի-նադարի կառքը:

11. Ստիւնքները մարգարէներն են, որ ծածկուած էին. այժմ Հարսը պատրաստ է կերակրել Աստուծոյ խօսքի աշակերտներին, քանզի սուրբ են այն կաթի շնորհիւ, որ ստանում են Հարսից, եւ պտղաբերում Տիրոջ այգում: Չիմացաւ իմ անձը. ինչպէս միւսն էր գալուստը, այնպէս էլ այժմ խոստովանում է Բան—Աստուծոյ անհասութիւնը, որ տեսնուեց մարմնի մէջ (Որոզհնես):

¹ Տես Ա 13:

Պարտեզի, այսինքն՝ եկեղեցու մէջ, մարգարէների մեկնութիւնից եւ երկու Կտակարաններից սնուելով, պտղաբերում է Տիրոջը հարիրաւոր, վաթսուաւոր, երեսուաւոր [տե՛ս Մատթ. ԺԳ 1—23] եւ աւելի մեծ արդիւնքով, որի մասին խոնարհաբար ասում է՝ չգիտի իմ անձը, այսինքն՝ «կարօտ եմ Քո բնութեանը» կամ «չգիտի միւսն էր Քո գալուստը» (Արեւելցի):

Նարեկացին այստեղ ուշագրաւ մեկնութիւն ունի. Հարսը, լսելով Փեսայի իջնելու եւ ծաղիկների խնդրի մասին, պատասխանում է, թէ՛ ոչ միայն ազնուական ծաղիկներով ծաղկեցի, այլեւ կերակրեցի Քեզ՝ ըստ Քո Աստուածութեան ախորժութեան՝ սուրբ սրտի (հոգեւոր ստիւնքներ) մաքրութեամբ: Չիմացաւ իմ անձը. այսինքն՝ ինչպէս կաթն անտեսանելի ստիւնքներից մանուկների անբժութեան կերակուր է լինում, այնպէս էլ սիրով ջերմացած անբժ խորհուրդները մարդու անգիտութեամբ կերակուր են լինում Աստծուն, որ մարդկանցից խնդրում է ոչ այլ ինչ, քան՝ սուրբ սիրտ, որով տեսնում են Աստծուն, ուր բնակուում է Ինքը, ինչպէս ասում է մարգարէն, թէ՛ «Ես ո՛ր պիտի բնակուեմ, եթէ ոչ՝ հեգերի, սրտով խոնարհների եւ նրանց մէջ, ովքեր դողում են Իմ խօսքերից» [Եսայի ԿԶ 2]: Եւ որպէս կառք դառնում են փառքով բարձրացած Փեսայի հակաստարանը (Նարեկացի):

Ամիւնադարը ձեռքի սքանչելի եւ յաջողակ արուեստով իսրայելացի էր: Նա փարաւոնի կառքերի օրինակով մի կառք է յօրինում ի հաճութիւն Սողոմոնի... Այս կառքը յոյժ առաւել էր Փարաւոնի կառքից: Եւ Սողոմոնը յոյժ ուրախացաւ, եւ ողջ Իսրայէլը հիացաւ: Հարսն իրեն նմանեցնում է նրան եւ ասում, թէ Փեսան ճարտարապետեց ինձ եւ դրեց ի գարմանս երկնաւորաց եւ երկրաւորաց, ի՞նչ պիտի տամ նրան: Ինքն իրեն համար դարձրեց ինձ կառք եւ փառքի տաճար (Որոզհնես—Արեւելցի):

Դուստրերը եւ թագուհիներն ասում են Հարսին.

12. Վերադարձի՛ր, վերադարձի՛ր, ո՛վ ողողումացիդ, վերադարձի՛ր, վերադարձի՛ր, եւ մենք տեսնենք քեզ:

12. Ըստ Հիպոդիտոսի՝ Նաստնի որդի Ամիւնադարը բնակուում էր վկայութեան խորանի արեւելեան կողմում [տե՛ս Թիւք Բ 3], որի մասին ասում է Դաւիթը. «Արեւի դիմաց խփեց Իր խորանը» [Սաղ. ԺԸ 6]. եւ քրիստոնեաներս դեպի արեւելք ենք երկրպագում:

Դուստրերը եւ թագուհիները կոչ են անում վերադառնալ եւ

մալ նախնական փառքի եւ կոչման մէջ եւ բոլոր դժուարութիւններով ու փորձութիւններով հանդերձ անբաժան մալ Քրիստոսի սիրուց (Որոգիւնս):

Ըստ Նարեկացու՝ այս խօսքն արտայայտում է հրեշտակների սքանչացումը մարդկային բնութեան՝ չարից դէպի բարի. ուստի նրանք տեսութիւն են խնդրում:

Արեւելցին այս կոչը կապում է Եղիայի՝ սոմնացի (քնագրում՝ ողորդմացի) կնոջ մտեալ մակնալը յարութիւն տալու հետ: Սոմնացի կինն ընդունեց Եղիային, Եղիան յարութիւն տուեց նրա մակնալը: Սա խորհրդաբար զուգահեռում է Եկեղեցու հետ... Եկեղեցին ընդունեց Քրիստոսին, եւ Նա անդրանկի եղաւ: Ինքը՝ Տէրը, մեռաւ եւ յարութիւն առաւ եւ բազում որդիներ պարգեւեց: Ըստ Արեւելցու՝ չորս անգամ կանչելը խորհրդանշում է Աւետարանի քարոզութիւնն աշխարհի չորս կողմում:

Ըստ Տաթեւացու՝ հրեշտակները քաջալերում են վերադառնալ եւ յաղթել թշնամուն: Նրանք կոչ են անում հաւատքով եւ մարմնով, մտքով ու խօսքով դառնալ ամէն տեսակ չար բաներից եւ հաստատուն մալ Քրիստոսի տնօրինութեան խրախճանքի մէջ:

Ուշագրաւ է նաեւ Որոգիւնստի հետեւեալ բացատրութիւնը: Ողորմ քաղաքի բնակիչները բարձրարուեստ երգիչներ, քնարահարներ, սրնգահարներ եւ գեղեցկաձեւ շարժումներով կաքաւողներ են: Այս անունով են կանչում Հարս—Եկեղեցին... Նրանք ցանկանում են, որ Հարսը կաքաւի առաքիւնութեամբ եւ երգի փեսայացեալ Տիրոջ տնօրինութեան երգերը, որպէսզի իրենք տեսնեն եւ սովորեն:

Է

Փեսան այսպէս է ասում դուտրերին եւ թագուհիներին.

1. Ի՞նչ էք տեսնում այդ ողորդմացու վրայ, որ դէպի մեզ է գալիս բանակների զօրագնդերի պէս: Բանգի գեղեցկացան քո ոտքերը կօշիկներով, դուստր Ամինադաբի: Զո ազդրերի ձեւը նման է ճարտար վարպետի ընդելուզած ուլունքների:

1. Ըստ Հիպոդիտոսի՝ նկարագրում է Վերջին Օրը Եկեղեցու բանակների (սուրբերի գնդերի) առաջխաղացումը երկնաւոր Ատեանի

ասպարեզով (Հիպոդիտոս):

Հարսի երեւալուն պէս տեղի է ունենում արդարների գնդերի առաջխաղացում, որոնց մասին ուրախացած եւ զարմացած հարցնում է Փեսան, եւ Ինքը բնակում Իր անունով հաւաքուածների մէջ: Փեսան այլաբանօրէն հարցնում է, թէ արդեօք տեսնո՞ւմ են Իրեն արդարների մէջ (քանզի Քրիստոս հայելացուած է Իր Արեամբ փրկագործուած մարդկային բնութեան մէջ) (Որոգիւնս): Նարեկացին *բանակների զօրագնդեր* արտայայտութեան մեկնութիւնը տեղափոխում է բարոյա—ներանձնական հարթութիւն. Հարսը՝ ճոխացած է աննկարագրելի գեղեցկութեամբ, այսինքն՝ բարի գործերով, որը սակայն պիտի յայտնի Փեսան (Նարեկացի):

Հարսի ոտքերը գեղեցկացել են կօշիկներով, այսինքն՝ ոչ իւրովի, այլ՝ Տիրոջ զօրութեամբ, որ իշխանութիւն է տուել՝ ամրացած կօշիկներով ոտնակոխ անելու օձերին եւ կարիճներին (Հիպոդիտոս—Որոգիւնս):

Այդ կօշիկները Նարեկացին անուանում է արդարութեան կօշիկներ... Այդ կօշիկներն ունեցողը գերծ է խայթող օձի թոյնից, նաեւ լուացուած է մեղքերից, ինչպէս առաքեալների ոտքերը, որ Փրկչի կողմից ջրով եւ Հոգով իշխանութիւն ստացան ոտնակոխ անել օձերին, կարիճներին եւ թշնամու բոլոր զօրութիւնները: Ահա թէ ինչու առաւելացան գեղեցկութեամբ, քանզի իրենց ոտքերին հագան ւաւետարանական խաղաղութեան պատրաստութիւնը (Նարեկացի):

Ըստ Արեւելցու՝ կօշիկները խորհրդանշում են մարմնի մեղեւութիւնը: Ով իր ոտքերին է հագել մեղեւութեան կօշիկները, նրա զարշապարները չարի փորձութիւնները ոտնակոխ անելու զօրութիւն ունեն: (Արեւելցի):

Դուստր Ամինադաբի կոչելով՝ ընդգծում է Հարսի ծագումնաբանական Նիստը. սերուել է պիղծ նախնիներից եւ հարսնացել Քրիստոսին (Նարեկացի): Ծարտար վարպետը Սուրբ Հոգին է, որ ուլունքների պէս ընդելուզել է ազդրերը եւ դիւրութեամբ խոնարհեցնում է ծնկները (որոնք իրենց վրայ են կրում ազդրերը)՝ ի խոստովանութիւն Ամենասուրբ Երրորդութեան եւ Բանի փրկագործ մարմնաւորման (Արեւելցի):

Փեսան, Հարսի գեղեցկութիւնը նկարագրելիս, կտրուկ անցում է կատարում դէպի ոտքերի գեղեցկութիւնը: Ի՞նչն է պատճառը, որ մի տեղ գլխից է սկսում գովել, իսկ այստեղ՝ ոտքերից:

Գովեստը գլխից սկսելը ցոյց է տալիս այն, որ սրբութիւնը գլխից ստացանք հաւատքով եւ Աւագանով: Իսկ ոտքերից սկսելն այն

է, որ մեզանից ենք ստանում գործերի սրբութիւն առաքինութեամբ եւ ապաշխարութեամբ: *Կօշիկը* երկու իմաստ ունի. նախ Նշանակում է ախտերի նկատմամբ մեռելութիւն հազնել, ինչպէս ասաց Մովսէսին. «Հանի՛ր թո կօշիկները» [Ելք 9 5]: Երկրորդ՝ Նշանակում է մարմնի մեռելութիւն, որ ամրացում է [աստուածահաճոյ] վարքով (Տաթեւացի):

2. Զո պորտը ճախարակուած սափոր է՝ անպակաս՝ անուշ գինուց: Զո որովայնը նման է շուշանով՝ ծածկած ցորենի դէզի:

2. Ըստ Նարեկացու՝ *պորտը* Սուրբ Հոգու շնորհների ընդունարան—կիզակտն է. ինչպէս *ճախարակուած սափորը* ընդունարանն է անուշ գինու, այնպէս էլ մաքրուած եւ յստակուած *պորտը*՝ Սուրբ Հոգու շնորհների (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը կապակցուած է *պորտի* նախնական նշանակութեան հետ. երեխան մօր փորի մէջ պորտով է ստանում շունչ եւ կերակուր: Եկեղեցու մէջ էլ երեխաները հոգեւոր շունչ, կերակուր եւ ըմպելիք են ստանում՝ ըստ իրենց անկատար չափի, սակայն աննուագ են կատարեալ ուսման գինուց: Կաթը փոխարինում է իմաստութեան սափորի գինով (Արեւելցի):

Որովայնը Եկեղեցու Աւագանն է, որտեղից ծնւում են նրա անթիւ որդիները, ինչպէս *ցորենը*: Նրանք մեռնում են այս աշխարհի համար՝ *շուշանի* պէս գունատուելով, քանզի տնկակից են լինում Քրիստոսի մահուանը (Որոգիներ):

Նարեկացին որովայնը դիտում է որպէս Սուրբ Հոգու շնորհների ընդունման մարդաբանական ոլորտ: Մարդկային տկար բնութիւնը, ընդունելով Հոգու շնորհներն իր որովայնում, *ցորենի դէզի* պէս կուտակում է, աղում վարդապետութեան ատամներով եւ հոգեւոր հաց դարձնում քաղցածների եւ կարօտեալների համար: Այն պատուած է հրեշտակների տեսութիւնը զմայլող *շուշանների* հրաշագունութեամբ (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը զուգահեռում է Որոգիների մեկնութեանը. Եկեղեցու Աւագանը նա անուանում է *իմացական*, այսինքն՝ հոգեւոր *որովայն*: Մեռած եւ ծնուած *ցորենից* ծնւում է կենդանի Հացը, որով բուրում է մկրտուած մարդու սիրտը. այն անջրպետուած է

1 Տե՛ս Բ 1:

մաքուր առաքինութեան *շուշանով* (Արեւելցի):

Հիպոդոտոսը հաց—խօսք զուգահեռ է անցկացնում («Ոչ միայն հացով, այլեւ՝ ամենայն խօսքով, որ ելնում է Աստուծոյ բերանից» [Մատթ. 7 3]). Եկեղեցին իր ներսում ամբարել է Հին եւ Նոր Կտակարանները:

3. Զո երկու ստինքները նման են այծեամի երկու երկուորեակ ուլերի:

3. Որոգիները երկշերտ մեկնութիւն է առաջադրում. ա) *ստինքները* Հին եւ Նոր Կտակարաններն են, որոնցով Եկեղեցին կերակուր է մանուկներին, բ) տեսական եւ գործնական առաքինութիւններն են: Նարեկացին մեկնում է այս խօսքի մարդաբանական նիստը. մարդն ունի հոգի եւ միտք, որոնք յարակայում են սրտի մօտ, ուր ստինքներն են: Միտքը եւ հոգին՝ այդ հոգեւոր—իմացական ստինքները, *այծեամների* պէս արթուն, լուսաւոր եւ սրահայեաց են, աստուածային հեռաւորը մերձաւորի պէս տեսնելով՝ անմոլար ցոյց են տալիս ճանապարհն անձերին եւ նրանց հետ զնացողներին, անորոգայթ պահում որսողից, կերակրում մեղքերից մանկացածներին, ինչպէս ստինքները՝ մանուկներին (Նարեկացի):

4. Զո պարանոցը նման է փղոսկրեայ աշտարակի: Զո աչքերը նման են Եսեբոնի ծովակից՝ բազում դուստրերի դարպասների մօտ: Զո ջունգերը նման են Լիբանանի աշտարակից, որ նայում է դէպի Դամասկոս:

4. Հոգիների *պարանոց*—առաջնորդները, որ իրենց ուսերին են կրում զլիսաւոր օրէնքը, հաստատուն են հաւատքի մէջ եւ անմարտնչելի, յղկուած են աշխարհի նկատմամբ մեռելութեամբ, ճախարակուած՝ առաքինութեամբ եւ սպիտակացած՝ ախտերից (Որոգիներ): Այդ պարանոցն Աւագանի մէջ ամրացում է Սուրբ Հոգով, որ ի զօրու լինի կրելու Քրիստոսին (Արեւելցի):

Աչքերի տեսողական զօրութեամբ ակնարկում է հոգու իմանալի հայեցողութիւնը, որով միշտ ձգտում է հայել հրեշտակների պարերի երկնային դռներին եւ փափագում նրանց կայանները (*Հիպոդոտոս*):

Նախապէս զովերգեց *աչքերը* որպէս *աղանի*՝ ակնարկելով Աւագանի մաքրութիւնը: Իսկ այժմ նմանեցնում է *ծովակի*՝ ակնարկե-

լով գործերի մաքրությունը: *Եսեբոնը* քահանաների քաղաք էր, որը փրկուելու ապաստարան էր ակամայ սպանություն գործողների համար: Այն մշտապես նայում էր դեպի թուխ յոնքեռով զարդարուած կամարակերպ ծովակը, որն ասես կոյսի աչքեր լինի: Եկեղեցու իմացական—հոգեւոր *աչքերը* նրան է նմանեցնում տասը եղանակով. ա) Ինչպես ծովն է ընդարձակուած հողմով, այնպես էլ Եկեղեցու աչքերը՝ Սուրբ Հոգով, բ) ծովը չի հոսում գետերի ընթացքով, նմանապես Եկեղեցին չի խոտորում աջ եւ ձախ, այլ միշտ մնում է նոյնի մէջ, գ) ծովակը նայում է երկինքին, Եկեղեցու աչքերը՝ երկնքի բնակավայրերին, դ) ծովակը չունի ծածկոյթ, նոյնպես՝ «Իմ աչքերն ամէն ժամ ուղղուած են Տիրոջը» [Սաղմ. ԻԴ 15], ե) Եսեբոնի աչքերն ուղղուած են դեպի Լա, ինչպես երկնայինների խնամքը՝ Եկեղեցուն, զ) ծովակը արեւով է գեղեցկանում եւ փայլում, Եկեղեցին գեղեցկացաւ իմանալի Արեգակ—Քրիստոսով, մանաւանդ՝ երբ սուրբերը որպէս արեգակ ծագեն երկնքի արքայութեան մէջ՝ ըստ սուրբ Լարեկացու, է) ըստ մեծն Վարդանի՝ ինչպէս աչքն է նախ տեսնում ճանապարհը, այնպէս էլ Եսեբոնը նախ տեսնում է ծովակը, եւ քահանան՝ օրէնքը: Այս ամէնը խորհրդանշում է Եկեղեցին, քանզի նախատես է կեանքի ճանապարհի, ը) ծովակը խորհրդանշում է իմաստների հաւաք, թ) քաղաքն ունի քաղաքական ընդարձակութիւն, ժ) ապրեցնում եւ փրկում է իրեն դիմաձներին եւ կուռքերից, եւ մեղքերից, որ ապականում են անձերը (Տաթեւացի):

Բազում դուստրեր ասելով՝ նկատի ունի Վերին Երուսաղէմի դուստրերին, որոնք անհամար են (Արեւելցի):

Ըն ունկեղը... Ովքեր ուսուցանողներից ստանում են Քրիստոսի անուշահոտութիւնը, ամրանում են Նրանով եւ հակառակ են Դամակոսի աշխարհական ցանկութիւններին (Որոգինես):

Լարեկացու մեկնութիւնը զգալիօրէն տարբերում է Որոգինեսի կարծիքից, սակայն խորապէս լիացնում է այն: Փեսան այլաբանօրէն ասում է. «Ինչպէս Լիբանանի աշտարակը վայելուչ տեսք ունի Դամակոս նայող կողմից, այնպէս էլ քո ունկեղը վայելուչ հայցմամբ փափագում են հոտոտել մաքուր իւրի անուշահոտութիւնը վերին Դամակոսից, այսինքն՝ երկնքի Քաղաքից... Լարեկացին յիշատակում է նաեւ Պօղոսի դարձը Դամակոսի ճանապարհին եւ նրա բժշկումը Դամակոսում:

Պօղոս առաքեալը հոտոտում է այդ երկնային բուրմունքը եւ այդ հոտը տանում եւ բաշխում հեթանոսներին, որը հոտոտելով՝ նրանք զմայլուեցին երկնային անուշահոտութեամբ... (Լարեկացի):

Առաւել ամբողջական ու խորունկ է Արեւելցու մեկնութիւնը. Լիբանանի՝ դեպի Դամակոս նայող աշտարակը, որ շինուել է Սողոմոնի կողմից, եռաշերտ պարսպով պատուած, անառիկ եւ անվանելի ամբողջութիւն ունեցող մի շինութիւն է, որին նմանեցնում է Հարսի ունկեղը: Ունկեղը հոգեւոր հոտերի զգայարանն է, որոնցով անմահ Փեսան հոտոտում է Եկեղեցու առաքինութեան պատարագի, աղօթական պաշտամունքի եւ ժուժկալութեան ճգնութիւնների ժամանակ՝ աշտարակ լինելով, եւ Սուրբ Հոգու շնչով արգելում ամէն տեսակ ժահահոտութիւն, քանզի *Լիբանան* թարգմանում է *կնդրուկի լեռ*, որ երկնքի երկինքն է՝ հրեշտակների կայան, ուր ամբողջովին խուսկեր են եւ խնկենիների լեռների մշտաբոյր պատարագի ողջակէզներ: Իսկ *Դամակոս* նշանակում է քուրձի բերան¹, որ նուրբ ճանապարհի եւ խստամբեր կեանքի վարդապետութիւնն է (որ նայում է առաքինութեան աշտարակին): Այդ վարդապետութիւնն իր կենդանարար շնչով տալիս է անմահ կեանքի անուշահոտ յոյսը նեղ ճանապարհի վաստակած ուղեւորներին (Արեւելցի):

5. Գլուխդ քեզ վրայ նման է Կարմելուսին, եւ քո գլխի հիւսերն ասես ծիրանի լիներն՝ թագակիր թագաւորի պէս ասպարեզներում:

5. Հաւատքի շինութիւնը նմանեցնում է վէմի վրայ հաստատուած անմատչելի գլուխ—լեռան, որը չեն կարող յաղթահարել դժոխքի դուները (Որոգինես):

Քրիստոս է Հարս—Եկեղեցու գլուխը, Նրա շնորհների վտակներից են ոռոգում Հարսի զգայարանները... Այդ գլուխը նմանեցնում է *Կարմելուսին*, որը հրեաներին բաժանում էր հեթանոսներից, քանզի Տերը նոյնպէս անուանում է երկու որմերի անկեան գլուխ [տե՛ս Սաղմ. ՃԺԷ 22], որովհետեւ Քրիստոսի մէջ չկայ հրեայի եւ հեթանոսի խտրականութիւն [Հռոմ. Ժ 12]: Լեռան անուրը նաեւ ստուգաբանում է որպէս գիտութիւն, այսինքն՝ իմաստութիւն (խորհրդանշում է Քրիստոս—Աստուծոյ զօրութիւնը, իմաստութիւնը եւ գիտութիւնը). նաեւ թարգմանում է որպէս թլփատութիւն, քանզի Քրիստոսով թլփատուեցինք անձեռագործ թլփատութեամբ՝ Քրիստոսի թլփատութեամբ մերկացնելով մարմնի անդամները [մեղքի իշխանութիւնից] (Արեւելցի):

Ըստ Լարեկացու՝ թագաւորական *ծիրանին* խորհրդանշան է

1 Այս բացատրութիւնը ոչ մի տեղ չգտանք:

Փետայի երկնաւոր փառքի, իսկ թագով պսակում է մարմնի ամենապատուական մասը՝ զլուխը: Թագն Աստուծոյ անճառ զօրութեան եւ լուսաւորութեան պսակն է, որով զարդարում է զլուխը (իբրեւ այդպիսի պսակով պսակուածներ Լարեկացին յիշատակում է ս. Քառասուն մանկանց եւ ս. Դեռնդեանց): Եւ երանի՛ նրանց, ովքեր արժանանում են անթառամ պսակին եւ հարսնանում Քրիստոսին, քանզի թագակից են լինում Լրան Իր անհատնում թագաւորութեան մէջ (Լարեկացի):

Հարսը թագաւորական ծիրանի է հագել եւ թագակցում է Փետային, նմանապէս պսակուած է խաչով նահատակութեան հանդէսի ասպարէզներում: Ինքը Տէրն ասաց. «Ով չվերցնի իր խաչը եւ չգայ իմ ասպարէզը, չի կարող աշակերտել Ինձ» [տե՛ս Դուկ. ԺԴ 27] (Արեւելիցի):

Սակայն խաչը երկու իմաստ ունի. խորհրդանշում է՝ ա) իմանալի չարարանքները. իմանալի կերպով խաչում է նա, որ մեռցնում է ախտերը (ճգնաւորական մահ), բ) զգալի խաչը, որով հեղում է արիւնը: Ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոս նախ Իր մէջ կրեց չարարանքները, ապա զգալի կերպով խաչուեց: Նմանապէս էլ սուրբերը նախ իրենց մէջ են կրում չարարանքները (պահքով եւ ճգնութեամբ), ապա պսակում խաչով, քանզի խաչաձեւ հաստատուած սուրբ պսակում է սուրբերին (Տաթեւացի):

6. Որքա՞ն գեղեցկացար եւ որքա՞ն քաղցրացար, ո՞վ սեր, քո փափկութեան մէջ:

6. Արդարեւ գեղեցկացաւ Եկեղեցին Քրիստոսի պէս—պէս շնորհներով եւ քաղցրացաւ ու փափկացաւ Լրա սիրով՝ զերծ մնալով ծառայական երկիրից (Որոգինես): *Սէր, քո փափկութեան մէջ.* այսինքն՝ բոլոր վայելչութիւնների լրումը ծայրագոյն սերն է, որով Աստուծուն մերձաւորուած հոգին փափկանում է Լրա տեսութեամբ եւ գիտութեամբ (*Հիպոդիտոս*):

Մի առ մի թուելով Հարսի անդամների գեղեցկութիւնը՝ Փետան գովում է Լրա ամբողջական գեղեցկութիւնը: Այսպիսին է ստուգապէս գեղեցկութիւնն այն մարդու, որ իր բոլոր զգայարանները ծառայեցնում է Աստուծուն եւ աստուածացնում նրանց՝ մերձենալով Աստուծուն, հաղորդուելով աստուածային գործերին: Լա արժանանում է Փետայ Քրիստոսից նման խօսքեր լսելուն, թէ՛ գեղեցկացար եւ հաճելի եղար Ինձ: Այսպիսին օտարացած է աշխարհի եւ աշխարհիկ գործերի համար, փափկացել է առաքինութեան վարքով եւ սիրուել Փետայից, որ ասաց. «*Սէր, քո փափկութեան մէջ*» (Լարեկացի):

Արեւելցին Հարս—Եկեղեցու գեղեցկութիւնը համեմատում է մարմնաւոր հարսի գեղեցկութեան հետ. ինչպէս հարսը երեսի գեղեցկութեան պաճուճանքներով եւ զարդերով հաճելի է լինում Փետային, եւ փափկութեան մէջ սեր է յորդում, այնպէս էլ Եկեղեցին, կուսական եւ մարտիրոսական գեղեցկութեամբ զարդարուած եւ Սուրբ Հոգու շնորհների վտակներով սրբուած, հաճելի եւ սիրելի եղաւ անմահ Փետայ Յիսուս Քրիստոսին (Արեւելցի):

7. Զո հասակը նման է արմաւենու, եւ ստիւնքներդ՝ ողկոյզների:

7. Տաթեւացին, ամբողջացնելով Որոգինեսի եւ Արեւելցու մեկնութիւնները, տալիս է առաւել համակողմանի մեկնութիւն. «*Արմաւենին* չորս յատկութիւն ունի. ա) հասակով բարձր չի թոււմ, Եկեղեցին էլ արհամարհուած է թոււմ օտարներին, բ) ծաղկում է անուշահոտ ծաղիկներով, որ կեանքի յոյսն է, գ) քաղցր պտուղներ է տալիս, որ հատուցի արդիւնքն է, դ) [Եկեղեցին] էլ լայնացած սաղարթով ծածկում է (ցոյց չի տալիս) առաքինութիւնը, այլեւ մեղքերը՝ թողութեամբ: Լաեւ, սրան զուգահեռ, եւս չորս յատկութիւն ունի. ա) բարձր է հասակով, ինչպէս Եկեղեցին է բարձրացած յոյսով, բ) բարձրադիր պտուղներ է տալիս, ինչպէս մեր առաքինութիւնները՝ երկնքում, գ) ուշ է պտղաբերում, որ խորհրդանշում է հանդերձեալը, դ) երկարակեաց է մշտնջենաւոր կեանքի խորհրդով:

Արմաւենին իր բարձրութեամբ եւ պտուղների քաղցրութեամբ խորհրդանշում է հրեշտակներին, որոնք բարձունքի բնակիչներ են եւ քաղցրաբարբառ Արարչի կամքը կատարելու մէջ (Հիպոդիտոս):

Եկեղեցու *ստիւնքները*՝ ա) Հին եւ Լոր Կտակարաններն են, բ) առաքեալների եւ վարդապետների խօսքերը, գ) Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, դ) սրտից արտաբխող սերն առ Աստուած եւ առ մարդիկ: Այդ ստիւնքները նմանեցնում են *ողկոյզի*՝ [նախ՝ Քրիստոսի եւ ապա՝ մեր կեանքի, մահուան եւ յարութեան] օրինակով. այս կեանքում ողկոյզ է, մահուամբ ճմլուելով հաւաքում է, յարութիւնից յետոյ պարզուելով դառնում գինի (Տաթեւացի):

Որոգինեսը ստիւնքների մէջ տեսնում է Սուրբ Հոգու իմաստութեան աղբիւրը: Արեւելցու մեկնութիւնն առանձնանում է նկարագրական գեղեցկութեամբ. արդարներն արմաւենիների պէս ծաղկում են Տիրոջ տան մէջ՝ Սուրբ Հոգու իմաստութեան կաթով լցուած ստիւնքները տալով անմեղ մանկանց, ինչպէս խաղողահիւթով լցուած ողկոյզ՝ մինչեւ Հօր սեղանը կազմուի, եւ Տէրը մատուակի (Արեւելցի):

8. Ասացի, թե՛ ելնեմ արմաւենից, բռնեմ նրա բարձրութիւններից. եւ քո ստիճանները թող խաղողի ողկոյզի պէս լինեն, քո ջուճգերի հոտը՝ խնձորի պէս, եւ քո կոկորդը՝ ազնի գինու պէս:

8. Սրանով Աստուած արտայայտում է իր անբաւ սերը սուրբերի եւ արդարների նկատմամբ. Լրա համար սուրբերի մէջ բնակուելն առաւել ցանկալի է, քան քերովբեական աթոռին նստելը: Լա Եսայի մարգարէի բերանով ասում է. «Ես ո՞ւր եմ բնակում, եթէ ոչ՝ հեգերի, խոնարհների եւ այնպիսիների մէջ, որ դողում են Իմ խօսքերից» [տե՛ս Եսայի 40 2]:

Արեւելցին երկշերտ մեկնութիւն է առաջադրում. ա) Փեսան կամենում է ելնել իմանալի *արմաւենու* հրեշտակային բարձունքը եւ լցնել—վերականգնել ընկած հրեշտակների տեղը, բ) Քրիստոս անտարանեց, որ Նախ պէտք է բարձրանայ Մարդու Որդին եւ ապա բոլորին ռարձրացնի իր մօտ... Նախ Տէրը պիտի խաչ բարձրանար... Եւ այժմ [Լրա մարմնի] անդամները բռնում են խաչի բարձրութիւնից եւ զգալի արմաւենու պտուղից քաղոք պտուղներ քաղում՝ չարչարակցուելով Քրիստոսին, որպէսզի հաղորդ լինեն փառքին... (Հիպոդոտոս—Արեւելցի):

Այսպիսով, Փեսան պատմում է իր խաչելութեան մասին. սակայն ինչո՞ւ խաչ բարձրացաւ Քրիստոս. ա) որովհետեւ թագաւորի կառքը եւ զահը բարձր է, եւ Քրիստոս թագաւորեց խաչի վրայ, բ) որպէսզի հեռուից տեսնեն ու հաւատան, ինչպէս «պղնձի վրայ բարձրացած օձը» [Թուոց ԻԱ 9], [Յով. Գ 14], գ) ինքն իրենով մեզ երկինք է բարձրացնում, որը ցոյց է տալիս Յակոբի սանդուղքը՝ ըստ խօսքի, թե՛ «Երբ բարձրացայ, բոլորիդ կտանեմ» [տե՛ս Յովի. ԺԲ 32] (Տաթեւացի):

Ստինքները նմանեցում են *ողկոյզի*... Փեսան *բռնուել է բարձրութիւններից* եւ *խաղողի ողկոյզի* պէս առատացրել եւ հիւթեղացրել Հարսի ստինքները, որպէսզի նոյնով կերակրի ուրիշներին (Որոզիւնէս): Հոգեւոր շնորհների այդ *ստինք—ողկոյզը* զուարթացնում է տեսողներին, ուրախացնում լսողներին եւ բերկրանքով լցնում (Լարեկացի): Եթէ Հարսը Նախապէս կաթով էր բուծում, ապա այժմ՝ խաղողի ողկոյզով, որ մշակում է Հայրը (*Հիպոդոտոս*):

Խնձորի բոյրը հոգեւոր անուշահոտութիւնն է. Քրիստոս որսում է հոգին, եւ հոգու կոկորդն արբենում է Լրա գիտութեամբ առա-

ւել, քան մարմինը՝ գինով: (Որոզիւնէս):

Լարեկացին *խնձորի* բուրմունքը մեկնում է մարդաբանական անդրադարձով. խնձորի բուրմունքը սուրբ վարքի անուշահոտութիւնն է, որ երկնաւոր Փեսան հոտոտում է ստուերակերպ զոհերից եւ նուերներից առաւել, որ անուանում էին Տիրոջ անուշահոտութիւն: *Գինին* ուրախացնում է արքողներին, այնպէս էլ սուրբերի եւ անարատների գրգը եւ նրանց *կոկորդի* խօսքերն ուրախացնում են երկնաւոր Փեսային հրեշտակների սրբասացութիւնների երգերից առաւել (Լարեկացի):

Հարսը դուստրերի եւ թագուհիների առաջ ասում է.

9. Գնում եմ իմ Եղբօրորդու հետ ուղիղ ճանապարհով, բաւականանում իմ շուրթերով եւ առամներով:

9. Հարսը հրաժարուել է այս կենցաղի նախնութիւնից եւ գնում է Լրա հետ հաւատքի եւ գործերի ուղղութեան մէջ: Հարսը մտաւորական քննութեամբ ծամում է հոգեւոր գիտութիւնը. «Քանզի ոչ միայն հացով կապրի մարդ, այլեւ՝ ամենայն խօսքով, որ ելնում է Տիրոջ բերանից» [Մատթ. Դ 4]... (Որոզիւնէս): Փեսան ուղեկցում է Հարսին առ Հայր: Հարսը խոստովանում է, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ եւ կեանքի առիթ դարձաւ իր համար, քանզի խօսքն ասում է. «Մերձ է քո բերանին եւ սրտին» [տե՛ս Բ Օրին. Լ 14] եւ՝ «Սրտով հաւատում եմք յարդարութիւն եւ բերանով խոստովանում ի փրկութիւն» [Հռոմ. Ժ 10]... (Արեւելցի): Հարսը ձեռք է բերել աստուածանմանութեան սքանչելի գեղեցկութիւնը, որովհետեւ հրաժարուել է աշխարհական մեղսատր խաբուելից՝ շնորհիւ Բան—Աստուծոյ մարմնաւորման... Բանը մարդացաւ, վերցրեց մարդկային բնութեան ամբողջականութիւնը, դատապարտեց մեղքը մարմնի մէջ եւ ցոյց տուեց երկնքի արքայութեան ուղիղ ճանապարհը. դա մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկագործ Աւետարանի ճանապարհն է: Մարմնացեալ Բանի անտարանական տնօրէնութիւնների ողջ շղթան շաղկապուած է խոնարհութեան, հեգութեան, քաղցրութեան, անոխակալութեան, կարեկցանքի հանգոյցներով... Ահա այս ճանապարհով ճանապարհակցում է Հարսը Փեսային: Սակայն որտեղի՞ց Հարսին այդպիսի զօրութիւն, որ ուղեկից է դարձել անմատոյց Աստուածութեանը. Քրիստոսի Մարմնի եւ Արեան ահաւոր խորհրդի՞ց, որը զօրութիւն է տալիս մեզ, կարող դարձնում շուրթերով ըմպելու եւ առամներով մանրելու Այն, Որին դուստրերը եւ թագուհիները, այսինքն՝ հրեշտակները, ի զօրու չեն

նայելու (Նարեկացի):

10. Ես իմ Եղբորդուցն եմ, եւ դէպի ինձ է դառնալու Նա:

10. Արտայայտում է ս. Հաղորդութեամբ իրագործուող խորհրդական միութիւնը Փեսայի հետ՝ ըստ տէրուական վկայութեան. «Ով ուտում է իմ Մարմինը, նա իմ մէջ կրնակուի, եւ ես՝ նրա» [Յովհ. Ա 55, 57] եւ՝ «Ինչպէս Դո՛ւ, Հա՛յր, իմ մէջ ես, եւ ես՝ Բո մէջ, որպէսզի նրանք էլ Մեր մէջ լինեն» [Յովհ. ԺԷ 21]: *Դէպի ինձ է դառնալու...* Այս խօսքում վախճանաբանական միութեան ակնարկ կայ, երբ գալու է Փեսան եւ Իր փառքի մէջ դասելու եւ մեծարելու Հարսին (Նարեկացի):

Արեւելցին երկրորդում է բազմիցս նշուած Մարմին—գլուխ միութիւնը:

11. Եկ, Եղբորդդի՛ իմ, ելնենք ազարակները, գիշերենք գիւղերում եւ պարտէզներում:

12. Կանուխ ելնենք այգիները. տեսնենք, թէ ծաղկե՞լ է որթը, ծաղկե՞լ է նոճին,¹ ծաղկե՞լ է նոնենին: Այնտեղ կտամ Քեզ իմ ստինքները:

11—12. Հարսը հրաւիրում է Փեսային հաւատացեալների հաւաքի մէջ (Եկեղեցի), որոնք ծաղկեցին *ազարակ*—անդաստաններում՝ հանգստանալու հեգերի, խոնարհների եւ Նրա խօսքերից դողացողների *գիւղերում*՝ Եգիպտոսից կանուխ ելնելու դէպի փրկուած եւ պէս—պէս առաքինութիւններով ծաղկած արդարների այգին (Որոգիւնես):

Ըստ Նարեկացու՝ Հարսը հրաւիրում է Փեսային երկնքից երկիր՝ տեսնելու, թէ մարգարէների սերմանածը ծաղկե՞լ է, որը պտղաբերեց Նրա գալստեամբ (Առաջին Գալուստ): Համբարձուից յետոյ էլ Տէրը շրջեց առաքեալների, վարդապետների եւ մարտիրոսների հետ՝ քարոզելու եւ տեսնելու հաւատքի խօսքերի ծաղիկը եւ պտուղը: Այս է վկայում տէրուական խօսքը. «Չեզ հետ եմ բոլոր օրերին մինչեւ աշ-

խարհի վախճանը» [Մատթ. ԻԸ 20] (Նարեկացի):

Անդաստան (քնազրում՝ *ազարակ*) է անուանում երկնային գաւառը, իսկ *այգիները* եւ *նոնենիներն* արդարներն են, որոնք երփնեքանգ գոյներով եւ տեսակ—տեսակ համերով փայլում են [երկնքի] արքայութիւնում (*Հիպոդիտոս*):

Ծաղիկը հաւատքի խորհրդանիշն է. նախ՝ որովհետեւ դեղ է եւ երկրորդ՝ որովհետեւ գործերի պտուղների սկիզբն է: *Ծաղիկը* նաեւ խորհրդանշում է յոյսը. նախ՝ անուշահոտութեամբ եւ յոյսով գմայլում են հոգիները, եւ երկրորդ՝ որովհետեւ կարապետն է պտղի, որ յաւիտենական արդիւնք է տալիս: Հարաջ Փեսայի հետ ուզում է հաւաստիանալ, թէ ծաղկե՞լ են սուրբերի հոգիները, որովհետեւ յոյսով են ծաղկում եւ մխիթարում: Եւ յոյսը երկու տեսակ է լինում. մէկը՝ մարմնի մէջ՝ փոփոխական եւ կարճեօք, միւսը հոգիների յոյսն է, որով ստուգութեամբ եւ առանց փոփոխման զուարճանում են (Տաթեւացի):

Այնտեղ կտամ Քեզ իմ ստինքները. յայտնում է սուրբ սիրտը եւ ուղիղ հոգին (*Հիպոդիտոս*):

Ըստ Արեւելցու՝ *ծաղկած նոնենիները* խարազնազգեստ եւ թթուակենցաղ¹ կրօնաւորներն են:

Այնտեղ կտամ Քեզ իմ ստինքները...

Հարսն ակնարկում է այն կերակրի մասին (հոգեւոր կերակուր), որ Քրիստոս ուներ պահպանած, եւ աշակերտները չգիտէին: Իսկ այժմ Հարսը պատրաստ է տալ Նրան ստինքները՝ օրհնութեան եւ աղօթքի: Նրա՛ն, Ով ախորժելով այն կամենում է աւելի, քան՝ Աստծուն մատուցուող զոհերը, եւ այն անուանում օրհնութեան պատարագ (Որոգիւնես):

Ըստ Արեւելցու՝ Հարսը մարգարէների եւ օրէնքի կաթով սնուցող *ստինքները* կամենում է տալ Քրիստոսի տնօրէնութեան երկրպագութեան եւ փառաբանութեան (Արեւելցի):

¹ Տես Ա. 13:

¹ թթուակենցաղ— խստակեաց

13. Մանրագորներն¹ արձակեցին իրենց հոտը. մեր դռների մօտ ամեն տեսակ մրգաբեր ծառեր են՝ նորը հնի հետ, որը տուեց ինձ մայրս, այն պահեցի Քեզ համար, Եղբորդդի՛ իմ:

13. Մանրագորները տուեցին իրենց հոտը. նկարագրում է արդարութամբ սպիտակացած արդարներիս արքայութեան մէջ եւ նրանց վկայութեան անուշահոտ կատարումը (*Հիպոդիսոս*):

Որոգիսեսն այսպէս է մեկնում մանրագորի խորհուրդը. «Կատարեալների մօտ փոքրիկ առաքինութիւններն էլ բուրում են աղօթքի անուշահոտութամբ»:

Ըստ Արեւելցու՝ *Մանրագորը* խորհրդանշում է Հարսի ողջախուրթիւնը դաշտային խոնարի բնութեան մէջ: Այդ հոտից բերկրում է Փեսան եւ դէպի մեզ խոնարիւում, սակայն չի կերակրում, քանզի մեր պէտքը չունի (Արեւելցի):

Մեր դռների մօտ ամեն տեսակ պողաբեր ծառեր են՝ նորը հնի հետ...

Բանի տնօրէնութեան ժամանակ Աւետարանի քարոզութիւնը միաւորուած է օրէնքի հետ: «Հանում է,— ասում է,— տանուտերն իր հին ու նոր զանձերից» [Մատթ. ԺԳ 52]:

Որը տուեց ինձ մայրս...

Կա՛մ այն, ինչ ստացաւ դրախտի մէջ, կա՛մ այն, ինչ գուշակեցին օրէնքը եւ մարգարէները Հին եւ Նոր Կտակարաններում...

Այն պահեցի թեզ համար, քանզի դու ես օրէնքի լրումը՝ որպէս արդարութիւն բոլոր հաւատացեալների համար (Որոգիսես):

Արեւելցու մեկնութիւնը յուզական տարր ունի. Տիրոջ տնօրէնութեան դռների մօտ կանգնած են մարգարէները: Նրանց խօսքերը բախում են Աստուծոյ գթութեան դռները՝ խոնարհուելու դէպի երկիր

1 մանրագոր— (եբր. *māḡā'im*) *Mandragora officinarum*: Լայն տերեւներով բազմամեայ բոյս է, ձմեռան ունի վարդաշուշանագոյն ծաղիկներ, գարնանը՝ անուշաբոյր կլոր դեղին պտուղներ, որոնք յիշեցնում են կիտրոն: Մեծութեամբ ոչ մեծ խնձորի չափ են՝ կարմրադեղնաուռ գոյնով եւ շատ հաճելի հոտով: Պտուղները բաւականին հաճելի համ ունեն, սակայն երբեմն խենթացնում եւ զրգոտմ են: Մանրագորը յայտնի է իր թուլացնող, փսխեցնող եւ թնրեցնող յատկութիւններով: Նրա արմատներից պատրաստում են թնրեցուցիչ դեղեր:

եւ իջնելու... Նորը հնի հետ է, այսինքն՝ առաքեալները՝ մարգարէների:

Լարեկացու մեկնութիւնն ընդհանրացնող բնոյթ ունի. *Մանրագորի* անուշահոտութեան մէջ նա տեսնում է սրբութեան եւ առաքինութեան բոլոր բազմակերպութիւնների միութիւնը, որը Սուրբ Հոգով ստացել է Մայր—Եկեղեցուց (Աւագանի ծննդեամբ), որը սնուցեց Քրիստոսի Արեամբ (Լարեկացի):

Ը

1. Ո՞վ կտար Քեզ, Եղբորդդի՛ իմ, ուտել իմ մօր ստիճքներից:

Երբ հանդիպեմ դրսում, կհամբուրեմ Քեզ, եւ չես արհամարհի ինձ:

1. Ավնարկում է պատուիրանի պահապանութիւնը, որոնցից, իբրեւ ստիճքներից, սնուցինք: *Երբ հանդիպեմ դրսում, կհամբուրեմ Քեզ*. այսինքն՝ մարդեղութեամբ կմերձենամ Քո անհասանելի Աստուածութեանը... Սրբուցի ապաշխարութեամբ եւ կհամբուրեմ Քեզ ու չես արհամարհի, ինչպէս վայել իսկ է Աստծուն (*Հիպոդիսոս*):

Որոգիսեսեան ըմբռնումը փրկաբանական է. թեպէտ Փետայ—Հարս յարաբերութիւնը զարգանում է ժամանակի մէջ (հիսկտակարանեան ստուերը փոխում է նորկտակարանեան լոյսի), սակայն, ըստ էութեան, այդ յարաբերութիւնը դուրս է ժամանակից: Հրեաները չէին ընդունում, որ Քրիստոս է մարգարէների լրումը եւ ասում էին, թէ Գալիլեայից մարգարէ դուրս չի գայ: Հարսը կամենում է յետ դառնալ ժամանակի մէջ, մինչեւ Բանի մարմնանալը, մինչեւ Հարս—Փեսայ պսակը, մինչեւ Յովհաննէս Մկրտիչ, [հարսանեկան առագաստի] աստուածային շնորհներից դուրս գտնել Փեսային եւ համբուրել եւ չի ցանկանում, որ Փեսան արհամարհի իրեն, ինչպէս չարհամարհեց մարգարէներիս (Որոգիսես):

Ըստ Լարեկացու՝ այս խօսքն արտայայտում է սուրբերի սեփական անարժանութեան գիտակցումը: Սակայն այս գիտակցումն առ Աստուած խորը սիրոյ հետեւանքն է... Այդ սերը կարող է արհամարհելի լինել աշխարհի կողմից (սակայն ոչ՝ Փեսայի): Այդ սերը ճաշակողներն արհամարհում են ամէն ինչ, որ աշխարհում է, մահուան, արեան, կատարեալ աղքատութեան միջով հասնում եւ համբուրում Քրիստոսին եւ համբուրում Նրա կողմից (Լարեկացի):

Արեւելցիս իր մեկնութեան սկզբում յիշատակում է սուրբգրային հետեւեալ տեղիքը՝ Մատթ. Ե 21—48: Հին Կտակարանի «մի՛ շնացիր»—ը վերափոխուում է «ցանկութեամբ մի՛ նայիր»—ի, «մի՛ սպանիր»—ը՝ «մի՛ բարկացիր»—ի: Հին կաթնակերութիւնը վերափոխուում է Լորի կատարելութեան: Ինքը Տէրն Իր մանկութեան տարիներին սնուեց այն ստիւքներից (ըստ երեւոյթին՝ նկատի ունի օրէնքը եւ մարգարէները)՝ թլփատուելով եւ քառասնօրեայ ընծայմամբ...

Եկեղեցի—Հարսն ամբողջացումն է Հին եւ Լոր Կտակարանների թուր սուրբերի: Թպէտ յանցանքով արտաքսուել է դրախտից, սակայն, գտնելով Աստծուն երկնքից դուրս՝ երկրի վրայ՝ մարմնացած իր փրկութեան համար, համբուրել է մարգարէներով, Աստուածածնով, արեւելեան մոգերով, Սիմէն ծերունով... Հարսը խնդրում է *չարիամարհել* իրեն նախամօր մեղքի պատճառով (Արեւելցի):

2. Վերցնեմ, տանեմ Զեզ իմ Մօր տունը եւ ինձ Յղացողի սենեակը, արբեցնեմ Զեզ իւղագործների գինին, իմ նռնենիների օշարակը:

2. *Տունը* եւ *սենեակը* մարդկային բնութիւնն է (Լարեկացի—Արեւելցի): *Իմ Մօր, ինձ Յղացողի* արտայայտութիւնների մեկնութիւնը Լարեկացին եւ Արեւելցին դիտում են երկու տարբեր, բայց խորապէս առնչուած գոյաբանական մակարդակներում՝ աստուածաբանական եւ մարդաբանական: Ըստ Լարեկացու՝ այս արտայայտութիւններն արարչագործական խորհուրդ են կրում... Աստուած է իմ Մայրը [եւ ինձ Յղացողը]՝ արարչութեամբ: Փրկագործութեամբ մարդկային բնութիւնը դարձել է Աստուծոյ տաճար, հանգիստ, տուն, սենեակ... (Լարեկացի): Արեւելցին այս արտայայտութիւնների մեկնութեան մէջ ելնում է նրանց ուղղակի՝ գոյաբանական իմաստից: *Իմ Մայրը* նախամայր Եւան է, որ ցաւերով յղացաւ մեզ, (այսինքն՝ մեղանչական, չարով առեւանգուած մարդկային բնութիւնը): Եւ ահա այդ բնութեան մէջ յղացում եւ ծնում է Աստուած՝ Սուրբ Կոյսի *սենեակում*՝ մարդկային բնութիւնն Աստուծոյ *տուն* դարձնելով (Արեւելցի): Զրիստոսի Եկեղեցին իր ժառանգականութեամբ սերում է երկու ակունքից՝ հրեական եւ հեթանոսական: Այս երկու ակունքները, մէկմէկու խորթ լինելով հանդերձ, ներքին կապ ունեն. այն, ինչ հրեաները գործում էին ըստ օրէնքի, հեթանոսները բնութեամբ էին գործում՝ գիտութեան եւ ճշմարիտ փիլիսոփայութեան աջակցութեամբ: Եւ *իմ Մօր, ինձ Յղացողի* արտայայտութիւններում հեթանոսական ակունքի ակնարկ կայ: Հարսը կա-

մենում է Փեսային մատուցել իր՝ հեթանոսութիւնից ստացած ընտիր ժառանգութիւնը՝ իւղագործների գինին, այսինքն՝ փիլիսոփաների իմաստութիւնը, եւ նռնենիների օշարակը, այսինքն՝ քաղաքական առաքինութիւնները¹ (Ռոդգինս):

Ըստ *Հիպոդիստոսի՝ տունը* մեր հոգու տաճարն է, իսկ *ինձ Յղացողի սենեակը* սիրտն է, որով յղանում ենք խորհուրդները: *Իւղագործների գինին* Սուրբ Հոգու շնորհներն են՝ եփուած՝ մարդկային բնութեամբ. իսկ *նռնենիների օշարակը* ծածուկ առաքինութիւններն են (*Հիպոդիստոս*):

Համաձայն Լարեկացու՝ Հարսը, դառնալով Սուրբ Երրորդութեան բնակարան, խոստանում է արբեցնել Աստծուն *գինու* ուրախութեամբ եւ *նռնենիների օշարակով*, այսինքն՝ առ Աստուած փշրուած սրտի խորհուրդներով, որոնցով կերակրուում եւ, որոնք ըմպելով, աճում է Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ (Լարեկացի):

Արեւելցին ելնում է փրկաբանական խորհրդածութիւններից. չարը ժանտ օձի միջոցով ըմպել է տուել չարի եւ բարու խառնակ գինին: Զրիստոս Հօր կամքով ըմպում է նախատես մարգարէների հոգեշունչ խօսքերով պատրաստուած բաժակից (*իւղագործների գինի*), Լա անմեղօրէն, որպէս չարագործ, դատապարտուում է խաչի մահուան եւ ճշմարիտ շարունակութիւնն ու լրումն է հիսկտակարանեան անմեղ նահատակների (Աբել, Եսայի, Միքիա, մակաբեացիներ), որոնք վկայական *իւղ* պատրաստեցին՝ այն եփելով ջերմ սիրով: Այսպիսով, *իւղագործների գինին* սիրոյ վկայութիւն է կամ աւելի ստոյգ՝ վկայական սերը... Նռնենիների օշարակն անուշահամ եւ բժշկարար է: Սակայն հրեական նռնենիները կորցրել էին օրէնքի քաղցրութիւնը եւ դառնացել մեղքի թանձրութեամբ, դարձել լեղի եւ քացախ, որը չկամեցաւ ըմպել Տէրը: Յիսուս Ինքն է դառնում *նռն* բժշկարար *օշարակ*՝ Իր չարչարանքներով սրբելով մարդկային բնութեան դառնութիւնն ու սկարութիւնը...

Հարս—Եկեղեցին ցանկանում է Փեսային մատուցել մարտիրոսական *օշարակը*, այսինքն՝ Լրա սիրոյ համար կրած դառը, տտիպ եւ չարաչար տանջանքները՝ նախապէս արբելով *նռնենիների օշարակից* եւ *իւղագործների գինուց*, ապա արժանանալով արբելու Զրիստոսի Արեան բաժակից (Արեւելցի):

1 Բաղաբանական առաքինութիւնները տնտեսական եւ բարոյական առաքինութիւնների հետ կազմում են Պլատոնի նշանաւոր նախակարգութիւնը:

3. Նրա ձախ ձեռքը գլխիս տակ է, եւ Նրա աջը թող գրկի ինձ:

3. Փեսայի աջ եւ ձախ կողմերում մարգարէներն ու առաքեալներն են, որոնցով հիմնել է Եկեղեցին (Որոզինէս):

Ըստ Նարեկացու՝ արտայայտուած է Հարս—Եկեղեցու նկատմամբ Փեսայի պահպանութիւնը եւ վերակացութիւնը (Նարեկացի):

Արեւելցու մեկնութիւնը կապուած է խաչի խորհրդի հետ. ըստ հրեաների՝ խաչի մահը *ձախ*, այսինքն՝ բացասական երեւոյթ է, սակայն Հարսի համար *աջ* է, այսինքն՝ յաջող: *Նրա աջը* խաչի զօրութեամբ *գրկել* է Հարսին՝ խոնարհեցնելով բոլոր երեւելի եւ աներեւոյթ փորձութիւնները (*ձախ*) եւ բարձրացնելով Հարսի զուխը (Արեւելցի):

Այսպիսով, անծքի փայտը դառնում է փրկութեան նշան: Պատուանդանը՝ ցոյց է տալիս դժոխքի ատերումը, *զուխը*՝ արքայութեան բացումը, *ձախ թելը*՝ մեղքերի թողութիւնը, եւ *աջը*՝ շնորհների բաշխումը: Ուստի խաչակնքում ենք ձախից աջ, քանզի խաչ մեղքերի թողութիւնն է, եւ ապա՝ շնորհների բաշխումը (Տաթեւացի):

4. Երդուեցնում եմ ձեզ, դուաւրե՛ր Երուսաղէմի, ագարակի զօրութիւններով եւ հաստատութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք Մէրն Իր կամենալուն պէ:

4. Վերստին պահանջում է Հոգուց, որ մարդիկ առաքուեն՝ արթնացնելու Քրիստոսի սէրը Եկեղեցու վրայ (Որոզինէս):

Ըստ Նարեկացու՝ այստեղ ակնարկ կայ մեզ վրայ հեղուած բազմադիմի շնորհների եւ անիմանալի պարգեւների... Հարսը երդմամբ յորդորում է հրեշտակներին՝ փառաբանակից լինել իրեն եւ գոհաբանակից լինել Աստուծոյ առ մեզ սիրոյ համար եւ արթնացնել սէրը: Քանզի իրեն բաւական չի համարում Աստուծոյ երախտիքների օրհնութեան համար, ուստի հրեշտակներին մասնակցութեան կոչ է անում, որպէսզի առաւել զարթնի Նրա սէրը մեր հանդէպ (Նարեկացի):

Առաւել խորունկ է Արեւելցու մեկնութիւնը: Հարսը երդուեցնում է Եկեղեցու անդաստաններով, Սուրբ Խաչի զօրութեամբ եւ հաւատքի ուժգնութեամբ՝ կոչ անելով, որ մարդիկ վեր կենան թերահաւատութեան գլորումից, մահուան քնից եւ մեղքերի սահեցումից: «Արթնացրէ՛ք Նրա սէրը, որ ծածկապէս ննչում է ձեր մէջ: Երկնքի

արքայութիւնը ձեր ներսում է, արթնացրէ՛ք բարի գործերով, պայծառ լամպերով՝ իմաստուն կոյսերի պէ: Արթնացրէ՛ք ներողամտութեան ժամանակը, մեղքերի թողութիւն, փրկութիւն եւ ճշմարիտ գիտութեանը գա՛լը հայցէք»: Հարսը յորդորում է աղօթքով կենաց Կամեցողի դուռը բախել, որով կատարուի Նրա կամքը մարդկանց մէջ, այսինքն՝ բոլորը լինեն բարի յօժարութեամբ, բեւեռուած Նրա երկիւղով ու սիրով եւ որդիների պէս սիրոյ մէջ լինեն (Արեւելցի):

Հարսը չորրորդ անգամ երդուեցնում է դուատրերին: Ինչո՞ւ. չորս կերպով զարթնեց Քրիստոս՝ ծնունելով, մկրտուելով, խաչուելով եւ յարութիւն առնելով: Չորս կերպով զարթնում է ևս եւ Աստուծոյ սէրը՝ օրէնքով, մարդեղութեամբ, դժոխքի յարութեամբ, համընդհանուր յարութեամբ... (Տաթեւացի):

Դուատրերը եւ թագուհիներն ասում են.

5. Ո՞վ է սա, որ ելել գալիս է սպիտակացած, գալիս է՝ յենուած իր Եղբօրորդուն:

Փեսան ասում է Հարսին.

Արթնացրեցի քեզ խնձորենու տակ, այնտեղ քո մայրը երկնեց քեզ, այնտեղ քո Ծնողը ծնեց քեզ:

5. Հրեշտակները տեսնում են մարդկանց *սպիտակած*, այսինքն՝ հրեշտակների պէս արդարացած եւ զարմանում... (*Հիպոդիոտոս*): Հրեշտակները զարմանում են, թէ Քրիստոսի Արիւնն ինչպէս սպիտակեցրեց Եկեղեցին ախտերից, ինչպէս Յայտնութեան մէջ լսեց Յովհաննէսը [տե՛ս Յայտ. է 14] (Որոզինէս): Հրեշտակները զարմանում եւ հիանում են անարգ եւ աղտեղի բնութեան մաքրութիւնից եւ առաքիւնագարոյ լուսաւորութիւնից, որ այսպիսի շնորհների արժանացաւ: Հարսը, միացած իր Եղբօրորդուն՝ Քրիստոսին, եւ Նրան յենուած, ելնում է այնտեղ, ուր բնակում են հրեշտակային բանակները, Քրիստոս ուղեկցում եւ բարձրացնում է մեզ ընկած հրեշտակների տեղերը, որպէսզի Նրան, ում շինադուրժեց տեսնել դրախտում, տեսնի Իր փառքի մէջ (Նարեկացի—Արեւելցի):

Ըստ Որոզինէսի՝ ուզում է ասել, թէ՛ Բանի մարմնաւորման խորհրդի ներքոյ արթնացրեցի քեզ հաւատքի մէջ: Քո մայր—մարգարէներն այսպէս երկնեցին քո փրկութեան խորհուրդը, եւ այսպէս ծնուեցիր Սարմնացածի շնորհով՝ փրկուելու հաւատքով (Որոզինէս):

Լարեկացին հետեւեալ օրինակն է բերում. ինչպէս հաւերը, երկար ժամանակ ստեղծելով ձուերի վրայ, Արարչի հրամանով կենդանաստեղծում են իրենց ջերմութեամբ, այնպէս էլ մեր բնութիւնը, երկար ժամանակ դրուած լինելով օրէնքի եւ մարգարեական պատգամների ներքոյ, երկնեց Աստուծոյ: Լարեկացին *Մայրը* եւ *Ճնողը* մեկնում է որպէս Հայր Աստուծոյ մասին ասուած այլաբանութիւններ (Լարեկացի):

Արեւելցին մեղքով սկզբնաւորուած գոյաբանական երկուսը հակադրում է Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած շնորհական ծնունդին: Մեղքի մայրական սկիզբը վերափոխուում է շնորհի մայրութեան (Արեւելցի):

Ինձորենի նաեւ Եկեղեցու խորհուրդն է ներկայացնում: Երաւակ մենք ննջում ենք մահուամբ եւ զարթնում յարութեամբ (Աւագանի ծնունդ): Այստեղ՝ դրախտում, երկնեց եւ տրտմութեամբ ծնեց երկրի վրայ, այստեղ յարութեամբ ծնում ենք երկնքի արքայութեան մէջ, քանզի, եթէ չմեղանչէինք դրախտի մէջ, ծնուելու էինք առանց ախտի աղտեղութեան, ինչպէս սուրբ Կոյս Մարիամը ծնեց առանց տրտմութեան, երկուսից եւ ցաւերի (Տաթեւացի):

Հիպոդիտոսի ըմբռնումները վախճանաբանական են: Յոյց է տալիս երկրի հողում սուրբ սրտով եւ անուշահոտ առաքինութեամբ ննջածներին: Իսկ *արթնացրեցի քեզն* ակնարկում է, որ ննջեցեալների բազում մարմիններ յարութիւն առան եւ մտան Սուրբ Քաղաք, որոնք բոլորը պիտի յարութիւն առնեն [Վերջին Օրը]: Մայրը, Ճնողը, ինչպէս արդէն բազմիցս ասուել է, Արարիչ Աստուած է (*Հիպոդիտոս*):

6. Դի՛ր Ի՛նձ որպէս կնիք քո սրտի վրայ եւ որպէս մատանի՝ քո աջ ձեռքին: Քանզի սերը հզօր է մահուան պէս, եւ նախանձը խիստ՝ դժոխքի պէս, նրա թռիչքը՝ հրի բոցի թռիչքի պէս:

6. Մաղթում է Հարսին տեսական եւ գործնական առաքինութիւններ ունենալ եւ յիշել, որ ո՛չ թէ իր առաքինութիւններով է ժառանգել երկիրը եւ իր բազկով փրկուել, այլ՝ Աստուծոյ Աջով եւ Բազկով (*Հիպոդիտոս*):

Որոգիները *դի՛ր Ի՛նձ որպէս կնիք քո սրտի վրան* զուգահեռ է տեսնում աւետարանական խօսքին՝ «Եղէ՛ք դուք Իմ մէջ, եւ Ես՝ ձեր» [Յովհ. ԺԵ 5]: Իսկ մատանին գործերի խորհուրդն է կրում, այսինքն՝

այն ինչ արել են Տիրոջ հետ, նոյնն էր անուան համար անելու են Երա հետեւորդների հետ (Որոգիներ):

Լարեկացին այստեղ ներքին մարդուն ուղղուած հոգեւոր շրջափայտացութեան կոչ է տեսնում. քրիստոնեան պէտք է իր սիրտը եւ բազուկները պահպանի եւ կնքի Քրիստոսով, յիշի Երա փրկագործ տնօրէնութեան երախտիքները, չտայ իր սիրտը սատանայի խորհուրդներին եւ իր բազուկները՝ Երա գործերին, այլ բարու շտեմարան դարձնի իր սիրտը եւ ճշմարիտ պատիւիրանապահութեամբ կնքի իր ձեռքերը, որպէսզի կեղծաւորութեամբ եւ մարդահաճութեամբ չկատարի պատուիրանը (աղօթքի, ողորմութեան եւ այլն): Քրիստոս Քահանայ է եւ Թագաւոր: Սկրտութեամբ իւրաքանչիւր քրիստոնեայ կնքում է քահանայական շնորհով եւ թագաւորական դրոշմ ստանում իր ճակատին: Սկրտութեան այս մեծ շնորհները նա պէտք է անաղարտ պահի բարի գործերով ի փառս Աստուծոյ (Լարեկացի—Արեւելցի—Տաթեւացի):

Աստուած սէր է, եւ Երան սիրողները ոչինչ համարեցին անաւոր մահը: Եւ՝ *դժոխքի պէս նախանձը*. սուրբերը, նախանձաւոր լինելով Աստուծոյ համար՝ «Քո տան նախանձը կուտի Ինձ» [Սաղմ. ԿԸ 10], դժոխային չարչարանքների ենթարկուեցին (Հիպոդիտոս):

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն չխնայեց» [Յովհ. Գ 16], եւ Ինքը՝ Միածինը, Իր սիրելիի տան մէջ յօժարութեամբ ճաշակեց մահը (Որոգիներ):

Այստեղ կատարեալ եւ հոգեւոր սիրոյ ակնարկ կայ... Մարմնաւոր սէրը մահուան իշխանութեան տակ է, իսկ առ Աստուած հոգեւոր սէրն աւելի մեծ է, քան՝ մահը (Արեւելցի—Տաթեւացի):

Աստուած ասում է. «Ես նախանձոտ եմ, Իմ փառքը, որ մարդն է, չեմ կամենում, որ գերի լինի սատանային եւ ապստամբ վիշապին»: Եւ Աստուած իջաւ դժոխք, ուր հոգիներն էին, եւ Երանց կորզեց գազանի բերանից (Արեւելցի):

Որոգիները *հրի բոցի թռիչքի պէս* արտայայտութիւնը կապում է Աստուծոյ մարմնաւորման տնօրինական ընթացքի հետ: Բանն Աստուած՝ որպէս հուր գալիս եւ մարմին է առնում սուրբ Կոյսից, հրի պէս շարժում մարդկային բնութեան ողջ կրթերի միջով՝ այրելով մեր բնութեան մէջ ներգոյացած մեղքի մթերումները, հրի պէս բարձրանում խաչ եւ հրի պէս բարձրանում—թռչում առ Հայր ու նստում Երա աջ կողմում (Որոգիներ):

Սակայն Քրիստոս անբաժան է Իր Եկեղեցուց մինչեւ վախճան. Եւ որպէս հուր գալիս եւ ներկայ է բոլոր եկեղեցիներում՝ պատարագի ժամանակ, հաւատքով շրջում է մեզ հետ եւ հալեցնում մեղքի սառոյ-

9ը (Հիպոդիտոս):

7. Բազում ջրերը չեն կարողանայ մարել սերը, եւ գետերը չեն արգելի նրան: Եթէ մարդ իր ամբողջ կեանքը տայ սիրոյ համար, արհամարհելով կարհամարհուի:

7. Ակատի ունի այն, որ կռապաշտութեան հեղեղները եւ անօրէնութեան մեղքերի գետերը չկարողացան արգելել Բանի մարմնաւորման խորհուրդը, չկարողացան հանգցնել Աստուծոյ մարդասիրութեան գուրջը (Ռոոզիսէս—Արեւելցի): Այստեղ գեղեցիկ պատկեր է օգտագործում Արեւելցին: «Նա, այսինքն՝ չարը, որ սառեց եւ սառցակալեց Աստուծոյ սիրուց ու Նրա բարկութիւնից հալուեց եւ որպէս ջուր հոսում—իջնում էր աշխարհ, [որ] իրեն էր նմանեցնում եւ նմանեցնում է շատերին, չի կարող հանգցնել այն սերը, որ միշտ Մարմին եւ Արիւն է լինում բոլոր եկեղեցիներում եւ բաշխում մեր մեղքերի քաւութեան համար» (Արեւելցի):

Այլ հարթութեան մէջ է մեկնում Հիպոդիտոս վարդապետը. «Մարգարէների ջրերը եւ առաքեալների քարոզութեան գետերը չէին կարող ապրեցնել մարդկանց, եթէ Աստուծոյ գթութիւնը չընկնէր նրանց սիրտը»: (Հիպոդիտոս):

Եթէ մարդ իր ամբողջ կեանքը տայ սիրոյ համար, արհամարհուելով կարհամարհուի... Ակատի ունի Բանի գալուստը (մարմնաւորումը) մերժողներին, այսինքն՝ հրեաներին, որոնք, ի սեր օրէնքի, մուլորութեան մէջ են ընկել եւ չեն կամենում Զրիստոսի սերը. այդպիսիները հէնց օրէնքի կողմից կարհամարհուեն (Ռոոզիսէս—Արեւելցի): Այստեղ նաեւ զգուշացում կայ կեղծ սիրուց. եթէ մարդն իր ամբողջ կեանքը տայ Զրիստոսի սիրոյ համար՝ հրով ու սրով մեռնելով եւ կարծի, որ կարող է հատուցել Նրա սերը, այսինքն՝ հպարտակայ առաքինութիւններով, *արհամարհուելով կարհամարհուի* Աստուծոյ եւ մարդկանց առաջ (Արեւելցի): Ըստ Նարեկացու՝ զգուշացնում է մարմնաւոր սիրուց, մանաւանդ՝ մեղքերի սիրուց. եւ որքան մեծ է այսպիսի սերը, այնքան անելի արհամարհելի է (Նարեկացի):

Կենարարն ասում է. «Ի՞նչ օգուտ մարդուն, եթէ ողջ աշխարհը շահի, եւ իր անձը տուժի» [տե՛ս Մատթ. ԺԶ 26] եւ՝ «Ո՛վ ամօթ համարի Ինձ եւ Իմ խօսքերը, նրան էլ Մարդու Որդին ամօթ կասի, երբ գայ» [տե՛ս Ղուկ. Թ 26]. սա՛ է՝ *արհամարհելով կարհամարհուի* (Հիպոդիտոս):

Օրիորդներն ասում են.

8. Մեր քոյրը փոքրիկ է եւ ստիճքներ չունի. ի՞նչ անենք մեր քրոջն այն օրը, երբ յայտնեն նրան:

8. Հինկտակարանեան եկեղեցու մասին է այն *փոքր* է, քանզի չի բազմացել եկեղեցիներով, ինչպէս Յովհաննէս Սկրտչից յետո՛ւ՝ Սուրբ Հոգու գալստեամբ: Հարսը դեռ չունի այնպիսի *ստիճքներ*, ինչպիսին ձեռք բերեց Բանի մարմնաւորումով եւ ապա՝ Սուրբ Հոգին ստանալով (Ռոոզիսէս): Այս խօսքի եզրափակման մէջ տարակուսանք կայ. *ի՞նչ պիտի անենք այն օրը, երբ պիտի պատմեն Նրան...* Արեւելցին յիշում է Նոյին, երբ Նրան պատմուեց ջրհեղեղի մասին, յիշում է Արահամին, երբ Նրան պատմուեց Սոդոմի եւ Գոմորի կործանման մասին... (Արեւելցի): Այսինքն՝ հրեշտակները տարակուսում են մարդկային տկար բնութեան համար, որ հասու եղաւ անտանելի եւ աստուածային խորհուրդներին, փառքին, տեսութեանը եւ գիտութեանը: Նրանք յատկապէս տարակուսում են Բանի մարմնաւորման անձառելի խորհրդից, այսինքն՝ ինչպէ՛ս պիտի Աստուած միաւորուի հողեղէն բնութեան հետ, առանց մեղքի անցնի մարդկային բնութեան կրքերի միջով, դատապարտի մեղքը մարմնում եւ աստուածացնի մեր բնութիւնը, ինչպէ՛ս պիտի տեղի ունենայ անկարելին: Եւ արդարեւ, սա «գայթակղութիւն է՝ հրեաների եւ յիմարութիւն՝ հեթանոսների համար» [տե՛ս Ա Կորնթ. Ա 23] եւ առանց Սուրբ Հոգու անհաւատալի՝ մարդկանց համար (Նարեկացի):

9. Եթէ պարիսպ լինի, նրա վրայ շինենք արծաթէ մահարձաններ: Եթէ դուռ լինի, նրա վրայ եղեւնափայտեայ տախտակներ ամրացնենք:

Հարսը համարձակում է եւ ասում.

10. Ես պարիսպ եմ, եւ իմ ստիճքները նման են աշտարակների, Նրա աչքին ես [երբեւում] էի խաղաղութիւնը գտածի նման:

9—10. Ակատի ունի մարդկային բնութիւնը՝ պարսպապատուած առաքինութեան պէս—պէս քարերով: Արծաթեղէն մարտկոցները (բնագրում՝ *մահարձաններ*) Աստուծոյ անարատ խօսքի սպասաւորներն են, որոնք այնուհետ դարձան չար հերձուածողներին եւ անխռով

պահեցին Եկեղեցին, իսկ *ստիւք*—*աշտարակները* կերակրում են Եկեղեցու մանկանց (Որոգիւնս): Ըստ Արեւելցու՝ *պարսպի* նախօրինակը Նոյ նահապետն է, որ թոյլ չտուեց թշնամուն մեղքով իսպառ տիրել մեր բնութեան վրայ, երբ Աստուած յայտնեց ջրերի գալստեան մասին, եւ նա սկսեց շինել տապանը [տե՛ս Ծննդ. Զ 7—14] (Արեւելցի): Հրեշտակական գգուշութիւններ (մարտկոցներ) են պէտք՝ մարտնչելու Աստուծոյ քաղաքի (մարդկային բնութիւն) թշնամիների դէմ, պահպանելու դուռը, որով մտնում է Տէրը: Այդ դուռը պէտք է անփուտ եւ մաշուել գործերով (եղեւնափայտեայ տախտակներ) ամրացուի (Հիպոդոտոս):

Սակայն ի՞նչ է *դուռը*: Եկեղեցու *դուռ* է Աբրահամը, որով բացուեցին հաւատքի դռները (Արեւելցի): Օրէնքի *դուռ* եղաւ Մովսէսը, շնորհի *դուռ* եղաւ Յովհաննէսը, իսկ Քրիստոս եղաւ արքայութեան *դուռը*, ինչպէս տաճարի դուռը, սրահի դուռը եւ Սրբութիւն Սրբոցի դուռը (Տաթեւացի): Ըստ Որոգիւնսի՝ դռան վրայ ամրացուած *տախտակները* Քրիստոսից եւ առաքեալներից յետոյ եկած վկաներն են՝ ճգնութիւններով եւ հոգեւոր հանդէսով (Որոգիւնս):

Հարսը համարձակում է եւ ասում. «Ես պարիսպ եմ, եւ իմ ստիւքները նման են աշտարակներին»: Այսինքն թե՛ շատ մի՛ մտահոգուէք իմ տկար բնութեան պատճառով, քանզի Ամենակարողի գորութեամբ փոքրս աւելի մեծ եմ, քան պարիսպը, եւ ամուր, եւ անստիւքս աշտարակի նման ստիւքներ ունեմ: Քանզի Նա, որ ոչնչից արարեց երկինքը եւ երկիրը, մեր եւ ձեր բնութիւնները, Նա ինչ մեծացրեց եւ իմ ստիւքներն աւելի մեծ դարձրեց, քան ձերը, քանզի այն, ինչ դուք չէք կարող լսել, տանել եւ կրել, իմ տկար բնութիւնն, աւելի կարող լինելով ձեզանից, լսեց, տարաւ եւ հաւատաց...

Ես՝ կորուսեալս, որ պատերազմի եւ խռովութեան մէջ էի երկնայինների եւ երկրայինների հետ մեր ապստամբութեան պատճառով, այժմ Փեսայի խաչով ճշմարտապէս խաղաղութիւն ունեցայ եւ դարձի եկայ մուրորութիւնից (Նարեկացի):

Հարսը ձեռք է բերել շնորհական համարձակութիւն, որի մասին վկայում է ինքն ամուր *պարիսպ* է անմարմին սատանայի եւ չար բռնաւորների, մեղքի եւ հերձուածողների դէմ: Նրա *ստիւքներն աշտարակներ են՝* լի Աստուծոյ անձառ սիրով եւ անբաւ բարիքներով (Արեւելցի—Տաթեւացի):

Այստեղ Արեւելցին ուշագրաւ միտք է արտայայտում. Տիրոջ մարդեղութիւնն ամուր *պարիսպ* եղաւ երկնայինների համար, քանզի ապստամբութեան պատճառն այն էր, որ չէին տեսնում Նրան: Բանի

մարմնաւորումից յետոյ այլեւս անկման կասկած եւ պատճառ չկայ, քանզի տեսնում են Նրան մարմնով, եւ ոչ ոք չի համարձակում եւ կամենում բաժանուել Նրա անչափ գեղեցկութիւնից... (Արեւելցի):

11. Սողոմոնը մի այգի ունէր Բելմատնում, Իր այգին տուեց պահապաններին: Իրաքանչիւր այր նրա պտղի փոխարէն հազար արծաթ պիտի բերի:

12. Իմ այգին իմ առջեւն է. հազարներ՝ Սողոմոնին եւ երկու հարիւր՝ պահապաններին, որ պահում են նրա պտուղը:

11—12. *Բելմատնը* մի երկիր է Յուդայի ցեղի վիճակից, ուր Սողոմոնը հազար այգի տնկեց եւ տուեց երկու հարիւր պահապաններին՝ հինգ—հինգ բաժանելով իւրաքանչիւրին եւ պատուիրելով, որ ամէն մէկը հազարական արծաթ բերի իրեն: Եւ ինքը՝ արքան, գրասնում էր այգիներում, քանզի կից էին միմեանց որպէս մէկ ամբողջական այգի. ահա թէ ինչու է ասում. *Իմ այգին իմ առջեւն է. Սողոմոնին՝ հազարներ*, քանզի նրա անուսով էին կոչւում, եւ երկու հարիւր պահապանները պահում էին նրա պտուղները: Երկու հարիւր հազար արծաթը դուրս էր ի պէտս տաճարի եւ սպասարարների¹: Սողոմոնի այգին խորհրդանշում է Հարսին, քանզի ինչպէս *Սողոմոն* նշանակում է խաղաղութիւն, եւ Երուսաղէմը նրան հոմանուն² է, ուր շինուեց սուրբ տաճարը, այնպէս էլ հոգեւոր Սողոմոնը՝ Քրիստոս, հաստատեց իր Եկեղեցին, որ Տիրոջ անուամբ կոչւում է խաղաղութիւն, ուր գայլեր եւ գառներ, եզներ եւ առիւծներ միաբանուած՝ մի կողմ թողեցին գազանութիւնը: Արդ, այս ճշմարիտ խաղաղութեան խորհրդով Իրեն անուանեց Որթ, իսկ հաւատացեալներին՝ Իր վրայ արմատացած ողկուզաբեր ուտեր եւ ոստեր: Հօր գթութեան եւ սիրոյ մշակութեամբ ու խնամքով եւ Հոգու ոռոգմամբ հազարներով աճեցին այս ուտերը...

Հազարը մեծախորհուրդ թիւ է, որով ներկայացւում է Տիրոջ այգին. այնտեղ Աստուծոյ անձառելի սիրով միաւորուած են ճշմարիտ հարիւրաւորները (որոնք էլ իրենց մէջ են ներառնում վաթսուսաւորները եւ երեսուսաւորները)... *Հազար* թուով նաեւ ներկայացւում է Աստուծոյ նահատակների քաջութեան պտուղը, որը, որպէս հազար կող-

1 Այս պատմութեան արքիւրը չկարողացանք ճշտել:

2 հոմանուն— նոյնիմաստ անուն, նոյնանիշ

մից մատուցուած անուշ եւ ուրախարար գիւնի, զուարճացրեց այգու Տիրոջը՝ ճշմարիտ Սողոմոնին:

Այս այգին Տիրոջ փրկագործած Նոր Իսրայէլի այգին է, որ առաքելների եւ նրանց աշակերտների պահպանութեանը յանձնուեց: Արծաթը խորհուրդն է Տիրոջ խօսքի, որ սուրբ է, արդար եւ անբիծ, որով Աստուծոյ խօսքի սպասաւորները մշակում են Տիրոջ բանաւոր այգին եւ պահում, իսկ *հազարով* ակնարկում է Տիրոջ սերմանած խօսքի պտղաբերութիւնը: (Հիպոդիտոս—Ռրոզինտս—Արեւելից):

Անապական եւ մաքուր *արծաթը* նաեւ երկնքում պահուող անապական գանձերն է, որոնց չեն ապականում ցեղերը եւ ուտիճները (Ռրոզինտս): Եւ դարձեալ՝ *արծաթը* ընտրեալ սուրբերն են, որոնք պտղաբերեցին *հազար* կատարեալ թուով (Նարեկացի):

Տաթեւացին նաեւ նշում է, որ իւրաքանչիւր անձ Տիրոջ *այգի* է եւ իր *պտուղը* պիտի մատուցի Տիրոջը, ինչպէս տանուտերերը՝ իրենց տան, վանահայրերը՝ միաբանների, իշխանները՝ երկրի, քահանաները՝ ժողովրդի:

Բելմաունի այգին խորհրդանշում է նաեւ պատուիրանի այգին, որ Աստուած տուեց առաջինը կորցնելուց յետոյ (Հիպոդիտոս):

Հարսն ասում է.

13. Դո՛ւ, որ նստած ես պարտեզում, եւ ուրիշները լսում են Բեզ, լսելի՛ արա ինձ Զո բարբառը:

13. *Որ նստած ես պարտեզում...* Ըստ Ռրոզինտսի՝ *պարտեզը* գերեզմանն է, ուր, խաչից իջեցնելով, դրեցին Տիրոջ մարմինը: Տիրոջ մահը զայթակողութիւն էր հրեաների համար, որոնք խցեցին իրենց ականջները փրկութեան աւետիսի առաջ, սակայն հեթանոսների (*ուրիշներ*) սիրտը խոցուում է Աստուծոյ սիրով... Նրանք հեթանոսական խաւարից դէպի ճշմարտութեան լոյս են ձգտում՝ բաղձալով լսել Աստուծոյ ձայնը (Ռրոզինտս): Քրիստոսի մահը փրկագործ մահ է, յարութեան մահ... Այս է յուշում *նստած ես* արտայայտութիւնը. այսինքն՝ Տիրոջ մարմինը ենթակայ չէ խաւարային նիւջին, այն «արթուն» մարմին է, փրկութեան մարմին՝ Աստուածութիւնից անբաժան:

[Մարդկութեան փրկագործութեան տնօրինական ընթացքն իր լոմանը պիտի հասնի համընդհանուր յարութեանը], երբ բոլորը յարութեամբ պիտի բուսնեն: Այդ Օրը բոլոր գերեզմաններում գտնուողները լսելու են Աստուծոյ Ռրոզու ձայնը, եւ փրկուելու են նրա՛նք, որոնք

ցանկանայ Հարսը:

Դարձեալ՝ *պարտեզը* մեր բնութիւնն է, ուր քովանդակուեց Աստուած եւ նրանից մարմին վերցրեց եւ բարձրացնելով նստեցրեց Հօր աջ կողմում: Եւ Գալու է նոյն մարմնով: *Իսկ ուրիշները լսում են Բեզ*. այսինքն՝ Բեզ են սպասում արդարները, մինչեւ հատուցես [իմմտ. ՃԻԱ 8]: Հաւատացեալները դիմում են Քրիստոսին. «Վերջին օրը լսելի՛ արա Զո ձայնը, թէ՛ եկէ՛ք, Իմ Հօ՛ր օրինեալներ [տե՛ս Մատթ. ԻԵ 34]...» Արդարները դիմում են Քրիստոսին, որպէսզի արժանացնի լսելու ցնծութեան եւ ուրախութեան ձայնը, երբ գայ եւ նորոգի նրանց աղքատացած ոսկորները (Հիպոդիտոս—Արեւելից):

Նարեկացին անդրադառնում է այս խօսքի եկեղեցաբանական—փրկաբանական նիստին...

Պարտեզը Հարս Եկեղեցին է, ուր նստած է Քրիստոս: Եկեղեցին, զօրացած Քրիստոսով, պտղաբերում է Աստծուն, սակայն Հարսը կամենում է անմոլար հետեւել Փեսային, ուստի ցանկանում է հրեշտակների պէս անընդհատ լսել Տիրոջ ձայնը (Նարեկացի):

14. Փախի՛ր, Եղբօրորդի՛ իմ, եւ նմանուի՛ր այծեամի կամ եղնիկների հորթերի՛ խնկաբեր լեռների վրայ:

14. *Փախի՛ր...* հրեաների անհաւատութիւնից դէպի հեթանոսները (նաեւ՝ Սուրբ Հոգին է փախչում նենգութիւնից) (Առաջին Գալուստ):

Փախի՛ր... Շտապի՛ր *այծեամների* եւ *եղնիկների* պէս՝ կատարելու Ահեղ Դատաստանը, յագեցնելու սուրբերի անձկալի կարօտը, վերցնելու նրանց սաստիկ նեղութիւնները եւ խորտակելու չարի սուտ թագաւորութիւնը (Երկրորդ Գալուստ) (Հիպոդիտոս):

Խնկաբեր լեռների վրայ... այսինքն՝ երկնքի ամպերի վրայ [բազմած], զօրութեամբ [բազմած]՝ հրեղէն զօրքերի բիւրաւոր բանակների եւ սրաթոխ արծիւների՝ կատարեալ արդարների վրայ, որոնք գալիս են Նրա առջեւից ահեղ կառքերով, բարձրագոյ փողերով՝ հրաւիրելով ընդառաջ ելնել Փեսային: Ինչո՞ւ են *լեռներ* անուանում. որովհետեւ անշարժ եւ անսայթաք մնացին Աստուծոյ կամքի մէջ եւ իսկապէս մեծամեծ են եւ ազդու, լեռնացած՝ առաջնութեամբ եւ անուշահոտ վարքով: Այլեւ՝ խնկաբեր են, որովհետեւ որպէս պատարագներ եւ նուէրներ են Աստծուն՝ մշտապէս ողջակիզուելով անուշահոտութեամբ:

Փախի՛ր, Եղբորորդի՛... մեր անթիւ չարիքներից, դարձի՛ր դէպի
Քո առաջին բարին: Քո խաչի չարչարանքներով սպանի՛ր, հեռացրո՛ւ,
ոչնչացրո՛ւ չարի խոցման սպիները մեր բնութիւնից եւ լցրո՛ւ այն
անուշարոյր հաւատքով եւ Աստուածութեանդ լոյսով, օգնի՛ր մեզ մեր
փրկութեան մէջ, Նորոգի՛ր յարութեան յոյսով եւ արժանացրո՛ւ բերկ-
րանքով տեսնելու Ամենասուրբ Երրորդութիւնդ եւ Սուրբ Եկեղեցւոյ
լուսնը (Ռրոգինես—Նարեկացի—Արեւելցի):

ՅԱԻԵԼՈՒԱԾ

«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

(Բնագիր)



ԵՐԳ ԵՐԳՈՑ,
ՈՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է՛
ԱՍՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՐՔԱՅ ՍՈՂՈՍՈՆԻ
ԿՈՂՄԻՑ

Ա

Հարսն ասում է.

1. Թող համբուրի ինձ Իր բերանի համբոյքներով, քանզի Զո ստինքները լաւ են զինուց, եւ Զո իւղերի հոտը՝ բոլոր խունկերից:

2. Զո անունը հեղուած անուշ իւղ է, դրա համար օրիորդները սիրեցին Զեզ եւ (դէպի իրենց) ձգեցին Զեզ:

3. Զո իւղերի յետեից կընթանանք մենք:

Հարսը պատմում է օրիորդներին Փեսայի մասին, թէ ինչ է շնորհել իրեն.

Արքան տարաւ ինձ Իր սենեակը:

Հարսը պատմում է օրիորդներին, եւ նրանք ասում են.

Յնձանք եւ ուրախ լինենք քեզանով եւ սիրենք քո ստինքները զինուց աւելի:

Օրիորդները Հարսին ասում են Փեսայի անունը.

Ուղղութիւնը սիրեց քեզ:

Հարսն ասում է.

4. Սեւ եւ ես եւ գեղեցիկ, դուստրձր Երուսաղէմի, Կեղարի վրանների եւ Սողոմոնի խորանի պէս:

5. Մի՛ նայէք ինձ, քանզի ես սեւացել—թխացել եմ, քանզի Արեզակը խէթ նայեց ինձ վրայ: Իմ Մօր որդիները մարտնչեցին ինձ հետ. եւ ինձ այգեստանի պահապան դրեցին, որովհետեւ իմ [իսկ] այգին չպահեցի:

Հարսն ասում է Փեսային.

6. Պատմի՛ր ինձ, իմ հոգո՛ւ Սիրելի, ո՛րք ես հովուում, ո՛րք ես հանգիստ տալիս միջօրէին. գուցէ թափառականի պէս լինեմ Զո ընկերների երամակների մէջ:

Փեսան ասում է Հարսին.

7. Եթէ չճանաչես քո անձը, գեղեցիկդ կանանց մէջ, հետեւի՛ր

դու հօտերի ոտնահետքերին եւ արածեցրո՞ւ թո ուլերից հովիւների վրանների մօտ:

8. Մերձաւոր Իմ, թեզ նմանցրի Իմ երիվարներից՝ փարաւունի կառքի մէջ:

Օրիորդներն ասում են.

9. Բանգի գեղեցկացան թո ծնօտները տատրակի պէս եւ թո պարանոցը՝ մանեակների պէս:

10. Ոսկու պէս դարձնենք թեզ՝ արծաթէ կիտուածներով հանդերձ,

11. մինչեւ Արքան Իր գիրկն ընդունի թեզ:

Հարսն ասում է իրեն եւ Փեսային.

12. Իմ Գարդոսն արձակեց իր հոտը, ստաշխի ծրար է ինձ համար իմ Եղբորորդին, թող հանգստանայ իմ ստինքների մէջ:

13. Նոճու ողկոյզ է ինձ համար իմ Եղբորորդին՝ Ենգաղղի այգեստանների մէջ:

Փեսան ասում է Հարսին.

14. Ահա գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, ահա գեղեցիկ ես. թո աչքերն աղաւնիներ են:

Հարսն ասում է Փեսային.

15. Ահա բարենշան ես, Եղբորորդեալ իմ, այլեւ՝ գեղեցիկ մեր հանգստարանի մէջ:

16. Մեր տան գերանները մայրիներ են, մեր դարանաւանդները՝ նոճիներ:

Բ

Փեսան ասում է Իրեն եւ Հարսին.

1. Ես դաշտերի ծաղիկ եմ, հովիտների շուշան:

2. Ինչպէս շուշան՝ փշերի մէջ, այնպէս է Իմ մերձաւորը դուստրերի մէջ:

Հարսն ասում է Փեսային.

3. Ինչպէս խնձորների՝ անտառի ծառերի մէջ, այնպէս է իմ Եղբորորդին՝ որդիների մէջ: Նրա հովանու տակ նստել փափագեցի եւ նստեցի. եւ նրա պտուղը թաղցր է իմ կոկորդում:

Հարսն ասում է օրիորդներին.

4. Գինու տուն տարէք ինձ եւ կարգեցէք ինձ վրայ Սէրը:

5. Հաստատեցէք ինձ իւղով, խնձոր լցրէք ինձ վրայ, թանգի եւ խանդակաթ եմ սիրով:

6. Նրա ձախ ձեռքը զլխիս տակ է, իսկ Նրա աջը թող գրկի ինձ:

Հարսն ասում է օրիորդներին.

7. Երդուեցնում եմ ձեզ, դուստրեր Երուսաղէմի, անդաստանի գօրութիւններով եւ ուժգնութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէք Սէրն Իր կամենալուն պէս:

Լսում է Փեսայի ձայնը եւ ասում.

8. Իմ Եղբորորդու ձայնն է. ահա Նա գալիս է, վազում լեռների վրայով՝ հանգստանալով բլուրների վրայ:

9. Իմ Եղբորորդին նման է այծեամի կամ եղնիկների հորթերի՝ Բեթէլի լեռների վրայ:

Հարսը ցոյց է տալիս օրիորդներին Փեսայի [տեղը].

Ահա Նա կանգնած է մեր որմի ետեւում, ձգուել է դէպի պատուհանները, նայում է ձաղերի միջով:

10. Իմ Եղբորորդին պատասխանում է ինձ եւ ասում.

Վեր կաց, եկ, մերձաւոր Իմ, գեղեցիկ Իմ, աղաւնի՝ Իմ:

11. Բանգի ահա ձմեռն անցաւ, անձրեւներն անցան ու զնացին—հեռացան.

12. Ծաղիկներ երեւացին մեր երկրում, հասաւ էտելու ժամանակը, տատրակի ձայն լսուեց մեր երկրում:

13. Թ՛զնին ընձիւղեց իր բողբոջը, մեր ծաղկած որթերն արձակեցին իրենց հոտը: Վեր կաց, եկ, մերձաւոր Իմ, գեղեցիկ Իմ, աղաւնի՝ Իմ, եւ եկ դու, աղաւնեալ Իմ:

14. Եկ պարսպի պատուարին մերձ վեմի հովանու տակ:

Յո՛րց տուր Ինձ թո երեսը եւ լսելի արա՛ Ինձ թո բարբառը, թանգի թո բարբառը թաղցր է, եւ թո պատկերը՝ գեղեցիկ:

Փեսան այսպէս է ասում օրիորդներին.

15. Բռնեցէք մեզ համար փոքրիկ աղուէսներին՝ այգիների ապականիչներին, եւ մեր որթերը կծաղկեն:

Հարսն այսպէս է ասում.

16. Իմ Եղբորորդին իմն է, եւ ես՝ Նրանը, որ հովում է շուշանների մէջ:

Մինչ ցերեկը լուսաւորի, եւ ստուերները շարժուեն,

17. վերադարձիր, Եղբորորդի՛ իմ, նմանութիւն այծեամի կամ եղնիկների հորթերի՝ խնկաբեր լեռների վրայ:

1. Գիշերն անկողնուս մէջ փնտրեցի իմ հոգու Սիրելիին, փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի, եւ ձայն չտուեց ինձ:
2. Վեր կենամ ու շրջեմ թաղաքով, փողոցներով ու հրապարակներով եւ փնտրեմ իմ հոգու Սիրելիին: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չտուեց ինձ:
3. Բաղաթում շրջող պահապանները հանդիպեցին ինձ:

Հարսն ասում է պահապաններին.

Արդեօք չէ՞ք տեսել իմ հոգու Սիրելիին:

4. Երբ նրանցից մի փոքր անցայ, գտայ իմ հոգու Սիրելիին:

Գտնելով Փեսային ասում է.

Բռնեցի Նրան եւ չթողեցի Նրան, մինչեւ չտարայ Նրան իմ Մօր տունը եւ ինձ Յղացողի սենեակը:

Հարսը երկրորդ անգամ է երդուեցնում օրիորդներին.

5. Երդուեցնում եմ ձեզ, դուստրեր Երուսաղէմի, ագարակի գօրութիւններով եւ հաստատութիւններով, եթէ վեր կենաք, արթնացրէ՞ք Մէրն Իր կամենալուց պէս:

Փեսան ասում է Հարսի մասին.

6. Ո՛վ է սա, որ գալիս է անապատից ինչպէս ծառացած—բարձրացած ծուխ: [Բուրում է ինչպէս] զմուսս եւ կնդրուկ՝ իւղագործների ամէն տեսակ փռշիններով:

Օրիորդներն այսպէս ասացին.

7. Ահա՛ Սողոմոնի գահոյթը, նրա շուրջ վաթսուց սպառազէններ են Իսրայէլի թաջերից:

8. Բոլորը՝ պատերազմի հմուտ սուսերաւորներ, իւրաքանչիւր այր սուր [ուցի] ազդրին՝ ընդդէմ գիշերուայ արհաւիրքների:

9. Սողոմոն Արթան գահաւորակ պատրաստեց Իրեն Լիբանանի փայտից:

10. Նրա սիւներն արեց արծաթ, կոնքերը՝ ոսկի, ձեղունը՝ ծիրանի եւ նրա ներսն՝ ակնազարդ, [ուր] տարածուած է Իսրայէլի դուստրերի սէրը:

11. Դուստրեր Սիոնի, ելէ՞ք եւ նայէ՞ք Սողոմոն Արթային՝ [այն] պսակով, որով պսակեց Նրա Մայրը Նրա փեսայութեան եւ Նրա սրտի ուրախութեան օրը:

Փեսան ասում է Հարսին.

1. Ահա գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, ահա գեղեցիկ ես, թո աչքերն աղաւնիներ են՝ թո լուսինից դուրս: Զո վարսերը նման են այծերի երամակների, որոնք երեւացին Գաղատից:

2. Զո ատամները նման են խուզած ոչխարների երամակների, որոնք ելնում են աւազանից. բոլորն էլ երկածին են, եւ անորդի չկայ նրանց մէջ:

3. Զո շուրթերը նման են որդան կարմիր թելի, եւ թո խօսքերը գեղեցիկ են: Զո այտերը նման են նռան կեղեւի՝ թո լուսինից դուրս:

4. Զո պարանոցը նման է Դաւթի աշտարակին, որ շինուած է Թալպիովութում. հազար վահաններ են կախուած նրանից եւ սպառազէնների բոլոր նետերը:

5. Զո երկու ստինքները նման են այծեամի երկու երկուորեակ ուլերի, որոնք արածում են շուշանների մէջ:

6. Մինչեւ ցերեկը հանգչի, եւ ստուերները շարժուեն, ես Ինքս կզնամ զմուտենիների լեռը եւ կնդրուկի բուրբ:

7. Բոլորովին գեղեցիկ ես, մերձաւոր Իմ, եւ ոչ մի արատ չկայ թեզ վրայ:

8. Ե՛կ Լիբանանից, ո՛վ Հարս, այստեղ ե՛կ Լիբանանից: Ե՛կ եւ անցի՛ր հաւատքի զագաթից, Սանիրի եւ Հերմոնի կատարից, ամիւծների՝ մայրիներից եւ ինձերի լեռներից:

9. Սրտակաթ արեցիր մեզ, թո՛յր մեր Հարս, սրտակաթ արեցիր մեզ թո մի աչքով եւ թո պարանոցի մի թառամանեակով:

10. Զանգի գեղեցկացան թո ստինքները, թո՛յր Իմ Հարս, թանգի գեղեցկացան թո ստինքները զինուց [աւելի], եւ թո հանդերձների հոտը՝ բոլոր խունկերից:

11. Մեղր է կաթում թո շուրթերից, թո՛յր Իմ Հարս, մեղր ու կաթ է թո լեզուի տակ, եւ թո հանդերձների հոտը նման է կնդրուկի:

12. Փակուած պարտեզ ես, թո՛յր Իմ Հարս, փակուած պարտեզ ես եւ կնքուած աղբիւր:

13. Զո պատգամաւորութիւնը նռենիների դրախտ է՝ մրգաբեր ծառերի պտուղներով հանդերձ. կիպրոս՝ նարդոսով հանդերձ,

14. Նարչոս եւ ջրթում, խունկեղէզ եւ կինամոն՝ Լիբանանի բոլոր ծառերով հանդերձ, զմուսս եւ հալուէ՝ բոլոր գլխաւոր խունկերով հանդերձ:

15. Բուրաստանների աղբիւր եւ կենդանի ջրի ակունք, որ

բխում է Լիբանանից:

16. Վեր կաց, հիւսիսային թամի, եւ եկ, հարաւային թամի, փչիր Իմ պարտեզի մէջ, եւ թող բուրեն Իմ խուկերը:

Ե

Հարսն աղաչում է, որ իր Փեսան ցած իջնի.

1. Թող իմ Եղբորդին իջնի Իր պարտեզը եւ ուտի Իր ծառերի պտուղները:

Փեսան ասում է Հարսին.

Մտայ Իմ պարտեզը, թո՛ր Իմ Հարս, հաւաքեցի Իմ զմուշում՝ Իմ խուկերով հանդերձ, կերայ հացս Իմ մեղրով, արբեցի գինիս Իմ կաթով. կերէ՞ք, մերձաւորներ Իմ, արբէ՞ք եւ արբէ՞ք, եղբորդիներ Իմ:

2. Ես ննջում եմ, բայց իմ սիրտն արթուն է:

Հարսը զգում է, որ Փեսան բախում է դռը:

Իմ Եղբորդու ձայնն է, դուռն է բախում:

Փեսան ասում է.

Բա՛ց Ինձ, թո՛ր Իմ, մերձաւոր Իմ, աղանի՛ Իմ, կատարեալ Իմ, ջանգի գլուխս պատուել է ցօղով, եւ վարսերս՝ գիշերուայ շաղով:

Հարսն այսպէս է ասում.

3. Հանեցի իմ պատմուձանը, ինչպէ՛ն հագնեմ այն. լուացի ոտքերս, ինչպէ՛ն աղտոտեմ նրանք:

4. Իմ Եղբորդին մեկնեց Իր ձեռքը պատուհանով, եւ իմ որովայնը խռովուեց Նրանով:

5. Ես վեր կացայ՝ բացելու իմ Եղբորդու առաջ. իմ ձեռքերից զմուշ կաթեց, եւ իմ մատները լցուեցին զմուշով դռան փակաղակի վրայ:

6. Ես բացեցի իմ Եղբորդու առաջ. իմ Եղբորդին անցաւ, եւ իմ հոգին ելաւ Նրա խօսքի հետ: Փնտրեցի Նրան եւ չգտայ, կանչեցի Նրան, եւ ձայն չտուեց ինձ:

7. Ինձ գտան թաղաքում շրջող պահապանները, զարկեցին եւ վիրաւորեցին ինձ. պարիսպների պահապանները թողս հանեցին իմ վրայից:

8. Երդուեցնում եմ ձեզ, դուստրեր Երուսաղէմի, ազարակի զօրութիւններով եւ հաստատութիւններով. եթէ գտնէք իմ Եղբորդուն, պատմեցէ՞ք Նրան, որ կաթոգին եմ եւ Նրա սիրուց:

Երուսաղէմի դուստրերը եւ պարիսպների պահապանները հարցնում են Հարսին.

9. Ինչո՞վ է առաւել թո Եղբորդին միւս եղբորդիներից, գեղեցիկդ կանանց մէջ, ինչո՞վ է առաւել թո Եղբորդին միւս եղբորդիներից, որ այդպէս երդուեցնում ես մեզ:

Հարսը նկարագրում է Եղբորդուն, թէ ինչպիսին էր.

10. Իմ Եղբորդին սպիտակ է եւ կարմիր, ընտրեալ է բիրաւորների մէջ:

11. Նրա գլուխը կեփազեայ ոսկուց է, Նրա վարսերը զանգուր են [եւ] սեւ, ինչպէս ազօաւ:

12. Նրա աչքերը նման են աղանիների՝ ջրերի լիութեան վրայ. կաթով լուացուած, նստած՝ ջրերի լիութեան վրայ:

13. Նրա ծնօտները խուկի տաշտերի պէս բուրում են խղագործների անուշահոտութիւնը, Նրա շուրթերը շուշաններ են, որ առատ զմուշ են բխում:

14. Նրա ձեռքերը ճախարակուած ոսկի են՝ Թարսիսի ակներով զարդարուած. Նրա որովայնը փղոսկրեայ տախտակ է՝ շափիղեայ ակներով ընդելուզուած:

15. Նրա սրունքները մարմարեայ սիւներ են՝ ոսկեայ խարիսխների վրայ հաստատուած: Նրա պատկերը նման է Լիբանանի՝ ընտիր եղենափայտին:

16. Նրա կոկորդը լի է թաղցութեամբ եւ ամբողջովին ցանկալի: Այսպիսին է իմ Եղբորդին, եւ այսպիսին է իմ Մերձաւորը, դուստրեր Երուսաղէմի:

Երուսաղէմի դուստրերը հարցնում են, թէ ուր գնաց Հարսի Եղբորդին.

17. Ո՞ր գնաց թո Եղբորդին, գեղեցիկդ կանանց մէջ, ո՞ր կողմը դիմեց թո Եղբորդին, մենք էլ թեզ հետ փնտրենք Նրան:

Զ

Հարսը պատասխան է տալիս եւ ասում.

1. Իմ Եղբորդին իջաւ Իր պարտեզը՝ խուկերի տաշտերի մէջ՝ բուրաստաններում հովուելու եւ շուշաններ հաւաքելու:

2. Ես իմ Եղբորդուն եմ, եւ իմ Եղբորդին՝ իմը, որ հովուում է շուշանների մէջ:

Փեսան ասում է Հարսին.

3. Բարենշան ես, մերձաւոր Իմ, ինչպէս հաճութիւնը, գեղեցիկ՝ ինչպէս Երուսաղէմը՝ զարմանալի յօրինուած:

4. Դարձրո՞ւ աչքերդ Ինձանից, թանգի դրանք խռովեցրին
Ինձ, թո վարսերը նման են այծերի երամակների, որոնք
երեսացին Գաղաաղից:

5. Զո առամները նման են խուզած ոչխարների երամակների,
որոնք դուրս են գալիս առազանից. բոլորն էլ երկածին են, եւ
անձնուճոճ չկայ նրանց մէջ:

6. Զո շուրթերը նման են կարմիր թելի, եւ թո խօսքերը
գեղեցիկ են: Զո այտերը նման են նռան կեղեւի՝ թո լռութիւնից
դուրս:

7. Վաթսուն թագուհի են եւ ութսուն հարձ. եւ օրիորդներ
են, որոնց թիւ չկայ:

8. Միակն է Իմ աղանին, Իմ կատարեալը. իր մօր միակն է,
ծնողի ընտրեալը:

Դուստրերը տեսան նրան եւ երանի տունցին նրան,
թագուհիները եւ հարձերը գովեցին նրան:

*Դուստրերը եւ թագուհիները տեսան Հարսին եւ երանի
տունցին նրան:*

9. Ո՛վ է սա, որ երեսում է ինչպէս առաւօտ, գեղեցիկ՝ ինչպէս
լուսինը, ընտիր՝ ինչպէս արեգակը՝ զարմանալի յօրինուած:

Փեսան ասում է Հարսին.

10. Իշայ ընկուզենիների պարտզ՝ նայելու վտակների
արդիւնքին, թէ ծաղկել է որթը, թէ ծաղկել է նոճին, թէ
ծաղկել են նռենիները:

Հարսն ասում է Փեսային.

11. Այնտեղ կտամ Զեզ իմ ստինքները, իմ հոգին չիմացաւ.
համարեց ինձ ինչպէս Ամինադաբի կառքը:

Դուստրերը եւ թագուհիներն ասում են Հարսին.

12. Վերադարձիր, վերադարձիր, ո՛վ ողողումացիդ,
վերադարձիր, վերադարձիր, եւ մենք տեսնենք թե՛:

Է

Փեսան այսպէս է ասում դուստրերին եւ թագուհիներին.

1. Ի՞նչ էք տեսնում այդ ողողումացու վրայ, որ դէպի մեզ է
գալիս բանակների զօրագնդերի պէս: Զանգի գեղեցկացան թո
ոտքերը կօշիկներով, դուստր Ամինադաբի: Զո ազդերի ձեւը
նման է ճարտար վարպետի ընդելուզած ուլունքների:

2. Զո պորտը ճախարակուած սափոր է՝ անպակաս՝ անուշ
գինուց: Զո որովայնը նման է շուշանով ծածկած ցորենի դէզի:

3. Զո երկու ստինքները նման են այծեամի երկու
երկուորեակ ուլերի:

4. Զո պարանոցը նման է փղոսկրեայ աշտարակի: Զո աչքերը
նման են Եսեբոնի ծովակին՝ բազում դուստրերի դարպասների
մօտ: Զո ռունգերը նման են Լիբանանի աշտարակին, որ նայում
է դէպի Դամասկոս:

5. Գլուխդ թե՛զ վրայ նման է Կարմելոսին, եւ թո գլխի
հիւսերն ասես ծիրանի լինեն՝ թագակիր թագաւորի պէս
ասպարէզներում:

6. Որքա՛ն գեղեցկացար եւ որքա՛ն քաղցրացար, ո՛վ սէր, թո
փափկութեան մէջ:

7. Զո հասակը նման է արմաւենու, եւ ստինքներդ՝
ողկոյզների:

8. Ասացի, թէ՛ ելնեմ արմաւենին, բռնեմ նրա
բարձրութիւններից. եւ թո ստինքները թող խաղողի ողկոյզի պէս
լինեն, թո ռունգերի հոտը՝ խնձորի պէս, եւ թո կոկորդը՝ ազնի
գինու պէս:

Հարսը դուստրերի եւ թագուհիների առջ ասում է.

9. Գնում եմ իմ Եղբօրորդու հետ ուղիղ ճանապարհով,
բաւականանում իմ շուրթերով եւ ատամներով:

10. Ես իմ Եղբօրորդուն եմ, եւ դէպի ինձ է դառնալու Նա:

11. Եկ, Եղբօրորդի՛ իմ, ելնենք ազարակները, գիշերենք
գիւղերում եւ պարտէզներում:

12. Կանուխ ելնենք այգիները. տեսնենք, թէ ծաղկել է որթը,
ծաղկել է նոճին, ծաղկել է նռենին: Այնտեղ կտամ Զեզ իմ
ստինքները:

13. Մանրագորներն արձակեցին իրենց հոտը. մեր դռների
մօտ ամէն տեսակ սրգաբեր ծառեր են՝ նորը հնի հետ, որը
տունց ինձ մայրս, այն պահեցի Զեզ համար, Եղբօրորդի՛ իմ:

Ը

1. Ո՛վ կտար Զեզ, Եղբօրորդի՛ իմ, ուտել իմ մօր ստինքներից:
Երբ հանդիպեմ դրսում, կհամբուրեմ Զեզ, եւ չես արհամարհի
ինձ:

2. Վերցնեմ, տանեմ Զեզ իմ Մօր տունը եւ ինձ Յղացողի
սենեակը, արբեցնեմ Զեզ իւրագործների գինին, իմ նռենիների
օշարակը:

3. Նրա՛ ձախ ձեռքը գլխիս տակ է, եւ Նրա աջը թող գրկի
ինձ:

4. Երդուեցնում են ձեզ, դուստրեր՝ Երուսաղեմի, ազարակի զօրութիւններով եւ հաստատութիւններով. եթէ վեր կենաք, արթնացրէ՛ք Սէրն Իր կամենալուն պէս:

Դուստրերը եւ թագուհիներն ասում են.

5. Ո՛վ է սա, որ ելել գալիս է սպիտակացած, գալիս է՝ յ՛նուած իր Եղբորորդուն:

Փեսան ասում է Հարսին.

Արթնացրեցի թեզ խնձորենու տակ, այնտեղ թո Մայրը երկնեց թեզ, այնտեղ թո Ծնողը ծնեց թեզ:

6. Դի՛ր Ի՛նձ որպէս կնիք թո սրտի վրայ եւ որպէս մատանի՝ թո աչ ձեռքին: Զանգի սէրը հզօր է մահուան պէս, եւ նախանձը խիստ՝ դժոխքի պէս, նրա թռիչքը՝ հրի բոցի թռիչքի պէս:

7. Բազում ջրերը չեն կարողանայ մարել սէրը, եւ գետերը չեն արգելի նրան: Եթէ մարդ իր ամբողջ կեանքը տայ սիրոյ համար, արհամարհելով կարհամարհուի:

Օրիորդներն ասում են.

8. Մեր թոյրը փոքրիկ է եւ ստինքներ չունի. ի՛նչ անենք մեր թրոջն այն օրը, երբ յայտնեն նրան:

9. Եթէ պարիսպ լինի, նրա վրայ շինենք արծաթ մահարձաններ: Եթէ դուռ լինի, նրա վրայ եղեւնափայտեայ տախտակներ ամրացնենք:

Հարսը համարձակում է եւ ասում.

10. Ես պարիսպ եմ, եւ իմ ստինքները նման են աշտարակների, Նրա աչքին ես [երեսում] էի խաղաղութիւնը գտածի նման:

11. Սողոմոնը մի այգի ուներ Բեւմաւոնում, Իր այգին տուեց պահապաններին: Իւրաքանչիւր այր նրա պտղի փոխարէն հազար արծաթ պիտի բերի:

12. Իմ այգին իմ առջեւն է. հազարներ՝ Սողոմոնին եւ երկու հարիւր՝ պահապաններին, որ պահում են նրա պտուղը:

Հարսն ասում է.

13. Դո՛ւ, որ նստած ես պարտեզում, եւ ուրիշները լսում են Քեզ, լսելի՛ արա ի՛նձ Քո բարբառը:

14. Փախի՛ր, Եղբորորդի՛ իմ, եւ նմանուի՛ր այժեամի կամ եղնիկների հորթերի՛ խնկաբեր լեռների վրայ:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

ՀԱՆՂԵՐԶ ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԵԱՑ

Աշխատասիրութեամբ՝

S. Մեսրոպ քահանայ Արամեանի

Համակարգչային շարուածքը՝

Յովհաննէս Կիզողեանի

Վերստուգող սրբագրիչ՝

Շուշան Վարդանեան

Նկարիչ՝

Արմէն Թիրքչեան